

Տպագրվում է

**«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաբաղի բազմազանի
ընդհանրների հիմնադրամի» հովանավորությամբ**



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ARAM ASHOT GASPARYAN

THE ARAB NATIONALISTS AND THE YOUNG
TURKS: FROM COOPERATION TO
CONFRONTATION
(1908-1914)

YEREVAN

"GITUTYUN" PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2016

21 09 08
962.0 + 956.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՄ ԱՇՈՏԻ ԳԱՄՊԱՐՅԱՆ

ՀԼԻՄԻՆ

ԱՐԱՐ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴՄԻԱՆ ԵՎ
ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ
(1908-1914)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՄ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016



ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Գ 316

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ա. Պ. Փոլադյան

Գասպարյան Արամ

Գ 316 Արաբ ազգայնականները և երիտթուրքերը. համագոր-
ծակցությունից առճակատում (1908-1914) – Եր.: «Գի-
տություն» հրատ., 2016, 196 էջ:

Մենագրության մեջ քննարկվում են 1908-1914 թթ. Օսմանյան
կայսրության արաբ ազգայնականների և երիտթուրքերի հարաբերու-
թյունների զարգացման ընթացքը, նրանց մեջ կատարված փոփոխու-
թյունները և դրանք պայմանավորող հանգամանքները: Առանձնակի
կարևորություն է տրվում հատկապես արաբական կազմակերպություն-
ների գործունեության ռազմաքաղաքական ու լուսարանմանը:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8080-1210-3

© Ա. Գասպարյան, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱՐԱՆ.....	7
ԳԼՈՒԽ I	
1908 թ. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱԵՐՋՈՒՄԸ ԵՎ ԱՐԱՔ- ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՄԻՆՉԵՎ 1909 թ. ԱՊՐԻԼ)	18
ԱՐԱՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱ- ՇՐՋԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ	18
ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱԵՐՋՈՒՄԸ, ԱՐԱՔ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՅՈՒԹՅՈՒՆՆ ԻԹ- ԹԻՀԱԴԱԿԱՆՆԵՐԻՆ	33
1908 թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԱՔ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	41
ԳԼՈՒԽ II	
ԱՐԱՔՆԵՐԻ ԴԻՔՈՐՈՇՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏ- ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄՔ (1909 թ. ԱՊՐԻԼ-1912 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ)	53
1909 թ. «ՄԱՐՏԻ 31-Ի» ԽՈՒԿՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԱՔԱԻԹ- ԹԻՀԱԴԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ի ՀԱՅՏ ԳԱԼԸ	53
ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԱՐԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ...	74
ԱՐԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՄԱՕՄՄԱՆՅԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱ- ՏԵՔՍՏՈՒՄ	90
ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՎՐԱ	96
«ՀՅՈՒՐՐԻՅԵԹ ՎԵ ԻԹԹԻԼԱՅ»-Ի ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԱՔՆԵՐԸ	101

ԳԼՈՒԽ III	
ԱՐԱՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵԱՐԺՄԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆԱՅՈՒՄԸ	116
«ՎԱՐՁԱԿԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿՈՒՍԱԿ- ՑՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԵԱՐԺՈՒՄՆ	
ԱՐԱՐԱԿԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ	116
ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔ- ՆԵՐԸ	129
«ԱԼ-ԱՀԴ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ: ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	
ԱՐԱՐԱԿԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱ- ՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵՆ	147
ՎԵՐՋԱՐԱՆ	166
SUMMARY	172
ՀԱՎԵԼՎԱԾ 1	176
ՀԱՎԵԼՎԱԾ 2	181
ՀԱՎԵԼՎԱԾ 3	184
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	187

1908-1914 թթ. Օսմանյան կայսրությունում արաբների և երիտթուրքերի միջև հարաբերությունների քննարկի, նպատակների, զարգացման ընթացքի և դրանցում կատարված փոփոխությունների համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունն անժխտելիորեն կարևոր նշանակություն ունեն ոչ միայն այդ շրջանում արաբական ազգային շարժման և դրա հետ կապված առանձին խնդիրների, այլև հետագա իրադարձությունների ճշգրիտ ընկալման ու գնահատման համար:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ձևավորվեց արաբական ազգային շարժման գաղափարախոսությունը, հստակեցվեցին շարժման հիմնական սկզբունքները, նպատակներն ու առանձնահատկությունները:

Թեմայի մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս համապարփակ և խորությամբ ընկալելու այս շրջանում օսմանյան իրականության մեջ տեղի ունեցած հասարակական-քաղաքական զարգացումներն ու խմորումները, ցույց տալու դրանցում արաբների դերն ու մասնակցությունը, ինչև ավելի տեսանելի և ընկալելի է դարձնում նաև Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների հիմնահարցերն ընդհանրապես:

Աբդուլհամիդյան բռնապետության տարիներին (1876-1909 թթ.) Օսմանյան կայսրության ներքին և արտաքին ծայրահեղ բարդ իրադրությունն առավել վատթարացրեց կայսրության ոչ թուրք ազգաբնակչության, այդ թվում նաև արաբների առանց այն էլ ծանր վիճակը:

Ի հետևանք վարչակարգի կողմից իրականացվող տարաբնույթ ճնշումների, հետապնդումների ու սահմանափակումների՝ վտանգված էին արաբների ոչ միայն ազգային արժեքները՝ լեզուն, մշակույթը, ավանդույթներն ու սովորությունները, այլև ազգային ինքնությունը:

Ստեղծված իրադրության պայմաններում Աբդուլ Համիդին գահընկեց անելու, սահմանադրությունը վերականգնելու և հատկապես կայսրության քուլոր հպատակներին հավասար իրա-

վունքներ շնորհելու իթթիհադական կուսակցության ծրագրային խոստումները, չնայած արաբ ազգայնականների և իթթիհադականների միջև առկա որոշակի հակասությունների, իրական հիմք հանդիսացան նրանց մերժեցման և համագործակցության համար:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջման հաջողությունը, որն ապահովվեց կայսրության տարբեր ազգությունների, այդ թվում նաև արաբների գործուն անցակցությամբ, միանգամայն նոր իրադրություն ստեղծեց Օսմանյան կայսրությունում և փոխեց նրա զարգացման հետագա ընթացքը: Երիտթուրքերի առաջին իսկ քայլերը, մանավանդ սահմանադրության վերականգնումը, չափազանց հուսադրող էին, քանի որ իրական հնարավորություններ էին ստեղծում ազգային խնդիրների լուծման համար: Անմիջապես դրանով էին պայմանավորված սկզբնական շրջանում երիտթուրքերի նկատմամբ արաբ ազգայնականների ակնհայտ վստահությունն ու հավատը:

Սակայն երկու կողմերի համար էլ խոստումնալից թվացող այս համագործակցությունը կարճ ժամանակ անց բախվեց լուրջ խոչընդոտների: Տարբեր հանգամանքների բերումով նրանց միջև ոչ միայն սրվեցին նախկին հակասությունները, այլև առաջ եկան նոր հակասություններ, որոնք հիմնականում պայմանավորված էին թուրքերի՝ կայսրությունում գերակա դիրքեր պահպանելու անթաքույց ձգտումով, ինչն ինքնին արդեն իսկ վկայում էր իրենց բարձրագույն խոստումներից և դրանք իրականացնելու հավաստիացումներից հրաժարվելու մասին:

Մենագրության մեջ հանգամանորեն քննարկվում են արաբների և երիտթուրքերի մերժեցման հանգամանքներն ու երկկողմ շահագրգռությունները, ներկայացվում է Օսմանյան կայսրության ներքին և արտաքին քաղաքական զարգացումների համատեքստում արաբական ազգային շարժման բնույթի ու նպատակների, համապատասխանաբար, կենտրոնական իշխանությունների հանդեպ արաբների վերաբերմունքի աստիճանական փոփոխությունը՝ երիտթուրքերին ցուցաբերվող անցակցությունից մինչև առճակատում, օսմանիզմի գաղափարախոսությունից ան-

ցում ապակենտրոնացման գաղափարախոսության, և ընդհանրապես պայքարի ակնհայտ արմատականացում:

Չնայած արաբ ազգայնական գործիչների արմատական հայացքներին՝ վերջիններս, այնուամենայնիվ, շարժման այս փուլում, պահպանելով հավատարմությունը Օսմանյան կայսրության՝ որպես ընդհանուր հայրենիքի գաղափարին, նաև, ինչը ոչ պակաս կարևոր է, վախճանալով արևմտյան պետությունների կողմից արաբական երկրները գաղութացնելու իրական վտանգից, չէին ձգտում արաբական վիլայեթների անկախացման և սահմանափակվում էին լայն ապակենտրոնացման պահանջով:

Աշխատանքի կարևոր նպատակներից են նոր սերնդի արաբական կազմակերպությունների, խմբավորումների, ինչպես նաև առանձին ազգայնական գործիչների ազգային, այլ ոչ կրոնական միասնության վրա հիմնված գաղափարների, հետապնդած նպատակների և գործունեության համակողմանի ջրնարկումն ու լուսաբանումը: Հանգամանք, որը կարևոր հիմք հանդիսացավ արդեն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արաբների մեջ ազգային պետականության գաղափարի արդիականացման և դրա իրականացման համար:

Մենագրության մեջ առանձնակի կարևորություն է տրվում հատկապես 1909 թ. խոռվությունից հետո հիմնադրված արաբական կազմակերպությունների գործունեությանը:

Իթթիհադականների վարած ազգային քաղաքականության ակնհայտ փոփոխությունը հիասթափեցրեց արաբ քաղաքական ակտիվ ուժերի մեծ մասին: Վերջիններիս ջանքերով հիմնվեցին մի շարք կազմակերպություններ, որոնք իրենց հիմնական առաքելությունը տեսնում էին ընդհանուր գաղափարական հիմքի վրա արաբական ազգային ուժերի միավորման և ինքնավարության ձեռքբերման մեջ: Այս կազմակերպություններն առաջինն էին, որ արաբ ժողովրդին սկսեցին դիտել ոչ թե որպես «օսմանյան ազգի» մի մաս, այլ որպես առանձին ազգային տարր՝ իր հիմնահարցերով, որի առջև դրված էր իր ինքնության պահպանման առաջնային խնդիրը: Աշխատանքում մասնավորապես քննարկվում է «ալ-Կաիտանիա», «Գրական ակումբ», «Երիտասարդ Արաբիա» առավել աչքի ընկնող և

արաբական շարժման մեջ կարևոր դերակատարություն ունեցած կազմակերպությունների գործունեությունը, ինչը հնարավորություն է տալիս ընկալելու շարժման այս շրջանի հիմնական նպատակները:

Վերջիններիս առաջ քաշած նոր գաղափարները մեծապես ազդեցին արաբ-թուրքական հարաբերությունների վրա, իսկ դրանց անդամները դարձան ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներ:

Աշխատության մեջ նոր սկզբնաղբյուրների ներգրավմամբ ճշգրտվում են վերոհիշյալ կազմակերպությունների գործունեության հետ կապված առանձին հարցեր և տարածված տեսակետներ:

1911-1913 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ներքին և արտաքին իրադարձություններն ու ստեղծված որոշակի քաղաքական իրադրությունն արաբ ազգայնականների համար հրատապ դարձրին արաբական քաղաքական և հասարակական ուժերի համախմբման ու միասնական նպատակին ուղղված նրանց գործողությունների ղեկավարման անհրաժեշտությունը: Ապակենտրոնացման շարժման ակտիվացման, այնուհետև նաև ակնհայտ արմատականացման պայմաններում ձևավորվեցին ազգային գաղափարներին հետամուտ նոր կազմակերպություններ: Արաբական ազգային շարժման այս որակապես նոր փուլում Կահիրեում հիմնվեց «Վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցությունը», որն իր հստակ ծրագրով, գաղափարախոսությամբ ու գործունեությամբ էականորեն տարբերվում էր մինչ այդ ստեղծված կուսակցություններից և կարևոր նշանակություն ունեցավ արաբական ազգային ուժերի համախմբման համար:

Իթթիհադականների վարած ազգայնամուլական քաղաքականության հետևանքով արաբ-թուրքական հարաբերությունների ակնհայտ լարվածության պայմաններում արդիական էր դառնում կայսրության և արտերկրի արաբական ազգային ուժերի միավորման ու համատեղ գործողությունների մշակման խնդիրը: Այդ նպատակի իրականացման համար 1913 թ. Փարիզում հրավիրվեց Առաջին արաբական կոնգրեսը, որն առանձնակի

կարևորություն ունեցավ ոչ միայն արաբական ազատագրական շարժման ձևավորման և հետագա զարգացման համար, այլև արաբ ժողովրդի պատմության մեջ ընդհանրապես: Առաջին արաբական կոնգրեսն այն իրադարձությունն էր, որի արդյունքներն ու հետևանքներն իրենց էական ազդեցությունն ունեցան արաբների և իթթիհադականների հարաբերությունների վրա: Մասնավորաբար, արաբ ազգային ուժերի մեծամասնությունը վերջնականապես հիասթափվեց իթթիհադական կառավարությունից և դադարեց արաբական ազգային խնդիրների լուծման համար ապավինել նրան:

Արաբական ազգային շարժման էվոլյուցիայի այս որակապես նոր փուլում արաբ զինվորականության կողմից ստեղծվեց «այ-Ահր» գաղտնի արմատական ընկերությունը, որն արաբական վիլայեթների վարչական ապակենտրոնացման իրականացման համար չէր քացառում ուժային մեթոդների կիրառումը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրությունում ստեղծված քարոզ և հակասական իրադրությունը, ինչպես նաև երիտթուրքերի վարած ազգայնամուլական քաղաքականությունն իր քնույթով արաբական ազգային շարժման ղեկավարների համար միանգամայն ակնհայտ դարձրին իրենց ազգային հարցերի լուծման գործում սահմանադրական միջոցներին ապավինելու անհեռանկար լինելը և դրդեցին նրանց պայքարի այլ՝ առավել արդյունավետ ձևերի:

1908-1914 թթ. Օսմանյան կայսրությունում արաբ-թուրքական հարաբերությունների համատեքստում արաբական ազգային շարժման ուսումնասիրությունը, այսպիսով, թույլ է տալիս հետևել այդ շարժման էվոլյուցիային և ներկայացնել դրա մեջ կատարված աստիճանական փոփոխությունները՝ օսմանիզմից արաբիզմ:

Շարժման այս փուլում աչքի ընկած արաբ գործիչներից շատերը հետագայում դարձան արաբական երկրներում ծավալված ազգային-ազատագրական պայքարի ազդեցիկ առաջնորդներ, ովքեր իրենց հետագա քաղաքական գործունեության մեջ լայնորեն կիրառեցին նախկինում ձեռք բերած փորձը՝

ապահովելով պայքարի բոլոր փուլերի քնականոն և անխափան ընթացքը:

Թեև արաբների և երիտթուրքերի հարաբերություններին առնչվող առանձին խնդիրներ քննարկվել են Ն. Հովհաննիսյանի, Դ. Ֆրոմկինի, Զ. Անտոնիոսի, Թ. Բիրուփի, Հ. Կայալիի և այլոց աշխատություններում ու գիտական հոդվածներում, սակայն երիտթուրքերի կառավարման շրջանում Օսմանյան կայսրությունում ծավալված արաբական ազգային շարժման այս փուլը մեզանում առ այսօր չի դարձել ամբողջական գիտական ուսումնասիրության առարկա:

Այս մեծագրությունն իր բովանդակությամբ ու հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվում ընդարձակ փաստագրական ու արխիվային նյութերի, ինչպես նաև տարալեզու սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների լայն օգտագործմամբ համակողմանիորեն լրսաբանել 1908-1914 թթ. արաբթուրքական հարաբերությունների և արաբական ազգային շարժման այս կարևոր փուլի առանձնահատկություններն ու դրանց ամենատարբեր դրսևորումները:

Օսմանյան կայսրությունում արաբական շարժման ուսումնասիրվող շրջանին առնչվող հարցերի պարզաբանմանը մեծապես նպաստել են արաբ ազգային կուսակցությունների՝ մեր տրամադրության տակ եղած ծրագրային փաստաթղթերը, որոնք ամբողջական պատկերացում են տալիս վերջիններիս ձևավորման հանգամանքների, հետապնդած նպատակների, ինչպես և շարժման հետ կապված մի շարք այլ հարցերի մասին:

Աշխատության մեջ արձարծվող հիմնախնդիրների քննության տեսակետից չափազանց կարևոր են հատկապես Օսմանյան կայսրության սիրիական վիլայեթների նկատմամբ մեծ շահագրգռություն ունեցող տեղության՝ Ֆրանսիայի արխիվային հարուստ նյութերը¹, որոնք մանրամասն ու հավաստի տեղեկու-

¹ Archives Affaires Etrangères. Documents reparties du consulat general de Beyrouth, vol. 255, carton 6, dossier 4, Archives Affaires Etrangères. Turquie. Dossier general. Syrie/Liban., vol., XVII, (1913), Archives Affaires Etrangères. Turquie. Dossier general. Relations avec les puissances, vol., XXII, Archives

թյուններ են տրամադրում մեզ հետաքրքրող խնդիրների վերաբերյալ: Այս առումով առանձնակի կարևորություն է ներկայացնում Կ.Պոլսում Ֆրանսիայի դեսպանի՝ իր երկրի արտգործնախարարին հղած տեղեկատվությունը:

Աշխատանքում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում ակադեմիկոս Մ. Ներսիսյանի՝ Օսմանյան կայսրությունում ցարական Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչների արժեքավոր հաղորդումները պարունակող արխիվային եզակի նյութերը¹, որոնք հնարավորություն են տալիս համակողմանիորեն պատկերացնելու մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արաբական վիլայեթներում տեղի ունեցող գործընթացները:

Արաբ ազգային գործիչների նպատակների լուսաբանմանը մեծ չափով նպաստել են նաև վերջիններիս ելույթների տեքստերը, հրապարակումներն ու նամակները, որոնցում առկա են առանձին կարևոր հարցերի վերաբերյալ նրանց տեսակետները և այդ հարցերի լուծման տարբեր մոտեցումները: Այս առումով հատկապես կարևոր են 1913 թ. Փարիզում հրավիրված Առաջին արաբական կոնգրեսում արաբ գործիչների ելույթների, արաբների խնդիրների քննարկումներին ու դրանց շուրջ ծավալված բանավեճերին վերաբերող նյութերի հրապարակումները, որոնք

Affaires Etrangères. Turquie. Dossier general. Syrie/Liban. vol., XX, (1913), J. Hajjar. L'Europe les destinées du Proche-Orient. Le Nationalisme arabe, syrien entre la Jeune Turquie et les puissances (1908-1914), Damas, 1996.

¹ Делеша дипломатического тайного советника Зиновьева из Константинополя. МИД Российское Императорское консульство в Джеде. Копия с донесения консула в Дамаске ком. сов. князя Шаховского на имя господина императорского посла в Константинополе от 27-го марта 1909 г., МИД Императорское Российское консульство в Бассоре 16-го августа 1913 года., Каир, делеша С.Д. Сазонову, 5 апреля 1914 г., МИД Императорское Российское консульство в Бассоре в первый департамент Министерства иностранных дел. 22-го ноября 1913 года. Российское Императорское генеральное консульство в Константинополе, 2-го октября 1913 г. секретно. Его превосходительству А.А. Нератову. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. III և V (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):

մեծ չափով հստակեցնում են արաբների պահանջներն ու առաջադրվող հարցերի նկատմամբ առանձին շրջանակների դիրքորոշումների տարբերությունները¹:

Այս խիստ արժեքավոր նյութերի օգտագործումը հնարավորություն է տալիս նշմարելու շարժման նոր ասպեկտներ և մանրամասներ, վերանայելու, ճշգրտելու և նորովի ներկայացնելու շարժման մասնակից ուժերի գործունեության մասին ընդունված և տարածված առանձին տեսակետներ:

Երիտթուրքերի քաղաքականության տարրեր կողմերի և հատկապես նրանց ազգային քաղաքականության ուսումնասիրության ու գնահատման գործում մեծ է հայ գիտնականների ներդրումը: Այդ քաղաքականության համակողմանի վերլուծությունը ներկայացված է Հ. Ինճիկյանի, Զ. Կիրակոսյանի, Ռ. Սաֆրաստյանի, Ե. Նաջարյանի, Յու. Պետրոսյանի, Ե. Սարգսյանի, Հր. Սիմոնյանի և այլ գիտնականների աշխատություններում², որոնք չափազանց օգտակար են եղել արաբների նկատ-

¹ D. Thomas, *The First Arab Congress and the Committee of Union and Progress 1913-1914* / D. Little, *Essays on Islamic Civilization.*, Brill, 1976, T. Ahmed, *Abd al-Hamid al-Zahrawi: The Career and Thought of an Arab Nationalist* / R. Khalidi, L. Anderson, M. Muslih, R. Simon, *The Origins of Arab Nationalism*, New York, 1991, J. Hajjar, *L'Europe les destinées du Proche-Orient. Le Nationalisme arabe, syrien entre la Jeune Turquie et les puissances (1908-1914)*, Damas, 1996, T. Abdelljellil, *Politique des Jeunes Turcs en Bilad esh-Sham et révolte arabe en 1916: Nouvel essai d'interprétation* / Tamini, *Revue d'histoire Magrebine*, numeros 65-66, août, Tunisie, 1992.

² О. Инджикян, *Буржуазия Османской империи*, Е. 1977, Дж. Киракосян, *Младотурки перед судом истории*, Ереван, 1986, Ե. Նաջարյան, *Արաբական ազգային մշակութային զարթոնքը*, Երևան, 1988, Ю. Петросян, *Младотурецкое движение (вторая половина XIX - начало XX в.)*, Москва, 1971, Ю.Петросян, *Османская империя: могущество и гибель. Исторический очерк*, Москва, 1990г, Է. Տարյան, *Экспансионистская политика Османской империи в Закавказье*, Ереван, 1962, Ռ. Սաֆրաստյան, *Օսմանիզմի ղեկավարների քաղաքական փաստաթղթերում (1908-1916 թթ.)*, Մեծավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XV, Երևան, 1989, Հր. Սիմոնյան, *Թուրք ազգային բուրժուազիայի զարգացման քաղաքականությունը և քաղաքականությունը*, Երևան, 1986, Հր. Սիմոնյան, *Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից*, Երևան, 1991:

մամբ երիտթուրքերի քաղաքականությունը ընտության ենթարկելու առումով:

Թուրք-արաբական հարաբերությունները, ինչպես նաև արաբական ազգային շարժման շատ հարցեր հանգամանորեն ընևարկվել են Ն. Հովհաննիսյանի արժեքավոր ուսումնասիրություններում¹, որոնք մեծապես նպաստել են մեր առջև դրված հիմնախնդիրների համակողմանի լուսաբանմանը:

Աշխատանքը շարադրելիս լայնորեն օգտագործել ենք խորհրդային հետազոտողների՝ մեզ հետաքրքրող խնդիրներին վերաբերող մենագրությունները, համահեղինակային հրատարակությունները և հոդվածները, որոնցում առկա են հարուստ փաստագրական նյութ և հարցերի հանգամանալի վերլուծություն: Հարկ է հիշատակել հատկապես Լ. Կուլյովի, Մ. Լազարևի, Վ. Լուցկիի, Ի. Լևինի, Ա. Դոլինիևայի, Ի. Շպիլկովայի, Ա. Տիրկովայի, Գ. Ալինի և այլոց աշխատությունները²:

Օսմանյան կայսրությունում արաբական շարժման ծնավորման, զարգացման առանձնահատկությունների, ինչպես նաև ազգային կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեության մասին բազմաբնույթ և ընդարձակ տեղեկություն-

¹ Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. II, Երևան, 2004, Ն. Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագրության ընևական լույսի ներքո, Երևան, 2004:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., Москва, 1986, Л. Котлов, Становление национально-освободительного движения на Арабском востоке, Москва, 1975, М. Лазарев, Крушение турецкого господства на Арабском востоке, Москва, 1960, В. Луцкий, Национально освободительная война в Сирии (1925-1927), Москва, 1964, В. Луцкий, Новая история арабских стран, Москва, 1965, И. Левин, Арабские страны. Зарождение идеологии национально-освободительного движения (XIX-начало XX в.), сборник статей, Москва, 1973, И. Левин, Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, Москва, 1972, А. Должинина, Очерки истории арабской литературы нового времени. Египет и Сирия. 1870-1914 гг., Москва, 1973, И. Шпилькова, Младотурецкая революция 1908-1909 гг., Москва, 1977, А. Тыркова, Старая Турция и младотурки. Год в Константинополе, Петроград, 1916, Г. Алшев, Турция в период правления младотурок (1908-1918 г.), Москва, 1972.

1908 Թ. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱԵՐՁՈՒՄԸ ԵՎ
ԱՐԱՐ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ՄԻՆՉԵՎ 1909 Թ. ԱՊՐԻԼ)

ԱՐԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ
ՀԵՂԱԵՐՁՄԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ

XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունը և նրա կազմի մեջ մտնող արաբական երկրները գտնվում էին խոր ճգնաժամի մեջ: Ստեղծված քաղաքական իրադրության և միջազգային ասպարեզում ուժերի նոր հարաբերակցության պայմաններում առաջնությունը վերջնականապես անցել էր եվրոպական տերություններին. Օսմանյան կայսրությունը կորցրել էր իր վաղեմի հզորությունը և հետամնաց, թույլ զարգացած, կիսազաղութային պետություն էր, որի կառավարման և հասարակական համակարգերը վերջնականապես սպառել էին իրենց:

Օսմանյան կայսրության կենտրոնական իշխանությունների քաղաքականությունն արաբական, հատկապես առավել զարգացած սիրիական և իրաքյան վիլայեթների¹ նկատմամբ էականորեն չէր տարբերվում կայսրության մյուս շրջանների նկատմամբ նրա վարած քաղաքականությունից, չնայած այն հանգամանքին, որ արաբական վիլայեթներում և ընդհանրապես ողջ երկրում արաբ ազգաբնակչության թիվը կազմում էր

¹ Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը սիրիական վիլայեթների կազմի մեջ մտնում էին Բեյրութի, Դամասկոսի, Հալեպի վիլայեթները, Լեռնային Լիբանանի մութասարիֆությունը և երուսաղեմի սանջակը: Sb'u D. Pipes, Greater Syria. The History an Ambition, New York, 1990, p. 16. Իրաքի վիլայեթների կազմի մեջ էին մտնում Բաղդադի, Մոսուլի և Բասրայի վիլայեթները: E. Nilde, L'Irak. Origines historiques et situation internationale, Paris, 1934, p. 17.

մոտ 10 միլիոն՝ կայսրության ողջ բնակչության 40 %-ը¹: Սուլթան Աբդուլ Համիդի իշխանության տարիներին արաբները հետևողականորեն հեռու էին պահվում կառավարական քաղաքացիականությանից և նույնիսկ արաբական վիլայեթների նահանգապետները (վալի) հիմնականում թուրքեր էին, որոնք չէին տիրապետում ոչ՝ արաբներնին և ոչ՝ էլ տեղի սովորույթներին²:

Սուլթանական իշխանությունը ջանք չէր խնայում պահպանելու և ամրապնդելու իր ազդեցությունն արաբական վիլայեթներում: Կենտրոնական, ինչպես նաև նահանգային իշխանությունները ճնշումների և հետապնդումների միջոցով ամեն կերպ փորձում էին վերացնել ցանկացած այլախոհություն: Հատկապես խստորեն պատժվում էին նրանք, ովքեր կասկածվում էին ընդդիմադիր գործունեության մեջ:

Կայսրության ողջ տարածքում գործող գրաքննությունը խիստ վերահսկողություն էր սահմանել ինչպես տեղական մամուլի, այնպես էլ եզիպտոսից և այլ երկրներից ներմուծվող թերթերի ու պարբերականների նկատմամբ: Այդ էր պատճառը, որ արաբական վիլայեթներում, բացի պաշտոնական և իշխանամետ թերթերից, գրեթե ոչինչ լույս չէր տեսնում³:

Բացի այդ, սուլթանական իշխանության կողմից լիովին անտեսվում էին կայսրության ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում նաև արաբների ազգային առանձնահատկությունները, նրանց ազգային շահերն ու պահանջները:

Ստեղծված իրավիճակում ասպարեզ եկավ այն քաղաքական ուժը, որին հաջողվեց լիովին փոխել Օսմանյան կայսրությունում դեպքերի զարգացման հետագա ընթացքը: 1908 թ.

¹ D. Fromkin. A Peace to End All Peace. The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York, 1989, p. 48, Ch. Issawi, The Fertile Crescent 1800-1914. A Documentary Economic History, New York, 1988, p. 16.

² Մանրամասն տե՛ս 3. Левин, Арабские страны / Зарождение идеологии национально-освободительного движения (XIX-начало XX в.), сборник статей, Москва, 1973, с. 58-60. В. Луцкий, Национально-освободительная война в Сирии, (1925-1927), Москва, 1964, с. 44.

³ N. Ziadeh, Syria and Lebanon, New York, 1957, p. 30-32.

«Իթթիհադ վե թերաքքի»¹ կուսակցության կողմից ծրագրված և իրականացված հեղաշրջման հետևանքով Օսմանյան կայսրությունում վերականգնվեց 1876 թ. սահմանադրությունը², և որոշակիորեն թուլացավ սուլթան Աբդուլ Համիդ II-ի իշխանությունը³:

Հեղաշրջման նախապատրաստմանն ու իրականացմանն իրենց աջակցությունը ցուցաբերեցին Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդները, այդ թվում նաև արաբական ազգային կազմակերպությունները, խմբավորումներն ու առանձին գործիչներ: Հայտնի է, որ տարբեր ժամանակներում «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությանն անդամակցում էին նաև արաբ մտավորականության ներկայացուցիչներ⁴: Դեռևս գործունեության սկզբնական փուլում կուսակցությունն իր մասնաճյուղերն էր հիմնել կայսրության տարբեր շրջաններում: 1897 թ. Դամասկոսում կենտրոնական իշխանությունների ներկայացուցիչ Ահմեդ Ռեֆիկ փաշան իր անհանգստությունն էր հայտնում կուսակցության հատկապես Բեյրութի և Դամասկոսի մասնաճյուղերի ակտիվության կապակցությամբ: Գրեթե նույն ժամանակ

¹ «Իթթիհադ վե թերաքքի» («Միություն և առաջադիմություն») անվանումով առաջին կոմիտեն ստեղծվել էր դեռևս 1889 թ. Կոնստանդուպոլսի ռազմադաշնակալական ուսումնարանի մի քանի ուսանողների կողմից: Նրա կազմի մեջ մտան կայսրության մուսուլման տարբեր ազգությունների ներկայացուցիչներ: Անվի ուշ՝ 1894 թ., ստեղծվեց նույն անվանումը կրող նոր կոմիտե, որտեղ արդեն ղեկավար դերը պատկանում էր թուրքերին: Կոմիտեի անդամներն իրենց անվանում էին իթթիհադականներ կամ երիտթուրքեր: Նրանց հիմնական նպատակն էր կայսրությունը դարձնել բուրժուասահմանադրական պետություն, որի միջոցով հույս ունեին դիմակայելու արևմտյան տերությունների կողմից կայսրությունը տրոհելու, այն միմյանց միջև բաժանելու իրական ապստամբիչներ: А. Миллер, Краткая история Турции, Москва, 1948, с. 116.

² Օսմանյան կայսրության առաջին սահմանադրությունը հռչակվել էր 1876 թ. դեկտեմբերի 23-ին, սակայն արդեն 1878 թ. սկզբին Աբդուլ Համիդն այն չեղյալ հայտարարեց: Սահմանադրությունը վերականգնվեց միայն 1908 թ. հուլիսի 24-ին երիտթուրքերի կողմից:

³ 1909 թ. Աբդուլ Համիդ II-ը գահընկեց արվեց, և սուլթան հռչակվեց Մեհմեդ V-ը, ով փաստորեն դարձավ երիտթուրքերի կամակատարը:

⁴ Д. Котлов, Становление национально-освободительного движения на Арабском востоке, Москва, 1975, с. 268.

հունական սահմանին տեղակայված օսմանյան զինված ուժերի հրամանատար էրիեմ փաշան իշխանություններին էր հաղորդում Հալեպում երիտթուրքական կազմակերպության հիմնադրման մասին իրեն հայտնի դարձած տեղեկությունը¹:

Սուլթանական վարչակարգի ճշումներն ու հետապնդումները թուրք ազգայնական գործիչներին հարկադրեցին արդեն XIX դարի վերջերին իրենց գործունեությունը տեղափոխել եվրոպա՝ մասնավորապես Փարիզ և Ժնև: «Իթթիհադ վե թերաքքի»-ի Փարիզի կենտրոնը դեկավարում էր Ահմեդ Ռիզան, ում հետ սերտորեն համագործակցում էին «Թուրք-սիրիական» կոմիտեի հիմնադիր արաբ հեղինակավոր գործիչներ Ամիր Ամին Արսլանը և Խալիլ Ղանեմը²: Իթթիհադականներն այդ շրջանում քարոզչական գործունեությունն իրականացնում էին իրենց կողմից հրատարակվող «Մեշվերեթ» («Քննարկում»), «Շուրայի ումմեթ» («Ազգային խորհուրդ»), «Օսմանլը» («Օսմանցի») և այլ թերթերի միջոցով: Այդ թերթերի էջերում իրենց հոդվածներն էին տպագրում նաև վտարանդիության մեջ գտնվող արաբ հրապարակախոսները և գրականագետները: Հատկանշական է, որ կուսակցության առաջին պաշտոնաթերթը՝ «Մեշվերեթ»-ը, լույս տեսավ Փարիզում 1895 թ. Ահմեդ Ռիզայի և արաբ հրապարակախոս Խալիլ Ղանեմի ջանքերով³:

Երիտթուրքական գաղափարախոսության տարածման կարևոր կենտրոններից էր նաև Կահիրեն, որտեղ հատկապես ակտիվ դերակատարություն ունեին արաբները: Կահիրեում տպագրվում էր մոտ 40 անուն երիտթուրքական թերթ, նաև միասժամանակ արաբերենով և թուրքերենով հրատարակվող «ալ-Խավաթիր» («Մտքեր»), «Ումիդ» («Հույս») և «ալ-Խիլաֆա» («Խալիֆայություն») թերթերը, որոնք մեծ ժողովրդականություն

¹ M. Hanioglu, *The Young Turks and the Arabs Before the Revolution of 1908 / The Origins of Arab Nationalism*, New York, 1991, p. 39.

² Նույն տեղում, էջ 35:

³ M. Hanioglu, *The Young Turks on the Verge of the 1908 Revolution / Varia Turcica XIII, Premiere rencontre internationale sur l'Empire Ottoman et la Turquie moderne*, Istanbul-Paris, 1991, p. 293.

էին վայելում: Երիտթուրքական գաղափարների տարածման գործում կարևոր դեր էր խաղում նաև վերը հիշատակված «Թուրք-սիրիական» կոմիտեի՝ Փարիզում հրատարակվող արաբալեզու «Քաշֆ ալ-նիջար» («Քողագերծում») թերթը, որը հետագայում վերանվանվեց «Թուրքիյա ալ-Ֆաթաթ» («Երիտասարդ Թուրքիա»)²:

1895 թ. «Մեշվերեթ» թերթում հրապարակվեց «Իթթիհադ վե թերաքքի»-ի առաջին ծրագիրը, որտեղ ներկայացվում էին կուսակցության հիմնական նպատակներն ու պահանջները, այն է՝

- Սահմանադրության վերականգնում:
- Խորհրդարանի հրավիրում:
- Օսմանյան կայսրության քոլոր ժողովուրդների իրավունքների հռչակում:
- Օսմանյան կայսրության ներքին գործերին գերտերությունների միջամտության վերացում³:

Երիտթուրքերը, այսպիսով, իրենց առջև խնդիր էին դնում ձեռք բերել երկրի քաղաքական, սոցիալական ու մշակութային զարգացման հնարավորություն և մանավանդ ապահովել Օսմանյան կայսրության քոլոր ժողովուրդների հավասար իրավունքները, ինչը համապատասխանում էր կայսրության ժողովուրդների, այդ թվում նաև արաբների պահանջներին ու ձգտումներին և պայմանավորեց վերջիններիս աջակցությունը երիտթուրքերին:

Սակայն երիտթուրքերի գործունեության ծավալմանը զուգընթաց սուլթանական իշխանությունների անընդհատ սաստկացող հետապնդումները, ինչպես նաև նրանց շարքերում առանձին հարցերի շուրջ ի հայտ եկած տարակարծություններն սպառնում էին պառակտել ու թուլացնել հակասուլթանական շարժումը և անհնարին դարձնել դրա՝ համազգային շարժման վերածվելու վտանգը: Ստեղծված պայմաններում առաջնահերթ

¹ Л. Котлов, Становление национально-освободительного движения на Арабском востоке, էջ 266:

² M. Hanioglu, The Young Turks and the Arabs, եջվ. աշխ., էջ 35-36:

³ И. Шпильнова, Младотурецкая революция 1908-1909 гг., Москва, 1977, с. 35.

և հրատապ էր դառնում կայսրությունում գործող բոլոր ընդդիմադիր ուժերի միավորումը՝ կենտրոնական ղեկավարությամբ և ընդհանուր ծրագրով: 1901 թ. ապրիլին արքայազն Սարահեդդինը «Օսմանյն» թերթում հրապարակեց «Բոլոր օսմանցի հայրենակիցներին» վերնագրով հոդվածը (որը վերատպվեց նաև Կահիրեում), որտեղ բոլոր քաղաքական և ազգային ուժերին միավորվելու կոչ էր արվում: Այս կոչը, որն աջակցություն գտավ երիտթուրքական շարժման ղեկավարների կողմից, փաստորեն հիմք նախապատրաստեց 1902 թ. փետրվարի 4-9-ը Փարիզում առաջին երիտթուրքական կոնգրեսի հրավիրման համար, որի նախագահ ընտրվեց արքայազն Սարահեդդինը²: Կոնգրեսի աշխատանքներին, ըստ տարբեր տվյալների, մասնակցում էին 60-70 պատվիրակներ, ովքեր ներկայացնում էին կայսրության տարբեր ազգություններ՝ թուրքեր, արաբներ, հույներ, քրդեր, հայեր, այբանացիներ և չերքեզներ³:

Կոնգրեսում քննարկվող հիմնախնդիրներից մեկն այբանացի ազգայնական գործիչ Իսմայիլ Քեմալի ներկայացրած առաջարկությունն էր՝ չքավարարվել միայն քարոզչությամբ և հեղափոխական պայքարի մեջ ներգրավել զինված ուժերին: Սուր հակասությունների առիթ տվեց կայսրությունում բարեփոխումներ իրականացնելու գործում գերտերությունների օգնությանը դիմելու հայկական պատվիրակության առաջարկը: Եթե Ահմեդ Ռիզայի կողմնակիցները կտրականապես ընդդիմացան կայսրության ներքին գործերին օտար պետությունների ցանկացած միջամտությանը, ապա Սարահեդդինի կողմնակիցները, ընդհակառակը, պաշտպանեցին այդ առաջարկը, ինչը, փաստորեն, արժանացավ կոնգրեսի ոչ թուրք պատվիրակների հավանությանը⁴: Սարահեդդինի և նրա կողմնակիցների դիրքորոշումը վերջիններիս համար առավել ընդունելի էր հատկապես այն պատճառով, որ հնարավոր էր համարում ինքնավարություն

¹ Ю. Петросян, Младотурецкое движение (вторая половина XIX – начало XX в.), Москва, 1971, с. 203-204.

² B. Lewis, The Emergence of Modern Turkey, London, 1961, p. 197.

³ Ю. Петросян, նշվ. աշխ., էջ 204:

⁴ B. Lewis, նշվ. աշխ., էջ 198:

շնորհիվ կայսրության ազգություններին և լայն արտոնություններ տալ տեղական իշխանություններին: Այս դրույթները համահունչ էին նաև արաբների պահանջներին, պատահական չէ, որ կոնգրեսից հետո՝ 1902 թ. փետրվարին, Սաբահեդդինի կողմից ստեղծված «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերությունը» մասնաճյուղեր հիմնեց նաև արաբական մի շարք քաղաքներում՝ Դամասկոսում, Լաթաքիայում, Կահիրեում և այլուր¹:

Մինչդեռ Ամեդո Ռիզայի գլխավորած խմբավորումը, որը հիմնականում բաղկացած էր թուրքերից, կայսրության անկախության ու միասնականության միակ ուղին տեսնում էր կենտրոնացված ուժեղ իշխանության մեջ, որտեղ թուրքերը պետք է ունենային գերիշխող դիրք, իսկ մյուս ժողովուրդները, այդ թվում՝ արաբները, պետք է ծուլվեին, ինչի միջոցով և վերջ կդրվեր կայսրությունում կենտրոնախույս ուժերին²:

Այսպիսով, առաջին երիտթուրքական կոնգրեսը, որը հրավիրվել էր համախմբելու կայսրությունում գործող քոլոր ընդդիմադիր ուժերին՝ ընդհանուր նպատակին հասնելու համար, փաստորեն առկա տարածայնությունների պատճառով ձախողվեց: Այսուհանդերձ, «Իթթիհադ վե թերաքքի»-ն, նույնիսկ նրա առավել ազգայնական գործիչները, լավ հասկանալով, որ միայն թուրքերի ուժերով հնարավոր չէ գահընկեց անել Աբդուլ Համիդին, սկսեցին մերժենալու փորձեր անել կայսրության այլ ժողովուրդների ազգային կազմակերպությունների հետ: Դա, թերևս, ճիշտ մարտավարություն էր, քանի որ հենց երիտթուրքական կոնգրեսին հաջորդած տարիներին իշխանությունների դեմ կայսրության ոչ թուրք ժողովուրդների շրջանում սկիզբ առած շարժումներն Օսմանյան կայսրությունում հեղափոխական իրադրության պատճառ դարձան: Հակակառավարական ելույթներ տեղի ունեցան նաև կայսրության արաբական վիլայեթներում, որոնք էլ ավելի խորացրին երկրում ստեղծված քաղաքական ճգնաժամը: Արաբական շարժման կենտրոններն էին կայսրու-

¹ А.Котлов, Становление национально-освободительного движения на Арабском востоке, էջ 273:

² Նույն տեղում:

թյան արաբական վիլայեթներից տնտեսապես առավել զարգացած Սիրիան և Լիբանանը: Այստեղ ձևավորվեցին մի շարք կազմակերպություններ և խմբավորումներ, ինչպես «Արաբական հայրենիք» լիգան, «Արաբական վերածնունդ» ընկերությունը, Թահիր ալ-Ջազաիրիի խմբավորումը և այլն:

Արաբական ազգայնականությանը և արաբական աշխարհում ազգի ու պետության պատմության հարցերին նվիրված իր աշխատանքում Յոաուֆ Զոուբին այս շրջանում Սիրիայում ծավալված ընդդիմադիր շարժումների մեջ առանձնացնում է զուգահեռ գործող երեք քաղաքական ուղղություն.

1. Իսլամական ռեֆորմիզմը, որի մեջ ներգրավված էին միայն կրոնական գործիչներ՝ հիմնականում միջին դասի այլմներ:

2. Մշակութային արաբիզմը, որը ձևավորվեց որպես ժամանակակից աշխարհիկ կրթություն ստացած մտավորականների գաղափարախոսություն:

3. Երիտասարդ թուրքերի մոդեռնիզմը, որը հատուկ նշանակություն էր տալիս օսմանիզմի երկու՝ սահմանադրականության և կենտրոնացման վրա հիմնված հայեցակարգերին¹:

Հարկ է նշել, որ արաբական աչքի ընկնող խմբավորումների և կազմակերպությունների նպատակների ու գործունեության ուսումնասիրությունը հիմնականում հաստատում է ներկայացված իրողությունը: Այս տեսակետից ուշադրության արժանի է Դամասկոսում արաբական շարժման հեղինակավոր ներկայացուցիչ, իսլամական քարեփոխիչ շեյխ Թահիր ալ-Ջազաիրիի² ղեկավարած խմբի գործունեությունը, որտեղ համախմբված էին արաբ մտավորականներ և մոդեռնիստներ Մուհիբ ալ-Դին ալ-Քաթիբը, Սալահ ալ-Դին ալ-Քասիմին, Արիֆ ալ-Շիհաբին, Լուպֆի ալ-խաֆարը, Սայիհ Քանթազը և այլք, ինչպես նաև արաբ

¹ Y. Choueiri, Arab Nationalism. A History Nation and State in the Arab World, Oxford, 2000, p. 78.

² Թահիր ալ-Ջազաիրին (1852-1920 թթ.) ծագումով պեժրցի էր, որի ընտանիքն Ալժիրից Դամասկոս էր գաղթել դեռևս 1847 թ.: Երկն տեղում, էջ 77:

ոսանողներ¹: Այս ընկերությունը, չնայած ժամանակի մյուս կազմակերպությունների նման հիմնականում զբաղվում էր լուսավորական գործունեությամբ, սակայն երբեմն գրական և գիտական հարցերի քննարկման ժամանակ անդրադառնում էր նաև գործող վարչակարգի քաղաքականությանը: Հենց այդ պատճառով էլ արդեն 1903 թ. ընկերության անդամների կողմից ձևավորվեց գաղտնի կազմակերպություն, որի մեջ ներգրավված էին Ռաֆիկ բեյ ալ-Ազնը, Մուհամմեդ Քուլոյ Ալին, Մահիբ ալ-Դին ալ-Քաթիբը, Լուֆֆի ալ-Մաֆարը, Սալահ ալ-Դին ալ-Քասիմը և այլք²: Կազմակերպության հիմնական նպատակներն էին արաբական վիլայեթների ապակենտրոնացման միջոցով արաբների իրավունքների ապահովումը և արաբական վիլայեթներում արաբերենի՝ որպես պաշտոնական լեզվի ճանաչումը: Կազմակերպությունն սկսեց կապեր հաստատել արաբական այլ քաղաքների, հատկապես Բեյրութի առաջադեմ շրջանների հետ: Հետագայում՝ ընկերության լուծարումից հետո, նրա անդամներն սկսեցին համագործակցել այլ կազմակերպությունների հետ կամ ընդգրկվեցին ավելի ուշ ստեղծված կազմակերպությունների շարքերը:

1906 թ. ուսումը շարունակելու համար Կ.Պոլիս ժամանած սիրիացիներ՝ իրավաբանական ֆակուլտետի ուսանող, Թահիր ալ-Ջազահիրիի գաղտնի ընկերության անդամ Մուհիբ ալ-Դին ալ-Քաթիբը, Արիֆ ալ-Շիհարը և երկու այլ ուսանողներ հիմնեցին «Արաբական վերածնունդ» ընկերությունը³, որն սկզբնապես, փաստորեն, գրական և լուսավորական ակումբ էր: Այն իր առջև նպատակ էր դրել ապահովելու արաբական դարավոր մշակույթի վերածնունդը և արաբ ժողովրդի առաջընթացը: Ակումբի ղեկավարները, հասկանալիորեն, մեծ դեր էին վերագրում արաբերենին՝ դիտելով այն որպես արաբների գիտական, քաղաքական և սոցիալական կյանքի զարգացման կարևոր գրավական:

¹ D. Commins, *Islamic Politics and Social Change in Late Ottoman Syria*. New York, 1990, p. 96.

² Л. Котлов, *Становление национально-освободительного движения на Арабском востоке*, т. 269:

³ Y. Choueiri, *ևշվ. աշխ.*, էջ 77:

Նրանք կազմակերպում էին դասախոսություններ, դրամական միջոցներ էին հայթայթում՝ գրքեր ու պարբերականներ հրատարակելու և սեփական ընթերցասարսիք բացելու համար¹:

Մուհիբ ալ-Դին ալ-Քաթիբը շարունակում էր կապեր պահպանել Դամասկոսում գտնվող իր գործընկերներ Սալահ ալ-Դին ալ-Քասիմի և Լուֆֆի ալ-Հաֆարի հետ՝ փորձելով նրանց օգնությամբ այնտեղ բացել «Արաբական վերածնունդ» ընկերության մասնաճյուղը, որտեղ և հետագայում տեղափոխվեց ընկերության կենտրոնը:

«Արաբական վերածնունդ» ընկերությունը համագործակցում էր «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության հետ, և պատահական չէ, որ նրա անդամների մի մասը 1909 թ. վերջին անցավ «Իթթիհադ վե թերաքքի»-ի շարքերը: Մինչդեռ ընկերության մյուս անդամները շարունակեցին իրենց գործունեությունն այդ կազմակերպության մեջ, որը հարկադրաբար վերանվանվել էր «Սիրիայի վերածնունդ» ընկերության², քանի որ 1909 թ. ընդունված «Միությունների մասին» օրենքն արգելում էր կազմակերպությունների անվանումների մեջ էթնոնիմների օգտագործումը:

Կազմակերպության գործունեությունն աստիճանաբար ձեռք բերեց նաև քաղաքական ուղղվածություն: Այն ակտիվորեն ներգրավվեց սահմանադրական բարեփոխումների իրականացման համար պայքարի մեջ՝ ձգտելով ապահովել արաբների ինքնության պահպանումն Օսմանյան կայսրության սահմաններում: Պատմաբան Էլիզբեթ Թորբերը, նկատի առնելով «Սիրիական վերածնունդ» ընկերության գործունեության ուղղվածությունն ու ընդարձակ ոլորտը, գրում է, որ «այն կարելի է համարել 1908-1914 թթ. ստեղծված արաբական կազմակերպությունների մայրը»³:

Շեղաշրջմանը նախորդող շրջանում ստեղծված արաբական կազմակերպությունների մեջ առանձնակի տեղ է զբաղում

¹ D. Commins, նշվ. աշխ., էջ 96-98:

² Y. Choueiri, նշվ. աշխ., էջ 78:

³ E. Tauber, *Four Syrian Manifestos After the Young Turk Revolution* / Peeters, *Turcica, Revue d'etudes Turques*, tome XIX, Leuven, 1987, p. 196-197.

նաև 1904 թ. Փարիզում արաբ քրիստոնյա Նաջիբ Ազուրիի կողմից հիմնադրված «Արաբական հայրենիք» լիգան, որն ակնհայտորեն հետապնդում էր արմատական նպատակներ: 1905 թ. լիգայի ֆրանսերենով հրատարակված մանիֆեստում կոչ էր արվում Սիրիայի և Իրաքի վիլայեթներն անջատել Օսմանյան կայսրությունից և ստեղծել անկախ, միացյալ արաբական սահմանադրական պետություն՝ խալիֆայի գլխավորությամբ, ով կլիներ նաև բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդը: Այս ծրագիրը նախատեսվում էր իրականացնել եվրոպացիների օգնությամբ¹: 1907-1908 թթ. (մինչև օսմանյան սահմանադրության հոչակումը) հրատարակվում էր կազմակերպության տպագիր օրգանը՝ «L'Indépendance arabe» («Արաբական անկախություն») ամսագիրը: Ամսագրի հիմնական նպատակը եվրոպայում արաբական երկրների մասին տեղեկությունների տարածումն էր և դրանց ազատագրման խնդրի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը²:

Նաջիբ Ազուրիի քաղաքական հայացքներն ու ծրագրերն առավել հստակորեն արտահայտված են նրա «Le Reveil de la nation arabe» («Արաբական ազգի զարթոնքը») գրքում: Այստեղ Ազուրին այն տեսակետն է հայտնում, որ արաբները երբեք չեն կարողանա իրենց վայել դիրք գրավել Օսմանյան կայսրությունում, ինչպես նաև նրա իշխող շրջաններում: Նա պնդում է, որ «արաբները բոլոր քնազավառներում ավելի լավն են, քան թուրքերը», և քանի որ թուրքերն արգելակում են արաբների զարգացումը, ապա անհրաժեշտ է ազատվել Աբդուլ Համիդի քոնակալական տիրապետությունից և թուրքական իշխանությունից ընդհանրապես³: Ազուրին առաջ քաշեց «Արաբական երկրները՝ արաբներին» կարգախոսը: Այդ նպատակին հասնելու միակ ուղին նա համարում էր Օսմանյան կայսրության բոլոր ազգերի միավորումը և համատեղ պայքարը Աբդուլ Համիդի քոնակալական վարչակարգի դեմ:

Այսպիսով, 1902 թ.-ից (երիտթուրքական առաջին կոնգրե-

¹ Կոչի ամբողջական տեքստը տե՛ս հավելված 1-ում:

² Ազուրին արաբ ազգի մեջ ընդգրկում էր Ասիայի բոլոր արաբական երկրները, բացի եգիպտոսից և հյուսիսային Աֆրիկայի երկրներից:

³ A. Haurani, *Arabic Thought in the Liberal Age 1796-1939*, London, 1970, p.278.

սից հետո) մինչև երիտթուրքական հեղաշրջումն ստեղծված արաբական կազմակերպությունների մեծ մասն իրենց ծրագրերում կարևորում էին սահմանադրության վերականգնումը, Աքդուլ Համիդի բռնակալության տապալումը և, որ ամենակարևորն է, արաբական վիլայեթներին ներքին ինքնավարության տրամադրումը: Արաբական կազմակերպությունների և գործիչների շատ փոքր մասն էր միայն, որ հանդես էր գալիս արաբական երկրների լիակատար անկախության պահանջով:

Ավելորդ չէ, հիշատակել այս շրջանի մեկ այլ կազմակերպություն ևս, որը չնայած կոչվում էր «Թուրքական անարխիստական կոմիտե», սակայն իրականում արաբական կազմակերպություն էր, որը պայքարում էր եմենը կայսրությունից անջատելու համար¹: Այսպիսի անվան տակ հանդես գալն ամենայն հավանականությամբ կազմակերպության իսկական ձգտումները սքողելու և իշխանությունների ուշադրությունը շեղելու նպատակ էր հետապնդում:

Վերը ներկայացված և քազմաթիվ այլ կազմակերպությունների գործունեությունը հաստատում է այն իրողությունը, որ հատկապես Օսմանյան կայսրության տարածքում գործող կազմակերպություններն ու խմբավորումները բավական սերտ կապեր ունեին երիտթուրքերի հետ, ովքեր իրենց հերթին շահագրգռված էին ավելի ջերմացնել հարաբերությունները կայսրության ժողովուրդների, այդ թվում նաև արաբների առաջադիմական կազմակերպությունների հետ՝ հստակորեն գիտակցելով, որ իրենց նպատակին հասնելու համար անհրաժեշտ է համախմբել կայսրությունում գործող բոլոր հակահամիդյան ուժերին:

Մասնավորապես, արաբական հեղինակավոր կազմակերպությունների ու գործիչների հետ համագործակցելով և մեծապես ազդելով նրանց հայացքների և քաղաքական ծրագրերի վրա՝ երիտթուրքերին հաջողվեց թե՛ խոստումներով և թե՛ այլ միջոցներով վերջիններին գրավել իրենց կողմը:

Թուրք-արաբական հարաբերությունների այսպիսի մթնոլորտում էլ տեղի ունեցավ երիտթուրքական II կոնգրեսը:

Երիտթուրքական երկրորդ կոնգրես

¹ M. Hanoglu, *The Young Turks and the Arab*, Եզվ. աշխ., էջ 42:

1902 թ. կոնգրեսից հետո երիտթուրքական ուժերը քաժանվեցին երկու հիմնական խմբի, ինչն անխուսափելիորեն պատակտում առաջացրեց նաև ընդդիմադիր ազգայնական կուսակցությունների շարքերում, որոնք միացան երիտթուրքական այս կամ այն խմբավորմանը: Սակայն, միաժամանակ գիտակցելով միավորման անհրաժեշտությունը, թե՛ երիտթուրքական և թե՛ ազգայնական ուժերը փորձեցին միմյանց հետ կապեր հաստատել՝ հիմք նախապատրաստելով հետագա համախմբման համար: Մանավանդ որ 1906-1907 թթ. կայսրությունում ստեղծված ներքաղաքական ճգնաժամը, ժողովրդական հակակառավարական ելույթների սաստկացումը և ընդհանրապես համատարած դժգոհությունը սուլթանական վարչակարգից իրական նախադրյալներ էին ստեղծում այդ նպատակի իրականացման համար:

Կոնգրեսի հրավիրման նախաձեռնությամբ հանդես եկավ Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցությունը: Վերջինս դիմեց երիտթուրքական շարժման երկու հիմնական խմբավորումների՝ «Իթթիհադ վե թերաքքի»-ի ու «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերության» ղեկավարներին կոնգրեսի գումարման առաջարկով, որտեղ պետք է քննարկվեր ընդդիմադիր ուժերի հետագա համատեղ գործողությունների ծրագիրը: Կոնգրեսի կազմակերպման և նրա աշխատանքների համակարգման նպատակով ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի մեջ մտան «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության ներկայացուցիչներ Ահմեդ Ռիզա քեյն ու Սեզայի քեյը, «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերության» անդամներ արքայազն Սաբահեդդինը, Ֆազիլ քեյը և Նիհաթ քեյը, ինչպես նաև Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամ Խ. Մալումյանը¹: Հանձնաժողովը որոշեց ղեկտնման 27-ին Փարիզում հրավիրել կայսրության բոլոր ընդդիմադիր կազմակերպությունների և խմբավորումների միասնական համագումար:

Կոնգրեսը գումարվեց 1907 թ. ղեկտնման 27-29-ը Փա-

¹ M. Hanioglu, *The Young Turks on the Verge of the 1908 Revolution*, Եջվ. աշխ., էջ 300, B. Lewis, Եջվ. աշխ., էջ 196:

րիզում: Կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էին «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, հրեական «Լավորա» («Աշխատանք») կուսակցությունը, արաբական «Աիդի օսմանի» («Օսմանյան ուխտ») ընկերությունը, ինչպես նաև մի շարք թերթերի խմբագրությունների ներկայացուցիչներ¹: Հետագայում կոնգրեսի որոշումներին միացան նաև «Օսմանյան հեղափոխականների դաշնությունը», «Թուրքական լիբերալների կենտրոնական կոմիտեն» և «Ներքին մակեդոնական կազմակերպությունը»²:

Կոնգրեսի մասնակիցները, լավ հասկանալով համախմբման կարևորությունը, ընդհանուր նպատակին հասնելու համար ժամանակավորապես հետին պլան մղեցին իրենց պահանջները և գնացին փոխգիշտումների: Ազգայնական կազմակերպությունները հրաժարվեցին իրենց անջատողական ձգտումներից, «Իթթիհադ վե թերաքքի»-ն համաձայնեց ճանաչել Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող ազգերի քաղաքական և մշակութային ինքնավարությունը, իսկ արքայազն Սաբահեդդինի խմբավորումը փաստորեն տեղի տվեց միլայեթների ինքնավարության հարցում կանգ առնելով վարչական հաստատությունների ապակենտրոնացման վրա³:

Կոնգրեսի աշխատանքների վերջին օրն ընդունվեց հայտարարություն, որում առաջադրված խնդիրները կարելի է ամփոփել երեք հիմնական կետերում, որոնց շուրջ թլլոր մասնակիցները եկան ընդհանուր հայտարարի.

1. Գահընկեց անել սուլթան Աբդուլ Համիդին⁴:
2. Արմատապես փոխել գոյություն ունեցող վարչակարգը:
3. Հաստատել խորհրդարանական կարգեր:

¹ Այդ թերթերի անվանումները տես *И. Голобородько, Старая и новая Турция, Москва, 1908, с. 217.*

² Նույն տեղում:

³ *Х. Габидуллин, Младотурецкая революция, Москва, 1936, с.104, И. Голобородько, նշվ. աշխ., էջ 217:*

⁴ Հարկ է նշել, որ կոնգրեսի մասնակիցները, հատկապես երիտթուրքերը, իրենց առջև նպատակ չէին դրել վերջ դնել սուլթանական իշխանությանը: Նրանց հիմնական նպատակը կայսրությունում սահմանադրական միապետության հաստատումն էր:

վերոհիշյալ խնդիրներն իրականացնելու համար մշակվեց և ներկայացվեց հետևյալ մարտավարությունը.

1. Ձինված դիմադրություն կառավարության գործողություններին:

2. Ոչ զինված դիմադրություն քաղաքական և տնտեսական գործադուլների, պետական ծառայողների, ոստիկանության և այլ գործադուլների կազմակերպման միջոցով:

3. Հրաժարում հարկերի վճարումից:

4. Քարոզչություն քանակում. կոչ անել զինվորներին դուրս չգալ ազգաբնակչության և հեղափոխականների դեմ:

5. Համընդհանուր ապստամբություն:

6. Գործողությունների այլ մեթոդներ՝ թելադրված հանգամանքներով¹:

Այս կարևոր փաստաթղթի տակ իրենց ստորագրություններն էին դրել կոնգրեսի մասնակից բոլոր ուժերը:

Ընդդիմադիր ուժերի այս համաձայնությունը պահպանվելու էր այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ կլիներ արդուհամիոյան վարչակարգի տապալման համար: Այնուհետև նրանցից յուրաքանչյուրն իրեն իրավունք էր վերապահում ինքնուրույն գործելու²:

1907 թ. Փարիզի կոնգրեսը, անկասկած, մեծապես նպաստեց սուլթանական քաղաքականությանն ընդդիմադիր ուժերի համախմբմանը: Կոնգրեսից հետո էլ ավելի ուժեղացավ երիտթուրքերի, հատկապես «Իթթիհադ վե թերաքքի» կոաակցության դերը, որի շուրջն էին համախմբվել կայսրության հակահամիոյան ուժերը, ինչը մեծ չափով նպաստեց կարճ ժամանակ անց երիտթուրքական հեղաշրջման իրականացմանը:

¹ А. Алямов, Революция 1908 в Турции / Пробуждение Азии 1905 год и революции на Востоке (сборник статей), Ленинград, 1935, с. 31.

² Х. Габидулин, ևշվ. աշխ., էջ 105:

**ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ.
ԱՐԱՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻԹԹԻՀԱՂԱԿԱՆՆԵՐԻՆ**

Երիտթուրքական հեղաշրջումը սկզբնապես ծրագրված էր իրականացնել 1909 թ. աշնանը, սակայն կայսրության ներքին գործերին օտարերկրյա միջամտության հավանականությունը հարկադրեց երիտթուրքերին արագացնել այն¹:

Ձինվորական ապստամբությունն սկսվեց 1908թ. հուլիսի 3-ին Մակեդոնիայում: Այդ օրը թուրքական քանակի Ռեսնայի կայազորի սպա Նիյազի բեյը, նախապես համաձայնության գալով Մոնաստիրի երիտթուրքական կենտրոնի հետ, իր 200 կողմնակիցներով ապստամբություն բարձրացրեց՝ հրաժարվելով ենթարկվել սուլթանին²: Մի քանի օր անց նրան միացավ նաև էնվեր բեյն իր 300 զինակիցներով: Շատ կարճ ժամանակում ապստամբությունը տարածվեց ողջ Մակեդոնիայում: Արդեն հուլիսի վերջերին Նիյազի բեյի քանակում հաշվվում էր մոտ 3 հազար զինվորական³, և աստիճանաբար նրանց թիվն ավելանում էր: Ապստամբները մեկը մյուսի հետևից գրավում էին Մակեդոնիայի վարչական կենտրոնները:

Սուլթանական իշխանությունը տարբեր ձևերով փորձում էր ճնշել հետզհետե ահազնացող շարժումը, սակայն ապարդյուն: Նույնիսկ Իզմիրից Սալոնիկ ուղարկված 27 գումարտակները հրաժարվեցին կրակել ապստամբների վրա և անցան նրանց կողմը⁴:

¹ Անգլիայի թագավոր Էդուարդ VII-ի և Ռուսաստանի թագավոր Նիկոլայ II-ի՝ 1908 թ. Ռեյնլանդի հանդիպման ժամանակ որոշվեց համատեղ միջամտել կայսրության (իատկապես Մակեդոնիայի) գործերին: X. Габидуллин, նշվ. աշխ., էջ 108:

² F. Ahmad, The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics, 1908-1914, Oxford, 1969, p. 4.

³ Г. Алкеев, Турция в период правления младотурок (1908-1918г.), Москва, 1972, с. 98.

⁴ Ю. Петросян, նշվ. աշխ., էջ 297:

Հուլիսի 22-23-ին Նիյազի քեյը գրավեց Մակեդոնիայում թուրքական իշխանության հենարանը՝ Մոնաստիր քաղաքը, և նույն՝ հուլիսի 23-ի գիշերը երիտթուրքական կոմիտեն նամակ հղեց սուլթանին՝ պահանջելով վերականգնել 1876թ. սահմանադրությունը և անցկացնել խորհրդարանական ընտրություններ: Երիտթուրքերը նաև սպառնում էին, որ եթե մինչև հուլիսի 26-ը չկատարվեն նամակում առաջադրված պահանջները, ապա իրենք բանակը կշարժեն դեպի Կ.Պոլիս¹:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը հայտնվեց ծանր դրության մեջ. հուլիսի 24-ի գիշերը գումարված սուլթանական կառավարության խորհրդի առաջարկով և ելնելով ստեղծված իրադրությունից՝ նա ստիպված եղավ վերականգնել սահմանադրությունը:

Այսպիսով, 33 տարվա ընդմիջումից հետո սուլթանական հրամանագրով սահմանադրությունը վերականգնվեց և հայտարարվեց խորհրդարանի հրավիրման մասին:

Երիտթուրքերի հաղթանակը և սահմանադրության վերականգնման լուրը մեծ խանդավառությամբ ընդունվեց Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում՝ արաբների կողմից: Արաբ ազգային գործիչները հույս էին տածում, որ երիտթուրքերի հաղթանակը հնարավոր կդարձնի արմատական փոփոխությունների իրագործումն արաբական վիլայեթներում և արաբ ազգային ինքնության ճանաչումը նորացված կայսրությունում²: Մի քանի շաբաթ շարունակ Կ.Պոլսում և կայսրության մյուս խոշոր քաղաքներում տեղի էին ունենում հանդիսություններ ու հավաքներ, որոնք ուղեկցվում էին թուրք և ոչ թուրք ժողովուրդների եղբայրացման կոչերով:

Արաբական վիլայեթներում պատկերը գրեթե նույնն էր: Դամասկոսում, Հալեպում, Բաղդադում, Բեյրութում ևս քաղաքային իշխանությունն անմիջապես անցավ տեղի երիտթուրքական կոմիտեներին, որոնք հիմնականում բաղկացած էին սպաներից: Նրանց պահանջով հեռացվում էին տեղական ինքնակառավարման մարմինների՝ իրենց դիրքն առավել չափով չարաշահած պաշտոնյաները: Ամենուրեք երիտթուրքերն իրենց

¹ И. Шпилькова, *Узл. узл.*, էջ 107, Г. Алшев, *Узл. узл.*, էջ 107:

² В. Луцкий, *Новая история арабских стран*, Москва, 1965, с. 295.

հսկողությունն էին սահմանում իշխանությունների վրա: Երկրում փաստորեն ստեղծվեց երկիշխանություն. պաշտոնական սուլթանական իշխանությունների կողքին հաստատվել էր «Իթթիհարդ վե թերաքքի»-ի փաստացի իշխանությունը¹:

Շեղաշրջումից մի քանի օր անց՝ օգոստոսի 5-ին, երիտթուրքերի պահանջով մեծ վեզիր Սայիդ փաշայի կառավարությունը, որը մեղադրվում էր սահմանադրության խախտման մեջ, հրաժարական տվեց: Օգոստոսի 6-ին վարչապետի պաշտոնում նրան փոխարինեց Քամիլ փաշան, որը և ձևավորեց առաջին սահմանադրական կառավարությունը²: Կառավարության մեջ ներգրավվեցին հիմնականում նախկին պաշտոնյաները³: Չնայած երիտթուրքերը նոր կառավարությունում ոչ մի պաշտոն չգրադեցրին, սակայն իրականում իրենց ենթարկեցին ողջ իշխանությունը:

Շեղաշրջումից հետո երիտթուրքերը, փաստորեն, երկրի կառավարման համակարգում որևէ արմատական փոփոխություն չիրականացրին. նրանք նույնիսկ գահընկեց չարեցին սուլթան Աբդուլ Համիդին, չնայած մինչև հեղաշրջումը այն ներկայացվում էր որպես երիտթուրքերի հիմնական նպատակներից մեկը և ամրագրված էր երիտթուրքական երկրորդ կոնգրեսի ընդունած ծրագրում: Իհարկե, սուլթանի իրավունքները զգալի չափով նվազեցվեցին. մասնավորապես, նրան գրկեցին ռազմական և ռազմածովային նախարարներին նշանակելու իրավունքից՝ դրանով իսկ զինված ուժերը դուրս բերելով սուլթանի հսկողությունից և այն կենտրոնացնելով մեծ վեզիրի ձեռքում: Սուլթանը գրկվեց նաև արտաքին քաղաքական բանակցություններ վարելու իրավունքից: Սուլթանին թողնելով գահին՝ երիտթուրքերը, այնուամենայնիվ, փորձում էին նրան աստիճանաբար մեկուսացնել և թույլ չտալ որևէ չափով միջամտել կայսրության ներքին ու արտաքին կարևոր խնդիրների լուծմանը⁴:

Իշխանության գալուց հետո իթթիհարականներն անցկաց-

¹ И. Шпилькова, *Եզվ. աշխ.*, էջ 124-127:

² F. Ahmad, *Եզվ. աշխ.*, էջ 21:

³ И. Шпилькова, *Եզվ. աշխ.*, էջ 131:

⁴ *Նույն տեղում*, էջ 132:

րին մի շարք բարեփոխումներ: Նրանց ճնշմամբ վերացվեց սուլթանի 30-հազարանոց գաղտնի ոստիկանությունը, շնորհվեցին մի շարք ազատություններ, վերացվեց գրաքննությունը: Աշխուժացավ կայսրության քաղաքական կյանքը. ստեղծվեցին բազմաթիվ ընկերություններ ու խմբավորումներ, սկսեցին հրատարակվել նոր թերթեր և պարբերականներ: Միայն Բեյրութում սահմանադրության վերականգնումից հետո լույս տեսավ 60, իսկ Բաղդադում՝ 40 նոր թերթ¹: Արդեն 1909 թ. Կ.Պոլսում հրատարակվող արաբալեզու պարբերականների թիվը հասավ 7-ի, իսկ Դամասկոսի վիլայեթում՝ 67-ի: Նույն տարում Կ.Պոլսում լույս տեսավ նաև միաժամանակ արաբերենով ու թուրքերենով 12, իսկ արաբական այլ վիլայեթներում՝ 41 պարբերական (նախկինում դրանց ընդհանուր թիվը հասնում էր 14-ի)²:

1908 թ. հուլիսի 23-ի երիտթուրքական հեղաշրջումը մեծ հույսեր ներշնչեց Օսմանյան կայսրության ոչ թուրք, այդ թվում նաև արաբ ազգաբնակչությանը: Արաբական գրեթե քոլոր խոշոր քաղաքներում տեղի ունեցան տոնախմբություններ, անցկացվեցին երթեր և հանրահավաքներ: Ոգևորված երիտթուրքերի՝ Օսմանյան կայսրության ողջ ազգաբնակչության հավասարության խոստումներով՝ արաբների մի մասը հնարավոր էր համարում կայսրության սահմաններում ինքնավարության ձեռքբերումը: Սակայն, ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, խոսքով հռչակելով օրենքի առջև կայսրության քոլոր ժողովուրդների և քոլոր քաղաքացիների իրավահավասարություն՝ երիտթուրքերը դրանով փորձում էին համոզել ոչ թուրք ժողովուրդներին, որ հեղաշրջումը վերջ է դրել ազգային հարցին³: Նրանք այդպես էլ չկատարեցին իրենց խոստումները և, որդեգրելով օսմանիզմի գաղափարախոսությունը (ինչը չէր գր-

¹ Ն. Հուլիաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. II, Երևան, 2004, էջ 467:

² A. Temini, Politique des jeunes Turcs en Bilad es-Sham et revolte arabe en 1916: Nouvel essai d'interpretation / Revue d'histoire Magrebine, numeros 65-66, août, Tunisie, 1992, p. 82.

³ Հր. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 207:

հացնում ազգային գործիչների մի մասին), էլ ավելի տաստկացրին կայսրության ոչ թուրք ժողովուրդների ծովանն ուղղված քաղաքականությունը:

Երիտթուրքական հեղաշրջման առաջին ամիսներին իթթիհադականների վարկանիշն այնքան բարձր էր արաբ ազգային գործիչների մոտ, որ նրանք նույնիսկ երիտթուրքների առջև չէին բարձրացնում ազգային խնդիրներ՝ վստահ լինելով, որ սահմանադրությունն ինքնըստինքյան կապահովի կայսրության բոլոր ազգությունների հավասարությունը: Պատահական չէ, որ հենց այս ժամանակ ստեղծվեցին արաբական մի շարք կազմակերպություններ, որոնք, ներշնչված այդ հույսերով, իրենց նպատակների իրականացմանն ուղղված պրակտիկ գործունեության հնարավորությունը կապում էին իթթիհադականների հետ:

«Արաբազսմանկյան եղբայրություն»

Շեղաշրջումից անմիջապես հետո երկրում ստեղծված իրադրության պայմաններում արաբական առաջադիմական խմբավորումներն ու առանձին գործիչներ, սահմանադրական իշխանությունն արդեն իսկ դիտելով որպես իրենց ազգային ձգտումների իրականացման հուսալի գրավական, առաջնահերթ խնդիրը համարեցին աջակցությունը նոր իշխանությունների և «Իթթիհադ վե թերաքքի» կոմիտեի գործունեությանը: Սահմանադրության վերականգնումից հետո շեղիված ազատությունների հետևանքով կայսրության հասարակական կյանքը բուռն ծաղկում ապրեց: Կարճ ժամանակում երկրի ողջ տարածքում, այդ թվում նաև արաբական վիլայեթներում և հատկապես Սիրիայում ու Իրաքում բացվեցին ազգային դպրոցներ, սկսեցին լույս տեսնել թերթեր և պարբերականներ, ստեղծվեցին բազմաթիվ լուսավորական, մշակութային, բարեգործական և այլ կազմակերպություններ, որոնք ակտիվորեն ներգրավվեցին կայսրության քաղաքական կյանքի մեջ:

1908 թ. սեպտեմբերի 2-ին¹ (մեկ այլ տվյալով՝ օգոստոսի 5-ին)² Կ.Պոլսում տեղի արաբական համայնքի ժողովի ժամա-

¹ Y. Choueiri, նշվ. աշխ., էջ 80:

² J. Hajjar, L'Europe les destinées du Proche-Orient. Le Nationalisme arabe, syrien entre la jeune Turquie et les puissances (1908-1914), Damas, p.118:

նակ ստեղծվեց արաբական ազգային առաջին օրինական կազմակերպությունը՝ «Արաբասումանյան եղբայրությունը» («ալ-Իխվա ալ-արաբի ալ-օսմանի»), որի թե՛ խոսում անվանումը և թե՛ մանավանդ, ծրագրի բովանդակությունն արտահայտում էին կազմակերպության նպատակներն ու գործունեության ուղղությունները:

«Արաբասումանյան եղբայրությունն» ամեն կերպ ջանում էր ցուցադրել իր համակրանքն ու հավատարմությունը երիտթուրքերին և սահմանադրության դրույթները պահպանելու գործում վերջիններիս աջակցելու պատրաստակամությունը: Այն իր առջև դրված խնդիրների շարքում կարևորում էր նաև կայսրության բոլոր ազգերի միավորումը «մեկ օսմանյան ընտանիքում»՝ սուլթանին հավատարմության ոգով, Օսմանյան կայսրության բոլոր շրջանների հանդեպ արդար վերաբերմունքը, արաբական վիլայեթներում բարենորոգումների անցկացումը, արաբերենով լուսավորության տարածումը, ազգային սովորույթների վերականգնումը: Կազմակերպությունը նաև կոչ էր անում արաբներին ստեղծել առևտրական, արդյունաբերական և հողագործական ընկերություններ¹: Ինչպես նշվում էր ծրագրի առաջին կետում, կազմակերպության անդամ կարող էր դառնալ ցանկացած դավանանքի և ազգության պատկանող յուրաքանչյուր օսմանցի: Բայց և այնպես ընկերությանն անդամակցեցին միայն արաբները²:

Ակնհայտորեն երևում է, որ «Արաբասումանյան եղբայրության» պահանջները քավական չափավոր էին և սահմանափակվում էին միայն սոցիալական ու լուսավորական խնդիրներով: Դատելով ծրագրային հիմնադրույթներից՝ այն կարելի է համարել «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության արաբական մասնաճյուղ: Սակայն առկա են մի շարք կարևոր հանգամանքներ, որոնք կասկածի տակ են դնում կազմակերպության միանշանակ իթթիհադական կողմնորոշումը և բացահայտում են նրա իրական նպատակները: Հայտնի է, որ «Արաբասումանյան եղբայրության» հիմնադրման նախաձեռնությունը պատկանում

¹ Y. Choueiri, նշվ. աշխ., էջ 80:

² A. Hansu, The Revolution in Turkey, Leiden, 1997, p.183.

էր Շաուֆիկ ալ-Մուայադին՝ ընկերության ղեկավարին, որը խնամիական կապեր ուներ նախկին մեծ վեզիր Ջեվադ փաշայի հետ, ալ-Մուայադի մերժավոր գործընկեր Նադրա Մուտրանին և Շաքիր ալ-Հուսեյնին, որը նախկին վարչակարգի ժամանակ զբաղեցնում էր Լուսավորության նախարարության գլխավոր հաշվապահի պաշտոնը¹: Կազմակերպության մեջ գերիշխում էին նախկին վարչակարգի կողմնակիցները, որոնց անդամակցությունն «Արաբասումանյան եղբայրությանը» հետապնդում էր արաբների՝ հատկապես միապետական կարգերի կողմնակիցների շահերի պաշտպանության նպատակ²: Հենց այս նույն հանգամանքն առիթ է տվել որոշ ուսումնասիրողների առաջ քաշել այն տեսակետը, որ «Արաբասումանյան եղբայրությունը» ոչ միայն չէր ստեղծվել «Իթթիհար»-ին աջակցելու համար, այլև հանդես էր գալիս որպես նրան ընդդիմադիր ուժ, և, ելնելով դրանից, նրան դասում են հակակառավարական կազմակերպությունների շարքը: Դրա վառ ապացույցն է այն, որ 1909 թ. խոտվության փորձի տապալումից հետո «Արաբասումանյան եղբայրության»³, ինչպես նաև մի շարք այլ ընդդիմադիր կազմակերպությունների գործունեությունն արգելվեց՝ միապետական ուժերին աջակցելու մեղադրանքով: Այդ կապակցությամբ Ամին Սայիդն իր «Արաբական մեծ հեղափոխություն» ուսումնասիրության մեջ գրում է. «...նրա («Արաբասումանյան եղբայրության» - Ա.Գ.) հիմնադիրների որոշ մասը Արդուլ Համիդի դարաշրջանի խոշոր պաշտոնյաներից էին: Նրանք վախենում էին իրենց պաշտոնների համար նոր պայմաններում, իրենց կողմը զրավեցին որոշ խանդավառ երիտասարդ արաբների և հիմնեցին այդ կազմակերպությունը՝ իրենց իրավունքների պաշտպանության համար»⁴:

¹ М. Лазарев, Крушение турецкого господства на Арабском востоке, Москва, 1960, с. 32, А. Hamsu, նշվ. աշխ., էջ 182-183.

² Նույն տեղում, էջ 183:

³ J. Hajar, նշվ. աշխ., էջ 119, В. Tibi, Arab Nationalism a Critical Enquiry, Hong Kong, 1981, p. 82.

⁴ Уссурийцамъ гласъ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., Москва, 1986, с.167-168.

Սակայն որքան էլ նախկին կարգերի կողմնակիցները կազմակերպության մեջ գերիշխող դիրքեր էին զբաղեցնում, այնուամենայնիվ, նրա անդամների շարքում քիչ չէին նաև արաբների ազգային շահերի ջատագովները: 1908 թ. հոկտեմբերին երիտթուրքերի հրապարակած ծրագրի առանձին կետեր¹, որոնք չէին թաքցնում վերջիններիս ազգայնամուլական ձգտումները, արդարացի դժգոհություն առաջացրին ընկերության առանձին ներկայացուցիչների մոտ (Արդ ալ-Համիդ ալ-Ջահրավի, Արդալ Վահաբ ալ-Ինզիզի, Քասիմ ալ-Իսալի, Նադրա Մուտրան և այլք, ովքեր հետագայում կարևոր դեր խաղացին արաբական ազգային շարժման զարգացման գործում): Վերջիններս պահանջեցին դադարեցնել աջակցությունն իթթիհադական կոմիտեին²: Ճարավոր է նաև, որ հենց այդ պատճառով էլ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Օսմանյան կայսրությունում անցկացված խորհրդարանական ընտրությունների ժամանակ «Արաբ-օսմանյան եղբայրության» հիմնադիր Շուֆիկ ալ-Մուայադը դրեց իր թեկնածությունն ընդդեմ «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության թեկնածուի³:

Կազմակերպությունն իր կարճատև գործունեության ընթացքում, այնուամենայնիվ, կարողացավ մասնաճյուղեր հիմնել Դամասկոսում, Բեյրութում, Հալեպում և այլ խոշոր քաղաքներում⁴: Ընկերությունն ուներ նաև իր տպագիր օրգանը՝ «Օսմանյան եղբայրություն» («ալ-Իխվա ալ-օսմանի») թերթը, որն իր գործունեությունը դադարեցրեց 1909 թ. ապրիլի կեսերին՝ կուսակցության հետ միասին⁵:

Չնայած ամենատարբեր պատճառներով կազմակերպության գործունեության սահմանափակությանը (հրապարակային դասախոսություններ, հասարակության կարիքների համար մի-

¹ Երիտթուրքերի հռչակած ծրագրի հիմնական դրույթները տե՛ս հավելված 2-ում:

² M. Nazaree, նշվ. աշխ., էջ 33:

³ J. Hajjar, նշվ. աշխ., էջ 127:

⁴ Միայն Հալեպի մասնաճյուղը միավորում էր 900 մուսուլման և քրիստոնյա արաբների: Տե՛ս A. Hansu, նշվ. աշխ., էջ 183:

⁵ J. Hajjar, նշվ. աշխ., էջ 119:

ջոցների հանգանակություն, խորհրդարանի արաբ պատգամավորների պատվին ընդունելության կազմակերպում և այլն), այնուամենայնիվ, «Արաբասոսմանյան եղբայրությունը», լինելով սահմանադրական շրջանի առաջին օրինական կազմակերպությունը, առաջ քաշեց Օսմանյան կայսրության արաբ ժողովրդի խնդիրները, ինչը կարևորում է նրա դերն ու նշանակությունն արաբական ազգային շարժման մեջ:

1908 թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԱԲ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1908 թ. հուլիսի 23-ի երիտթուրքական հեղաշրջումից անմիջապես հետո երիտթուրքերի կարևորագույն խնդիրները դարձան ընտրությունների անցկացումը և խորհրդարանի ձևավորումը, որը պետք է դառնար իրենց իշխանության օրինականացման ու ամրապնդման հիմքը:

Ինչպես և պետք էր սպասել, Օսմանյան կայսրությունում 1908 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անցկացված խորհրդարանական ընտրություններն առավել ակնհայտ դարձրին կայսրությունում ձևավորված քաղաքական հոսանքների միջև պայքարը: Այդ պայքարը հիմնականում ծավալվում էր սահմանադրության և հին վարչակարգի կողմնակիցների միջև, որոնցից յուրաքանչյուրը տարբեր միջոցներով փորձում էր առավելագույն պատգամավորական տեղեր ապահովել խորհրդարանում:

Օսմանյան կայսրության սահմանադրությունը նախատեսում էր երկաստիճան ընտրություններ, այսինքն՝ քնակչությունը նախ պետք է ընտրեր ընտրողներին, իսկ վերջիններս, իրենց հերթին, պատգամավորներին: Ընտրական օրենքում, որն ընդունվել էր դեռևս 1877 թ., առկա էին մեծ թվով ընտրական սահմանափակումներ. մասնավորապես, ընտրելու իրավունքից զրկվում էին կանայք, հող և անասուն չունեցող գյուղացիները,

քրեական հանցանքներ կատարած անձինք և այլք: Ընտրելու իրավունք էր տրվում նրանց, ովքեր վճարում էին հողահարկ և շահութահարկ¹:

Այս օրենքի մեջ երիտթուրքական իշխանությունների կողմից մտցվեցին մի շարք փոփոխություններ, որոնք պետք է իրենց առավելություն տային խորհրդարանական ընտրություններում: Այսպես, օրինակ, եթե 1877 թ. ընդունված օրենքի համաձայն պատգամավորը կարող էր ընտրվել միայն այն շրջանից, որտեղ նա բնակվել էր որոշակի ժամանակ, ապա այժմ այդ սահմանափակումը վերացվում էր² հնարավորություն տալով իթթիհադականներին իրենց թեկնածուներին առաջադրել ցանկացած շրջանից, որտեղ ավելի լայն հնարավորություններ կային կազմակերպելու նրանց ընտրությունը և ապահովելու տարբեր շրջաններից իրենց առավել մեծ թվով կողմնակիցների ներգրավումը խորհրդարան:

Հարկ է նշել, որ իթթիհադականներն ընտրական պայքարի մեջ մտան՝ ունենալով քավական լավ կազմակերպված և գործուն համակարգ: Ողջ երկրով մեկ ստեղծված իթթիհադական ակումբներն ակտիվ քարոզչություն էին ծավալում իրենց թեկնածուների օգտին, նույնիսկ հատուկ գործակալներ էին ուղարկում կայսրության տարբեր վիլայեթներ, որոնք տեղում ընդարձակ քարոզչական աշխատանքներ էին իրականացնում: Օրինակ, այդ նպատակով Բասրա ուղարկվեց ճանաչված փաստաբան Ազիզ բեյը, Բեյրութ, Դամասկոս և Մոսուլ՝ մայրը Վեհիբ բեյը³:

Բացի այդ, երիտթուրքներն ունեին լավ մշակված նախընտրական ծրագիր, որտեղ մասնավորապես նախատեսվում էին սահմանադրության մեջ արմատական փոփոխություններ, ինչը գրավում էր կայսրության տարբեր ազգությունների, այդ թվում նաև արաբ ազգային գործիչների մեծ մասին:

Չափազանց կարևոր էր և այն, որ Օսմանյան կայսրության ազգությունները և հատկապես արաբներն իրենց ազգային

¹ حمن قلمی, նշվ. աշխ., էջ 109:

² И. Шпильнова, նշվ. աշխ., էջ 194:

³ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 173:

նպատակներին հասնելու համար շարունակում էին հույսեր կապել երիտթուրքերի հետ: Այն հանգամանքը, որ արաբական վիլայեթներում «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության վարկանիշը դեռևս բարձր էր, վերջիններիս համար ապահովեց արաբ գործիչների մեծ մասի աջակցությունը: Թերևս դա էր պատճառներից մեկը, որ իթթիհադականներն արաբական վիլայեթներում արաբ ազգայնականների կողմից չհանդիպեցին լուրջ դիմադրության: Եվ, վերջապես, այստեղ դեռևս չէին ձևավորվել այնպիսի ազգայնական խմբեր և կազմակերպություններ, որոնք կարողանային սեփական ուժերով ակտիվ մասնակցություն ունենալ ընտրություններին¹:

Այս և նման հանգամանքները, անշուշտ, էապես ազդեցին ընտրությունների ընթացքի վրա, որը շատ բարենպաստ էր երիտթուրքական «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության համար:

Սուլթանական իշխանությունն իր հերթին ջանում էր փոխել ստեղծված իրադրությունը՝ փորձելով շրջանցել իրեն ոչ ձեռնառու ընտրական օրենքը: Այս նպատակով մեծ վեճիր Սայիդ փաշան², օրինակ, հատուկ շրջաբերական ուղարկեց կայսրության բոլոր վիլայեթներ, որում, մասնավորաբար, ասվում էր. «Հաշվի առնելով խորհրդարանի գումարման հրատապությունը՝ թույլատրվում է պատգամավորների ընտրությունը ոչ թե ժողովրդի, այլ տեղի վարչակազմի անդամների կողմից»³:

Կասկածից դուրս է, որ եթե այս շրջաբերականը կենսագործվեր, ապա պատգամավորական տեղերի մեծ մասը կզբաղեցնեին սուլթանական վարչակազմի կողմնակիցները: Պատահական չէ, որ առաջարկվող ընտրակարգի դեմ անմիջապես

¹ Ա. Գասպարյան, 1908 թ. խորհրդարանական ընտրություններն Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, երևան, 2005, էջ 78:

² Մեհմեդ Սայիդ փաշան 1876 թ. եղել է Աբդուլ Համիդի առաջին քարտուղարը: 1879 թ. նա դարձավ Օսմանյան կայսրության մեծ վեճիր, 1908 թ. հուլիսի 22-ին յոթերորդ անգամ զբաղեցրեց մեծ վեճիրի պաշտոնը: Տե՛ս F. Ahmad, նշվ. աշխ., էջ 178:

³ Մ. Шихольцова, նշվ. աշխ., էջ 195:

սուր քննադատությամբ հանդես եկան սահմանադրական ընտրությունների կողմնակիցները, որոնց ի վերջո հաջողվեց կասեցնել դրա իրականացումը:

Ավելորդ չէ նշել նաև, որ երիտթուրքական իշխանություններին ընդդիմադիր էին ոչ միայն նախկին վարչակարգի ներկայացուցիչները, այլև քաղաքական այլ ուժեր, որոնք ձևավորվել էին հեղաշրջումից հետո:

Խորհրդարանական ընտրությունների նախօրյակին՝ 1908 թ. սեպտեմբերի 14-ին, Կ.Պոլսում ստեղծվեց «Իթթիհադ վեթերաքքի»-ին ընդդիմադիր «Օսմանյան լիբերալներ» կուսակցությունը («Օսմանլի աիրար Ֆըրքասի»), որի գլխավոր քարտուղարն ազգությամբ արաբ Նուր ալ-Դին Ֆարուխն էր¹: Կուսակցության մեջ ներգրավված էին կայսրության տարբեր ազգությունների ներկայացուցիչներ, հատկապես հույներ և հայեր: Անհամեմատ փոքր էր թուրքերի թիվը, որոնք հիմնականում «Իթթիհադ վեթերաքքի»-ի նախկին անդամներն էին²:

«Աիրար»-ը իթթիհադականներին մեղադրում էր ազգայնամուլական կողմնորոշման մեջ: Պատահական չէ, որ, ի տարբերություն «Իթթիհադ վեթերաքքի»-ի հայեցակարգի, որտեղ ակնհայտ էր կայսրության ոչ թուրք ազգությունների նկատմամբ անհանդուրժողականությունը, «Աիրար»-ի ծրագրում առաջ էր քաշվում դեռևս 1902 թ. թագաժառանգ Սարահեդդինի հուշակած ապակենտրոնացման և ազգերի միասնության գաղափարը:

Այսուհանդերձ, «Աիրար»-ի դիրքերը շատ թույլ էին: Դրա պատճառներից մեկը, հավանաբար, այն էր, որ, ստեղծվելով ընտրությունների նախօրյակին, կուսակցությունը պարզապես չհասցրեց իր մասնաճյուղերը հիմնել կայսրության վիլայեթներում և ինչպես հարկն է նախապատրաստվել ընտրություններին: Հետևանքը եղավ այն, որ լիբերալները կատարյալ պարտություն կրեցին Կ.Պոլսում. նրանց հաջողվեց խորհրդարան

¹ J. Højjar, նշվ. աշխ., էջ 121:

² Ա. Մանդելշտամ, Երիտասարդ թուրքերի պատմությունը, Էջմիածին, 1916, էջ 12:

անցկացնել միայն մեկ թեկնածուի՝ Մահիր Սայիդ բեյին Անկարայի ընտրատարածքից¹:

Չնայած այս հանգամանքին՝ «Աիրար» կուսակցությունը հետագայում խորհրդարանում գտավ 50 պատգամավորների աջակցությունը, որոնք առաջադրվել էին իթթիհադականների կողմից և ներկայացնում էին արաբներով, այքանացիներով, հայերով, հույներով և կայսրության այլ ազգություններով քնակեցված շրջանները²: Վերջիններիս համար առավել գրավիչ էր «Աիրար»-ի առաջարկած սահմանադրական փոփոխությունների ծրագիրը, որտեղ նախատեսվում էր ավելի ընդլայնել վիլայեթների իրավունքները և համապատասխան այդտեղ քնակվող ազգությունների թվաքանակի՝ կարգավորել պաշտոնների նշանակումը դրանց վարչակազմերում:

Չնայած բարենպաստ պայմաններին՝ իթթիհադականները խորհրդարանում իրենց կողմնակիցների մեծամասնությունն ապահովելու համար դիմում էին նաև տարատեսակ ընտրախախտումների և վարչական ճնշումների:

Երիտթուրքերին առավելապես անհանգստացնում էր ընտրությունների ընթացքն արաբական վիլայեթներում: Նրանց առաջնահերթ նպատակը խորհրդարան մեծ թվով թուրք պատգամավորների ներգրավմամբ այնտեղ թուրքական տարրի գերակայության ապահովումն էր, ինչը մեծապես կնպաստեր երկրի թուրքացման ծրագրի իրականացմանը: Մինչդեռ արաբ ազգաբնակչության թվին համապատասխան արաբ պատգամավորների ընտրվելը (որոնք կգրադեցնեին խորհրդարանի պատգամավորական տեղերի զգալի մասը) փաստորեն կխոչընդոտեր երիտթուրքերի նպատակների իրականացումը: Փորձելով սահմանափակել արաբների մասնակցությունն ընտրություններին՝ երիտթուրքական իշխանությունները դիմեցին ամենատարբեր միջոցների: Վերջիններս, մասնավորապես, պահպանեցին սահմանադրության մեջ ամրագրված այն դրույթը, համաձայն որի՝ Օսմանյան կայսրության խորհրդարանի պատգա-

¹ F. Ahmad, նշվ. աշխ., էջ 28:

² Э.Тумя, Национально-освободительное движение и проблемы арабского единства. Москва, 1977, с. 97:

մավոր կարող էին ընտրվել միայն նրանք, ովքեր տիրապետում էին թուրքերենին¹, հանգամանք, ինչը մեծ չափով կնվազեցներ արաբական, ինչպես նաև մյուս վիլայեթներից ընտրվողների հնարավորությունները: Կայսրության որոշ տարածքներում թուրքերենին տիրապետողների շրջանակը սահմանափակվում էր պետական հաստատություններում ծառայող պաշտոնյաներով և հին վարչակարգի այն ներկայացուցիչներով, ովքեր հեռու էին արաբական ազգային շարժումից և, քնականարար, առավել ընդունելի էին երիտթուրքերի կողմից²: Բացի այս սահմանափակումից, իշխանություններն ուղղակի աշխատանքից ազատեցին ներքին և արտաքին գործերի նախարարությունների արաբ պաշտոնյաներին: Արաբական շրջաններում ծառայող մի խումբ արաբ սպաներ ուղարկվեցին թուրքաշատ նահանգներ կամ ընդգրկվեցին ավելի ցածր աստիճանի ծառայություններում³: Կայսրության հեռավոր շրջաններում ժողովրդական ընտրություններ ընդհանրապես տեղի չունեցան. օրինակ՝ Եմենում պատգամավորներն ընտրվեցին Թաիսի և Սանայի շեյխերի ու առևտրականների կողմից⁴: Երիտթուրքերի գործելաոճի դրսևվորման համար պատեհ հնարավորություն էր ընձեռում սահմանադրության մեջ ամրագրված՝ ընտրատարածքների ձևավորման մասին անորոշ հոդվածը, որը, փաստորեն, մեկ պատգամավորի ընտրության իրավունք էր տրամադրում 50 հազար քնակչություն ունեցող շրջաններին՝ միաժամանակ նույնանման իրավունք վերապահելով նաև 25 հազարից ոչ պակաս և 75 հազարից ոչ ավել ազգաքնակչություն ունեցող շրջաններին⁵:

Ճարակորեն օգտագործելով այդ հնարավորությունը՝ իթթիհադականները թուրքերի թվական գերազանցություն ունեցող շրջանները միտումնավոր մասնատում էին մանր ընտրատա-

¹ Г. Алчев, *ibid.*, աշխ., էջ 128:

² Л. Котлов, *Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг.*, էջ 174:

³ الدكتور ترفيق بروه العرب و التترك في العهد العثماني ١٩٠٨-١٩١٤، دمشق، ١٩٩١، ص. ٨٧

⁴ حسن قايلى، *ibid.*, աշխ., էջ 111:

⁵ Օսմանյան կայսրության ընտրական օրենքը տե՛ս հավելված 3-ում:

րածքների՝ նրանցից յուրաքանչյուրին հնարավորություն տալով մեկական ներկայացուցիչ ունենալու խորհրդարանում և արտաքննապետ առանց ընտրակարգը խախտելու՝ ապահովել խորհրդարանում թուրքական տարրի գերակայությունը: Միևնույն ժամանակ հակառակ քաղաքականություն էր վարվում գերակշռաբար այլ ազգություններով բնակեցված տարածքներում:

Օսմանյան հպատակների իրավունքների այսպիսի կոպիտ խախտումների դեմ բազմաթիվ դժգոհությունները, ինչպես և պետք էր սպասել, իշխանությունների կողմից մնում էին անպատասխան:

Երիտթուրքերի ազգայնամոլության այս և նման դրսևորումները երկկողմ անվստահության և անհանդուրժողականության մթնոլորտ էին ստեղծում ընտրությունների ողջ ընթացքում:

Չնայած, օգտագործելով իրենց իշխանությունը, երիտթուրքերին հաջողվեց ընտրատարածքների մեծ մասում անցկացնել իրենց թեկնածուներին, սակայն դա դեռևս չէր նշանակում, որ ընտրություններում երիտթուրքերը ձեռք բերեցին բացարձակ առավելություն: Մասնավորապես, արարական մի շարք շրջաններում իթթիհադականները հանդիպեցին լուրջ ընդդիմության պահպանողական ուժերի կողմից, որոնք հիմնականում համախմբված էին այս կամ այն հեղինակավոր հոգևորականի կամ շեյխի շուրջը:

Բավական ուժեղ հակաիթթիհադական խմբավորում էր ձևավորվել, օրինակ՝ Բասրայում: Այստեղ իր թեկնածությունն էր առաջադրել հայտնի հողատեր Տալիբ փաշան, որը չնայած «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության անդամ էր, սակայն իրականում սուլթան Աբդուլ Համիդի կողմնակիցն էր: Պատահական չէ, որ երիտթուրքերն սկսեցին ակտիվորեն պայքարել նրա թեկնածության դեմ՝ նույնիսկ երեք անգամ անվավեր ճանաչելով Բասրայում անցկացված ընտրությունները: Այսուհանդերձ, Տալիբ փաշան, ինչպես նաև մեկ այլ խոշոր հողատեր՝ Նախկին վարչակարգի կողմնակից Ահմադ փաշան կարողացան ընտրվել պատգամավոր¹:

¹ Յ. Կյառ, նշվ. աշխ., էջ 103:

Անհրաժեշտ է նշել նաև, որ իթթիհադականների հարթանակն արաբական մի շարք վիլայեթներում կրում էր զուտ ճևական քնույթ: Հաճախ առաջադրվելով «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության կողմից՝ թեկնածուներն ընտրարշավի ժամանակ հանդես էին գալիս իթթիհադական ծրագրերով ու գաղափարներով, սակայն ընտրվելուց հետո արդեն որպես պատգամավոր գրեթե ոչնչով կապված չէին լինում իթթիհադականների հետ:

Ընտրությունները քավական լարված քնույթ կրեցին նաև Սիրիայում, հատկապես Դամասկոսում: Այդտեղ իրենց թեկնածությունն էին առաջադրել «Արաբասոսմանյան եղբայրություն» կազմակերպության ղեկավար Շաուֆիկ ալ-Մուայադ ալ-Ազմը և նրա գործընկեր Ռուշդի ալ-Շաման: Փորձելով խոչընդոտել նրանց ընտրությունը՝ երիտթուրքերի դրդմամբ ոստիկանները ձերբակալեցին կազմակերպության կողմնակիցներից մեկին: Դրան անմիջապես հետևեց քաղաքապետարանի առջև կազմակերպված հանրահավաքը, որի մասնակիցները հակաերիտթուրքական կոչեր էին հնչեցնում, ինչն իշխանություններին ստիպեց հրաժարվել իրենց մտադրություններից: Ի վերջո, Շաուֆիկ ալ-Մուայադ ալ-Ազմը և Ռուշդի ալ-Շաման հասան հաջողության՝ ընտրվելով պատգամավոր¹:

1908 թ. նոյեմբերի վերջին ընտրություններն ավարտվեցին: Ամենատարբեր միջոցների գործադրմամբ երիտթուրքերին ի վերջո հաջողվեց խորհրդարանում ապահովել թուրքական տարրի գերակայությունն այլազգի պատգամավորների նկատմամբ: Ավելորդ չէ նշել, սակայն, որ թուրք համարվող որոշ պատգամավորներ արդեն իսկ իրենց ծագումով թուրք չէին, այլ բալկանյան մուսուլմաններ, ինչպես, օրինակ՝ Մուհամեդ Ֆուհրդ, ով ծագումով քուլդարացի էր²:

Խորհրդարանն իր աշխատանքներն սկսեց 1908 թ. դեկտեմբերի 17-ին: Պատգամավորների ժամանման կապակցությամբ կայսրության մայրաքաղաքում անցկացվեցին քազմաթիվ երթեր և տոնախմբություններ: Արաբները, ինչպես նաև կայս-

¹ الدكتور توفيق برو، نշվ. աշխ., էջ 120:

² Archives Affaires Etrangères. Documents reparties du consulat general de Beyrouth, vol. 255, carton 6, dossier 4. / J. Hajjar, նշվ. աշխ., էջ 126:

րության մյուս ժողովուրդները, մեծ խանդավառությամբ ընդունեցին խորհրդարանի քացումը՝ դրա գործունեության հետ կապելով իրենց նպատակների իրականացումը:

Խորհրդարանի 275 պատգամավորներից 65-ն ընտրվել էին արաբական վիլայեթներից (նրանցից 15-ն ազգությամբ թուրք էին): Պատգամավոր էին ընտրվել նաև 25 այլանազանի, 23 հույն, 12 հայ, 4 քուլդարացի, 5 հրեա, 3 սերբ և 1 վալախ: Այսպիսով, թուրք պատգամավորների թիվը խորհրդարանում 152 էր, ինչն, անշուշտ, չէր համապատասխանում կայսրության ազգային կազմին¹:

Օսմանյան կայսրության սահմանադրության համաձայն՝ քացի խորհրդարանի ստորին պալատից, ստեղծվեց նաև վերին պալատ՝ սենատ, որի անդամները, սակայն, ոչ թե ընտրվում էին, այլ նշանակվում սուլթանի կողմից: Այս պատեհ հնարավորությունն, ի դեպ, վերջինս լավագույն ձևով օգտագործեց՝ սահմանափակելու այլ ազգությունների, այդ թվում նաև արաբների մուտքը սենատ: Այս տեսակետից հատկանշական են Արդուլ Համիդի հետևյալ խոսքերը սենատորների նշանակման կապակցությամբ. «Սենատն ազգի և սահմանադրության վերահսկիչ ուժն է, և դրա անդամների ճշտող մեծամասնությունն անպայմանորեն պետք է լինի թուրք և մուսուլման»²: Արդուլ Համիդի նման դիրքորոշումը նույնքան ձեռնտու էր նաև նրա հակառակորդներին՝ երիտթուրքերին՝ իրենց քաղաքականության իրականացման համար: Պատահական չէ, որ սուլթանի կողմից նշանակված 40 սենատորներից 37-ը թուրք էին և միայն 3-ը՝ արաբ³:

Այսպիսով, արաբները, լինելով կայսրության ամենամեծա-

¹ الدكتور توفيق بربو، نշվ. աշխ., էջ 105-106: Առանձին հետազոտողներ իրենց ուսումնասիրություններում նշում են տարբեր թվեր: Օստ Ջ. Ջեյնի՝ խորհրդարան էր ընտրվել 260 պատգամավոր, որոնցից 119-ը թուրք էին, 72-ը՝ արաբ: Տե՛ս Z. Zeine, Arab Turkish Relations and the Emergence of Arab Nationalism, Beirut, 1958, p. 65. Ն. Հովհաննիսյանի քերած տվյալների համաձայն՝ պատգամավորների ընդհանուր թիվը կազմում էր 245, որոնցից 150-ը՝ թուրք, 60-ը՝ արաբ: Տե՛ս Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 469:

² Հր. Միմոնյան, նշվ. աշխ., էջ 202:

³ J. Lugol. Le Panarabisme. Passé, present, avenir, Le Caire, 1946, p. 173.

թիվ ազգային տարրը, տարբեր հանգամանքների բերումով չկարողացան խորհրդարանում գրադեցնել համապատասխան քանակությամբ տեղեր: Սակայն նույնիսկ այս պարագայում խորհրդարանի գրեթե կեսը կազմեցին ոչ թուրք պատգամավորները, ինչը նրանց իրական հնարավորություն էր տալիս համախմբվելու մի ընդհանուր դաշինքի մեջ և հետամուտ լինելու իրենց ազգային պահանջներին: Մինչդեռ իրականում այս պատեհի հնարավորությունը վերջիններիս կողմից չօգտագործվեց, քանի որ ազգային խմբավորումներից յուրաքանչյուրի առաջնահերթ նպատակը զուտ տեղային խնդիրների լուծումն էր, ինչը, բնականաբար, չնպաստեց նրանց ուժերի միավորմանը և միաժամանակ թուրքերին հնարավորություն տվեց խորհրդարանում ունենալու գերակայող դիրք:

Խորհրդարանի պատգամավորները միավորվեցին երեք քաղաքական խմբավորումների մեջ. առաջինը «Իթթիհադ վե թերաքքի»-ն էր, երկրորդը՝ «Աիրար»-ը, որի անդամները հավատում էին, որ կայսրության դժվարությունների լուծումը դաշնային պետության ստեղծման մեջ է՝ տեղական ինքնավար նահանգներով: Երրորդ խմբավորումը «Մուսուլմանական ընկերությունն» էր, որը հետամուտ էր պանիսլամիզմի գաղափարների և կրոնական օրենքների տարածմանը¹:

Ավելորդ չէ նշել, որ համախմբման փորձեր եղան նաև արաբ պատգամավորների կողմից: Խորհրդարանի աշխատանքների հենց սկզբում նրանք ստեղծեցին «արաբական դաշինքը»², որը, սակայն, զուտ ձևական էր, քանի որ նրա անդամները կապված չէին ընդհանուր հայացքներով: Հիմնականում հենց այդ պատճառով էլ նրանց չհաջողվեց ստեղծել միասնական ծրագիր, որտեղ կարտացոլվեին արաբ ժողովրդի ձգտումները: Արաբ պատգամավորների բարձրացրած հարցերը մեծ մասամբ սահմանափակվում էին տեղական խնդիրներով:

Այսպիսով, արաբ պատգամավորները խորհրդարանի աշխատանքի առաջին տարվա ընթացքում չկարողացան լուրջ

¹ S. Fisher, W. Ochsenswald, *The Middle East. A History*, New York, 1990, p. 328.

² Л. Котлов, *Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг.*, т. 2 178:

ընդդիմություն ստեղծել «Իթթիհադ վե թերաքքի»-ին և խորհրդրդարանում բարձրացնել արաբական ազգային խնդիրներ: Սակայն դա, իհարկե, ամենևին էլ չէր նշանակում, որ արաբ պատգամավորները կողմնակից էին իթթիհադականների թուր ծրագրերին ու առաջարկություններին: Խորհրդարանական որոշ քննարկումների ժամանակ, ինչպես, օրինակ, երբ բարձրացվեց պատգամավորներ Շաուֆիկ ալ-Մուայադի և Յուսուֆ Շիտվանի ընտրության անօրինականության հարցը, արաբ պատգամավորները միահամուտ հանդես եկան ի պաշտպանություն իրենց հայրենակիցների, ինչի շնորհիվ վավերացվեց Շաուֆիկ ալ-Մուայադի ընտրությունը¹: Երբ իթթիհադականների առաջարկով անվստահություն հայտնվեց մեծ վեզիր Քամալ փաշայի կառավարությանը, արաբները դարձյալ ընդունեցին հակաիթթիհադական դիրքորոշում, որը, սակայն, արտահայտվեց ոչ թե բացահայտորեն, այլ, առավելապես, ձեռնպահ մնալով²: Սա, թերևս, արաբների և թուրքերի միջև ապագա լուրջ հակասությունների առաջին արտահայտություններից էր, ինչը հանգեցրեց իթթիհադական կուսակցության հետ արաբ գործիչների կապերի թուլացմանը:

Ինչպես ակնհայտորեն ցույց տվեց դեպքերի զարգացման հետագա ընթացքը, երիտթուրքերի ծայրահեղ ազգայնամուլական քաղաքականությունն ի վերջո հիասթափեցրեց կայսրության ազգություններին, այդ թվում՝ արաբներին, և առավել խորացրեց երիտթուրքերի հետ վերջիններիս հակասությունները: Եվ պատահական չէ, որ խորհրդարանի հետագա տարիների գործունեության ընթացքում արաբ պատգամավորներն սկսեցին անդամակցել իթթիհադականներին ընդդիմադիր այնպիսի կուսակցությունների, ինչպիսիք էին 1910 թ. հիմնադրված «Շուրվորդի կուսակցությունը» («Ահալի Ֆըրքասի»), ինչպես նաև

¹ Дешеша дипломатического тайного советника Зинивьева из Константинополя. Տե՛ս ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. III, համար 286 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):

² F. Ahmad, նշվ. աշխ., էջ 34-37:

ավելի ուշ՝ 1911 թ. վերջերին ստեղծված «Հյուրդիյեթ վե իթթի-լաֆ»-ը («Ազատություն և համաձայնություն»)¹:

Փաստորեն, խորհրդարանական ընտրություններն առաջին միջոցառումն էր, որի ընթացքում ի հայտ եկան երիտթուրքական կառավարության հոչակած սկզբունքների և իրական քաղաքականության հակասությունները, ինչը որոշակիորեն սթափեցրեց հեղափոխական ոգևորությամբ տոգորված արաբներին:

Արաբական վիլայեթների քնակչությունը թերևս առաջին անգամ իր ուժերը փորձեց քաղաքական պայքարում՝ մասնակցելով ընտրություններին և որոշ դեպքերում նույնիսկ ճնշում գործադրելով իշխանությունների վրա:

Խորհրդարանական ընտրություններն ունեցան ևս մեկ կարևոր հետևանք. այդ պահից սկսեց ձևավորվել արաբական քաղաքական վերնախավը, որը հնարավորություն ունեցավ որոշակի մասնակցություն բերելու Կ.Պոլսում ծավալվող քաղաքական գործընթացներին և մեծապես ազդեց արաբական ազգային շարժման հետագա ընթացքի վրա:

¹ Մանրամասն տե՛ս F. Ahmad, նշվ. աշխ., էջ 69-91:

ԳԼՈՒԽ II

ԱՐԱՐՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ (1909 Թ. ԱՊՐԻԼ-1912 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ)

1909 Թ. «ՄԱՐՏԻ 31-Ի» ԽՈՒՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՐԱՐԱԻԹԹԻ-ՀԱԴԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ի ՀԱՅՏ ԳԱԸ

1908 թ. վերջին-1909 թ. սկզբին Օսմանյան կայսրությունում ստեղծվել էր բավական բարդ ներքաղաքական իրադրություն: Թեև հեղաշրջումից հետո երիտթուրքերն ամենուրեք հաստատել էին իրենց վերահսկողությունը, այսուհանդերձ իշխանությունը հիմնականում շարունակում էր մնալ այն պաշտոնյաների ձեռքում, որոնց մեծ մասը նախկին վարչակարգի կողմնակիցներն էին: Երիտթուրքերը հավատացած էին, որ կարող են երկրում իրավիճակը վերահսկել՝ առանց ներգրավվելու կառավարության մեջ, մինչդեռ հետադիմական ուժերը հետզհետե ավելի էին սաստկացնում իրենց ճնշումը երիտթուրքերի վրա՝ կտրուկ հանդես գալով ցանկացած փոփոխության դեմ:

Հարկ է նշել, որ սահմանադրական վարչակարգի դեմ պայքարում մեծ դեր էին խաղում նաև մուսուլման առաջնորդները, որոնք շարունակում էին ամուր դիրքեր պահպանել և մեծապես ազդում էին հասարակական կյանքի վրա: Նրանք, հմտորեն օգտագործելով քնակչության կրոնական զգացումները, ժողովրդին հրահրում էին ընդդեմ կրոնական «հավասարություն» հռչակած «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության՝ անվանելով վերջինիս հավատուրաց¹:

Կայսրության տարբեր շրջաններում, հատկապես արաբական քաղաքներում Հալեպում, Դամասկոսում, Բաղդադում և այլուր, հոգևոր ղեկավարները, միավորվելով տեղի պահպանո-

¹ X. Габидулин, Եջվ. աշխ., էջ 143-144:

ղական ուժերի հետ, կարողացան կազմակերպել հակաիթի-
հադական մի շարք զանգվածային ելույթներ, որոնք ուղեկցվում
էին հակասահմանադրական կոչերով և հակամուսուլմանական
քաղաքականություն վարելու՝ երիտթուրքերին ուղղված մեղա-
դրանքներով¹:

1908 թ. ապրիլի 5-ին Կ.Պոլսում ստեղծված համաօսման-
յան հետադիմական «Մուհամմեդի ընկերությունը» հետագայում
վճռական դեր խաղաց 1909 թ. ապրիլյան իրադարձությունների
ընթացքում: Ընկերությունը հիմնվել էր Բեքթաշի միաբանության
անդամ Հաֆիզ Դերվիշ Վահդեթի կողմից²: 1908 թ. նոյեմբե-
րից նա սկսեց հրատարակել «Վուլկան» («Հրաբուխ») թերթը,
որի էջերում սուր քննադատությամբ հանդես էր գալիս երիտ-
թուրքերի դեմ՝ մեղադրելով վերջիններին շարիաթի օրենքները
խախտելու և անաստվածության մեջ: «Մուհամմեդի ընկերու-
թյունը» պահանջում էր հեռացնել իշխանությունից «Իթիհադ
վե թերաքքի»-ին, վերացնել եվրոպացիներից փոխառված բոլոր
օրենքները և վերականգնել շարիաթի դատարաններն ու օրենք-
ները³:

Ընկերությունը կարճ ժամանակում լայն գործունեություն
ծավալեց Օսմանյան կայսրության գրեթե ողջ տարածքում: Այն
առավել ակտիվ էր Սիրիայում՝ հատկապես Դամասկոսում և
Հալեպում, որոնք մինչև 1908 թ. հեղաշրջումը գտնվում էին դեր-
վիշական ալ-Ռիֆաիա միաբանության ազդեցության տակ:
«Մուհամմեդի ընկերության» քարոզչական գործունեությունն
աջակցություն գտավ այլմաների մեծամասնության կողմից:
Միայն Դամասկոսի մասնաճյուղում, որի ղեկավարներն էին Աբդ
ալ-Քադիր ալ-Այլանին, Աբդուլլահ ալ-Ջազաիրին, Թաուֆիկ ալ-

¹ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 184-185:

² D. Commins, նշվ. աշխ., էջ 132:

³ Копия с донесения консула в Дамаске ком. сов. князя Шаховского на имя господина императорского посла в Константинополе от 27-го марта 1909 г.. Sb' u ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. III, համար 291 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):

Քուտսին և Ռիդա Աթարը¹, ընդգրկված էր 70 հազար անդամ²:

Օրեցօր ընդլայնվող հակաիթթիհադական շարժմանը միացավ և նրան ակտիվ աջակցություն ցուցաբերեց «Ահրար» կուսակցությունը: «Ահրար»-ը, որն, ըստ էության, արքայազն Սաբահեդդինի ստեղծած «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերության» առաջադիմական գաղափարախոսության կրողն էր, չէր ցանկանում վերացնել կայսրությունում հաստատված սահմանադրական կարգերը: Նրա միավորումը հետադիմական ուժերին պայմանավորված էր իթթիհադականների վարած քաղաքականության նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքով և վերջիններիս իշխանությունից հեռացնելու անթաքույց նպատակով:

Միաժամանակ ակտիվանում էր նաև ընդդիմադիր ուժերի գործունեությունը խորհրդարանում: Մեծ վեզիր Քամիլ փաշան, ով այդ պաշտոնին էր նշանակվել երիտթուրքերի աջակցությամբ, չարդարացրեց նրանց սպասելիքները: Իր շուրջը համախմբելով խորհրդարանի ընդդիմադիր շրջաններին և սերտ կապեր հաստատելով «Ահրար» կուսակցության հետ՝ նա ամեն կերպ ջանում էր վարել երիտթուրքերից անկախ քաղաքականություն՝ ձգտելով ազատվել կառավարության վրա վերջիններիս ազդեցությունից³:

Երիտթուրքերը, անհանգստացած մեծ վեզիրի ինքնուրույն քաղաքականություն վարելու փորձերից, սկսեցին միջոցներ ձեռնարկել նրան պաշտոնանկ անելու ուղղությամբ: Կառավարությանը անվստահություն հայտնելու երիտթուրքերի՝ խորհրդարան ներկայացրած բանաձևն անհաջողության մատնվեց: 1909 թ. հունվարին տեղի ունեցած քվեարկության ժամանակ պատգամավորների պալատը ձայների նվազագույն առավելությամբ վստահություն հայտնեց Քամիլ փաշային⁴: Խորհրդարանում սկիզբ առած պայքարը հանգեցրեց իշխանական ճգնաժամի:

¹ H. Kayali, *Arabs and Young Turks. Ottomanism, Arabism and Islamism in the Ottoman Empire, 1908-1918*, Berkeley, 1997, p. 73.

² انكتور توفيق برو، *նշվ. աշխ.*, էջ 131:

³ И. Шпилькова, *նշվ. աշխ.*, էջ 208:

⁴ Ա. Մանդելշտամ, *նշվ. աշխ.*, էջ 13:

Քամիլ փաշան, ոգևորված այս հաղթանակից, համոզված էր, որ հասունացել է երիտթուրքերին իշխանությունից ընդհանրապես զրկելու պահը: Նա նախ և առաջ փորձեց Կ.Պոլսից հեռացնել «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությանը հավատարիմ Սալոնիկի զորագնդերը, ինչը, սակայն, նրան չհաջողվեց: Այդ ժամանակ վերջինս ինքնական պաշտոնանկ արեց ռազմական և ծովային նախարարներին՝ դրանով իսկ խախտելով սահմանադրությունը, ըստ որի՝ այս նախարարների նշանակումը և ազատումը խորհրդարանի իրավունքն էր: Այս հանգամանքը ստիպեց երիտթուրքերին ավելի ակտիվացնել իրենց հակաքամիլյան քարոզչությունը խորհրդարանում: Նրանց ջանքերով մեկ ամիս անց՝ փետրվարի 14-ին, արդեն երկրորդ անգամ խորհրդարանում դրվեց մեծ վեճիրին անվստահություն հայտնելու հարցը: Այս անգամ երիտթուրքերը տոնեցին լիակատար հաղթանակ: Քամիլ փաշայի դեմ քվեարկած 197 պատգամավորներից 22-ը, 80 ձեռնպահներից 40-ը և 8 կողմ քվեարկածներից՝ 2-ը արաբ էին²:

Կայսրության համար այդ շրջադարձային պահին իթթիհադական կոմիտեի նկատմամբ արաբ խորհրդարանականների նման դիրքորոշումը փաստորեն արաբաիթթիհադական տարածայնությունների առաջին լուրջ դրսևորումն էր:

Քամիլ փաշայի հրաժարականից հետո, սպառնելով «Իթթիհադ վե թերաքքի»-ին իշխանությունից հեռացնելու «օրինական» միջոցները, ընդդիմադիր ուժերն սկսեցին ակտիվորեն նախապատրաստվել կառավարության դեմ գինված ելույթի՝ համախմբվելով «Աիրար»-ի և «Մուհամմեդի ընկերության» շուրջը: Կայսրության գրեթե ողջ տարածքում քարոզչական աշխատանքներ ծավալած «Մուհամմեդի ընկերության» ղեկավար դերվիշ Վահդեթին իր ծրագրերի իրականացման համար հենվում էր Կ.Պոլսի կայազորի վրա, որի կազմում կային նաև սուլթանին հավատարիմ մնացած արաբական գվարդիայի ստորաբաժա-

¹ И. Шпилькова, *Նշվ. աշխ.*, էջ 209:

² J. Hajjar, *Նշվ. աշխ.*, էջ 165: Նոր կառավարությունն իթթիհադականների պահանջով գլխավորեց Հոսեյն Հիմի փաշան:

նումներ¹: Վահդեթին հաջողվել էր քարոզչության, ինչպես նաև դրամական և այլ միջոցներով վերջիններիս գրավել իր կողմը²:

1908 թ. վերջին-1909 թ. սկզբին կայսրությունում և հատկապես Կ.Պոլսում ներքին իրավիճակը աստիճանաբար սրվում էր: Տեղի ունեցան մի շարք հակակառավարական ելույթներ, որոնց մեջ ներքաշված էին նաև սուլթանական գվարդիայի զինվորականները³:

Դրությունը կայսրության մայրաքաղաքում դառնում էր պայթյունավտանգ: Հակակառավարական ելույթները, խորհրդարանում տիրող խառնաշփոթ իրավիճակը, կառավարության անգործությունը, հասունացող իշխանափոխությունը կանխելու կառավարության անկարողությունն ի վերջո հանգեցրին խռովության:

Խռովությունն սկսվեց 1909 թ. ապրիլի 13-ի գիշերը⁴: Բանակի զինվորները, որոնց թիվը հասնում էր 30 հազարի⁵, Սուլթան Ահմեդ մզկիթի դիմաց միանալով հոգևոր ուսումնական հաստատությունների՝ մեդրեսեների ուսանողներին, շարժվեցին դեպի խորհրդարան, իսկ այնտեղից՝ ռազմական նախարարություն⁶:

Խորհրդարանի դիմաց կառավարությանը հավատարիմ մնացած զինվորների հետ տեղի ունեցած փոխիրաձգության ժամանակ զոհվածների թվում էին նաև երկու արաբ պատգամավորներ՝ շերիֆ Յահյա Սադիկ փաշան և Մուհամմեդ Արսլան բեյը⁷: Կարճ ժամանակում ապստամբներին հաջողվեց հաստա-

¹ F. Ahmad, նշվ. աշխ., էջ 40:

² И. Шпилькова, նշվ. աշխ., էջ 214:

³ S. Shaw, E. Shaw, History of Ottoman Empire and Modern Turkey, Reform, Revolution and Republic: The Rise of Modern Turkey 1808-1975, Cambridge, 1977, p. 280.

⁴ Ըստ մուսուլմանական օրացույցի՝ խռովությունը տեղի է ունեցել 1325 թ. մարտի 31-ին: Այն Թուրքիայի պատմության մեջ հայտնի է որպես «մարտի 31-ի» դեպքեր:

⁵ Г. Алеев, նշվ. աշխ., էջ 137:

⁶ S. Shaw, E. Shaw, նշվ. աշխ., էջ 280:

⁷ И. Шпилькова, նշվ. աշխ., էջ 218:

տել իրենց հսկողությունը մայրաքաղաքում և վերականգնել Արդու Համիդի սուլթանական իշխանությունը:

«Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության ղեկավարներին և առավել հեղինակավոր գործիչներին հաջողվեց փախչել Սալոնիկ, որտեղ նրանք, գլխավորելով իրենց հավատարիմ մնացած զինվորական ստորաբաժանումները, սկսեցին պատրաստվել հակահարվածի:

Արդու Համիդի և նրա կողմնակիցների կարճատև հաղթանակը կայսրությունում առաջացրեց երկակի իրավիճակ: Պահպանողական ուժերն այն ընդունեցին մեծ ոգևորությամբ. Դամասկոսում նրանց կողմից անցկացվեցին ապստամբությունը ողջունող երթեր, և նույնիսկ կազմակերպվեց հրավառություն¹:

Հակասահմանադրական ելույթներ տեղի ունեցան նաև Հալեպում, որոնք ուղեկցվում էին քրիստոնյա քնակչության հանդեպ թշնամանքի դրսևորումներով: «Մոսամմեդի ընկերության» ներկայացուցիչները փորձեցին նման երթեր կազմակերպել նաև Բեյրութում, սակայն դա նրանց չհաջողվեց. Բեյրութ ժամանելուն պես նրանք ձերբակալվեցին²:

Իրավիճակը նույնն էր նաև Իրաքում: Բաղդադում «մարտի 31-ի» դեպքերի օրերին տիրում էին հակաիթթիհադական տրամադրություններ, և անցկացվում էին սուլթանամետ ուժերի հանրահավաքներ: Օրինակ՝ Բաղդադի ռազմական ուսումնարանի դասախոսական կազմի մեծամասնությունն իր աջակցությունը հայտնեց ապստամբներին³:

Չնայած այն հանգամանքին, որ արաբական վիլայեթներում նկատվեց պահպանողական և սուլթանական վարչակարգի կողմնակից ուժերի որոշակի ակտիվացում, սակայն նրանք, այնուամենայնիվ, չկարողացան ազդել սահմանադրական կարգերի նկատմամբ Սիրիայի և Իրաքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների լոյալ դիրքորոշման վրա:

Մինչդեռ արաբ առաջադեմ հասարակության ներկայացու-

¹ D. Commins, նշվ. աշխ., էջ 132-133:

² И. Шпилькова, նշվ. աշխ., էջ 232-233:

³ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 188:

ցիչները հանդես եկան հետադիմական ուժերի կազմակերպած խռովության քննադատությամբ և իրենց աջակցությունը հայտնեցին «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության՝ ապստամբության ճնշմանն ուղղված ջանքերին: Հատկապես մեծ ակտիվություն ցուցաբերեցին Ռաֆիկ ալ-Ազմը, Աբդ-ալ Համիդ ալ-Ջահրավի, Մարուֆ ալ-Ռուսաֆին, Ջամիլ ալ-Ջահավի և այլք: Նրանք դատապարտեցին խռովարարներին, ովքեր օգտագործում էին իսլամն իրենց շահերի համար: Կ.Պոլսում արաբական համայնքը և արաբ պատգամավորների մեծամասնությունը հավատարիմ մնացին «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությանը: Վերջիններիս մեծ մասը լքեց Կ.Պոլիսը և միացավ Սան Ստեֆանոյում գտնվող Մահմուդ Շևքեթ փաշայի զորամիավորումներին: Ի դեպ, այստեղ էր տեղափոխվել երիտթուրքական խորհրդարանը, և այստեղ էին պատսպարվել սահմանադրության շատ կողմնակիցներ, այդ թվում նաև արաբ քաղաքական գործիչներ, պաշտոնյաներ և ուսանողներ²:

Ապրիլի 23-ին իթթիհադականները, միավորելով իրենց տրամադրության տակ գտնվող քոլոր զինված ուժերը, շարժվեցին դեպի Կ.Պոլիս: Ապրիլի 24-ին՝ վաղ առավոտյան, սկսվեց վճռորոշ բախումը: Ապստամբները համառորեն պաշտպանվում էին, սակայն արդեն ապրիլի 26-ին հաջողվեց կտրել արքունական կայազորի դիմադրությունը, և մայրաքաղաքը լիովին անցավ երիտթուրքերի հսկողության տակ³:

Կ.Պոլիս մտած զորքերի մեջ կային նաև բազմաթիվ արաբ սպաներ: Նրանցից հատկապես աչքի ընկավ Ազիզ Ալի ալ-Միսրին, որին վստահված էր ջոկատներից մեկի հրամանատարությունը: Գալաթա կամրջի գրավումից հետո ալ-Միսրին հարձակվեց Թուփհանեի զորանոցի վրա և պարտության մատնեց նրա պաշտպաններին⁴:

¹ الدكتور توفيق بروجي، بغداد، 1972، ص 130:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., т. 2 190-191:

³ Ю.Петросян, Багдад, 1972, т. 2, 242, S.Fisher, W.Ochsenwald, Багдад, 1972, т. 2, 329:

⁴ M. Khadduri, Aziz Ali Misri and the Arab Nationalist Movement / Middle Eastern Affairs: Number Four: ed. Albert Hourani, Oxford, 1965, p.147.

խոտվության տապալման հաջորդ օրը՝ ապրիլի 27-ին, խորհրդարանի որոշմամբ գահընկեց արվեց սուլթան Աբդուլ Համիդ II-ը, և գահ բարձրացվեց նրա եղբայր Մեհմեդ V-ը (1844-1918), ով փաստորեն դարձավ երիտթուրքերի կամակատարը¹:

Արաբական թերակղզու ղեկավարները գրեթե միաձայն դատապարտեցին Աբդուլ Համիդի գահազրկումը: Ի տարբերություն վերջիններիս՝ արաբական մյուս վիլայեթներում, հատկապես Սիրիայում և Իրաքում, հետադիմականներն այդ լուրն ընդունեցին շինծու անտարբերությամբ²: Մինչդեռ արաբ առաջադեմ շրջանները չէին թաքցնում իրենց գոհունակությունը:

Իշխանությունը վերականգնելուց հետո երիտթուրքերը հաշվեհարդար տեսան խոտվության ղեկավարների և մասնակիցների հետ: 61 մարդ ենթարկվեց մահապատժի, որոնց մեջ էին մահ «Աիրար»-ի և «Մուհամմեդի ընկերության» անդամները³: Ապստամբության 10 հազար մասնակիցներ Կ.Պոլսից վտարվեցին⁴: Իթթիհադականներն արգելեցին նաև «Արաբա-օսմանյան եղբայրություն» և հայկական, այբանական, հունական մի շարք կազմակերպությունների գործունեությունը՝ մեղադրելով նրանց խոտվությանն աջակցելու մեջ:

Վերադառնալով իշխանության՝ իթթիհադականներն այս անգամ արդեն կազմեցին իրենց կառավարությունը՝ նրա մեջ ներգրավելով երիտթուրքական շարժման առավել ակնաւվոր ներկայացուցիչներին: Արքունիքի ազդեցությունը թուլացնելու նպատակով նրանք սահմանափակեցին սուլթանի արտոնությունները: Սուլթանը մասնավորաբար զրկվեց նախարարներին պաշտոնանկ անելու, խորհրդարան գումարելու և ցրելու ու մի շարք այլ իրավունքներից: Այս սահմանափակումները հաստատվեցին խորհրդարանի կողմից և ներգրավվեցին սահմանադրության մեջ: Իթթիհադականները մտադիր էին նաև փոփո-

¹ S. Fisher, W. Ochsenwald, նշվ. աշխ., էջ 329:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 190:

³ И. Шпилькова, նշվ. աշխ., էջ 240-241:

⁴ Ю. Петросян, Османская империя: могущество и гибель, Москва, 1990, с. 242.

խոսքերը մտցնել 1876 թ. սահմանադրության մեջ և ընդունել օրենքներ, որոնք կամրապնդեին իրենց իշխանությունը:

Երիտթուրքերի հաղթանակը և նրանց առաջին միջոցառումները ժամանակավորապես վերականգնեցին վերջիններիս նկատմամբ կայսրության ոչ թուրք ազգությունների վստահությունը, ինչն իր անմիջական ազդեցությունն ունեցավ 1909 թ. մայիսին խորհրդարանի վերսկսված աշխատանքների վրա: Խորհրդարանն ընդունեց իթթիհադականների կողմից առաջադրված մի շարք օրենքներ, որոնք կրում էին բացարձակ հետադիմական բնույթ: Դրանցից էր, օրինակ, «Մամուլի մասին» օրենքը, որը կառավարությանը հնարավորություն էր տալիս իր փակատար հսկողությունը սահմանելու Օսմանյան կայսրությունում հրատարակվող բոլոր թերթերի ու պարբերականների վրա: Այդ օրենքով փաստորեն արգելվում էին հակակառավարական հոդվածների և նյութերի տպագրությունն ու տարածումը: Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ սահմանադրության մեջ բացակայում էր գրաքննության մասին հիշատակումը, այսուհանդերձ իթթիհադականներին հաջողվեց միանգամայն օրինական ճանապարհով արգելել ոչ ցանկալի տպագիր օրգանների աշխատանքը, ինչն ինքնին սահմանափակում էր նաև ազգային թերթերի հրատարակման հնարավորությունը:

Խորհրդարանի ընդունած մեկ այլ՝ «Միությունների մասին» օրենքով էլ ավելի սահմանափակվեցին կայսրության ոչ թուրք ազգությունների իրավունքները: Օրենքն արգելում էր այն քաղաքական կազմակերպությունների, խմբավորումների և ընկերությունների գործունեությունը, որոնց ծրագրերի մեջ առկա էին ազգային խնդիրներ կամ ընդդիմադիր դրույթներ¹: Օրենք ընդունվեց նաև թափառաշրջիկների մասին, որն իշխանություններին լայն հնարավորություններ էր ընձեռում ձերբակալելու իրենց համար անցանկալի անձանց:

Այսպիսով, երիտթուրքական ղեկավարները, երկրորդ անգամ իշխանության գալով, լիովին հրաժարվեցին ազատության և իրավահավասարության վերաբերյալ իրենց նախկին բարձրագույն խոստումներից ու սկսեցին աստիճանաբար սահմանափակել

¹ И. Шпильнова, *Узл. աշխ.*, էջ 246-247:

կայսրության ոչ թուրք ժողովուրդների քաղաքական իրավունքները: Երիտթուրքերի որդեգրած օսմանիզմի գաղափարախոսությունը, որը պետք է ապահովեր կայսրության բոլոր ազգությունների հավասարությունը, վերածվում էր թյուրքիզմի: Երիտթուրքերի ազգային քաղաքականության նման փոփոխությունը չէր կարող աննկատ մնալ արաբ ազգային գործիչների կողմից, որոնց մի հատվածը, այնուամենայնիվ, դեռևս երկար ժամանակ՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, շարունակում էր հավատարիմ մնալ «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությանը:

Շուտով ակներև դարձավ, որ երիտասարդ թուրքերի ծրագիրն էր հիմնել համաթուրքական մի կայսրություն, որտեղ ամենուրեք կիշխեր թուրքերենը, կառավարությունը կլիներ ամբողջովին թուրքական, և նույնիսկ արաբները կվտարվեին վարչական ապարատից¹:

Մինչդեռ արաբ ազգային առաջադեմ գործիչների շրջանում հատկապես «մարտի 31-ի» հայտնի դեպքերից հետո դժգոհություններ սկսվեցին արաբական վիլայեթներում երիտթուրքերի վարած քաղաքականության նկատմամբ, ինչև ականհայտորեն ոտնահարում էր արաբ ազգաբնակչության իրավունքներն ու շահերը: Փոխադարձ անհանդուրժականության մթնոլորտ էր ստեղծվել նաև երիտթուրք պաշտոնյաների և տեղի վերնախավի միջև, ինչը հաճախ ստանում էր լարված բնույթ: Այդ տեսակետից բնորոշ է, օրինակ՝ Բասրայում տիրող իրադրությունը: Այնտեղ 1909-1910 թթ. նահանգապետի պաշտոնը զբաղեցնող իթթիհադական Սուլեյման Նազիֆ բեյը տևական հակամարտության մեջ ներքաշվեց Տայիբ փաշա ալ-Նաքիբի գլխավորած տեղի ազնվականների խմբավորման հետ, որը հանդես էր գալիս իթթիհադական քաղաքականության դեմ և ամեն կերպ խոչընդոտում էր թուրքական վարչակազմի աշխատանքները: Նազիֆ բեյը, ով այդ պայմաններում ի վիճակի չէր պատշաճ կերպով կատարելու իր պարտականությունները, ի վերջո հրաժարական տվեց²:

¹ Ֆ. Նահսեբ, Հայաստանը և Մերձավոր Արևելքը, Երևան, 1993, էջ 141-142:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 193-194:

Իթթիհադական վարչակազմին ակտիվ դիմադրություն էր ցույց տալիս նաև Բաղդադի վերնախավը: Այնտեղ տիրող իրավիճակն ավելի սրվեց, երբ Բաղդադի նահանգապետ դարձավ Ահմեդ Ջեմալ բեյը: 1911 թ. ամռանը տեղի ունեցան պահպանողականների կողմից կազմակերպված բողոքի ցույցեր՝ ի պաշտպանություն «ալ-Սահկա» թերթի խմբագրի, ով ձերբակալվել էր իր թերթում նահանգապետի գործունեությունը քննադատելու համար: Չնայած կենտրոնական իշխանության միջամտությանը «ալ-Սահկա»-ի խմբագիրն ազատ արձակվեց, սակայն իրադրությունը լիովին ցխաղաղվեց¹:

Վերնախավի հակաիթթիհադական գործողությունները, իհարկե, հիմնականում տարբեր խմբավորումների միջև իշխանության համար պայքարի արտահայտություն էին և չէին կրում համաարաքական բնույթ: Սակայն արաքական վիլայեթներում իթթիհադականների դեմ դժգոհության ամեն մի դրսևորում արդեն իսկ վկայում էր այնտեղ հակակառավարական ընդդիմության ձևավորման մասին, որն արագորեն աճում էր և ուղեկցվում տարբեր սոցիալ-քաղաքական ուժերի մերձեցման ակնհայտ միտումով:

Խորհրդարանում ևս առկա էին արաք-թուրքական տարածայնություններ, որոնք երբեմն ստանում էին համաարաքական նշանակություն: Այս տեսակետից հատկապես քնորոշ է պատգամավորների կողմից «Լիսնի գործի» քննարկումը: 1909 թ. դեկտեմբերի 11-ին սուլթանն ստորագրեց մեծ վեզիրի ներկայացրած հրովարտակը, համաձայն որի՝ Տիգրիս և Եփրատ գետերի նավագնացության կոնցեսիան 75 տարի ժամկետով տրվում էր «Լիսնի Բրազերս» անգլիական ընկերությանը, որը միավորվելու էր «Օման Օտտոման» պետական նավագնացության կազմակերպության հետ: Միավորված ընկերության ղեկավարումը փաստորեն անցնում էր անգլիացիներին, ինչը հնարավորություն էր տալիս վերջիններիս մենաշնորհային դիրքեր հաստատելու Տիգրիս և Եփրատ գետերի նավագնացության վրա:

Հրովարտակի իրագործումն անխուսափելիորեն բացասա-

¹ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., т. 2, с. 194:

կան ազդեցություն կունենար իրաքյան վիլայեթների տնտեսության վրա: Պատահական չէ, որ Բաղդադի ազդեցիկ առևտրականների խմբավորումը չհապաղեց արտահայտել իր դժգոհությունը կառավարության որոշման դեմ՝ մի շարք բողոքագրեր ուղարկելով խորհրդարան և կառավարություն:

Այս հրովարտակն արաբական, հատկապես իրաքյան հասարակության կողմից գնահատվեց որպես նահանջ և մեծ զիջում եվրոպական ընկերություններին: Բաղդադում և Բասրայում տեղի ունեցան բողոքի բազմահազարանոց ցույցեր: Կառավարության որոշման դեմ Իրաքի մամուլում սկսվեց լայնածավալ քարոզչություն, որն աջակցություն գտավ Կ.Պոլսի մի շարք թերթերի կողմից²:

Այդ պայքարի մեջ ներգրավվեց նաև խորհրդարանի արաբ պատգամավորների մեծ մասը: 1909 թ. դեկտեմբերի 14-ին Բասրայի պատգամավոր Սայիդ Տալիբ ալ-Նաքիբը, արտահայտելով իր զայրույթը, խորհրդարանում ելույթի ժամանակ հայտարարեց, որ «... դա կլինի մեծ արհավիրքների սկիզբը»³: Անհանգստացած Իրաքում քրիտանական ազդեցության ուժեղացման հնարավորությունից՝ Սայիդ Տալիբը միացավ կոնցեսիային ընդդիմադիր 40 արաբ պատգամավորներից կազմված խորհրդարանական խմբավորմանը: Այդ դաշինքի առավել հեղինակավոր անդամներն էին Շաուֆիկ Մուայադ ալ-Ազմը (Դամասկոս), Ահմադ Փաշա ալ-Չուհեյրը (Բասրա), Շնքեթ փաշան (Դիվանիա) և Քուդր Լուֆֆին (Դեր Ջոր): Վերջինս, բացատրելով դաշինքի դիրքորոշումը, դեկտեմբերի 13-ին խորհրդարանում իր ելույթում մասնավորապես, ասաց. «Մենք՝ արաբներս (արաբ պատգամավորները - Ա.Գ.), որևէ վատ մտադրություն չունենք կառավարության նկատմամբ: Մեր նպատակն է հայրենիքի անվտանգության ապահովումը: Մենք դատապարտում ենք միայն օտարերկրյա ընկերություններին նման տնտեսական կոնցեսիա տա-

¹ الدكتور شوقي برو، *سجل. سنجي.*, էջ 179-180:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 195:

³ M. Haddad, *Iraq before World War I. A Case of Anti-European Arab Ottomanism / The Origins of Arab Nationalism*, New York, 1991, p. 128.

յով այդ անվտանգությունը վտանգելու փորձերը»¹: Սակայն երբ խորհրդարանում այդ հարցը դրվեց քվեարկության, կառավարության որոշման դեմ հանդես եկան քչերը. արաբ պատգամավորների մեծ մասը չհամարձակվեց բացահայտորեն դուրս գալ «Իթթիհադ վե թերաքքի»-ի դեմ և իր անհամաձայնությունը հայտնեց ընդամենը քվեարկության ժամանակ ձեռնպահ մնալով²:

Խորհրդարանում բոլոր քննարկումներ ծավալվեցին նաև եմենում ստեղծված իրադրության շուրջ³: Եմեն ուղարկված հատուկ հանձնաժողովը, որը կազմված էր հիմնականում արաբ պատգամավորներից, կառավարության հանձնարարությամբ պետք է տեղում ծանոթանար իրավիճակին և մշակեր այնտեղ իրականացվելիք բարեփոխումների ծրագիրը: Կ.Պոլիս վերադառնալուց հետո հանձնաժողովը խորհրդարան ներկայացրեց բարեփոխումների իր առաջարկները, սակայն արդեն այդ ժամանակ իրենց դիրքերն ամրապնդած իթթիհադականներն ակտիվորեն հանդես եկան դրանց դեմ: Ներքին գործերի նորանշանակ նախարար Թալեաթ բեյը դադարեցրեց բանավեճերն այս խնդրի շուրջ՝ հայտարարելով, որ նախարարությունը կարող է ինքնուրույն լուծում տալ այս հարցին⁴: Այսպիսով, փաստորեն չիրականացան արաբ առաջադիմական գործիչների՝ սահմանադրական բարեփոխումների անցկացման սպասելիքները:

Խորհրդարանում գրեթե նույնպիսի արձագանք գտավ նաև հրեաների՝ Պաղեստին ներգաղթի խնդիրը: Այդ հարցը հիմնականում բարձրացնում էին Պաղեստինի պատգամավորները, որոնք դեռևս հույսեր էին փայփայում, որ երիտթուրքական կառավարությունը համապատասխան միջոցներ կձեռնարկի հրեաների ներգաղթը և հողերի վաճառքը կասեցնելու ուղ-

¹ M. Haddad, նշվ. աշխ., էջ 128:

² Նույն տեղում:

³ 1909 թ. եմենում Իմամ Յահյայի զինավորությամբ և սահմանակից Ասիրում սկսվեցին հակաթուրքական նոր ապստամբություններ: Յ. Կյա, նշվ. աշխ., էջ 104:

⁴ انكتور توفيق بوز, նշվ. աշխ., էջ 152:

ղութամբ, սակայն այս անգամ ևս արաբների հույսերն այդպես էլ չիրականացան¹:

Արաբ և թուրք պատգամավորների միջև նույն՝ 1909 թ. լուրջ բախումներ տեղի ունեցան, երբ վերջիններս փորձեցին անվավեր ճանաչել Տրիպոլիի պատգամավոր Յուսուֆ Շիտվան բեյի մանդատը: Այս հարցն առաջին անգամ բարձրացվել էր դեռևս խորհրդարանի գումարումից անմիջապես հետո: Իթթի-հադականները կասկածի տակ էին դրել ինչպես վերջինիս, այնպես էլ Օմար Մանսուրի, Սայիդ Տալիբի, Շաուֆիկ Մուայադ ալ-Ազմի ընտրությունների օրինականությունը: Վերջին երեք պատգամավորների մանդատները քննարկումներից հետո հաստատվեցին, իսկ Յուսուֆ Շիտվանի դեպքում անցկացվեցին կրկնակի ընտրություններ: 1909 թ. ամռանը Շիտվանի վերընտրվելը կրկին առարկությունների առիթ տվեց: Այս անգամ ևս արաբ պատգամավորները, այդ թվում նաև ալ-Չահրավին, հանդես եկան նրա պաշտպանությամբ: Օմար Մանսուրն իթթիհադականների այդպիսի դիրքորոշումը մեկնաբանեց որպես անվստահություն Շիտվանի ընտրողների հանդեպ²: Այս մասնավոր և տեղական խնդիրներն ի վերջո հանգեցրին համաարաբական հարցերի բարձրացմանը. քննարկման առարկա դարձան արաբների ինքնության, նրանց իրավահավասարության և Օսմանյան կայսրությունում գրաված դիրքի ու կարգավիճակի հարցերը:

Նույն տարվա վերջին արաբ պատգամավորները համատեղ հանդես եկան ի պաշտպանություն վաքֆերի պաշտոնանկ արված նախարար Իսալի Համիդ փաշայի: Վերջիններս համոզված էին, որ նրան հեռացրել էին աշխատանքից միայն այն պատճառով, որ նա նախարարության համակարգում աշխատանքի էր ընդունել մի քանի արաբների: Նրան փոխարինած Ալի Հեյրար փաշայի (որը Հիջազի Հաշիմյանների ընտանիքից էր) հրաժարականից հետո բանավեճերն այս խնդրի շուրջ նոր թափ ստացան: Արաբ պատգամավորներից մեկը նույնիսկ պահանջեց, որ նախարարի պաշտոնը զբաղեցնի արաբ, սակայն իթթիհադական ղեկավարները, ինչպես և պետք էր սպասել,

¹ Մանրամասն տե՛ս H. Kayali, *Arabs and Young Turks*, նշվ. աշխ., էջ 102-106:

² Նույն տեղում, էջ 67-68:

այդ պաշտոնում նշանակեցին թուրքի¹: Երիտթուրքերի այս քայլը հերթական անգամ առիթ տվեց խորհրդարանում կրքերի բորբոքման: Արաբ առաջադիմականներն այն ընդունեցին որպես իթթիհադական ղեկավարների՝ արաբներին պետական պաշտոններ ընդհանրապես չտրամադրելու դիրքորոշման արտահայտություն: «Մենք՝ արաբներս, կազմում ենք կայսրության բնակչության 2/3-ը և այդ պատճառով պետք է զբաղեցնենք պաշտոնների 2/3-ը»², - ասում էր արաբ պատգամավորների առաջադեմ մասը: Արաբների նկատմամբ կիրառվող խտրակա-նության քաղաքականությունը վերացնելու պահանջը լայն տարածում գտավ արաբական հասարակության մեջ:

Մյուս կարևորագույն խնդիրը, որը հասունացնում էր արաբ-թուրքական առճակատումը խորհրդարանում և նրանից դուրս, արաբերենի կարգավիճակի հարցն էր: Հայտնի է, որ Օսմանյան կայսրության արաբ ազգաբնակչության՝ ինքնավարության համար պայքարում կենտրոնական տեղ էր գրավում արաբերենի պահպանման և նրա կիրառման շրջանակները հնարավորինս ընդլայնելու խնդիրը, ինչը, ի դեպ, քազմիցս արծարծվել է նաև արաբ լուսավորիչների գործերում³: Պատահական չէ, որ կայսրությունում արաբերենի ճանաչման և հատկապես արաբաբնակ շրջաններում նրա կարգավիճակի հարցը կարևորվում էր արաբական կուսակցությունների ու կազմակերպությունների մեծ մասի ծրագրերում և փաստաթղթերում:

Չնայած ձևակերպումների մեջ առկա տարբերություններին՝ արաբների բոլոր, նաև լեզվական պահանջների հիմնական բովանդակությունը գրեթե միշտ նույնն էր: Մասնավորապես, 1912 թ. վերջին Կահիրեում Սիրիայից, Լիբանանից և Պաղեստինից արտագաղթած արաբ ազգայնականների ստեղծած «Վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցության» («Լամարքազիա») ընդունած ծրագրում, իրենց հավատարմությունը հայտնելով Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման գաղափարին և միայն նրա սահմաննե-

¹ انكتور توفيق بوز، Եշվ. աշխ., էջ 267-269:

² Բ. Առաք, Եշվ. աշխ., էջ 183:

³ Մանրամասն տե՛ս Բ. Թիբ, Եշվ. աշխ., էջ 47-62:

րում ինքնավարություն ձեռք բերելու մտադրությանը, միաժամանակ պահանջվում էր օսմանյան քոլոր վիլայեթներում թուրքերենի և տեղաբնակների ազգային լեզվի համատեղ գործածություն, ինչպես նաև վիլայեթներում մայրենի լեզվով տարրական կրթության իրականացում¹: Հասկանալի է, որ կուսակցությանն առավելապես հուզում էր արաբերենի կարգավիճակը սիրիական վիլայեթներում:

Արաբերենի հարցը կարևոր տեղ էր գրավում նաև ավելի ուշ՝ 1913 թ. հունվարին Բեյրութում ստեղծված Բարենտրոգումների կոմիտեի՝ վարչական ապակենտրոնացման սկզբունքների վրա հիմնված ծրագրում: Եվս մեկ անգամ հավաստելով, որ արաբներն անջատողական որևէ ձգտում չունեն, այլ, ընդհակառակը, հակված են Օսմանյան կայսրության մաս կազմել և, ավելին, աջակցել նրան՝ դիմակայելու Եվրոպայի հևարավոր նկրտումներին, որպես փոխհատուցում այդ հավատարմությանը՝ պահանջվում էր միայն լայն ինքնավարություն: Պահանջների սկզբունքային կետերից էր, նախ և առաջ, արաբերենի ճանաչումը որպես արաբական վիլայեթների պաշտոնական լեզու՝ թուրքերենը թողնելով միայն Կ.Պոլսի հետ հաղորդակցման միջոց: Միաժամանակ առաջարկվում էր, որ արաբերենն ընդունվի օսմանյան խորհրդարանում (հոդվ. 1): Որպես հաջորդ քայլ՝ պահանջվում էր նաև, որ Սիրիայում նշանակվեին միայն արաբերենին տիրապետող պաշտոնյաներ (հոդվ. 2)²:

Այն հանգամանքը, որ ծրագրում արաբերենի հարցը զբաղեցնում էր առաջին երկու կետերը, ինքնին վկայում է այդ խնդրին տրվող կարևորության մասին:

Այդ տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 1913 թ. Փարիզում կայացած Առաջին արաբական

¹ Z. Zeine, նշվ. աշխ., էջ 83:

² A. Programme of Reforms Based on Administrative Decentralization, տեքստը տե՛ս նույն տեղում, էջ 137-138 (Appendix D), Հ. Մարգայան, Ա. Թովֆայան, Արաբական մի շարք փաստաթղթեր արաբ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI, Երևան, 1974, էջ 220-221:

կոնգրեսի որոշումը¹, որտեղ հատուկ կետ էր հատկացվում (5-րդ) արաբերենի կարգավիճակի հարցին: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, թուրքական կառավարող շրջանները փաստորեն ոչ միայն մերժեցին այդ հեղինակավոր համաժողովի պահանջները, այլև հրաժարվեցին լեզվի մասին պահանջն իրականացնելու իրենց խոստումից: Ավելորդ չէ նշել, որ դրան մեծ չափով նպաստեցին հատկապես արաբ ազգային գործիչների միջև առկա հակասությունները, ինչպես նաև երիտթուրքերի «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության արաբ կողմնակիցների դիրքորոշումը, որոնք նպատակահարմար էին գտնում «Արաբների իսկ շահերից ելնելով՝ արաբական երկրներում թուրքներն էլ թողնել որպես պաշտոնական լեզու»² փորձելով համոզել, որ հակառակ դեպքում կտուժեն միայն արաբները:

Լեզվի պահպանման հարցում արաբների շահագրգռությունը և այդ ուղղությամբ նրանց ջանքերը, թերևս, անմիջապես թելադրվում էին հետևյալ հանգամանքներով. հատկապես արաբների պարագայում, երբ կրոնական գործոնը նպաստում էր երիտթուրքերի որդեգրած օսմանիզմի գաղափարների իրականացմանը, լեզվի պահպանումը դառնում էր նրանց միասնականությունն ու ինքնությունը պահպանելու կարևորագույն, առաջնահերթ միջոց և, միաժամանակ, ստեղծված իրադրության պայմաններում վերջիններիս տալիս էր որպես ընդհանրության, որպես ժողովրդի ու որպես ազգի իրենց իրավունքների անվիճելիությունը հաստատելու այդքան անհրաժեշտ հնարավորություն³:

Այն հավասարապես հետևանք էր նաև երիտթուրքերի որոշակի քաղաքականության, որտեղ լեզվական ծովման խնդիրը կարևոր տեղ էր գրավում՝ համարվելով նաև ապակենտրոնացումը կասեցնելու միջոց: Անվերադարձ անցել էին այն ժամա-

¹ Կոնգրեսի աշխատանքների և նրա ընդունած որոշման մասին տե՛ս աշխատանքի 3-րդ գլխում:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 306:

³ Э.Тума, եջվ. աշխ., էջ 117:

նակները, երբ երիտթուրքերը, կայսրության տարբեր ազգերի հավասարության ջատագովի կեցվածք ընդունած, փորձում էին սիրաշահել վերջիններին և բոլոր միջոցներով պահպանել իրենց նկատմամբ վստահությունը: Սակայն ոչ թուրք ազգաբնակչության բացահայտ ընդդիմությունն օսմանիզմի գաղափարների իրականացմանը և կայսրության մասնատման իրական հեռանկարը երիտթուրքերին ստիպեցին հրաժարվել իրենց իսկական դիտավորությունները սքողելու միտումից և ձեռնամուխ լինել կայսրության ոչ թուրք ազգությունների բռնի ծուլմանն ուղղված անթաքույց քաղաքականության, ինչն, անշուշտ, կարելի է համարել կայսրության նախկին իշխանությունների վարած թուրքացման քաղաքականության շարունակությունը¹: Երիտթուրքերի այս կողմնորոշումը վերջնականապես ձևակերպվեց 1911 թ. հոկտեմբերին Սալոնիկում կայացած «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության համագումարում, որի ընդունած որոշման մեջ ուղղակիորեն հայտարարվում էր, որ վաղ թե ուշ իրականացվելու է բոլոր օսմանահպատակների փակատար թուրքացումը, որ կայսրության ոչ թուրք ազգություններին պետք է զրկել կազմակերպելու իրավունքից, քանի որ ապակենտրոնացումն ու ինքնավարությունը դավաճանություն են թուրքական կայսրության նկատմամբ²: Որոշման մեջ հատկապես նշվում էր, որ ազգային փոքրամասնությունները կարող են պահպանել իրենց կրոնը, սակայն ոչ լեզուն³, հանգամանք, որը մեկ անգամ ևս վկայում է երիտթուրքերի կողմից այդ գործունի տրվող կարևորության մասին: Լեզվական ճշումը, այսպիսով, վերջիններիս կողմից դիտվում էր որպես թուրքերենի գերակայության անհրաժեշտ նախապայման, ինչը և, նրանց խորին համոզմամբ, կդառնար կայսրության ոչ թուրք ազգաբնակչության ծուլման առավել արդյունավետ միջոց:

Հայտնի է, սակայն, որ երիտթուրքերի այս քաղաքականու-

¹ Ա. Գասպարյան, Օսմանյան կայսրության Սիրիական վիլայեթներում արաբներին լեզվի վիճակը երիտթուրքերի կառավարման օրոք, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Երևան, 2004, էջ 54:

² Э. Гасанова, Идеология буржуазного национализма в Турции в период младотурок. (1908-1914 гг.), Баку, 1966, с. 43-44.

³ Նույն տեղում, էջ 44:

թյունը ոչ միայն չնպաստեց օսմանիզմի հայեցակարգի իրականացմանը, այլև, ի վերջո, ճակատագրական եղավ իրենց իսկ կուսակցության համար: Իզուր չէ, որ Ջ. Անտոնիուսն արաբների ազգային զարթոնքին նվիրված իր ուսումնասիրության մեջ, հատկապես ընդգծելով երիտթուրքերի կողմից կայսրության ազգային կազմի յուրահատկությունների անտեսման և ազգությունների ապակենտրոնացման պահանջներին ընդդիմանալու հանգամանքը, իշխանության գալուց հետո նրանց ամենակոպիտ սխալն ու նրանց անհաջողության ուղղակի պատճառ է համարում հենց պետության կենտրոնացման քաղաքականության որդեգրումը¹:

Կայսրության արաբ ազգաբնակչության նկատմամբ օսմանիզմի քաղաքականությունն իրականացնելիս երիտթուրքերը հիմնական շեշտերից մեկը դնում էին լեզվական ծովման վրա: Եթե սկզբնական շրջանում վերջիններս արաբական վիլայեթներում արաբերենի գործածմանը գոնե արտաջուատ վերաբերվում էին քիչ թե շատ հանդուրժողաբար, ապա ավելի ուշ վիճակը փոխվեց: Այլևս հարկ չհամարելով որևէ չափով սքողել իրենց իսկական մտադրությունները՝ նրանք բացահայտորեն արտահայտում էին իրենց ծայրահեղ դժգոհությունը՝ արաբների՝ իրենց մայրենի լեզվով խոսելու փաստը գնահատելով որպես թուրքերենի նկատմամբ արհամարհանքի դրսևորում և, միաժամանակ, չափազանց վտանգավոր իրողություն: Նրանք փորձում էին այդ հանգամանքն օգտագործել արաբների նկատմամբ նոր, ծայրահեղ ճնշումներ գործադրելու նպատակով, ընդհուպ մինչև ստիպել մոռանալ իրենց լեզուն և խոսել «տիրոջ լեզվով», այսինքն՝ թուրքերենով²: Իթթիհադականների ներկայացուցիչներից մեկը՝ Ջելալ Նուրին, չթաքցնելով վերջիններիս հեռուն գնացող նպատակները, գրում էր. «...Արաբական երկրները, հատկապես Եմենը և Իրաքը, պետք է վերածվեն թուրքական գաղութների՝ թուրքերենը տարածելու նպատակով... Երաշխավորելու համար մեր գոյությունը անհրաժեշտ է բոլոր արաբական

¹ G. Antonius, *The Arab Awakening. The Story of the Arab National Movement*, New York, 1947, p.117.

² Յ. Ֆլեսսո, նշվ. աշխ., էջ 133:

երկրները դարձնել թուրքական»¹:

Ոչ թուրք ազգաբնակչությանը ծուլելու երիտթուրքերի այս սևեռուն գաղափարն իր վառ արտացոլումը գտավ «Վիլայեթների մասին» օրենքում (1913 թ.): Չնայած այն հավաստիացումներին, որ հինգ տարվա ընթացքում սանջակների կենտրոնում գտնվող պետական դպրոցներում ուսուցումը տարվելու է տեղական լեզուներով (տվյալ դեպքում՝ արաբերենով), այնուամենայնիվ, այն սահմանափակվում էր մի շարք վերապահումներով: Բացի նրանից, որ դպրոցներում պահպանվում էր թուրքերենի պարտադիր ուսուցումը, երկու գլխավոր առարկաների՝ պատմության և աշխարհագրության դասավանդումը ևս պետք է անցկացվեր թուրքերենով: Իսկ վիլայեթների կենտրոններում գտնվող երկրորդ աստիճանի դպրոցներում թույլատրելի էր համարվում միայն թուրքերենով ուսուցումը²:

Անմիջապես ծուլման նպատակ էր հետապնդում նաև վիլայեթներում տարրական դպրոցների նկատմամբ երիտթուրքերի քաղաքականությունը: 1913 թ. ընդունված օրենքով առաջին և երկրորդ աստիճանի դպրոցների միավորման անվան տակ «միասնական տարրական դպրոցի» շրջանակներում վիլայեթների առաջին աստիճանի դպրոցները պետության հսկողության տակ դնելու միջոցով փաստորեն սահմանափակվում էր դրանց ինքնավարությունը և, առաջին հերթին, այդ դպրոցներում մայրենի լեզվի դասավանդումը՝ սկզբից ևեթ կողմնորոշելով աշակերտներին առավելապես դեպի թուրքերենը³:

Արաբերենի ճնշմանը մեծ չափով նպաստում էր նաև երիտթուրքերի կադրային քաղաքականությունը: Որքան էլ արաբական կազմակերպություններն իրենց ծրագրերում համառորեն պահանջում էին, որ արաբական վիլայեթներում պատասխանատու պաշտոններ զբաղեցնեն առավելապես իրենք՝ արաբները, այդ պաշտոններում դիտավորյալ նշանակվում էին ոչ տեղական ծագում ունեցող և հաճախ արաբերենին չտիրապետող ան-

¹ З. Левин, *Նշվ. աշխ.*, էջ 133:

² F. Ahmad, *Նշվ. աշխ.*, էջ 134:

³ А. Желтяков, Ю. Петросян, *История просвещения в Турции*, Москва, 1965, с. 108-109.

ծինք: Այն պարագայում, երբ արաբաբնակ վիլայեթներում ազգաբնակչությունը մեծ մասամբ չէր տիրապետում թուրքերենին, ողջ գործավարությունն իրականացվում էր միայն թուրքերենով, երբեմն թարգմանչի օգնությամբ: Պաշտոնապես հայտարարվեց նաև տեղական կառավարման մարմիններում ոչ թուրքերենով դիմումների, հայցերի և մյուս պաշտոնական գրությունների ընդունումը դադարեցնելու մասին¹:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ ոչ թուրք ազգաբնակչության և առավելապես արաբների նկատմամբ իրենց քաղաքականությունն իրականացնելիս երիտթուրք առաջնորդները հարկադրված էին որոշ զիջումների գնալ: 1913 թ. վերջին Լուսավորության նախարարությունը հրահանգ արձակեց արաբերենը մտցնել որպես ուսուցման լեզու արաբական վիլայեթների տարրական դպրոցներում²: Պաշտոնական փաստաթղթերի և կառավարական հայտարարությունների տեքստերը մաքրվեցին բացահայտորեն ծուլմանը միտված ձևակերպումներից: Գրեթե նույն ժամանակ՝ 1913 թ. նոյեմբերին, երիտթուրքերի կոաակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրյուն զգուշացնում էր, որ պետք չէ չարաշահել արաբների համբերությունն ու վստահությունը և անհրաժեշտ է առանց հապաղելու ինչ-որ բան ձեռնարկել՝ խուսափելու համար անախորժություններից³:

Առաջին հայացքից անսպասելի թվացող այս դիրքորոշումն անմիջապես հետևանք էր երիտթուրքերի քաղաքականության էվոլյուցիայի որոշակի փուլում դրա մեջ ակնհայտորեն նկատվող նոր, հարկադրված զիջման մարտավարության⁴, որն ստեղծված պայմաններում «օսմանյան ազգի միասնությունը պահպանելու» անվան տակ «...նպատակ ուներ քողարկելու

¹ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 40:

² А. Желтяков, Ю. Петросян, նշվ. աշխ., էջ 108-109:

³ Х. Габдуллин, նշվ. աշխ., էջ 145:

⁴ Ռ. Մաֆրասոյան, Օսմանիզմի ղոկտրիտան երիտթուրքերի կոաակցական փաստաթղթերում (1908-1916 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XV, Երևան, 1989, էջ 244:

երիտթուրքերի ազգային քաղաքականության իրական նպատակաուղղվածությունը»¹:

Այն հանգամանքը, որ այս արտաքուստ «մեղմ» քաղաքականությունը հատկապես իր վառ արտահայտությունը գտավ արաբական վիլայեթներում, պատահական չէ: Պատճառներից մեկը, թերևս, այն էր, որ ինչպես վերը նշվել է, արաբները կազմում էին կայսրության ազգաբնակչության գերակշիռ մասը (համաձայն Մ.Լազարևի բերած տվյալների՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին արաբները կայսրության ազգաբնակչության 50 %-ն էին)², և նրանց հետ կտրուկ առճակատումը կարող էր խիստ վտանգավոր հետևանքներ ունենալ: Ոչ պակաս կարևոր գործոն էր նաև այն, որ արաբներնը եղել և մնում է իսլամի ու Ղուրանի լեզու, ինչը երիտթուրքերի կողմից չէր կարող անտեսվել:

Այսպիսով, դժվար չէ համոզվել, որ երիտթուրքերի զիջումներն ունեին զուտ մարտավարական նպատակներ և որևէ չափով չէին կարող փոխել նրանց քաղաքականության բնույթը կամ գոնե դրա տպավորությունն ստեղծել: Անառարկելի է, որ այդ քաղաքականությունը, որքան էլ երբեմն զգուշավոր և քողարկված, երիտթուրքերի կառավարման ողջ շրջանում մշտապես և առաջին հերթին նպատակաուղղված էր օսմանիզմի գաղափարախոսության իրականացմանը, այն է՝ ամենատարբեր, այդ թվում նաև լեզվական ճնշման միջոցով կայսրության արաբ ազգաբնակչության ծովմանը:

ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1909 թ. «մարտի 31-ի» դեպքերից հետո իթթիհադականների վարած ազգային քաղաքականության ակնհայտ փոփոխությունը հիասթափեցրեց արաբ քաղաքական ակտիվ շրջաններին՝ վերջիններիս մեջ հասունացնելով «Իթթիհադ վե թերաքքի»-ին ընդդիմադիր արաբական կազմակերպությունների ստեղծման գաղափարը:

¹ Ռ. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 244:

² М. Лазарев, նշվ. աշխ., էջ 13:

Այս պայմաններում ի հայտ եկան նոր հայացքներ և ուղղվածություն ունեցող արաբական կազմակերպություններ, որոնք իրենց հիմնական առաքելությունը տեսնում էին ընդհանուր գաղափարական հիմքի ստեղծման մեջ, որը պետք է միավորեր արաբներին ինքնավարության և իրավահավասարության իրենց պայքարում:

Այս շարժումը հատկապես ակտիվ էր կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսում, որտեղ կենտրոնացած էին արաբ մտավորականության, ուսանողության և զինվորականության առավել գործունյա տարրերը: Նրանց անմիջական մասնակցությամբ հիմնվեցին մի շարք կազմակերպություններ, որոնք պետք է մեծ դեր խաղային ազգային շարժման զարգացման մեջ:

«Ալ-Կահտանիա»

1909 թ. վերջերին Կ.Պոլսում ստեղծվեց երիտթուրքական հեղաշրջումից հետո արաբական առաջին գաղտնի կազմակերպությունը՝ «ալ-Կահտանիա»-ն¹: Վերջինիս մասին տեղեկությունները բավական սուղ են, ինչը նրա ստեղծման հանգամանքների, գործունեության և հետապնդած նպատակների ամենատարբեր, հաճախ միանգամայն հակադիր մեկնաբանությունների և գնահատականների առիթ է տվել²:

Արաբական, ինչպես նաև արևմտյան պատմագրության մեջ երբեմն թուրքական բանակի գլխավոր շտաբի սպա Սեյիմ ալ-Ջազաիրիի հետ միասին «ալ-Կահտանիա»-ի հիմնադիր է համարվում թուրքական բանակի սպա Ազիզ Ալի ալ-Միսրին: Այս տեսակետի տարածման համար հիմք է հանդիսացել Ալիեյան դատավարության³ հրապարակված փաստաթղթերի մեջ առկա վկայությունը⁴: Հարկ է նշել, սակայն, որ ժամանակի

¹ Արաբ լեզուբանի հերոս Կահտանի անունով:

² J. Hajjar, նշվ. աշխ., էջ 271:

³ Լեռնալիբանանի Ալիե քաղաքում 1915-1916 թթ. իթթիհադականների կողմից կազմակերպված արաբ ազգայնականների դատավարություն:

⁴ Համաձայն Ալիեյան դատավարության փաստաթղթերի՝ «ալ-Կահտանիա»-ի հիմնադիր անդամներն էին Ազիզ Ալի ալ-Միսրին, Սեյիմ ալ-Ջազաիրին, Աբդ-ալ Համիդ ալ-Ջահրավին և Հայիլ ալ-Հիմադը:

إيضاحات من المسائل السياسية التي جرت تفتتها بدوران الحرب في المستنكر بعلية. أثر هذه الإيضاحات من قبل قائد المعلم للجيش الرابع، 1333 هـ، ص 17

պատմաբաններ Ահմադ Իզետ ալ-Ազամին և Մուատաֆա ալ-Շիհարը հերքում են Ալիեյան դատավարության տեղեկությունները և, ամենևին չհորձելով նվազեցնել ալ-Միսրիի դերակատարությունն ընկերության գործունեության մեջ, այնուամենայնիվ, «ալ-Կահտանիա»-ի հիմնադիր են դիտում Սեյիմ ալ-Ջազաիրիին¹:

Անկասկած է, որ «ալ-Կահտանիա»-ն ստեղծվել էր թուրքական քանակի արաբ սպանների նախաձեռնությամբ, և նրանում վերջիններիս ազդեցությունն անժխտելիորեն մեծ էր: Սակայն «ալ-Կահտանիա»-ն զուտ զինվորական կազմակերպություն չէր. նրա մեջ ներգրավված էին նաև մտավորականության, ուսանողության և այլ խավերի ներկայացուցիչներ: Կազմակերպության առավել հայտնի գործիչներից էին Աբդել Քարիմ Քասիմ ալ-Հալիլը, էմիր Աբդել Աբալանը, դոկտոր Իզետ ալ-Ջունդին, Հասան բեյ Համադեն, էմիր Արեֆ ալ-Շիհարը, Ամին Լուֆֆի բեյ ալ-Հաֆեզը, Ալի էֆենդի ալ-Նաշաշիբին²:

Քանի որ ընկերությունը գործում էր խիստ գաղտնի, նա իր անդամներին ընտրում էր մեծ զգուշավորությամբ և իր շարքերն էր ընդգրկում միայն նրանց, ում հայրենասիրությունը որևէ կասկած չէր հարուցում: «Ալ-Կահտանիա»-ի անդամներն իրար ճանաչում էին հատուկ նշանաբաններով և գաղտնաբառերով³: Միայն ավելի ուշ, երբ նրա անդամների թիվն ավելացավ, կազմակերպության գաղտնիությունը որոշակիորեն տուժեց:

Ըստ արաբ պատմաբան Մաջիդ Խադուրիի՝ սկզբնական շրջանի արաբական ընկերություններն ընդհանրապես (ենթադրվում է նաև «ալ-Կահտանիա»-ն - ԱԳ.) հիմնադրվում էին ի հեճուկս թուրքական քաղաքական վերնախավի, որն իր կազմակերպություններում արաբներին չէր ընդունում որպես լիիրավ անդամներ⁴:

Տարածված տեսակետներից մեկն այն է, որ «ալ-Կահտա-

¹ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., т. 2: 207:

² J. Hajjar, նշվ. աշխ., էջ 272:

³ G. Antonius, նշվ. աշխ., էջ 110-111:

⁴ M. Khaduri, նշվ. աշխ., էջ 141:

նիա»-ն իր խնդիրները սահմանափակում էր միայն քարոզչական-լուսավորական շրջանակներով¹: Այդ տեսակետի ընդդիմախոսները, սակայն, համարում են դա քիչ հավանական պատճառաբանելով, որ այդպիսի նպատակի իրականացման համար խիստ գաղտնի կազմակերպության ստեղծման անհրաժեշտությունն ուղղակի չկար: Առավել ճշմարտամոտ է, թերևս, այն, որ արդեն 1909 թ. վերջերին կայսրությունում տիրող իրադրությունն ու երիտթուրքերի ազգային քաղաքականությունն իր քնույթով արաք ազգային գործիչների և նրանց կազմակերպությունների առջև անխուսափելիորեն պետք է դներ այդ պահի համար շատ ավելի կարևոր գործնական խնդիրներ, ինչպես, ասենք, արաք հայրենասիրական ուժերին համախմբելն ու նրանց ազգային նպատակների իրականացմանն ուղղելը: Տեսակետների նման զանազանությունը միանգամայն հասկանալի է, եթե նկատի առնենք, որ գաղտնի կազմակերպությունների ծրագրերի տեքստերն ուսումնասիրողներին անհասանելի էին²:

Ուսումնասիրողների մի մասը հակված է «ալ-Կահտանիա»-ին վերագրել արաք-թուրքական դուալիստական կայսրություն ստեղծելու գաղափարի մտահղացումը: Ջ. Անտոնիուան, օրինակ, ուղղակի գրում է, որ այդ կազմակերպության հիմնադիրները համարձակ մարդիկ էին, և նրանց նպատակն Օսմանյան կայսրությունը դուալիստական կայսրություն դարձնելու նոր և խիզախ ծրագրի առաջաշումն էր, ինչը, վերջինիս գնահատմամբ, իթթիհադական կոմիտեի կենտրոնացման քաղաքականության հարուցած խնդրի դեմ պայքարելու փորձերից մեկն էր: Ըստ այդ ծրագրի՝ արաքական վիլայեթները պետք է միավորվեին մեկ միասնական թագավորության մեջ՝ սեփական խորհրդարանով, տեղական կառավարման մարմիններով և արաբերենի՝ պետական լեզվի կարգավիճակով: Արաքական

¹ Այս վարկածի կողմնակիցները ելնում են այն հանգամանքից, որ «ալ-Կահտանիա»-ի փակումից հետո նրա անդամների մի մասն ընդգրկվեց «Գրական ակումբի» շարքերը: M. Khaduri, նշվ. աշխ., էջ 142:

² Ա. Գասպարյան, «Ալ-Կահտանիա» կազմակերպության գաղափարախոսությունն ու նպատակները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVI, Երևան, 2007, էջ 120:

թագավորությունը պետք է կազմեր արաբ-թուրքական միասնական թագավորության մաս՝ ավստրոհունգարական պետության օրինակով: Օսմանյան սուլթանը, ի հավելումն թուրքական գահի, պետք է կրեր նաև արաբական թագավորության թագը¹: Այսպիսով, փաստորեն, միասնությունը կապահովվեր քաժանման միջոցով:

Ռուս հեղինակ Լ. Կոտլովը, չքացառելով «ալ-Կահտանիա»-ի ծրագրում դրախտական կայսրության գաղափարի առկայությունը, այն կարծիքն է հայտնում, որ նրա հիմնադիրներին գրավում էր ոչ թե Ավստրո-Հունգարիայի՝ ձևականորեն երկու մասերից կազմված պետության ձևը, այլ «տեղական կառավարման նրա մոդելը, որը շատ քանով ներդաշնակում էր ապակենտրոնացման հայեցակարգի հետ»²:

Ինչպիսին էլ որ լինի «ալ-Կահտանիա»-ի ծրագրում դրախտական պետության գաղափարի մեկնաբանությունը, այնուամենայնիվ, նման ծրագրային դրույթը կասկածելի է դառնում, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ավստրոհունգարական տիպի դաշնային պետության գաղափարն արաբների կողմից մամուլում և քաղաքական շրջանակներում ակտիվ քննարկման առարկա դարձավ միայն 1912 թ. հետո³: Բացի դրանից, ինչպես իրավացիորեն նշում է Թ. Բիրուն, քանի դեռ քաղաքականապես ակտիվ ռոմեյիական նահանգները գտնվում էին կայսրության կազմի մեջ, նման կարգախոսն անհնարին էր⁴: Ավելորդ չէ հիշեցնել նաև, որ ինքը՝ Ազիզ Ալի ալ-Միսրին ևս կտրականապես մերժում էր «ալ-Կահտանիա»-ի ծրագրի և նպատակների նման մեկնաբանությունը⁵:

«Ալ-Կահտանիա»-ի հետապնդած խնդիրների և պահանջների հստակեցման հարցում, թերևս, կարևոր նշանակություն է ձեռք բերում լայնորեն շրջանառության մեջ չդրված մի փաստա-

¹ G. Antonius, նշվ. աշխ., էջ 110-111:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 208:

³ M. Khaduri, նշվ. աշխ., էջ 142:

⁴ الدكتور توفيق برون، նշվ. աշխ., էջ 320:

⁵ Նույն տեղում:

թուղթ՝ «ալ-Կահտանիա»-ի կենտրոնական կոմիտեի՝ համայն արաբներին ուղղված կոչը, որը հրապարակվել է «ալ-Աիրամ» թերթում 1912 թ. ընտրարշավի ժամանակ, և որի օրինակներն ուղարկվել էին օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաներին՝

Ստորև մեջքերում ենք կոչի տեքստն ամբողջությամբ.

«Բոլոր արաբներին ընդհանրապես.

Մենք ձեզ ենք դիմում հանուն Աստծո.

Ո՛վ թագավորների հետնորդներ, ժողովրդի պահապաններ և ժողովրդի առաջնորդներ: Կանգ առեք և լսե՛ք շիրիմներից ձեզ դիմող ձեր նախնիների ծայնը, որը ձեզ կոչ է անում վերականգնել այն փառքը, որ դուք կորցրիք, այն պատիվը, որ դուք արհամարհեցիք, և այն գիտելիքները, որոնցից դուք հրաժարվեցիք:

Եղե՛ք ճշմարիտ արաբներ, ինչպես ձեր նախնիները: Վերածնվե՛ք, ու՛ժ ստացեք և ընդունե՛ք այն, ինչ որոշեցին երիտասարդ կահտանականներն անապատում տեղի ունեցած իրենց վերջին ժողովի ժամանակ՝ միավորելով բոլոր վիլայեթները (արաբական - Ա.Գ.): Ահա այդ որոշումները.

1. Որ կառավարությունը (օսմանյան - Ա.Գ.) ձեզ ճանաչի որպես խոսքով և գործով իրավունքներ ունեցող առանձին մի ազգ:

2. Որ նա ձեր լեզուն ճանաչի որպես պաշտոնական լեզու:

3. Որ նա ձեզ տա գործելու հնարավորություն ձեր արաբական երկրներում, քանի որ դուք ունակ եք և առավել շահագրգռված ձեր երկրների բարօրությամբ:

4. Որ նա սահմանի արաբ զինվորների և սպայական կազմի ծառայությունն իրենց երկրներում:

5. Որ նա նպաստի հասարակական խորհուրդների արտոնությունների ընդլայնմանն այնպես, որ դատավորները պատասխանատու լինեն նրանց առջև բոլոր՝ մեծ, թե փոքր գործողությունների համար:

6. Որ արաբական ցեղերն իրավունք ստանան ներկայացված լինելու խորհրդարանում նույն իրավունքներով, ինչ քա-

¹ J. Haïjar, նշվ. աշխ., էջ 477: Հավանական ենք համարում, որ կոչը ձևակերպվել էր ավելի վաղ:

կոթյան մշտական վայր ունեցող ազգաբնակչությունը՝ գրանցված լինեն նրանք, թե ոչ քաղաքացիական գրանցումների գրքում:

Սրանք են «ալ-Կահտանիա» ընկերության կենտրոնական կոմիտեի հիմնական պահանջները: Հանուն արաբների իրավունքի և պատվի՝ ուղքի՝ ելեք, ո՛վ արաբներ, մի՛ եղեք դավաճաններ: Կյանքն արհամարհանքի մեջ մահ է: Եվ պատվի մեջ մահը՝ կլանք»¹:

Այս ոգեշունչ կոչի բովանդակությունն անժխտելիորեն որոշակիացնում է ընկերության պահանջները, որոնք միանգամայն համահունչ են ապակենտրոնացմանը հետամուտ կազմակերպությունների նպատակներին: Այստեղ արտահայտված է արաբների՝ իրենց էթնիկ առավելությունը վերահաստատելու և իրենց նախկին կարգավիճակը վերականգնելու ձգտումը:

Չի բացառվում, իհարկե, որ «ալ-Կահտանիա»-ի այսպիսի կողմնորոշումն արդյունք էր նրա քաղաքական հայացքների էվոլյուցիայի: Այսուհանդերձ, ակնհայտ է, որ կոչի բովանդակությունն ինքնին բացառում է այն բնորոշումը, որ այդ կազմակերպությունը միայն քաղաքական-լուսավորական նպատակներ էր հետապնդում:

Այսպիսով, «ալ-Կահտանիա» գաղտնի ընկերության ստեղծման փաստը հստակորեն վկայում է, որ երիտթուրքերի կառավարման արդեն իսկ սկզբնական շրջանում ձևավորվում էր արաբների՝ ինքնավարության ձեռքբերմանն ուղղված շարժումը: «Ալ-Կահտանիա»-ի անժխտելի առավելությունն այն է, որ կարողացավ իր շուրջը համախմբել արաբ ազգային գործիչներին և արաբական շարժման մեջ ներգրավել թուրքական բանակում ծառայող արաբ սպաներին, ինչը և հետագայում դարձավ արաբական ազատագրական պայքարի կարևորագույն գործոններից մեկը:

Իր խիստ գաղտնիությամբ և զգուշավորությամբ հանդերձ՝ «ալ-Կահտանիա»-ն, այնուամենայնիվ, իր շարքերում դավաճան-

¹ Sib'u J. Hajjar, նշվ. աշխ., էջ 477-478, նաև՝ الدكتور توفيق برو، նշվ. աշխ., էջ 324-325:

ների առկայության պատճառով՝ ի վերջո կանգնեց փլուզման առջև: Եւ նախ հարկադրված եղավ թուլացնել իր ակտիվութիւնը, իսկ որոշ ժամանակ անց ինքնալուծարվեց²: Հետագայում ընկերության անդամները մտան ավելի ուշ ստեղծված կազմակերպությունների և կուսակցությունների շարքերը («Գրական ակումբ», «Երիտասարդ Արաբիա», «ալ-Ահդ»):

«Գրական ակումբ»

«Գրական ակումբը» («ալ-Մունթադի ալ-ադաբի») Օսմանյան կայսրության տարածքում գործող այն առավել ակտիվ և գործունյա արաբական հասարակական-քաղաքական կազմակերպություններից էր, որն առաջինը սկսեց արաբ ժողովրդին դիտել ոչ թե որպես օսմանյան ազգի մի մաս, այլ որպես առանձին ազգային տարր՝ իր սեփական խնդիրներով, հիմնահարցերով ու նպատակներով:

Երա հիմնադրման տարեթվի մասին առկա են տարբեր կարծիքներ. ուսումնասիրողների մի մասը հավանական է համարում 1909 թ. ամառը³, իսկ մյուս մասը՝ 1910 թ. փետրվարի 8-ը⁴: «Գրական ակումբը» ստեղծվեց Կ.Պոլսի մի խումբ արաբ մտավորականների, պաշտոնյաների և պատգամավորների նախաձեռնությամբ: Ակումբի անդամները վերահսկում էին Կ.Պոլսում տպագրվող «Լիսան ալ-արաբ» («Արաբերեն լեզու») թերթը⁵:

«Գրական ակումբի» միջոցառումներին մասնակցում էին ամենատարբեր քաղաքական ուղղությունների ներկայացուցիչներ՝ առաջադիմական գործիչներ Արդ ալ-Համիդ ալ-Չահրավին, Ռաֆիկ ալ-Ազմը, Մուհամեդ Ռաշիդ Ռիդան, պահպանողական ուժերի առավել ականավոր ղեկավարներ Տալիբ փաշա ալ-Եւ-

¹ В. Луцкий, Новая история арабских стран, т. 2, с. 299:

² Հավանական է, որ «ալ-Կահուանիա»-ն ինքնալուծարվել է 1912 թ. հետո, քանի որ 1911 թ. սկսված բուրջ-խալական պատերազմի ընթացքում այն քաղաքական ակտիվ աշխատանքներ ծավալեց արաբ սպաների հավաքագրման գործում:

³ В. Луцкий, Новая история арабских стран, т. 2, с. 298:

⁴ Y. Choueiri, т. 2, с. 81:

⁵ Э. Тума, т. 2, с. 108:

քիբը, Ահմեդ փաշա ալ-Ջուհեյրը և Մուստաֆա ալ-Վափզը, հակաիթթիհադական կողմնորոշում ունեցող Շաուֆիկ ալ-Մուայադ, ալ-Ազմին, Յուսուֆ բեյ Շիտվանը և Ռուշդի ալ-Շաման¹:

«Գրական ակումբի» առավել ակտիվ անդամները հիմնականում ուսանողներ էին, սպաներ և տարբեր մասնագիտության տեր երիտասարդներ՝ Իզետ ալ-Ջունդին, Աունի Աբդ ալ-Հադին, Սեյֆադդին ալ-Խատիրը, Ռաֆիկ Ռիզկ Սալումը, Ահմադ Կադրին, Սեյիմ ալ-Ջազաիրին, Ազիզ Այի ալ-Միսրին և այլք²: Սակայն նրանցից ամենահեղինակավորը, որը նաև կազմակերպության հիմնադիրներից մեկն էր, լիբանանցի Աբդել Քարիմ ալ-Հալիլն էր³: Ակումբի առաջին նախագահ Մուստաֆա Ադիլ էֆենդիի՝ իր պաշտոնը լքելուց հետո այն զբաղեցրեց Աբդել Քարիմը և մնաց այդ պաշտոնում մինչև 1915 թ., երիտթուրքերի կողմից ակումբի փակումը, որից հինգ ամիս անց իթթիհադականները նրան մահապատժի ենթարկեցին մի շարք արաբ գործիչների հետ միասին⁴:

«Գրական ակումբն» ստեղծվեց որպես մշակութալուսավորական կազմակերպություն և իր պաշտոնական ծրագրում առաջ չէր քաշում քաղաքական նպատակներ: Ակումբի անդամները մեծ տեղ էին հատկացնում արաբական վիլայեթներում մշակույթի զարգացման և լուսավորության տարածման խնդիրներին: Նրանք տարբեր վայրերում անցկացնում էին արաբերենի դասընթացներ, ինչպես նաև բեմադրում էին պիեսներ, որտեղ ներկայացվում էին դրվագներ արաբ ժողովրդի հերոսական անցյալից: Այս բեմադրությունների միջոցով ակումբի անդամները հետապնդում էին հիմնականում մեկ նպատակ՝ արթնացնել արաբների մեջ հայրենասիրական ոգին: Ինչպես գրում էր ակումբի հիմնադիրներից մեկը՝ Իզետ ալ-Ջունդին, «Ամենից

¹ ١٠٠٠ و١٠٠١، ١٢٧٤، ١٢٣١، ١٢٣٢، ١٢٣٣، ١٢٣٤، ١٢٣٥، ١٢٣٦، ١٢٣٧، ١٢٣٨، ١٢٣٩، ١٢٤٠، ١٢٤١، ١٢٤٢، ١٢٤٣، ١٢٤٤، ١٢٤٥، ١٢٤٦، ١٢٤٧، ١٢٤٨، ١٢٤٩، ١٢٥٠، ١٢٥١، ١٢٥٢، ١٢٥٣، ١٢٥٤، ١٢٥٥، ١٢٥٦، ١٢٥٧، ١٢٥٨، ١٢٥٩، ١٢٦٠، ١٢٦١، ١٢٦٢، ١٢٦٣، ١٢٦٤، ١٢٦٥، ١٢٦٦، ١٢٦٧، ١٢٦٨، ١٢٦٩، ١٢٧٠، ١٢٧١، ١٢٧٢، ١٢٧٣، ١٢٧٤، ١٢٧٥، ١٢٧٦، ١٢٧٧، ١٢٧٨، ١٢٧٩، ١٢٨٠، ١٢٨١، ١٢٨٢، ١٢٨٣، ١٢٨٤، ١٢٨٥، ١٢٨٦، ١٢٨٧، ١٢٨٨، ١٢٨٩، ١٢٩٠، ١٢٩١، ١٢٩٢، ١٢٩٣، ١٢٩٤، ١٢٩٥، ١٢٩٦، ١٢٩٧، ١٢٩٨، ١٢٩٩، ١٣٠٠، ١٣٠١، ١٣٠٢، ١٣٠٣، ١٣٠٤، ١٣٠٥، ١٣٠٦، ١٣٠٧، ١٣٠٨، ١٣٠٩، ١٣١٠، ١٣١١، ١٣١٢، ١٣١٣، ١٣١٤، ١٣١٥، ١٣١٦، ١٣١٧، ١٣١٨، ١٣١٩، ١٣٢٠، ١٣٢١، ١٣٢٢، ١٣٢٣، ١٣٢٤، ١٣٢٥، ١٣٢٦، ١٣٢٧، ١٣٢٨، ١٣٢٩، ١٣٣٠، ١٣٣١، ١٣٣٢، ١٣٣٣، ١٣٣٤، ١٣٣٥، ١٣٣٦، ١٣٣٧، ١٣٣٨، ١٣٣٩، ١٣٤٠، ١٣٤١، ١٣٤٢، ١٣٤٣، ١٣٤٤، ١٣٤٥، ١٣٤٦، ١٣٤٧، ١٣٤٨، ١٣٤٩، ١٣٥٠، ١٣٥١، ١٣٥٢، ١٣٥٣، ١٣٥٤، ١٣٥٥، ١٣٥٦، ١٣٥٧، ١٣٥٨، ١٣٥٩، ١٣٦٠، ١٣٦١، ١٣٦٢، ١٣٦٣، ١٣٦٤، ١٣٦٥، ١٣٦٦، ١٣٦٧، ١٣٦٨، ١٣٦٩، ١٣٧٠، ١٣٧١، ١٣٧٢، ١٣٧٣، ١٣٧٤، ١٣٧٥، ١٣٧٦، ١٣٧٧، ١٣٧٨، ١٣٧٩، ١٣٨٠، ١٣٨١، ١٣٨٢، ١٣٨٣، ١٣٨٤، ١٣٨٥، ١٣٨٦، ١٣٨٧، ١٣٨٨، ١٣٨٩، ١٣٩٠، ١٣٩١، ١٣٩٢، ١٣٩٣، ١٣٩٤، ١٣٩٥، ١٣٩٦، ١٣٩٧، ١٣٩٨، ١٣٩٩، ١٤٠٠، ١٤٠١، ١٤٠٢، ١٤٠٣، ١٤٠٤، ١٤٠٥، ١٤٠٦، ١٤٠٧، ١٤٠٨، ١٤٠٩، ١٤١٠، ١٤١١، ١٤١٢، ١٤١٣، ١٤١٤، ١٤١٥، ١٤١٦، ١٤١٧، ١٤١٨، ١٤١٩، ١٤٢٠، ١٤٢١، ١٤٢٢، ١٤٢٣، ١٤٢٤، ١٤٢٥، ١٤٢٦، ١٤٢٧، ١٤٢٨، ١٤٢٩، ١٤٣٠، ١٤٣١، ١٤٣٢، ١٤٣٣، ١٤٣٤، ١٤٣٥، ١٤٣٦، ١٤٣٧، ١٤٣٨، ١٤٣٩، ١٤٤٠، ١٤٤١، ١٤٤٢، ١٤٤٣، ١٤٤٤، ١٤٤٥، ١٤٤٦، ١٤٤٧، ١٤٤٨، ١٤٤٩، ١٤٥٠، ١٤٥١، ١٤٥٢، ١٤٥٣، ١٤٥٤، ١٤٥٥، ١٤٥٦، ١٤٥٧، ١٤٥٨، ١٤٥٩، ١٤٦٠، ١٤٦١، ١٤٦٢، ١٤٦٣، ١٤٦٤، ١٤٦٥، ١٤٦٦، ١٤٦٧، ١٤٦٨، ١٤٦٩، ١٤٧٠، ١٤٧١، ١٤٧٢، ١٤٧٣، ١٤٧٤، ١٤٧٥، ١٤٧٦، ١٤٧٧، ١٤٧٨، ١٤٧٩، ١٤٨٠، ١٤٨١، ١٤٨٢، ١٤٨٣، ١٤٨٤، ١٤٨٥، ١٤٨٦، ١٤٨٧، ١٤٨٨، ١٤٨٩، ١٤٩٠، ١٤٩١، ١٤٩٢، ١٤٩٣، ١٤٩٤، ١٤٩٥، ١٤٩٦، ١٤٩٧، ١٤٩٨، ١٤٩٩، ١٥٠٠، ١٥٠١، ١٥٠٢، ١٥٠٣، ١٥٠٤، ١٥٠٥، ١٥٠٦، ١٥٠٧، ١٥٠٨، ١٥٠٩، ١٥١٠، ١٥١١، ١٥١٢، ١٥١٣، ١٥١٤، ١٥١٥، ١٥١٦، ١٥١٧، ١٥١٨، ١٥١٩، ١٥٢٠، ١٥٢١، ١٥٢٢، ١٥٢٣، ١٥٢٤، ١٥٢٥، ١٥٢٦، ١٥٢٧، ١٥٢٨، ١٥٢٩، ١٥٣٠، ١٥٣١، ١٥٣٢، ١٥٣٣، ١٥٣٤، ١٥٣٥، ١٥٣٦، ١٥٣٧، ١٥٣٨، ١٥٣٩، ١٥٤٠، ١٥٤١، ١٥٤٢، ١٥٤٣، ١٥٤٤، ١٥٤٥، ١٥٤٦، ١٥٤٧، ١٥٤٨، ١٥٤٩، ١٥٥٠، ١٥٥١، ١٥٥٢، ١٥٥٣، ١٥٥٤، ١٥٥٥، ١٥٥٦، ١٥٥٧، ١٥٥٨، ١٥٥٩، ١٥٦٠، ١٥٦١، ١٥٦٢، ١٥٦٣، ١٥٦٤، ١٥٦٥، ١٥٦٦، ١٥٦٧، ١٥٦٨، ١٥٦٩، ١٥٧٠، ١٥٧١، ١٥٧٢، ١٥٧٣، ١٥٧٤، ١٥٧٥، ١٥٧٦، ١٥٧٧، ١٥٧٨، ١٥٧٩، ١٥٨٠، ١٥٨١، ١٥٨٢، ١٥٨٣، ١٥٨٤، ١٥٨٥، ١٥٨٦، ١٥٨٧، ١٥٨٨، ١٥٨٩، ١٥٩٠، ١٥٩١، ١٥٩٢، ١٥٩٣، ١٥٩٤، ١٥٩٥، ١٥٩٦، ١٥٩٧، ١٥٩٨، ١٥٩٩، ١٦٠٠، ١٦٠١، ١٦٠٢، ١٦٠٣، ١٦٠٤، ١٦٠٥، ١٦٠٦، ١٦٠٧، ١٦٠٨، ١٦٠٩، ١٦١٠، ١٦١١، ١٦١٢، ١٦١٣، ١٦١٤، ١٦١٥، ١٦١٦، ١٦١٧، ١٦١٨، ١٦١٩، ١٦٢٠، ١٦٢١، ١٦٢٢، ١٦٢٣، ١٦٢٤، ١٦٢٥، ١٦٢٦، ١٦٢٧، ١٦٢٨، ١٦٢٩، ١٦٣٠، ١٦٣١، ١٦٣٢، ١٦٣٣، ١٦٣٤، ١٦٣٥، ١٦٣٦، ١٦٣٧، ١٦٣٨، ١٦٣٩، ١٦٤٠، ١٦٤١، ١٦٤٢، ١٦٤٣، ١٦٤٤، ١٦٤٥، ١٦٤٦، ١٦٤٧، ١٦٤٨، ١٦٤٩، ١٦٥٠، ١٦٥١، ١٦٥٢، ١٦٥٣، ١٦٥٤، ١٦٥٥، ١٦٥٦، ١٦٥٧، ١٦٥٨، ١٦٥٩، ١٦٦٠، ١٦٦١، ١٦٦٢، ١٦٦٣، ١٦٦٤، ١٦٦٥، ١٦٦٦، ١٦٦٧، ١٦٦٨، ١٦٦٩، ١٦٧٠، ١٦٧١، ١٦٧٢، ١٦٧٣، ١٦٧٤، ١٦٧٥، ١٦٧٦، ١٦٧٧، ١٦٧٨، ١٦٧٩، ١٦٨٠، ١٦٨١، ١٦٨٢، ١٦٨٣، ١٦٨٤، ١٦٨٥، ١٦٨٦، ١٦٨٧، ١٦٨٨، ١٦٨٩، ١٦٩٠، ١٦٩١، ١٦٩٢، ١٦٩٣، ١٦٩٤، ١٦٩٥، ١٦٩٦، ١٦٩٧، ١٦٩٨، ١٦٩٩، ١٧٠٠، ١٧٠١، ١٧٠٢، ١٧٠٣، ١٧٠٤، ١٧٠٥، ١٧٠٦، ١٧٠٧، ١٧٠٨، ١٧٠٩، ١٧١٠، ١٧١١، ١٧١٢، ١٧١٣، ١٧١٤، ١٧١٥، ١٧١٦، ١٧١٧، ١٧١٨، ١٧١٩، ١٧٢٠، ١٧٢١، ١٧٢٢، ١٧٢٣، ١٧٢٤، ١٧٢٥، ١٧٢٦، ١٧٢٧، ١٧٢٨، ١٧٢٩، ١٧٣٠، ١٧٣١، ١٧٣٢، ١٧٣٣، ١٧٣٤، ١٧٣٥، ١٧٣٦، ١٧٣٧، ١٧٣٨، ١٧٣٩، ١٧٤٠، ١٧٤١، ١٧٤٢، ١٧٤٣، ١٧٤٤، ١٧٤٥، ١٧٤٦، ١٧٤٧، ١٧٤٨، ١٧٤٩، ١٧٥٠، ١٧٥١، ١٧٥٢، ١٧٥٣، ١٧٥٤، ١٧٥٥، ١٧٥٦، ١٧٥٧، ١٧٥٨، ١٧٥٩، ١٧٦٠، ١٧٦١، ١٧٦٢، ١٧٦٣، ١٧٦٤، ١٧٦٥، ١٧٦٦، ١٧٦٧، ١٧٦٨، ١٧٦٩، ١٧٧٠، ١٧٧١، ١٧٧٢، ١٧٧٣، ١٧٧٤، ١٧٧٥، ١٧٧٦، ١٧٧٧، ١٧٧٨، ١٧٧٩، ١٧٨٠، ١٧٨١، ١٧٨٢، ١٧٨٣، ١٧٨٤، ١٧٨٥، ١٧٨٦، ١٧٨٧، ١٧٨٨، ١٧٨٩، ١٧٩٠، ١٧٩١، ١٧٩٢، ١٧٩٣، ١٧٩٤، ١٧٩٥، ١٧٩٦، ١٧٩٧، ١٧٩٨، ١٧٩٩، ١٨٠٠، ١٨٠١، ١٨٠٢، ١٨٠٣، ١٨٠٤، ١٨٠٥، ١٨٠٦، ١٨٠٧، ١٨٠٨، ١٨٠٩، ١٨١٠، ١٨١١، ١٨١٢، ١٨١٣، ١٨١٤، ١٨١٥، ١٨١٦، ١٨١٧، ١٨١٨، ١٨١٩، ١٨٢٠، ١٨٢١، ١٨٢٢، ١٨٢٣، ١٨٢٤، ١٨٢٥، ١٨٢٦، ١٨٢٧، ١٨٢٨، ١٨٢٩، ١٨٣٠، ١٨٣١، ١٨٣٢، ١٨٣٣، ١٨٣٤، ١٨٣٥، ١٨٣٦، ١٨٣٧، ١٨٣٨، ١٨٣٩، ١٨٤٠، ١٨٤١، ١٨٤٢، ١٨٤٣، ١٨٤٤، ١٨٤٥، ١٨٤٦، ١٨٤٧، ١٨٤٨، ١٨٤٩، ١٨٥٠، ١٨٥١، ١٨٥٢، ١٨٥٣، ١٨٥٤، ١٨٥٥، ١٨٥٦، ١٨٥٧، ١٨٥٨، ١٨٥٩، ١٨٦٠، ١٨٦١، ١٨٦٢، ١٨٦٣، ١٨٦٤، ١٨٦٥، ١٨٦٦، ١٨٦٧، ١٨٦٨، ١٨٦٩، ١٨٧٠، ١٨٧١، ١٨٧٢، ١٨٧٣، ١٨٧٤، ١٨٧٥، ١٨٧٦، ١٨٧٧، ١٨٧٨، ١٨٧٩، ١٨٨٠، ١٨٨١، ١٨٨٢، ١٨٨٣، ١٨٨٤، ١٨٨٥، ١٨٨٦، ١٨٨٧، ١٨٨٨، ١٨٨٩، ١٨٩٠، ١٨٩١، ١٨٩٢، ١٨٩٣، ١٨٩٤، ١٨٩٥، ١٨٩٦، ١٨٩٧، ١٨٩٨، ١٨٩٩، ١٩٠٠، ١٩٠١، ١٩٠٢، ١٩٠٣، ١٩٠٤، ١٩٠٥، ١٩٠٦، ١٩٠٧، ١٩٠٨، ١٩٠٩، ١٩١٠، ١٩١١، ١٩١٢، ١٩١٣، ١٩١٤، ١٩١٥، ١٩١٦، ١٩١٧، ١٩١٨، ١٩١٩، ١٩٢٠، ١٩٢١، ١٩٢٢، ١٩٢٣، ١٩٢٤، ١٩٢٥، ١٩٢٦، ١٩٢٧، ١٩٢٨، ١٩٢٩، ١٩٣٠، ١٩٣١، ١٩٣٢، ١٩٣٣، ١٩٣٤، ١٩٣٥، ١٩٣٦، ١٩٣٧، ١٩٣٨، ١٩٣٩، ١٩٤٠، ١٩٤١، ١٩٤٢، ١٩٤٣، ١٩٤٤، ١٩٤٥، ١٩٤٦، ١٩٤٧، ١٩٤٨، ١٩٤٩، ١٩٥٠، ١٩٥١، ١٩٥٢، ١٩٥٣، ١٩٥٤، ١٩٥٥، ١٩٥٦، ١٩٥٧، ١٩٥٨، ١٩٥٩، ١٩٦٠، ١٩٦١، ١٩٦٢، ١٩٦٣، ١٩٦٤، ١٩٦٥، ١٩٦٦، ١٩٦٧، ١٩٦٨، ١٩٦٩، ١٩٧٠، ١٩٧١، ١٩٧٢، ١٩٧٣، ١٩٧٤، ١٩٧٥، ١٩٧٦، ١٩٧٧، ١٩٧٨، ١٩٧٩، ١٩٨٠، ١٩٨١، ١٩٨٢، ١٩٨٣، ١٩٨٤، ١٩٨٥، ١٩٨٦، ١٩٨٧، ١٩٨٨، ١٩٨٩، ١٩٩٠، ١٩٩١، ١٩٩٢، ١٩٩٣، ١٩٩٤، ١٩٩٥، ١٩٩٦، ١٩٩٧، ١٩٩٨، ١٩٩٩، ٢٠٠٠، ٢٠٠١، ٢٠٠٢، ٢٠٠٣، ٢٠٠٤، ٢٠٠٥، ٢٠٠٦، ٢٠٠٧، ٢٠٠٨، ٢٠٠٩، ٢٠١٠، ٢٠١١، ٢٠١٢، ٢٠١٣، ٢٠١٤، ٢٠١٥، ٢٠١٦، ٢٠١٧، ٢٠١٨، ٢٠١٩، ٢٠٢٠، ٢٠٢١، ٢٠٢٢، ٢٠٢٣، ٢٠٢٤، ٢٠٢٥، ٢٠٢٦، ٢٠٢٧، ٢٠٢٨، ٢٠٢٩، ٢٠٣٠، ٢٠٣١، ٢٠٣٢، ٢٠٣٣، ٢٠٣٤، ٢٠٣٥، ٢٠٣٦، ٢٠٣٧، ٢٠٣٨، ٢٠٣٩، ٢٠٤٠، ٢٠٤١، ٢٠٤٢، ٢٠٤٣، ٢٠٤٤، ٢٠٤٥، ٢٠٤٦، ٢٠٤٧، ٢٠٤٨، ٢٠٤٩، ٢٠٥٠، ٢٠٥١، ٢٠٥٢، ٢٠٥٣، ٢٠٥٤، ٢٠٥٥، ٢٠٥٦، ٢٠٥٧، ٢٠٥٨، ٢٠٥٩، ٢٠٦٠، ٢٠٦١، ٢٠٦٢، ٢٠٦٣، ٢٠٦٤، ٢٠٦٥، ٢٠٦٦، ٢٠٦٧، ٢٠٦٨، ٢٠٦٩، ٢٠٧٠، ٢٠٧١، ٢٠٧٢، ٢٠٧٣، ٢٠٧٤، ٢٠٧٥، ٢٠٧٦، ٢٠٧٧، ٢٠٧٨، ٢٠٧٩، ٢٠٨٠، ٢٠٨١، ٢٠٨٢، ٢٠٨٣، ٢٠٨٤، ٢٠٨٥، ٢٠٨٦، ٢٠٨٧، ٢٠٨٨، ٢٠٨٩، ٢٠٩٠، ٢٠٩١، ٢٠٩٢، ٢٠٩٣، ٢٠٩٤، ٢٠٩٥، ٢٠٩٦، ٢٠٩٧، ٢٠٩٨، ٢٠٩٩، ٢١٠٠، ٢١٠١، ٢١٠٢، ٢١٠٣، ٢١٠٤، ٢١٠٥، ٢١٠٦، ٢١٠٧، ٢١٠٨، ٢١٠٩، ٢١١٠، ٢١١١، ٢١١٢، ٢١١٣، ٢١١٤، ٢١١٥، ٢١١٦، ٢١١٧، ٢١١٨، ٢١١٩، ٢١٢٠، ٢١٢١، ٢١٢٢، ٢١٢٣، ٢١٢٤، ٢١٢٥، ٢١٢٦، ٢١٢٧، ٢١٢٨، ٢١٢٩، ٢١٣٠، ٢١٣١، ٢١٣٢، ٢١٣٣، ٢١٣٤، ٢١٣٥، ٢١٣٦، ٢١٣٧، ٢١٣٨، ٢١٣٩، ٢١٤٠، ٢١٤١، ٢١٤٢، ٢١٤٣، ٢١٤٤، ٢١٤٥، ٢١٤٦، ٢١٤٧، ٢١٤٨، ٢١٤٩، ٢١٥٠، ٢١٥١، ٢١٥٢، ٢١٥٣، ٢١٥٤، ٢١٥٥، ٢١٥٦، ٢١٥٧، ٢١٥٨، ٢١٥٩، ٢١٦٠، ٢١٦١، ٢١٦٢، ٢١٦٣، ٢١٦٤، ٢١٦٥، ٢١٦٦، ٢١٦٧، ٢١٦٨، ٢١٦٩، ٢١٧٠، ٢١٧١، ٢١٧٢، ٢١٧٣، ٢١٧٤، ٢١٧٥، ٢١٧٦، ٢١٧٧، ٢١٧٨، ٢١٧٩، ٢١٨٠، ٢١٨١، ٢١٨٢، ٢١٨٣، ٢١٨٤، ٢١٨٥، ٢١٨٦، ٢١٨٧، ٢١٨٨، ٢١٨٩، ٢١٩٠، ٢١٩١، ٢١٩٢، ٢١٩٣، ٢١٩٤، ٢١٩٥، ٢١٩٦، ٢١٩٧، ٢١٩٨، ٢١٩٩، ٢٢٠٠، ٢٢٠١، ٢٢٠٢، ٢٢٠٣، ٢٢٠٤، ٢٢٠٥، ٢٢٠٦، ٢٢٠٧، ٢٢٠٨، ٢٢٠٩، ٢٢١٠، ٢٢١١، ٢٢١٢، ٢٢١٣، ٢٢١٤، ٢٢١٥، ٢٢١٦، ٢٢١٧، ٢٢١٨، ٢٢١٩، ٢٢٢٠، ٢٢٢١، ٢٢٢٢، ٢٢٢٣، ٢٢٢٤، ٢٢٢٥، ٢٢٢٦، ٢٢٢٧، ٢٢٢٨، ٢٢٢٩، ٢٢٣٠، ٢٢٣١، ٢٢٣٢، ٢٢٣٣، ٢٢٣٤، ٢٢٣٥، ٢٢٣٦، ٢٢٣٧، ٢٢٣٨، ٢٢٣٩، ٢٢٤٠، ٢٢٤١، ٢٢٤٢، ٢٢٤٣، ٢٢٤٤، ٢٢٤٥، ٢٢٤٦، ٢٢٤٧، ٢٢٤٨، ٢٢٤٩، ٢٢٥٠، ٢٢٥١، ٢٢٥٢، ٢٢٥٣، ٢٢٥٤، ٢٢٥٥، ٢٢٥٦، ٢٢٥٧، ٢٢٥٨، ٢٢٥٩، ٢٢٦٠، ٢٢٦١، ٢٢٦٢، ٢٢٦٣، ٢٢٦٤، ٢٢٦٥، ٢٢٦٦، ٢٢٦٧، ٢٢٦٨، ٢٢٦٩، ٢٢٧٠، ٢٢٧١، ٢٢٧٢، ٢٢٧٣، ٢٢٧٤، ٢٢٧٥، ٢٢٧٦، ٢٢٧٧، ٢٢٧٨، ٢٢٧٩، ٢٢٨٠، ٢٢٨١، ٢٢٨٢، ٢٢٨٣، ٢٢٨٤، ٢٢٨٥، ٢٢٨٦، ٢٢٨٧، ٢٢٨٨، ٢٢٨٩، ٢٢٩٠، ٢٢٩١، ٢٢٩٢، ٢٢٩٣، ٢٢٩٤، ٢٢٩٥، ٢٢٩٦، ٢٢٩٧، ٢٢٩٨، ٢٢٩٩، ٢٣٠٠، ٢٣٠١، ٢٣٠٢، ٢٣٠٣، ٢٣٠٤، ٢٣٠٥، ٢٣٠٦، ٢٣٠٧، ٢٣٠٨، ٢٣٠٩، ٢٣١٠، ٢٣١١، ٢٣١٢، ٢٣١٣، ٢٣١٤، ٢٣١٥، ٢٣١٦، ٢٣١٧، ٢٣١٨، ٢٣١٩، ٢٣٢٠، ٢٣٢١، ٢٣٢٢، ٢٣٢٣، ٢٣٢٤، ٢٣٢٥، ٢٣٢٦، ٢٣٢٧، ٢٣٢٨، ٢٣٢٩، ٢٣٣٠، ٢٣٣١، ٢٣٣٢، ٢٣٣٣، ٢٣٣٤، ٢٣٣٥، ٢٣٣٦، ٢٣٣٧، ٢٣٣٨، ٢٣٣٩، ٢٣٤٠، ٢٣٤١، ٢٣٤٢، ٢٣٤٣، ٢٣٤٤، ٢٣٤٥، ٢٣٤٦، ٢٣٤٧، ٢٣٤٨، ٢٣٤٩، ٢٣٥٠، ٢٣

առաջ մենք արաք ենք, քան քրիստոնյա և մուսուլման, մենք արաք էինք, երբ դարձանք մուսուլման և քրիստոնյա, և ամենակարևորն այն է, որ մենք արաք էինք, երբ դարձանք օսմանները¹: Միայն այս տողերից կարելի է եզրակացնել, որ ակումբի անդամներն առաջիններն էին, որ օսմանիզմի գաղափարին հավատարիմ մնալով հանդերձ՝ տարբերակում դրեցին արաքների և «օսմանյան ազգի» միջև, վստահ, որ կայսրության ամեն մի ազգ պետք է պահպանի իր ինքնությունը:

Տարբեր թեմաներով դասախոսություններ կարդալու համար ակումբ էին հրավիրվում նաև թուրք և արաբ գիտնականներ ու գրականագետներ: Հրավիրվածների շարքում էր նաև արաբական ազգայնականության ապագա տեսաբան Սաթի ալ-Հուարին, որն այդ ժամանակ «Օսմանյան ազգի» գաղափարախոսության կրող էր²:

Ակումբի անդամները քննարկում էին նաև արդիական, այդ թվում՝ քաղաքական խնդիրներ: Ակումբի հայրենասիրական նպատակներն իրենց արտահայտությունն էին գտնում դասախոսությունների և քանավեճերի ժամանակ, որոնք ընթանում էին ակումբի անդամների և հրավիրված պատգամավորների ու պաշտոնյաների միջև, ինչպես նաև թերթերի հոդվածներում, քասիդներում, երգերում:

Իրենց նպատակների իրականացման գործում ակումբի անդամները մեծ հույսեր էին կապում խորհրդարանի արաբ պատգամավորների հետ: Նրանք մշակեցին և վերջիններիս ներկայացրին լուսավորական քարեփոխումների մի ծրագիր, որտեղ մասնավորապես պահանջվում էր ուսուցման միասնական մեթոդների կիրառման, համապատասխան դաստիարակչական աշխատանքի և քարոզչության միջոցով ամրապնդել տարբեր դավանանքի և տարբեր համայնքների պատկանող արաքների միասնությունը և հասցնել նրանց միասնական ազգի պատկանելության գաղափարի ըմբռնմանը³:

Բավական կարճ ժամանակահատվածում «Գրական ա-

¹ Յ. Կյա, Նշվ. աշխ., էջ 109:

² Y. Choueiri, Նշվ. աշխ., էջ 81:

³ Յ. Կյա, Նշվ. աշխ., էջ 109, المكثور توافق بر، Նշվ. աշխ., էջ 316:

վում էր արաբական շրջաններում ստեղծել հատուկ հանձնաժողովներ, որոնք պետք է համապատասխան առաջարկություններ ներկայացնեին այս խնդրի վերաբերյալ: Ծրագրում հատկապես մեծ նշանակություն էր տրվում դպրոցներին, որոնք դիտվում էին որպես կարևորագույն օղակ արաբ երիտասարդների ազգային-հայրենասիրական դաստիարակության մեջ: Առաջարկվում էր մշակել արաբական դպրոցների համար միասնական կրթական ծրագիր: Նախատեսվում էր նաև հիմնադրել մանկավարժական քոլեջ, որտեղ արաբ ուսանողների համար կկիրառվեին դասավանդման նոր չափանիշներ: Այդպիսով, արաբական դպրոցները կապահովվեին բարձր որակավորում ունեցող ուսուցիչներով: Բարեփոխումներն իրականացնելու համար ծրագրի մեջ ներառվեցին եգիպտական կրթական մեթոդները, իսկ եգիպտացի հասարակական գործիչները ներգրավվեցին ակումբի կրթական խորհրդի աշխատանքների մեջ²:

Այսպիսով, «Գրական ակումբի» ծավալած ողջ օրինական գործունեությունը հիմնականում ուղղված էր արաբ հասարակության մեջ ազգային գաղափարների տարածմանը, կրթված և հասուն արաբ երիտասարդության ձևավորմանը, որոնք և հետագայում պետք է դառնային ազատագրական պայքարի շարժիչ ուժը:

Օրինական քարոզչական գործունեությանը զուգընթաց «Գրական ակումբը» դարձավ արաբական մի շարք գաղտնի կազմակերպությունների բնօրրանը: Վերջինիս առավել հեղինակավոր անդամները՝ Սեյիմ ալ-Ջազաիրին, Աբդալքերիմ ալ-Խալիլը, Իզետ ալ-Ջունդին հիմնադրեցին արդեն հիշատակված «ալ-Կահտանիա» գաղտնի կազմակերպությունը: Ակումբի հետ սերտորեն համագործակցում էին ավելի ուշ ստեղծված արաբական կազմակերպությունների՝ «Երիտասարդ Արաբիայի», «Կանաչ դրոշի» ընկերության³, «Սև ձեռքի» և «ալ-Աիդ»-ի անդամները:

¹ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 212-213:

² Y. Choueiri, նշվ. աշխ., էջ 81:

³ «Գրական ակումբի» անդամների ազդեցությունն այնքան մեծ էր «Կանաչ դրոշ» ընկերության վրա, որ նրանք նույնիսկ ընկերության կողմից հրա-

«Գրական ակումբն» իր ակտիվ մասնակցությունը բերեց 1913թ. Փարիզում գումարված Առաջին արաբական կոնգրեսի աշխատանքներին:

«Գրական ակումբը» փաստորեն այն առաջին օրինական ընկերություններից էր, որն իր գործունեությամբ մեծապես ազդեց հետագա արաբ-թուրքական հարաբերությունների և արաբական ազգային շարժման ձևավորման վրա, իսկ նրա անդամները դարձան ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներ:

«Երիտասարդ Արաբիա»

«Երիտասարդ Արաբիա» ընկերությունը («Ջամիա ալ-արաբիա ալ-ֆաթաթ» կամ «ալ-Ֆաթաթ») քաջադիկ կարևոր դերակատարություն ունեցավ արաբական ազգային-ազատագրական շարժման մեջ: Այն առաջին կազմակերպություններից էր, որն իր հիմնական նպատակը՝ թուրքական կամ ցանկացած այլ օտար գերակայությունից արաբական երկրների ազատագրումը, փորձում էր իրականացնել արմատական միջոցներով:

«Երիտասարդ Արաբիան» ձևավորվեց Փարիզում 1909 թ. նոյեմբերի 14-ին «Արաբերեն խոսողների ընկերության» («Դադ լեզվով խոսողների ընկերություն») հիմքի վրա, որի հիմնադիրներն էին ուսումնառության համար Փարիզ ժամանած արաբ ուսանողներ Թաուֆիկ ալ-Նաթուրը, Ահմադ Քադրին, Աունի Աբդ ալ-Հադին, Ռուստամ Հեյդարը¹:

«Ալ-Ֆաթաթ»-ի կազմավորումը վերջնականապես ավարտվեց 1911 թ., երբ նրա մեջ ներգրավվեցին նաև Ջամիլ Մարդամը, Մուհամմադ ալ-Միհմիսանին, Ռաֆիկ Թամիմը և Աբդ ալ-Լանի ալ-Ուրեյսին²: Հետագայում նրանցից ոմանք դարձան արաբական ազգային-ազատագրական շարժման ղեկավարներ, իսկ Ջամիլ Մարդամը՝ Սիրիայի վարչապետ³: «Երիտա-

տարակվող «Լիսան ալ-արաբ» թերթը վերածեցին իրենց տպագիր օրգանի՝ վերանվանելով այն «ալ-Մունթադի ալ-արաբի», انكسور ثقافى نو, նշվ. աշխ., էջ 312-313:

¹ Z. Zeino, նշվ. աշխ., էջ 81:

² G. Antonius, նշվ. աշխ., էջ 111, J. Hajjar, նշվ. աշխ., էջ 476:

³ Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 482:

սարգ Արաբիան» իր շուրջն էր համախմբել արաբ երիտասարդ մտավորականության այն ներկայացուցիչներին, ովքեր կրթվել էին եվրոպական չափանիշներով և քավական հեռացել էին օսմանյան սովորույթներից: Այն նոր սերնդի արաբ ազգայնականների ընկերություն էր, որին չէին քավարարում արաբական շարժման ուղղվածությունն ու արդյունքները:

«Երիտասարդ Արաբիայի», ինչպես նաև նրան նախորդած ազգային կազմակերպությունների ծրագրերում մեծ տեղ էր հատկացվում արաբների քաղաքական իրավունքների ծեռքբերմանը: Դրանցում տնտեսական և սոցիալական հարցեր գրեթե չէին շոշափվում. հիմնական պատճառը, թերևս, այն էր, որ կազմակերպության ղեկավարությունը և նրա շարքային անդամները գերակշռաբար ունևոր խավերի ներկայացուցիչներ էին: Երիտարաբների հիմնական և առաջնային խնդիրն էր արաբների ազատագրումը թուրքական գերիշխանությունից և անկախ արաբական պետության ստեղծումը¹: Սակայն կազմակերպության պահանջած «անկախությունը» դեռևս չէր նշանակում արաբական վիլայեթների լիակատար անկախացում Օսմանյան կայսրությունից: Այս գաղափարն արդիական դարձավ միայն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Երիտարաբները և, ընդհանրապես, արաբ ազգային գործիչների մեծամասնությունը դեմ էին կայսրության մասնատմանը՝ նրա ամբողջականության պահպանումը համարելով եվրոպական տերությունների սաստկացող գաղութարարական քաղաքականությանը դիմագրավելու միակ միջոց:

Այսպիսով, «Երիտասարդ Արաբիան» համենայն դեպս իր գործունեության սկզբնական շրջանում առաջ չէր քաշում Օսմանյան կայսրությունից անջատվելու հարցը, այլ, ընդհակառակը, շեշտում էր արաբ-թուրքական միասնության անխախտելիության անհրաժեշտությունը²: Երիտարաբները փաստորեն հետամուտ էին ապակենտրոնացման գաղափարին, որով առաջնորդվում էր արաբական ազգային կազմակերպությունների մեծամասնությունը: Սակայն սերտորեն համագործակցելով ապակենտրոնացման

¹ G. Antonius, նշվ. աշխ., էջ 111:

² الدكتور توفيق بوع, նշվ. աշխ., էջ 319:

կողմնակիցների հետ՝ «ալ-Ֆաթաթ» ընկերությունն առավել վճռական էր իր գործունեության մեջ և առաջ էր քաշում արաբական շարժման հետ կապված նոր մտահղացումներ: «Երիտասարդ Արաբիայի» գլխավոր տարբերությունն արաբական այլ ազգային կազմակերպություններից այն էր, որ ընկերությունը բարձրացրեց արաբների իրավունքների համար պայքարի ձևերի և միջոցների փոփոխման, այն առավել արմատական դարձնելու անհրաժեշտության հարցը: Այդ մասին է վկայում, օրինակ՝ 1913 թ. հունվարի 2-ի Աբդ ալ-Ղանի ալ-Ղարեյսիի նամակը, որում նա հատկապես ընդգծում էր, որ «Երիտասարդ Արաբիան» իր նպատակների իրագործման համար, «կախված պայմաններից ու հանգամանքներից», պատրաստ է դիմելու «բոլոր օրինական և անօրինական միջոցներին»¹: Այս միանգամայն նոր գաղափարը և դրան համապատասխան՝ գործելակերպի փոփոխությունը կարևորագույն առաջընթաց էր ինչպես ընկերության, այնպես էլ ողջ արաբական ազգային շարժման հետագա զարգացման համար:

«Երիտասարդ Արաբիան» խիստ գաղտնի ընկերություն էր: Նրա գոյության մասին արաբ ազգային գործիչների մեծ մասը պատկերացում անգամ չուներ, և նույնիսկ նրանք, ում հետ «ալ-Ֆաթաթ»-ի անդամները սերտորեն համագործակցում էին, տեղյակ չէին նրանից: Ընկերությունն արաբական մյուս գաղտնի կազմակերպություններից շահեկանորեն առանձնանում էր իր կենտրոնացված ղեկավարությամբ և իր անդամների կարգապահությամբ: «Երիտարաբական» կազմակերպության անդամ կարող էին դառնալ միայն նրանք, ումքեր ունեին անբիժ կենսագրություն, և որոնց հայրենասիրությունը որևէ կասկած չէր հարուցում: Անդամության թեկնածուները, որոնք հիմնականում ընտրվում էին ընկերության հիմնադիրների մերձակա շրջապատից², պետք է անցնեին քավական երկար փորձնական շրջան, որից հետո միայն նրանց թույլատրվում էր ծանոթանալ ընկերության կանոնադրական փաստաթղթերին և երդմամբ հավաստել արաբական շարժմանն իրենց անվերապահ հավատարմությունը:

¹ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., т. 2: 218:

² G. Antonius, նշվ. աշխ., էջ 111, J. Hajjar, նշվ. աշխ., էջ 476:

Երիտարարները «ալ-Կահտանիա»-ի անդամների օրինակով մշակել էին հատուկ գաղտնաբառեր, նշաններ և ծածկագրեր: Սակայն, ի տարբերություն վերջինի, երիտարարների նման գործելակերպն արդարացրեց իրեն: Թուրքական հատուկ ծառայություններն այս ընկերությունը դիտում էին որպես արաբ երիտասարդների լուսավորական միություն¹ և նույնիսկ Ալիեյան դատավարության փաստաթղթերում «Երիտասարդ Արաբիան» ընդհանրապես չէր հիշատակվում: Կազմակերպության անդամների թվի մասին տեղեկությունները շատ հակասական են. համաձայն տարբեր ուսումնասիրողների բերած տվյալների՝ այդ թիվը տատանվում է 60² -200³-ի միջև:

Սակայն «Երիտասարդ Արաբիայի» անդամների սահմանափակ կազմը և գործունեության գաղտնիությունն ամենևին էլ չէր նշանակում, որ այն կտրված էր հասարակական գործունեությունից: Ընդհակառակը, այն անմիջական և էական ազդեցություն ուներ այդ շարժման վրա: Ընկերությունն իր լայն գործունեությունը ծավալում էր հիմնականում այլ կազմակերպությունների՝ «ալ-Կահտանիա»-ի, «Ապակենտրոնացման կուսակցության», «Գրական ակումբի», Բեյրութի Բարեփոխումների կոմիտեի միջոցով, որոնց կազմի մեջ էին ընդգրկված «ալ-Ֆաթաթ»-ի անդամները և որտեղ հաճախ զբաղեցնում էին ղեկավար դիրքեր:

«Երիտասարդ Արաբիայի» գործունեությունն առավել չափով ակտիվացավ 1913 թ. կեսերին, երբ նրա առաջատար անդամները, ավարտելով ուսումնառությունը Փարիզում, վերադարձան հայրենիք: Երիտարարներն իրենց կենտրոնը տեղափոխեցին Բեյրութ, իսկ այնուհետև՝ մեկ տարի անց՝ Դամասկոս⁴, և մասնաճյուղեր ստեղծեցին տարբեր քաղաքներում, այդ թվում նաև Կ.Պոլսում:

Այսպիսով, երիտարարները չափազանց կարևոր դեր խա-

¹ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 219:

² انكوار توفيق برو, նշվ. աշխ., էջ 319:

³ G. Antonius, նշվ. աշխ., էջ 112:

⁴ J. Hajjar, նշվ. աշխ., էջ 476:

դացին արաբական ազգային-ազատագրական շարժման ձևավորման ու արմատականացման գործում և էական ազդեցություն ունեցան նրա հետագա ընթացքի վրա: «Երիտասարդ Արաբիան» արաբական շարժման մեջ մտցրեց նոր գաղափարներ, մասնավորապես նրա նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ 1913 թ. Փարիզում գումարվեց Առաջին արաբական կոնգրեսը:

ԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՄԱՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԴԴՄԱԴԻՐ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

1910-1911 թթ. ընթացքում արաբների պայքարն իրենց իրավունքների համար թևակոխեց նոր փուլ: Այս տարիներին նկատելիորեն աշխուժացավ Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում հակաթուրքական խմբավորումների, ազգային կազմակերպությունների և խորհրդարանի արաբ պատգամավորների գործունեությունը: Արաբներն ավելի ու ավելի էին հիասթափվում «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությունից: Հիմնականում դրանով էր պայմանավորված արաբների մերձեցումն իթթիհադականների այլազգի հակառակորդների հետ և քավական ակտիվ մասնակցությունը համաօսմանյան ընդդիմադիր կուսակցությունների ստեղծմանն ու դրանց հետագա աշխատանքներին: Սակայն արաբ քաղաքական գործիչների մի զգալի մասը, այնուամենայնիվ, շարունակում էր հավատարիմ մնալ «Իթթիհադ վե թերաքքի»-ին՝ նրա հետ կապելով արաբներին հուզող խնդիրների իրականացումը:

Արաբների համագործակցությունը հակաիթթիհադական ընդդիմության հետ ձևավորվեց արաբներին վերաբերող խորհրդարանական բոտն բանավեճերի ժամանակ, որոնց ընթացքում արաբ և այլազգի ընդդիմադիր պատգամավորների դիրքորոշումներն ու նպատակները հաճախ համընկնում էին:

1909 թ. խոտվության ճնշումից և «Օսմանյան լիբերալների» («Աիրար») և «Մուհամմեդի ընկերության» արգելափակումից

հետո «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությունը խորհրդարանում փաստորեն հաստատեց մենաշնորհային դիրք: Միայն դեռևս 1909 թ. փետրվարին ստեղծված փոքր և ոչ ազդեցիկ «Օսմանյան ժողովրդավարական կուսակցություն» էր, որ ապահովում էր որոշակի ընդդիմություն իթթիհադականներին¹:

«Ժողովրդի կուսակցություն»

1910 թ. փետրվարի 21-ին Կ.Պոլսում մի քանի իթթիհադական պատգամավորներ, առճակատման մեջ մտնելով կուսակցության հետ, դուրս եկան նրա շարքերից և հիմնեցին «Ժողովրդի կուսակցությունը» («Ահալի Ֆըրքասի»)²:

Չնայած «Ժողովրդի կուսակցության» կազմի մեջ ներկայացված էին Կ.Պոլսի լիբերալ գործիչները, սակայն այն չկարողացավ իր առաջադրած գաղափարներով այլընտրանք դառնալ «Իթթիհադ վե թերաքքի»-ին: Կուսակցության մեջ ներգրավված էին մի քանի արարներ, որոնք կիսում էին մյուս անդամների լիբերալ գաղափարները³: Իր անդամների սակավաթվությամբ հանդերձ՝ «Ահալի Ֆըրքասի»-ն, այնուամենայնիվ, բավական ազդեցիկ էր: 1910 թ. հունվարին հակակառավարական դավադրության մեղադրանքով ձերբակալվեց կուսակցության հեղինակավոր անդամներից մեկը՝ Ռիզա Նուրը: «Չափավոր լիբերալները» և «Ժողովրդի կուսակցությունը» համատեղ հայց ներկայացրին խորհրդարանական հետաքննություն անցկացնելու պահանջով, որի տակ ստորագրեց 15 պատգամավոր, այդ թվում նաև արաբ Շաուֆիկ ալ-Մուայադը (Դամասկոս), Դավուդ Յուսուֆանին, Մուհամմադ Ալի Ֆազիլը (Մոսուլ), Աբդ ալ-Համիդ ալ-Ջահրավին (Համա), Սայիդ ալ-Հուսեյնը (Երուսաղեմ) և Ռուշդի ալ-Շաման⁴:

Այս կուսակցությունը փաստորեն հիմք դրեց առավել ճանաչված և գործունյա համասոմանյան հակաիթթիհադական կազմակերպությունների ստեղծմանը, որոնցում լայն գործունեություն ծավալեցին նաև արաբ ազգային գործիչները:

¹ S. Shaw, E. Shaw, նշվ. աշխ., էջ 283:

² F. Ahmad, նշվ. աշխ., էջ 69:

³ حسن كاشي, նշվ. աշխ., էջ 152:

⁴ Նույն տեղում, էջ 154:

«Չափավոր լիբերալներ»

«Չափավոր լիբերալներ» («Մուսթեֆիլ հյուրրիյեթ ֆերվերան ֆըրքասի») կուսակցության հիմնադրման սկիզբը դրվեց 1909 թ. նոյեմբերի 21-ին Կ.Պոլսի Բերա Պալաս հյուրանոցում կայացած ժողովի ժամանակ, որին մասնակցում էին խորհրդարանի 32 թուրք, հույն, ալբանացի, հայ, քուրդ և արաբ պատգամավորներ: Ներկաների նախածնունդայամբ որոշվեց ստեղծել միասնական խորհրդարանական խմբավորում: Կուսակցությունը վերջնականապես ձևավորվեց 1910 թ., երբ ընտրվեց նրա ղեկավարությունը, և այն գրանցվեց ներքին գործերի նախարարությունում: Կուսակցության անդամների թիվը սահմանափակ էր. ըստ տարբեր տվյալների՝ այն տատանվում է 30-80-ի միջև²: Կուսակցության նախագահ ընտրվեց «Աիրար» կուսակցության նախկին ղեկավար՝ ալբանացի Իսմայիլ Քեմալի քեյը, փոխնախագահ՝ Ամասիայի թուրք պատգամավոր Իսմայիլ Հաքքի քեյը, իսկ ղեկավարության անդամներ դարձան տարբեր ազգերի պատգամավորներ՝ հույներ, արաբներ, քրդեր, թուրքեր, ալբանացիներ³:

«Չափավոր լիբերալներ» կուսակցությունը կազմված էր մի քանի ազգային խմբավորումներից, որոնք հետամուտ էին Օսմանյան կայսրությունում քնակվող տարբեր ժողովուրդների իրավունքների պաշտպանությանը: «Չափավոր լիբերալները» գործեցին մինչև 1911 թ., այնուհետև լուծարվեցին՝ միանալով «Հյուրրիյեթ վե իթթիլաֆ»-ին⁴: Այն առաջին ընդդիմադիր կուսակցություններից մեկն էր, որին հաջողվեց համախմբել հակա-իթթիհադական կողմնորոշում ունեցող տարբեր խմբավորումների՝ մեծապես նպաստելով համասոսմանյան հասարակական շարժման զարգացմանը:

Կուսակցության ութ հիմնադիրներից վեցը՝ Նաֆի փաշա ալ-Ջաբիրին, Աբդալմահդի ալ-Հաֆիզը, Հադիր քեյ Շաուֆիկ ալ-Մոսայադ, ալ-Ազմը, Շուքրի ալ-Ասալին և Ռուշդի ալ-Շաման,

¹ انكتور توفيق برو، نշվ. աշխ., էջ 260-261:

² Նույն տեղում, էջ 262:

³ حسن قبالی، نշվ. աշխ., էջ 152:

⁴ Նույն տեղում, էջ 152-153:

արաբներ էին, և միայն երկուսը՝ ալքանաջի: Արաբներ էին նաև կուսակցության գործադիր մարմնի յոթ անդամներից չորսը՝ Նաֆի փաշա ալ-Ջաբիրին, Աբդալմահդի ալ-Հաֆիզը, Հադիր բեյ Շաուֆիկը և Ռուշդի ալ-Շաման: Պատահական չէ, որ «Չափավոր լիբերալներ» կուսակցության գործունեության մեջ առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում արաբական խնդիրներին:

Կուսակցությանն անդամակցում էին ամենատարբեր սոցիալական խավերի պատկանող և քաղաքական կողմնորոշումներ ունեցող գործիչներ: Այն միավորում էր ինչպես բարեփոխումների կողմնակիցների, որոնցից էին Աբդ ալ-Համիդ ալ-Ջահրավին, Ռիզա Թեֆիկ բեյը, այնպես էլ պահպանողական ուժերի ներկայացուցիչների և խոշոր հողատերերի, ինչպես Ռուշդի ալ-Շաման, Դաուդ ալ-Յուսիֆանին, Հասան Պրիշտինան, Տալիբ փաշա ալ-Նաքիբը: Կուսակցության մեջ էին ներգրավված նաև «Աիրար»-ի նախկին անդամներ Իսմայիլ Քեմալի բեյը, Յուսուֆ բեյ Շիտվանը և Ալի Քեմալը, «Իթթիհադ վե թերաքքի»-ի նախկին կողմնակիցներ և այլք²: Այս՝ առաջին հայացքից անհամատեղելի թվացող ուժերի միավորումը նույն կուսակցության մեջ պայմանավորված էր միմիայն մեկ կարևոր հանգամանքով՝ «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությունից խոր հիասթափությամբ և նրա նկատմամբ թշնամանքով: Սակայն կարևոր է նշել, որ դրա հետ մեկտեղ «Չափավոր լիբերալները» լոյալ դիրքորոշում ունեին Օսմանյան կայսրության նկատմամբ:

Կուսակցության հավատարմությունն Օսմանյան կայսրությանն ամրագրված էր նրա ծրագրի մեջ. այն կազմված էր օսմանիզմի ոգով և արտահայտում էր կուսակցության դրական վերաբերմունքը «օսմանյան ազգի» գաղափարի նկատմամբ: «Չափավոր լիբերալները» քննադատորեն էին վերաբերվում ապակենտրոնացման սկզբունքին և հանդես էին գալիս կայսրության միասնությունը խախտելու ցանկացած փորձի դեմ: Կուսակցությունը հավասարապես դեմ էր նաև դաշնային համակարգին՝

¹ انكتور شوقي برو، نجل، ارجو، ص 262:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., с 226:

համարելով այն անհամատեղելի պանօսմանիզմի գաղափարին¹: Ի դեպ՝ կուսակցության ծրագրի այս դրույթը փաստորեն հակասում էր նրա նախագահ և հիմնադիր Իսմայիլ Քեմալիի բնյի համոզմունքներին, որոնք, ինչպես հայտնի է, հիմնվում էին ապակենտրոնացման սկզբունքի վրա: Փոխարենը չափավորներն առաջ էին քաշում կայսրության բոլոր ժողովուրդների միասնության և նրանց համագործակցության ամրապնդման նպատակը՝ դրա իրականացման համար անհրաժեշտ համարելով ամբողջապես փոխել տեղական կառավարման քաղաքականությունը, ընդարձակել տեղական իշխանությունների իրավունքները և ապահովել կայսրության ազգերի «արդար ներկայությունը» կենտրոնական կառավարման համակարգում²: Ծրագրում տեղ էին գտել նաև լեզվի և գրականության խնդիրներին վերաբերող կետեր, որոնց նպատակն էր օսմանյան բոլոր ազգերի լեզուներն ու գրականությունը փրկել ոչնչացումից և մոռացությունից: Նրանք լիովին համամիտ էին և իրենց աջակցությունն էին հայտնում իսլամական քարեփոխիչների՝ հոգևոր կրթության ու ժամանակակից գիտության միաձուլման գաղափարին³: Կուսակցության գաղափարախոսության և ծրագրերի տարածման համար օգտագործվում էին նրա անդամների, այդ թվում նաև արաբների կողմից հրատարակվող պարբերականները, հատկապես արաբերենով և թուրքերենով տպագրվող «Ալ-Հադարա», «Թանզիմաթ», «Մաթբուաթ», «Իսլահաթ», «Մաշրիք» թերթերը:

Հիմնադրման սկզբնական շրջանում «Չափավոր լիբերալներ» կուսակցությունը գործում էր հիմնականում խորհրդարանական շրջաններում՝ իր նպատակների համար օգտագործելով միայն խորհրդարանական միջոցները: Նրա անդամների կարծիքով քազմազգ Օսմանյան կայսրության մեջ միայն «չափավոր լիբերալիզմը» կարող էր հիմք դառնալ քաղաքական կազմակերպությունների ստեղծմանը: Սակայն ավելի ուշ կուսակցությունն սկսեց նահանջել լիբերալիզմի սկզբունքներից: Վերջնականա-

¹ حسن قلملي، Եշվ. աշխ., էջ 153:

² الدكتور توفيق بروج، Եշվ. աշխ., էջ 263:

³ حسن قلملي، Եշվ. աշխ., էջ 153:

պես համոզվելով, որ միայնակ, միայն պատգամավորների ուժերով հնարավոր չէ ակտիվ գործունեություն ծավալել, չափավորներն սկսեցին աստիճանաբար դուրս գալ խորհրդարանական շրջանակներից և մերձեցման ուղիներ փնտրել իթթիհադական կուսակցության հակառակորդների հետ: 1911 թ. «Չափավոր լիբերալները» որոշեցին իրենց մասնաճյուղերը հիմնել կայսրության տարրեր վիլայեթներում: Այդ նպատակով կուսակցության անդամ և արաբ ազգային շարժման հեղինակավոր ներկայացուցիչ Աբդ ալ-Համիդ ալ-Չահրավին այցելեց Սիրիա և հանդիպումներ ունեցավ տեղի հասարակական-քաղաքական գործիչների հետ¹: Սակայն նրա սպասելիքները չարդարացան:

«Չափավոր լիբերալների» գործունեությունն անհամեմատ ավելի արդյունավետ էր Իրաքում: Նրա անդամներից մեկի՝ Սայիդ Տալիբ փաշայի նախաձեռնությամբ 1911թ. օգոստոսին Բասրայում հիմնադրվեց կուսակցության մասնաճյուղը²: Սակայն լիբերալների գործունեությունն օսմանյան և հատկապես արաբական վիլայեթներում առանձնապես մեծ չափեր չընդունեց:

Կուսակցության մեջ առավել կարևոր էր արաբների դերը: Վերջիններս ոչ միայն կազմում էին նրա անդամների մեծամասնությունը, այլ նաև լրջորեն ազդում էին նրա վարած քաղաքականության վրա: Արաբ ազգային գործիչները «Չափավոր լիբերալներ» կուսակցությունն ընկալում էին որպես ազդեցիկ ուժ իրենց ազգային խնդիրների լուծման համար:

Գործունեության երկու տարիների ընթացքում կուսակցությունն այնքան էր արաբականացել, որ այն նույնիսկ կարելի էր անվանել արաբական կուսակցություն:

«Արաբաօսմանյան եղբայրություն» ընկերության արգելափակումից հետո «Չափավոր լիբերալներ» կուսակցությունը դարձավ այն քաղաքական կենտրոնը, որտեղ սկսեցին ձևավորվել արաբական ազգային խնդիրների հիման վրա համաարաբական քաղաքական կազմակերպության հիմնադրման գաղափարները:

¹ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., т. 2: 229:

² حسن قبايلي, ن. 2: 153:

1910-1911 թթ. ստեղծված տարբեր կուսակցություններն ու խմբավորումները, իհարկե, չունեին այն գաղափարական և կազմակերպչական ներուժը, որ ի վիճակի լինեին իշխանությունից հեռացնել «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությանը: Սակայն նրանք փաստորեն առաջինն էին, որ փորձեցին համախմբել ողջ կայսրության հակաիթթիհադական ուժերին և պայքարել կառավարության քաղաքականության դեմ: Նրանք կարողացան կայուն հիմք ստեղծել նաև «Հյուրրիյեթ վե իթթիլաֆ» կուսակցության ստեղծման համար, որին էլ հաջողվեց, չնայած ժամանակավորապես, իշխանությունից հեռացնել «Իթթիհադ վե թերաքքի»-ին:

ԹՈՒՐԹ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ և ԱՐԱՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԿՐԱ

1911 թ. սեպտեմբերի 28-ին Իտալիան պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը և ներխուժեց կայսրության աֆրիկյան տարածքները՝ Տրիպոլի և Կիրենաիկա¹: Իտալական 40-հազարանոց բանակին, որը զինված էր նորագույն ռազմական տեխնիկայով, դիմադրում էր Տրիպոլիում և Կիրենաիկայի խոշոր բնակավայրերում տեղակայված թուրքական 3-4 հազարի հասնող զորքը, որի պարզունակ սպառազինությունն անհամեմատելի էր իտալականի հետ²: Բացի այդ, դեռևս թուրք-իտալական պատերազմի նախօրյակին Հաքքի փաշայի գլխավորած իթթիհադական կառավարությունը Լիբիայից մեծ թվով զենք, զինամթերք և զինվորական ուժ էր փոխադրել Եմեն՝ այնտեղ րոնկված ապստամբությունը ճնշելու համար³:

Իտալացիները, օգտվելով թուրքական բանակի անմարտունակ վիճակից, գրեթե մեկ ամսվա ընթացքում գրավեցին Տրիպոլին, Թաբրուկը, Դերնան և երկարատև կռիվներից հետո՝

¹ Ch. Irace, With the Italians in Tripoli, The Authentic History of the Turco-Italian War, London, 1912, p. 3.

² Н. Прошкин, История Ливии, конец XIX в.-1969 г., Москва, 1975, с. 75.

³ H. Kayali, Arabs and Young Turks, եջվ. աշխ., էջ 107:

հոկտեմբերի 21-ին, նրանց հաջողվեց տիրանալ Բենգազիին՝ ստիպելով թուրքական կայազորին և արաբական ջոկատներին նահանջել դեպի Բենին¹: Չնայած իտալացիներին հաջողվեց նվաճել Տրիպոլիի և Կիրենաիկայի ծովափնյա շրջանների գլխավոր քաղաքները, այսուհանդերձ, նրանք դեռևս հեռու էին լիակատար հաղթանակից: Իտալիայի նվաճողական քաղաքականությունը և եվրոպական գաղութի վերածվելու սպանալիքը ոտքի հանեց տեղի քնակչությանը՝ միավորելով նրանց մեկ ընդհանուր նպատակի շուրջ:

Թուրք-իտալական պատերազմի հենց սկզբից պարզ դարձավ, որ Օսմանյան կայսրությունն ընդունակ չէ դիմակայելու եվրոպական նույնիսկ համեմատաբար ավելի թույլ պետությանը: Վիճակը բարդանում էր նրանով, որ եվրոպական երկրների միջև հարաբերությունների էլ ավելի սրումը վտանգում էր քաղաքական ասպարեզում մեկուսացված կայսրության գոյությունը և առավել հնարավոր էր դարձնում նրա մասնատումը: Այս պայմաններում արաբների մեծ մասը եկավ այն համոզման, որ անկախացումը Կ.Պոլսից կարագացնի այդ գործընթացն ու մեծապես կնպաստի արաբական վիլայեթների վերածմանը եվրոպական տերությունների գաղութի:

Այսպիսով, Լիբիայի ճգնաժամը սկզբնական շրջանում փաստորեն դարձավ կայսրության մուսուլման հասարակության դիրքորոշումը պայմանավորող, նրան համախմբող և միավորող գործոն: Բազմաթիվ իսլամադավան և հատկապես արաբական երկրներում՝ Սուդանում, Մարոկկոյում, Ալժիրում, նաև Աֆղանստանում, Իրանում, Ինդոնեզիայում և այլուր սկսվեցին հակա-իտալական ելույթներ²:

Բաղդադում անցկացվեցին բողոքի գանգվածային ցույցեր, որոնց ժամանակ հավաքագրվեցին կամավորներ, և գումարներ հանգանակվեցին՝ Լիբիա ուղարկելու համար³: Մեծ ակտիվություն ցուցաբերեցին արաբական մյուս վիլայեթները ևս:

Հարկ է նշել, որ թուրք-իտալական պատերազմին արձա-

¹ Н. Прошкин, *Узл.* աշխ., էջ 76:

² الدكتور توفيق بوري, *Узл.* աշխ., էջ 369:

³ Н. Kayall, *Arabs and Young Turks*, *Узл.* աշխ., էջ 108:

գանձեցին նաև Արաբիայի հեղինակավոր առաջնորդները: Եմենի իմամ Յահյան, օրինակ՝ թուրք սուլթանին հղած իր հեռագրում հայտնում էր, որ պատրաստ է հավաքագրելու 100 հազար կամավոր՝ իտալացիներին դիմակայելու համար: Արդ ալ-Ազիզ իբն Սաուդը պատրաստակամություն էր հայտնում տեղի ցեղերին համախմբելու օսմանյան դրոշի ներքո և հանելու նրանց իտալացիների դեմ¹: Սակայն «հայրենասիրության» այս դրսևորումները հիմնականում մնացին միայն խոստումներ:

Իտալիայի ներխուժումը Լիբիա արաբ ազգային գործիչների կողմից ընդունվեց որպես համաարաբական խնդիր: Արաբական վիլայեթներում կազմակերպվում էին հակաիտալական ցույցեր և ելույթներ: Քաղաքական ու հասարակական շատ կազմակերպությունների նախաձեռնությամբ ստեղծվում էին կամավորական ջոկատներ: Ռազմական գործողություններին մասնակցելու ցանկություն հայտնաձև կամավորների թիվը 1912 թ. սկզբին հասնում էր 12 հազարի²: Այդ հարցում ակտիվությունը մեծ էր հատկապես Կ.Պոլսում, որտեղ կենտրոնացված էին արաբական հասարակության առավել գործունյա շրջանների ներկայացուցիչները՝ ուսանողները, սպաները և պաշտոնյաները: Ի դեպ, երիտասարդ արաբ սպաների գորակույցի գործում կարևոր ներդրում ունեցավ նաև «ալ-Կահտանիա» գաղտնի ընկերությունը: 1912 թ. գարնանը, չնայած թուրքական քանակի գլխավոր շտաբի հարուցած խոչընդոտներին, մի խումբ երիտասարդ արաբ սպաներ՝ Սուբհի ալ-Տարաբլուաին, Մահմուդ Հիլմին, Իսա ալ-Վատարին, Սայիդ ալ-Միդֆային, Իզետ ալ-Ջունդին և այլք, մեկնեցին Լիբիա³: Կիրենաիկա մեկնեց նաև «ալ-Կահտանիա»-ի ղեկավարներից մեկը՝ Ազիզ Ալի ալ-Միսրին: Նա նշանակվեց Բենգազիի ռազմաճակատի հրամանատար և դրսևորեց իրեն որպես հմուտ ռազմական գործիչ ու քաջարի մարտիկ⁴:

¹ Н. Прошкин, *նշվ. աշխ.*, էջ 82:

² Նույն տեղում:

³ الدكتور توفيق بربور, *նշվ. աշխ.*, էջ 314-315:

⁴ J. Jankowski, *Egypt and Early Arab Nationalism 1908-1922 / The Origins of Arab Nationalism*, New York, 1991, p. 247.

Մինչդեռ իթթիհադական կառավարությունում թուրք-իտալական պատերազմի հենց առաջին օրերից գերիշխում էին Իտալիայի նվաճողական քաղաքականության դեմ պայքարելու անհնարինության զգացումը, հուսալքությունը և ընդհանրապես ծայրահեղ հոռետեսական տրամադրությունները: Այնուամենայնիվ, պատերազմի սկզբնական շրջանում կառավարությունը ձեռնամուխ եղավ ողջ երկրի տարածքում հատուկ կոմիտեների ստեղծմանը, որոնք զբաղվում էին միջոցների հայթայթմամբ ու կամավորների հավաքագրմամբ: Անկասկած, կարավարության այս և մյուս միջոցառումների հիմնական նպատակը կայսրության հեղինակության պահպանումն էր և ստեղծված իրադրության պայմաններում երկրի տարբեր շրջաններում և մասնավորապես արաբական վիլայեթներում հնարավոր հակակառավարական հուզումներից խուսափելը: Արդեն 1911 թ. սեպտեմբերին իթթիհադական ղեկավարները հայտարարում էին, որ Տրիպոլիի պաշտպանության համար չեն թափի ոչ մի թուրք զինվորի արյուն: Արդարացնելու համար վերջիններիս այսպիսի կեցվածքը «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության պաշտոնաթերթ «Թանին»-ը («Արծազանք») գրում էր, որ Տրիպոլին այն վիլայեթներից է, որը չի տալիս որևէ նյութական օգուտ, և օսմանյան կառավարությունն ստիպված է իր վրա վերցնել նրա բոլոր ծախսերը¹:

Թուրքական կառավարության վերաբերմունքն Իտալիայի հետ պատերազմին ավելի քան հստակորեն է արտահայտված էնվեր բեյի օրագրի գրառումներում, որտեղ ուղղակի նշվում է, որ Թուրքիան ստիպված կլինի համակերպվել Տրիպոլիի և Կիրենաիկայի ժամանակավոր կորստի հետ²:

Կառավարության որդեգրած այս դիրքորոշմանը միանգամայն համապատասխան էին գործում նաև Լիբիայի թուրքական զորամիավորումները: 1912 թ. սկզբներին նրանք վերջնականապես դադարեցին մասնակցել ռազմական գործողություններին և բազմաթիվ սպաներ ու զինվորներ վերադարձան Թուր-

¹ انكتور توافق برو، նշվ. աշխ., էջ 331:

² Н. Прошкин, նշվ. աշխ., էջ 81:

քիա¹: Իտալական զորքերի հրամանատար Կենևի խոստովանությամբ թուրքական զորքերի ներկայությունը Տրիպոլիում և Կիրենաիկայում կրում էր ընդամենը խորհրդանշական բնույթ²: Պատերազմի ողջ ծանրությունն ընկած էր արաբական աշխարհագրի վրա:

Պատերազմի նկատմամբ իթթիհադական իշխանությունների նման մոտեցումն արդարացի գայրույթ առաջացրեց արաբ քաղաքական և հասարակական գործիչների շրջանում, ինչն իր արտահայտությունը գտավ նաև օսմանյան խորհրդարանում:

Արաբ պատգամավորների կողմից կառավարության խիստ քննադատությունը դժգոհության այլք բարձրացրեց Իբրահիմ Հաքքի փաշայի կառավարության դեմ, և վերջինս ստիպված եղավ հրաժարական տալ³: Լիբիայի պատգամավորները պահանջեցին պատասխանատվության ենթարկել նրա կառավարության անդամներին, որոնց անտարբերության հետևանքով Տրիպոլին և Կիրենաիկան այդպես էլ չապահովվեցին անհրաժեշտ սպառազինությամբ: Լիբիայի պատգամավորների պահանջը, ինչպես և պետք էր սպասել, աջակցություն գտավ արաբ պատգամավորների ու ընդհանրապես խորհրդարանական ընդդիմադիր խմբավորումների կողմից⁴:

Հարկ է նշել, որ թուրք-իտալական պատերազմն ընդհանուր առմամբ չնվազեցրեց օսմանիզմի գաղափարախոսության և միասնական հայրենիքի գաղափարի նկատմամբ արաբների հավատը: Սակայն այն խարխլեց արաբ առաջադիմական հասարակության վստահությունն իթթիհադական կառավարության նկատմամբ: Պատահական չէ, որ այս ընթացքում արաբներն սկսեցին ավելի ակտիվորեն ներգրավվել համաօսմանյան հակաիթթիհադական ընդդիմադիր կուսակցությունների շարքերը: Պարտությունը պատերազմում մեծ չափով թուլացրեց իթթիհադական ղեկավարների քաղաքական դիրքերը, պատճառ դար-

¹ L. Anderson, *The Development of Nationalist Sentiment in Libya, 1908-1922 / The Origins of Arab Nationalism* New York, 1991, p. 230.

² Н. Прошан, նշվ. աշխ., էջ 86:

³ S. Shaw, E. Shaw, նշվ. աշխ., էջ 290:

⁴ H. Kayali, *Arabs and Young Turks*, նշվ. աշխ., էջ 107:

ծավ իշխանության փոփոխության և մեծապես ազդեց կայսրությանում ծավալված հետագա գործընթացների վրա:

**«ՅՈՒՐԻՅԵԹ ՎԵ ԻԹԹԻԼԱՖ»-Ի
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԱՐՆԵՐԸ**

Թուրք-իտալական պատերազմը մեծ չափով խթանեց Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի ակտիվացումը: Երիտթուրքական իշխանությունների համար պատերազմի ընթացքում ստեղծված ոչ նպաստավոր իրադրությունից անմիջապես օգտվեց նորաստեղծ համաօսմանյան ընդդիմադիր «Հյուրիյեթ վե իթթիլաֆ» կուսակցությունը: Այն ձևավորվեց մինչ այդ գործող «Իթթիհադ վե թերաքքի»-ին ընդդիմադիր կազմակերպությունների և խմբավորումների հիմքի վրա, որոնցից էին վերոհիշյալ «Աիրար»-ը, «Ժողովրդի կուսակցությունը», «Չափավոր լիբերալները», «Օսմանյան ժողովրդավարական կուսակցությունը», «Բարեփոխումների օսմանյան կուսակցությունը» և այլն¹:

«Հյուրիյեթ վե իթթիլաֆ»-ի մեջ միավորվեցին նաև կայսրության գրեթե բոլոր ազգերի ներկայացուցիչները: Վերջիններիս հատկապես գրավում էին կուսակցության ծրագրում ընդգրկված ոչ թուրքական շրջանների ինքնավարության և Օսմանյան կայսրության վարչական ապակենտրոնացման մասին դրույթները, որոնք միաժամանակ ենթադրում էին նաև երկրի քաղաքական և տարածքային միասնություն²:

Պաշտոնապես «Հյուրիյեթ վե իթթիլաֆ»-ը կազմավորվեց 1911 թ. նոյեմբերի 8-ին³: Այն փաստորեն Օսմանյան կայսրության պատմության մեջ ամենախոշոր ընդդիմադիր կուսակցությունն էր, որը դարձավ երիտթուրքական իշխանության ամենավտանգավոր հակառակորդը: Կուսակցության հիմնադիրներն էին և նրանում ղեկավար դիրքեր էին զբաղեցնում նախկին

¹ S. Shaw, E. Shaw, նշվ. աշխ., էջ 283:

² Մ. Քոյաջյան, Ազատություն և Համաձայնություն / Հայկական Հարց, հանրագիտարան, Երևան, 1996, էջ 11:

³ J. Hakkı, նշվ. աշխ., էջ 455:

գնդապետ Սադիկ փաշան, Դամադ Ֆերիդ փաշան, Իսմայիլ Հաքքի փաշան, Լուֆֆի Ֆիցրին, Ռիզա Թաուֆիկը, բժիշկ Ռիզա Նուրը՝ և ուրիշներ: Իթթիլաֆականներն իրենց կողմը գրավեցին խորհրդարանի 55 պատգամավորների: Վերջիններիս աջակցություն հայտնեցին ևս 45 պատգամավորներ, որոնցից 15-ը իթթիհադականներ էին: «Հյուրիյեթ վե իթթիլաֆ»-ին, այսպիսով, հաջողվեց իր շուրջը համախմբել մոտ 100 պատգամավորի², այսինքն՝ խորհրդարանի կազմի զգալի մասին:

«Հյուրիյեթ վե իթթիլաֆ» կուսակցությունը բազմատարր էր, ինչը սովորական երևույթ էր այդ տիպի կազմակերպությունների համար: Նրա մեջ միավորված քոլոր ուժերն իրենց դասակարգային պատկանելությամբ, գործունեության նպատակների և ձևերի զանազանությամբ, երբեմն նաև հակադրությամբ հանդերձ՝ այդ պահին ունեին մեկ միասնական գերխնդիր՝ երիտթուրքերի հեռացումը իշխանությունից:

«Իթթիհադ վե թերաքքի»-ից հիասթափված արաբ ազգային գործիչներն ի դեմս «Հյուրիյեթ վե իթթիլաֆ»-ի տեսնում էին այն ուժը, որի օգնությամբ արաբները հույս ունեին իրականացնելու իրենց նպատակները: Պատահական չէ, որ կուսակցության հիմնադիրների շարքում էին արաբ գործիչներ Աբդ ալ-Համիդ ալ-Ջահրավին և հրապարակախոս Թահիր Խայրադդին քեյը: Կուսակցությանը միացան նաև պատգամավորներ Սաադ էդինեն, Ամիր Արսլանը, Քամել ալ-Ասադը, Հաջի Ալին, Ֆարաջ էֆենդին, Շեքեթ փաշան, Սաադ Հուսեյնին, Դաուդ Յուսաֆանին և Շուքրի ալ-Ասալին³:

Այսպիսով, կուսակցության մեջ կարևոր դեր էին խաղում ոչ թուրք, հատկապես արաբ ազգային գործիչները, որոնք մեծ հեղինակություն էին վայելում: Նրանց մի մասը ներկայացված էր կուսակցության ղեկավար մարմիններում, հանգամանք, ինչը հարկադրում էր իթթիլաֆական ղեկավարներին հաշվի առնել նրանց ազգային ձգտումները:

¹ F. Ahmad, նշվ. աշխ., էջ 99, A. Тырнова. Старая Турция и младотурки. Год в Константинополе, Петроград, 1916, с. 19.

² A. Тырнова, նշվ. աշխ., էջ 19:

³ J. Halil, նշվ. աշխ., էջ 455-456:

«Հյուրիյեթ վե իթթիլաֆ»-ի կողմնակիցները բավական ակտիվ էին գործում նաև արաբական վիլայեթներում: Կարճ ժամանակի ընթացքում կուսակցությունը հիմնեց 73 մասնաճյուղ, որոնցից 12-ը՝ Դամասկոսում, Բեյրութում, Բասրայում, Բաղդադում, Հոմսում, Տրիպոլիում, Լաթաքիայում, Մոսուլում և այլուր¹: Դամասկոսի մասնաճյուղը հիմնադրվեց արաբ հեղինակավոր քաղաքական գործիչների՝ բժիշկ Աբդ ալ-Ռահման ալ-Շահբենդերի, Հաքի ալ-Ազմի, Աբդ ալ-Վահաբ ալ-Ինզլիզի, Շաուֆիկ ալ-Մուայադ ալ-Ազմի և պատգամավորներ Շուքրի ալ-Ասալիի և Ռուշդի ալ-Շամաի նախաձեռնությամբ²:

Ինչ վերաբերում է Իրաքում իթթիլաֆական խմբավորումների գործունեությանը, ապա այստեղ առաջատար տեղ գրավեցին պահպանողականները: Ակզբնական շրջանում «Հյուրիյեթ վե իթթիլաֆ»-ի մասնաճյուղերի կազմակերպումն Իրաքի երեք վիլայեթներում հանձն առավ մուսուլման հոգևորականության հեղինակավոր ներկայացուցիչ Մուատաֆա ալ-Վահիդը, ում մահվանից հետո Իրաքի իթթիլաֆական մասնաճյուղերի ղեկավարությունն անցավ Տալիբ փաշա ալ-Նաքիբին³: Նրա գլխավորած Բասրայի մասնաճյուղին հիմնականում անդամակցում էին խոշոր հողատերեր, ունևոր և հայտնի ընտանիքների ներկայացուցիչներ, ինչպես Արդալլահ ալ-Ջուեյրը, Մահմուդ փաշա ալ-Աբդալ Վահիդը և ուրիշներ: Ավելի ուշ այս մասնաճյուղը դարձավ Իրաքի «Հյուրիյեթ վե իթթիլաֆ» կուսակցության առաջատարը⁴:

«Հյուրիյեթ վե իթթիլաֆ»-ի՝ իրենց կազմով տարբերվող արաբական մասնաճյուղերի գործունեության միասնականությունն ապահովվում էր «Իթթիլաֆ»-ի ծրագրի նկատմամբ նրանց վստահությամբ և արաբների առջև ծառայած խնդիր-

¹ الدكتور توفيق برو، بغداد، ۱۹۲۵، ص 302:

² J. Hajjar, بغداد، ۱۹۲۵، ص 456:

³ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., ص 250:

⁴ Բասրայի իթթիլաֆական մասնաճյուղը հիմնվել էր 1911 թ. Տալիբ փաշայի նախաձեռնությամբ և կոչվում էր «Հյուրիյա մութթադիլ», P. Ireland, Iraq a Study in Political Development, London, 1937, p. 230.

ները վերջինիս միջոցով լուծելու ակնկալիքով:

1912 թ. խորհրդարանական երկրորդ ընտրությունները:

«Հյուրիյեթ վե իթթիլաֆ» կուսակցությունն առաջին հաղթանակը ձեռք բերեց իր ստեղծումից քսան օր հետո՝ Կ.Պոլսում կայացած լրացուցիչ ընտրությունների ժամանակ: Պայքարն ընթանում էր Փարիզում Օսմանյան կայսրության դեսպան Եշանակված Ռիֆաթ փաշայի պատգամավորական թափուր տեղի համար: Ընտրություններում իթթիլաֆական Թահիր Խայրադդինը հաղթեց «Իթթիհադ վե թերաքքի»-ի թեկնածու, ներքին գործերի նախարար Մեհմուդ բեյին, ինչը դրոշեց իթթիհադականներին դիմել անհապաղ գործողությունների: Նրանք փորձեցին կառավարության կազմի մեջ ընդգրկել կուսակցության անդամներ Թալեաթ բեյին, Ջավիդ բեյին, Հաջի Ադիլ բեյին և Իսմայիլ Հաքքի Բարան Ջադեին, սակայն ընդդիմությանը հաջողվեց այն կասեցնել: Խորհրդարանի անդամների, այդ թվում նաև արաբ պատգամավորների մեծամասնությունն ակնհայտորեն դուրս էր գալիս «Իթթիհադ վե թերաքքի» ազդեցությունից:

Ընդդիմության և կառավարության միջև վճռորոշ բախումը, որը փոխեց իրադարձությունների հետագա ընթացքը, տեղի ունեցավ 1912 թ. հունվարի 31-ին, երբ մեծ վեզիր Սայիդ փաշան խորհրդարանի հաստատմանը ներկայացրեց սահմանադրության 35-րդ կետի խմբագրված տարբերակը, որտեղ մասնավորապես վերականգնվում էր խորհրդարանն առանց սենատի հետ համաձայնեցնելու, ինքնակամ ցրելու սուլթանի նախկին իրավունքը²: Մեծ վեզիրի կողմից իր այս քայլի ոչ այնքան համոզիչ բացատրությունը չբավարարեց պատգամավորներին, և քվեարկության ժամանակ օրինագիծը չհավաքեց ձայների անհրաժեշտ մեծամասնությունը: Փաստորեն Սայիդ փաշայի կա-

¹ F. Ahmad, նշվ. աշխ., էջ 99-100:

² Օսմանյան սահմանադրության 35-րդ հոդվածը փոխվել էր դեռևս 1909 թ.: Սուլթանը զրկվում էր իր արտոնությունների մի մասից, և խորհրդարանին էր փոխանցվում կառավարության և խորհրդարանի միջև ծագած տարաձայնությունների ժամանակ վերջին խոսքի իրավունքը:

ռավարությանը հայտնվեց անվստահության քվե, և այն հարկադրված հրաժարական տվեց¹:

Երկու օր անց իթթիհադականների ճնշմամբ սուլթանը, այնուամենայնիվ, խախտելով սահմանադրությունը, ցրեց խորհրդարանը և հայտարարեց նոր ընտրությունների անցկացման մասին: Շատ շուտով պարզ դարձան այս հմտորեն կազմակերպված «ներկայացման» մեջ երիտթուրքերի մեծ շահագրգռությունն ու որոշիչ դերակատարությունը: Այն պարագայում, երբ խորհրդարանում ընդդիմությունը փաստորեն մեծամասնություն էր կազմում, իթթիհադականներին կենսականորեն անհրաժեշտ էր անհապաղ ձերբազատվել այդ խորհրդարանից և ապավինել նոր ընտրություններին՝ արդեն փորձված զանազան միջոցներով իրենց հաջողությունն ու նոր խորհրդարանում իրենց կողմնակից և համախոհ պատգամավորների բավարար քանակ ապահովելու ակնկալությամբ:

Խորհրդարանական երկրորդ ընտրություններն անցկացվեցին 1912 թ. գարնանը:

«Հյուրդիյեթ վե իթթիլաֆ»-ը ընտրարշավի մեջ մտավ լայնածավալ ծրագրով, որն անդրադառնում էր կայսրության հասարակական կյանքի գրեթե բոլոր կողմերին: Այն մասնավորապես ազգաբնակչության տարբեր խավերի վիճակը բարելավելու արդեն շատ անգամ լաված խոստումներ էր պարունակում², ինչը, սակայն, սպասված տպավորությունը չթողեց և առանձնապես չնպաստեց կուսակցության նկատմամբ վստահության ամրապնդմանը: Այս պարագայում «Իթթիլաֆ»-ի ծրագրի հիմնական խաղաքարտը, որը, նրա հեղինակների համոզմամբ, պետք է առավել գրավիչ լիներ կայսրության ոչ թուրք ժողովուրդների համար, ապահովեր կուսակցության նկատմամբ նրանց համակրանքը և, համապատասխանաբար, ծայների մեծամասնությունը, ապակենտրոնացման գաղափարն էր:

Ինչ վերաբերում է «Իթթիհադ վե թերաքքի»-ին, ապա վերջինս իր քարոզչությունը առավել արդյունավետ դարձնելու, ընտրությունների ողջ ընթացքն իր հսկողության տակ պահելու և

¹ انكتور توفيق برو، ص 309-311:

² О. Инджиян, Буржуазия Османской империи, Ереван, 1977, с. 244-245.

հաղթանակ ապահովելու համար հմտորեն օգտագործում էր իր կողմից նախկինում արդեն կիրառված հնարավոր բոլոր միջոցները և, միաժամանակ, օգտվելով «Իթթիլաֆ»-ի քաղաքականության թույլ կողմերից ու դժվարություններից, ամեն կերպ փորձում էր խոչընդոտել նրա կողմնակիցների գործունեությունը և նվազեցնել նրանց հաղթանակի հավանականությունը: Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ այս նպատակի համար իթթիհադականներն ընտրությունների ողջ ընթացքում չէին զլանում դիմել ամենատարբեր մեքենայությունների, ճնշումների ու բռնությունների: Պատահական չէ, որ հենց վերջին իրողությունը նկատի առնելով՝ այս ընտրությունները պատմագրության մեջ հայտնի են «մեծ մահակ» անվամբ¹:

Իթթիհադականների գործողությունները հատկապես ակտիվորեն էին իրականացվում արաբական վիլայեթներում: Հիմնական պատճառներից մեկն այն էր, որ «Իթթիլաֆ»-ի վերը հիշատակված ծրագրի մեջ արտահայտված ապակենտրոնացման գաղափարը միանգամայն համահունչ էր կայսրության էթնիկ տեսակետից միատարր իսլամադավան, այդ թվում նաև արաբական վիլայեթների ազգային շրջանների նպատակներին, ինչը և այդ ծրագիրը, ինչպես նաև իթթիլաֆականների քարոզչությունն ընդհանրապես, վերջիններիս համար դարձնում էր առավել ընկալելի և ընդունելի: Դեռևս նախքան ընտրություններն արաբների մեծ մասը չէր թաքցնում իր համակրանքը «Հյուրիյեթ վե իթթիլաֆ» կուսակցության նկատմամբ, իսկ արդեն ընտրարշավի ժամանակ այնպիսի ճանաչված գործիչներ, ինչպիսիք էին Արդ ալ-Ռահման Շահրենդեղը, Շուքրի ալ-Ասալին, Ֆարիս ալ-Խուրին, Հաքիմ ալ-Ազմը, Իզետ Հաջարը և ուրիշներ², բացահայտորեն ցուցաբերում էին իրենց աջակցությունը: Հիմնականում միջին խավի ակտիվ մասնակցությամբ իթթիհադականներին բավական ուժեղ ընդդիմություն էր ձևավորվել նաև Բեյրութում³: Այստեղ առևտրականները, որոնց բարգավաճումն անմիջապես կապված էր տեղի տնտեսության վիճակի և

¹ حسن قتيلي, Եշվ. աշխ., էջ 178:

² الدكتور توفيق بربور, Եշվ. աշխ., էջ 377, 380:

³ J. Hajjar, Եշվ. աշխ., էջ 465:

դրա զարգացման մակարդակի հետ, ոգևորված էին ապակենտրոնացման գաղափարով, որի իրականացման դեպքում Բեյրութի շրջանը կազատվեր իշխանությունների հսկողությունից: Վերջիններիս, ինչպես և Բեյրութում կենտրոնացած արաբ մտավորականության դիրքորոշումը նպաստավոր պայմաններ ստեղծեց ապակենտրոնացման գաղափարի լայն տարածման ու դրա կողմնակիցների թվի ավելացման համար, որոնք և ակտիվորեն պաշտպանում էին «Հյուրիյեթ վե իթթիլաֆ» կուսակցությանը:

Կառավարությունը լրջորեն անհանգստացած էր նաև արաբների վրա լիբիական պատերազմի անհաջող ընթացքի և Թուրքիայի մոտալուտ պարտության հնարավոր, իրենց համար անցանկալի ազդեցությամբ ու դրա հետևանքներով: Պատահական չէ, որ օգտագործելով առիթը՝ իշխանությունները փորձում էին արաբների նկատմամբ իրագործվող ճնշումները սաստկացնելու միջոցով կանխել հետագա բարդությունները:

Հարկ է նշել, սակայն, որ, ի տարբերություն Բեյրութի, մյուս խոշոր քաղաքների՝ Դամասկոսի, Հալեպի, Մոսուլի և Բաղդադի առևտրական վերնախավի մեծ մասը, որ իթթիհադականների շնորհիվ բարձր պաշտոններ էր զբաղեցնում, ինքնըստինքյան ստիպված էր աջակցել կառավարությանը: «Իթթիհադ վե թերաքքի»-ն դեռևս պահպանում էր իր ուժեղ դիրքերն ու ազդեցությունն այս քաղաքներում, հատկապես այն բանից հետո, երբ ցույց տվեց ամեն զեղով իշխանությունը չկորցնելու իր վճռականությունը:

Այսպիսով, 1912 թ. ընտրարշավն արաբական վիլայեթներում ընթանում էր խիստ լարված մթնոլորտում: «Իթթիհադ վե թերաքքի»-ն նոր միջոցներ էր որոնում «Իթթիլաֆ»-ի ազդեցությունը չեզոքացնելու և այս վճռական պահին իրադրության լիակատար տերը դառնալու համար: Արաբ պատմաբան Հասան Խայալին, անդրադառնալով այս ընտրություններին, այն տեսակետն է հայտնում, որ իթթիհադականների կողմից օսմանիզմի գաղափարախոսության առաջադրումը, որի մեջ տեղ էին գտել իսլամական դրույթներ, սկսեց լայնորեն քարոզվել, որը նախ և

առաջ անմիջապես ուղղված էր իթթիլաֆականների առաջ քաշած ապակենտրոնացման գաղափարի դեմ¹:

Իրենց նպատակին հասնելու համար իթթիլաֆականները մեծ չափով օգտագործում էին նաև տեղական բարձրաստիճան պաշտոնյաների հնարավորությունները: Իթթիլաֆական կուսակցության հակառակորդ Հաքի ալ-Ազմը ընտրություններից հետո հրատարակած գրքույկում ներկայացնում է իթթիլաֆականների կողմից օրենքի խախտման բազմաթիվ դեպքեր: Նրա վկայությամբ ընտրախախտումների, զեղծարարությունների և ճշումների մեծ մասը կատարվում էր տեղական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, որոնք հույս ունեին իթթիլաֆականների վերընտրվելու դեպքում պահպանել իրենց դիրքերը:

Հիմնականում «Իթթիլաֆ»-ի ջանքերի շնորհիվ իթթիլաֆական ընդդիմությունը նույնիսկ արաբական վիլայեթներում, որտեղ նրա վարկանիշն անհամեմատ բարձր էր, լիակատար պարտություն կրեց: Դամասկոսի ընտրատարածքից խորհրդարան չընտրվեցին ընդդիմադիր նախկին պատգամավորներ Շաուֆիկ քեյ ալ-Մոալայադ ալ-Ազմը, Շուքրի ալ-Ասալին, Ռուշդի ալ-Շաման, Հալեպից՝ Նաֆի փաշա ալ-Ջաբիրին, Հոմսից՝ Աբդ ալ-Համիդ ալ-Ջահրավին: Նրանց փոխարեն ընտրվեցին «Իթթիլաֆ վե թերաքքի»-ի կողմնակիցները՝ Դամասկոսից՝ Մուհամմեդ փաշա Ֆաուզի ալ-Ազմը, Աբդ ալ-Ռահման փաշա ալ-Յուսուֆը, Ամին էֆենդի ալ-Տարզին, Աբդ ալ-Մուհսին ալ-Աստոասին, Հոմսից՝ Խալիդ ալ-Բարազին և այլք²:

Խորհրդարանի նախկին հեղինակավոր ընդդիմադիր պատգամավորները պարտվեցին կամ ընտրությունների վերջին փուլում ստիպված եղան հանել իրենց թեկնածությունը: Մինչդեռ իթթիլաֆական թեկնածուներ Սասուն Խասկիլը և Իսմայիլ Հաքի Բաբա Ջադեն, անհաջողության մատնվելով Բաղդադում, առաջադրվեցին Դիվանիա շրջանից, որտեղից և ընտրվեցին: Իրաքի վիլայեթներում ևս առավելությունն իթթիլաֆականների

¹ حسن قبلي، Եզվ. աշխ., էջ 182:

² R. Khalidi, *Ottomanism and Arabism in Syria Before 1914: A Reassessment / The Origins of Arab Nationalism*, New York, 1991, p. 59, J. Hajjar, Եզվ. աշխ., էջ 465:

կողմն էր: Այսուհանդերձ, առանձին վայրերում նրանք հարկադրված էին առաջնությունը զիջել իրենց հակառակորդներին կամ միայն ձևականորեն պաշտպանել իրենց կողմնակից համարվողների թեկնածությունը¹:

Այսպիսով, «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությանը հաջողվեց 1912 թ. խորհրդարանական ընտրություններում ապահովել իր թեկնածուների քաջարձակ առավելությունը: Փաստորեն ընտրված 284 պատգամավորներից 280-ը իթթիհադական էին²: Չնայած 1908 թ. համեմատությամբ 1912 թ. ընտրված խորհրդարանում արաբական վիլայեթների ներկայացուցիչների թիվն էականորեն ավելացավ (համապատասխանաբար՝ 23% և 27%)³, սակայն դա ամենևին էլ չէր վկայում ազգությամբ արաբ պատգամավորների թվի աճի մասին, քանի որ նրանց մեծ մասն ուղղակի արաբական վիլայեթներից ընտրված թուրքեր էին: Հատկանշական է, որ նոր խորհրդարանում 1908 թ. համեմատությամբ մեծ չափով ավելացել էր նաև արաբական վիլայեթներից ընտրված իթթիհադական պատգամավորների թիվը (համապատասխանաբար՝ 39% և 67%)⁴:

Նոր խորհրդարանը փաստորեն դարձավ իթթիհադական կառավարության կամակատարը: Այսուհետև կայսրության ճակատագիրը վճռելու էր «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությունը: Սակայն իթթիհադականների ոգևորությունը կարճատև եղավ. արդեն 1912 թ. հուլիսին՝ խորհրդարանի քացումից չորս ամիս անց, հիմնականում քանակի միջամտության շնորհիվ իշխանությունն անցավ իթթիհադականների հակառակորդներին՝ ի դեմս «Հյուրիյեթ վե իթթիլաֆ»-ի:

Ստեղծված միանգամայն նոր իրադրությունն ավելի քան նպաստավոր էր նաև իթթիլաֆականների կողմնակից քարձրաստիճան զինվորականության համար: 1912 թ. մայիս-հունիս ամիսներին Կ.Պոլսում իթթիլաֆական կողմնորոշում ունեցող գեղապետ Սադիկ փաշայի գլխավորությամբ հիմնադրվեց

¹ A. Hansu, *The Revolution in Turkey*, Leiden, 1997, p. 183.

² *التكوير توفيق برو*, Եջվ. աշխ., էջ 382:

³ *حسن قبالی*, Եջվ. աշխ., էջ 185:

⁴ Նույն տեղում:

«Ազատարար սպաներ» խմբավորումը, որն իր առջև առաջնահերթ նպատակ էր դրել իշխանությունից հեռացնել «Իթթիհադ վե թերաքքի»-ին¹: Իրավամբ, վերջիններիս հայտնվելը քաղաքական ասպարեզում, նրանց ինքնավստահ կեցվածքը և վճռական գործողությունները փաստորեն հանգեցրին Սայիդ փաշայի կառավարության տապալմանը²:

1912 թ. հուլիսի 17-ին Սայիդ փաշայի իթթիհադական կառավարության հրաժարականից հետո նրան փոխարինած Գազի Ահմեդ Մուֆթար փաշայի նոր կառավարությունը («Մեծ կառավարություն») կազմվեց հիմնականում «Հյուրիյեթ վե իթթիլաֆ» կուսակցության կողմնակիցներից: Պետական խորհրդի նախագահ դարձավ Քամիլ փաշան, Ֆերիդ փաշան զբաղեցրեց ներքին գործերի նախարարի, Հուսեյն Հիլմի փաշան՝ արդարադատության նախարարի, Նազիմ փաշան՝ ուսումնական նախարարի և Մահմուդ Մուֆթարը՝ ծովային նախարարի պաշտոնները: Իշխանությունից հեռացվեցին այն քաղաքական գործիչները, որոնց հետ արաբների հարաբերությունները վերջնականապես փչացել էին³:

«Մեծ կառավարությունը» խոստացավ հետամուտ լինել սահմանադրության պահպանման և օսմանյան րոլոր ազգերի իրավահավասարության ապահովմանը: Այս խոստումները մեծ հույսեր արթնացրին արաբ ազգային գործիչների շրջանում: Իթթիլաֆական կողմնորոշում ունեցող կառավարությունը պետք է որ ավելի նպաստավոր լիներ արաբների համար, քանի որ վերջիններս այդ կուսակցությունում զգալի կշիռ ունեին: Կառավարության թույլտվությամբ վերաբացվեցին ընտրությունների ընթացքում արգելված ընդդիմադիր «ալ-Մուֆիդ» և «ալ-Մուքթաբիս» թերթերը: Կրկին սկսեցին գործել արգելված քաղաքական խմբավորումները: Կառավարության առաջին միջոցառում-

¹ F. Ahmad, նշվ. աշխ., էջ 109:

² Իթթիհադական կառավարության տապալման համար, անտարակույս, կային նաև այլ լուրջ պատճառներ, որոնցից էր արաբական վիլայեթներում ստեղծված անկայուն վիճակը:

³ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 261:

ներից մեկը եղավ կայսրության, այդ թվում նաև արաբական վիլայեթների խոշոր քաղաքներում տեղական կառավարման մարմինների գտումը. իթթիհադական պաշտոնյաներին փոխարինեցին իթթիլաֆականները: Պաշտոնակ արվածների մեջ էր նաև Բաղդադի վալի Ահմեդ Ջեմալ բեյը, որին այդ պաշտոնում փոխարինեց իթթիլաֆական Մեհմեդ Ջեքի փաշան: Կառավարության իրականացրած այս և մյուս միջոցառումներն՝ արաբները դիտում էին որպես ապակենտրոնացման խոստումի իրագործման վստահելի երաշխիք:

1912 թ. օգոստոսի 5-ին մեծ վեզիր Ահմեդ Մուփթաթ փաշայի ջանքերով ցրվեց իթթիհադական խորհրդարանը և հայտարարվեց նոր ընտրությունների անցկացման մասին²: «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությունը փաստորեն հեռացվեց իշխանությունից:

Սակայն նոր կառավարությունը ևս չարդարացրեց արաբների սպասելիքները: Նախ և առաջ հիասթափության առիթ տվեց այն, որ նրան այդպես էլ չհաջողվեց իրականություն դարձնել Իտալիայի հետ համաձայնության գալու և հյուսիսաֆրիկյան տարածքները պահպանելու իր քարծրագոչ խոստումը: Երկկողմ քանակցությունների ընթացքը կասկած չէր թողել, որ թուրքական կողմը պատրաստ էր գնալու մեծ զիջումների՝ ընդհուպ մինչև Լիբիայի հանձնումը Իտալիային: Կառավարությունը չէր շտապում իրականացնել նաև ապակենտրոնացմանն ուղղված արմատական քարեփոխումները:

Վերջնականապես կորցնելով հավատը և վստահությունը «Իթթիլաֆ»-ի նկատմամբ՝ արաբ ազգային գործիչներն սկսեցին իրենց գլխավոր նպատակների և առաջին հերթին ապակենտրոնացման իրականացման համար այլ ուղիներ որոնել: Նրանց մի մասը, ինչպես, օրինակ՝ Լիբանանի ազգային խմբավորումները, իրենց հայացքն ուղղեցին դեպի եվրոպական տե-

¹ Ալբանական վիլայեթներում կառավարությունն իրականացրեց տեղական ինքնակառավարման մարմինների արմատական քարեփոխումներ:

² Մանրամասն տե՛ս Բ. Առես, նշվ. աշխ., էջ 220-222:

րոպությունները՝ ապավինելով նրանց աջակցությանը՝ Սակայն արաբների մեծամասնությունը (հատկապես մուսուլմանները), միանգամայն անընդունելի համարելով վերջիններիս դիրքորոշումը և այդպես էլ որևէ այլընտրանք չգտնելով, շարունակում էին հույսեր տածել, որ կառավարությունը, թեկուզ միայն կասեցնելու համար եվրոպական տերությունների միջամտության հնարավորությունը, հարկադրված կլինի իրականացնել իր խոստումները:

Մինչդեռ արաբական քաղաքական վերնախավը, տեսնելով իշխանությունների անգործությունը, աստիճանաբար հակվում էր առավել վճռական քայլերի դիմելու անհրաժեշտությանը՝ նույնիսկ չքացառելով կառավարության դեմ ուժային մեթոդների կիրառումը²:

Արաբական ազգային ուժերի այսպիսի վերակողմնորոշումն իր անմիջական ազդեցությունն ունեցավ ազգային շարժման հետագա ընթացքի վրա:

Բալկանյան առաջին պատերազմը և արաբների դիրքորոշումը:

Բալկանյան առաջին պատերազմն սկսվեց 1912 թ. հոկտեմբերի 18-ին: Թուրքական բանակն այս անգամ ևս կրեց կործանիչ պարտություն՝ էլ ավելի ծանրացնելով կայսրության վիճակը: Իթթիլաֆական կառավարությունը, որն այդ ժամանակ գլխավորում էր Քամիլ փաշան, Բալկանյան պատերազմի ընթացքում կրկին ցուցաբերեց ծայրահեղ թուլություն և պատերազմ վարելու կատարյալ անկարողություն:

Մի քանի շաբաթվա ընթացքում Բուլղարիայի, Հունաստանի, Սերբիայի և Չեռնոգորիայի միացյալ բանակները գրավե-

¹ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., т. 2 266-267:

² Որոշ տեղեկություններ կան նաև այս շրջանում հակակառավարական առանձին գաղտնի կազմակերպությունների («Կանաչ դրոշ», «Տասը եղբայրներ», «Ան ձեռք») մասին, որոնց ինքնուրույն գործունեությունը, սակայն, կարճատև եղավ: Նրանք տարբեր հանգամանքների թերմով ծուլվեցին հիմնականում նույնանման նպատակներ հետապնդող առավել հեղինակավոր կազմակերպությունների հետ:

ցին Ռուսեյիայի կարևորագույն կենտրոնները, գրեթե ողջ Թրակիան և ընդհուպ մոտեցան Կ.Պոլսի մատուցներին¹: Քամիլ փաշային ոչինչ չէր մնում, քան միջամտության խնդրանքով դիմել եվրոպական տերություններին: Դեկտեմբերի 3-ին Թուրքիան գինադադար կնքեց Բուլղարիայի հետ, իսկ դեկտեմբերի կեսերին Լոնդոնում սկսվեցին հաշտության բանակցությունները: Եվրոպական տերությունների դիվանագիտական ճնշման հետևանքով իթթիլաֆական կառավարությունն ստիպված եղավ գնալ մեծ զիջումների: 1912 թ. հունվարի 22-ի կառավարության նիստի ժամանակ որոշում կայացվեց հրաժարվել Օսմանյան կայսրության բոլոր եվրոպական տարածքներից, բացի Կ.Պոլսի մի մասը կազմող փոքր հատվածից²:

Պարտությունը Բալկանյան առաջին պատերազմում ևս մեկ անգամ ցույց տվեց սեփական տարածքներն արտաքին ազդեցությունից պաշտպանելու Օսմանյան կայսրության անկարողությունը: Պատերազմն անմիջական ազդեցություն ունեցավ կայսրության հասարակական-քաղաքական կյանքի վրա և վերջնականապես հեղինակագրկեց առանց այն էլ վարկաբեկված իթթիլաֆական կառավարությանը:

Բալկանյան պատերազմի հետևանքով քաղաքական ապարեզից հեռացան այն ակտիվ խորհրդարանական ուժերը (այբանացի պատգամավորներ- Ա.Գ.), որոնք կարող էին լուրջ ազդեցություն ունենալ հատկապես ազգային հարցում կառավարության քաղաքականության վրա, և որոնց աջակցությանն էին ապավինում արաբ ազգային ուժերն իրենց ծրագրերն իրականացնելու գործում: Բալկանյան պատերազմն իր ազդեցությունն ունեցավ նաև արաբական հասարակական շարժման և դրա նպատակների ու պայքարի միջոցների վրա:

Արաբների արձագանքը պատերազմին միանշանակ չէր: Նրանց զգալի մասը համոզված էր, որ այն քրիստոնյաների և մուսուլմանների հակամարտության հետևանք էր, որն ավելի սաստկացրեց քրիստոնյա արաբների ձգտումը դեպի Եվրոպա՝ առիթ տալով մուսուլման արաբներին վերջիններիս մեղադրել

¹ Փ. Մանթր, նշվ. աշխ., էջ 135-136:

² R. Mantran, Histoire de l'Empire Ottoman, Lille, 1989, p. 607-608.

կայսրությունը մասնատելու մեջ՝ էլ ավելի խորացնելով նրանց միջև հակասություններն ու պառակտումը:

Միևնույն ժամանակ պատերազմն արաբների մեջ արթնացրեց կրոնական միասնության զգացում և նպաստեց օսմանիզմի գաղափարախոսության ակտիվացմանը: Պատերազմի ընթացքում բալկանյան ժողովուրդների ու նրանց հակասօսմանյան պայքարի դեմ սուր քննադատությամբ հանդես եկան ինչպես կրոնական և քաղաքական գործիչներ, այնպես էլ մտավորականության ներկայացուցիչներ:

Օսմանյան կայսրության տարածքային անխախտելիության պաշտպանության հարցում առավել ակտիվ էին «Իթթի-հադ վե թերաքքի»-ի կողմնակիցները, որոնք պահանջում էին Բալկաններում իրականացնել ավելի կոշտ քաղաքականություն: Նրանց միացան նաև իթթիլաֆականներին հարող արաբ ազգային գործիչները, որոնց մեջ հատկապես աչքի էր ընկնում Աբդ ալ-Համիդ ալ-Ձահրավին¹: Այսպիսի դիրքորոշումը մեկ անգամ ևս վկայում էր, որ արաբ ազգային ուժերի գերակշիռ մասը կայսրության պահպանումն ու հզորությունը շարունակում էր դիտել որպես արաբական հարցի լուծման երաշխիք: Եվ եթե «Իթթի-հադ վե թերաքքի»-ի համախոհները կայսրության ամրապնդումը տեսնում էին նրա կենտրոնացվածության մեջ և հավատարիմ էին օսմանիզմին, ապա «Հյուրիյեթ վե իթթիլաֆ»-ի կողմնակիցները կառավարությունից պահանջում էին արմատապես փոխել արաբական վիլայեթների նկատմամբ կիրառվող ազգային քաղաքականությունն ու անհապաղ իրականացնել լուրջ բարեփոխումներ:

Սակայն օսմանիզմի հետ կապված հույսերը գնալով նվազում էին. բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը լավագույն ճևղով ցույց էր տվել, որ օսմանիզմի գաղափարախոսությունն անկարող է լուծել արաբական հասարակության առջև ծառայած խնդիրները: Միևնույն ժամանակ Բալկանյան պատերազմն ապակենտրոնացման արաբ կողմնակիցների համար միանգամայն պարզ դարձրեց, որ համոզելու միջոցով կառավարության վրա ազդելու փորձերն անօգուտ են, և որ իրենց

¹ إنكتور تواق برو، ص 340:

պահանջները կարող են իրականացվել միայն համառ պայքարով: Աստիճանաբար արարներն սկսեցին հիասթափվել թե՛ իթթիհադականներից և թե՛ իթթիլաֆականներից: Անհրաժեշտ էր ստեղծել համաարարական կազմակերպություն, որը կկարողանար համախմբել արարական քաղաքական ու հասարակական ուժերին, ղեկավարել, համակարգել և ուղղորդել նրանց գործողությունները:

ԳԼՈՒԽ III

ԱՐԱՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆԱՅՈՒՄԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՐԱՐԱԿԱՆ ՎԻՒԱՅԵԹՆԵՐՈՒՄ

1912 թ. դեկտեմբերի 27-ին Կահիրեում սիրիացի վտարանդիներ Ռաֆիկ բեյ ալ-Ազմը, Մուհամմադ Ռաշիդ Ռիդան, Շիրվի ալ-Շմեյլը, Հաքի բեյ ալ-Ազմը, Իսկանդեր Ամունը, Սամի ալ-Ջարիդինին և Մուհիբադդին ալ-Խատիրը հայտարարեցին «Վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցության» («Հիզբ ալ-լամարջազիա ալ-իդարիա ալ-օսմանի») հիմնադրման մասին: Կուսակցության նախագահ ընտրվեց Ռաֆիկ բեյ ալ-Ազմը («Լամարջազիա»-ի հիմնադրման նախաձեռնողը), փոխնախագահ՝ Իսկանդեր Ամունը, քարտուղար՝ Հաքի բեյ ալ-Ազմը¹:

Կուսակցությունն իր հայտարարություններում հիմնավորում էր բազմակրոն և բազմազգ Օսմանյան կայսրության ապակենտրոնացման անհրաժեշտությունն ու դրա առավելությունները: Այն նպատակ էր դրել նաև պահպանելու կայսրությունն արտաքին ճնշումներից և ներքին ընդվզումներից, համախմբելու կայսրության բոլոր ժողովուրդներին կենտրոնական իշխանության՝ «Օսմանյան թագի» շուրջ՝ ապահովելով դրա անխախտելիությունը: «Լամարջազիա»-ի հենց այս հիմնադրույթներից էր բխում կուսակցության ծրագիրը, որը կազմված էր հետևյալ կետերից:

- Օսմանյան պետությունը սահմանադրական պետություն է՝ խորհրդարանական կառավարման ձևով: Նրա ամեն մի վիլայեթը սուլթանության անբաժան մասն է և ցանկացած պարագայում ինքնակամորեն չի կարող անջատ-

¹ G. Haddad, Fifty Years of Modern Syria and Lebanon. Beyrouth, 1950, p. 43.

վել: Սակայն յուրաքանչյուր վիլայեթի տեղական վարչությունը պետք է կազմվի ապակենտրոնացման հիման վրա:

- Սուլթանին իրավունք է վերապահվում վիլայեթներում նշանակելու նահանգապետերին (վալի) և գլխավոր դատավորներին (կադի):
- Ապակենտրոնացման կուսակցությունն իր առջև դրված նպատակների իրագործման համար օգտագործելու է միայն օրինական միջոցներ:
- Յուրաքանչյուր վիլայեթի կենտրոնում պետք է ստեղծվեն գլխավոր խորհուրդ, վարչական խորհուրդ, կրթական խորհուրդ, վաքֆերի խորհուրդ:
- Գլխավոր խորհրդի՝ իր իրավասությունների սահմաններում ընդունած որոշումներն ստանում են օրենքի ուժ:
- Գերագույն օրենսդիր մարմինը դառնում է գլխավոր խորհուրդը, որը հսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ և հաստատում է վիլայեթի բյուջեն: Գլխավոր խորհրդի տնօրինությանն է անցնում հասարակական կարգի պահպանման, լուսավորության, վաքֆերի, հասարակական աշխատանքների և վարչական մարմինների գործունեությունը: Միայն այն խնդիրները, որոնք ունեն ռազմական կամ արտաքին քաղաքական նշանակություն, պետք է համաձայնեցվեն կենտրոնական կառավարության հետ:
- Վիլայեթների վարչական խորհրդին է վերապահվում վիլայեթի բյուջեն կազմելու և իր պաշտոնյաներին ընտրելու իրավունքը:
- Վիլայեթների կրթական խորհրդի իրավասություններից է կրթական հաստատությունների ուսուցման ծրագրի առաջարկումը, դրանց վրա վերահսկողության սահմանումը:
- Կրթական խորհրդի իրավասությունն է նաև կրթության համար հատուկ բյուջեի ներկայացումը: Հատուկ բյուջեն հաստատվում է երկու նստաշրջանը մեկ՝ վիլայեթի վաքֆերի խորհրդի կողմից:

- Ինքնավար մարմինների բոլոր անդամները, բացի վարչական խորհրդից, պետք է ընտրվեն համընդհանուր ընտրությունների միջոցով: Վարչական խորհուրդն ընտրվում է կիսով չափ, մյուս կեսը համալրվում է տեղական հաստատությունների ղեկավարներով:
- Տեղական մարմինների ընտրությունները և խորհրդարանական ընտրությունները պետք է անցկացվեն առանց վարչական ապարատի միջամտության:
- Այն երկրները և շրջանները, որոնք չէին ենթարկվում համապետական օրենքներին, պահպանում են տեղի գործող վարչակարգը:
- Յուրաքանչյուր վիլայեթ պետք է ունենա երկու պետական լեզու՝ թուրքերենը և տեղի քնակիչների լեզուն:
- Ուսուցումը վիլայեթներում պետք է անցկացվի տեղի ազգաբնակչության լեզվով:
- Յուրաքանչյուր վիլայեթում խաղաղ ժամանակ պետք է կիրառվի գինվորական ծառայության տեղական սկզբունքը՝ իր տարածքները պաշտպանելու համար. միայն պատերազմական դրության ժամանակ այն կարող է խախտվել: Գլխավոր խորհուրդը պետք է միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու վիլայեթների պաշտպանությունը¹:

«Լամարջազիա»-ն իր շուրջը համախմբեց արաբական վիլայեթների ապակենտրոնացման կողմնակիցներին, սակայն մյուս հիմնական խնդիրների նկատմամբ կուսակցության անդամների մոտեցումները տարբեր էին: Այս կուսակցության մեջ ևս տարակարծությունների տեղիք տվող հիմնական հարցը տեղությունների ազդեցության ուժեղացման նկատմամբ վերաբերմունքն ու դրա գնահատականն էր, ինչը գրեթե միշտ առկա էր արաբական ազգային կազմակերպություններում և, անշուշտ, ուներ իր պատճառները:

Կուսակցության մեջ ներգրավվեցին հասարակական փոփոխությունների ակտիվ կողմնակիցներ Ռաշիդ քեյ ալ-Ազմը, Մուհամմադ Ռաշիդ Ռիդան, արաբ ազդեցիկ վերնախավի ներկայացուցիչ Տալիբ փաշա ալ-Նաջիբը, իսկ ավելի ուշ՝ նաև «երի-

¹ Մեջբերումն ըստ՝ انكتور توفيق برك، نշط. աշխ., էջ 358-359:

տասարդ Արաբիայի» անդամներ Արդ ալ-Ղանի ալ-Ուրեյսին և Աունի Արդ ալ-Հադին¹:

Կուսակցության հիմնադրումից ընդամենը կես տարի անց արաբական վիլայեթների տարբեր քաղաքներում Համայում, Հոմսում, Երուսաղեմում, Մոսուլում, Բաղդադում և Բասրայում, ստեղծվեցին նրա մասնաճյուղերը: Բացի այդ, «Լամարքա-զիա»-ն կապեր էր հաստատել Բասրայի, Բեյրութի, Դամասկոսի և Հալեպի Բարեփոխումների կոմիտեների, ինչպես նաև Կ.Պոլսի «Գրական ակումբի» հետ: Կուսակցության գաղափարներն իրենց ազդեցությունն ունեցան ոչ միայն վերը հիշված և մյուս կազմակերպությունների ծրագրերի և գործունեության, այլև արաբ ազգային ուժերի հայացքների ու կողմնորոշումների վրա ընդհանրապես²: Կուսակցության ծրագրային դրույթները հետզ-հետե ձեռք բերեցին համաարաբական նշանակություն:

«Ապակենտրոնացման կուսակցություն» առաջին արաբական օրինական քաղաքական կազմակերպությունն էր, որը, գործելով միայն արաբական վիլայեթներում, հետամուտ էր արաբական երկրների լիակատար ապակենտրոնացմանը:

Կուսակցությունը շահեկանորեն տարբերվում էր մինչ այդ գործող կազմակերպություններից ու խմբավորումներից իր կառուցվածքով և ղեկավար մարմինների պարտականությունների հստակ սահմանազատմամբ: Նրա գլխավոր մարմինը 20 հոգուց բաղկացած կոմիտեն էր, որը գտնվում էր Կահիրեում: Գործադիր կոմիտեն պատասխանատու էր կենտրոնական կոմիտեի որոշումների համար և ղեկավարում էր կուսակցության առօրյա գործունեությունը³:

Բավական կարճ ժամանակամիջոցում կուսակցությունը ձեռք բերեց արաբ ազգային լայն շրջանների համակրանքը: «Լամարքազիա»-ի քաղաքական վարկանիշն այնքան բարձր էր, որ նրան վստահվեց ղեկավարել 1913 թ. Փարիզում գումարված Արաբական կոնգրեսը:

«Ապակենտրոնացման կուսակցություն» իր հիմնադրման

¹ الذکور توفیق برو، Եշվ. աշխ., էջ 439:

² S. Fisher, W. Ochsenwald, Եշվ. աշխ., էջ 328:

³ Ն. Հուլիանենիսյան, Եշվ. աշխ., էջ 484:

սկզբնական շրջանում պահպանում էր լոյալությունը իթթիլաֆական կառավարությանը, սակայն հունվարի 23-ի երիտթուրքական հեղաշրջումից՝ հետո նրա հարաբերությունները կառավարության հետ կտրուկ սրվեցին: Այս պայմաններում կուսակցության ղեկավարներն սկսեցին դիմել գործունեության այլ ճևերի, ինչպես՝ արգելված քարոզչական գրականության տարածումը, առանց կառավարության թույլտվության տարբեր վայրերում կուսակցության մասնաճյուղերի բացումը և այլն: Նրա միջոցով էին գործում արաբական գաղտնի կազմակերպությունները, ինչպիսին էր, օրինակ, «Երիտասարդ Արաբիան»: Իթթիլաֆական, նաև նրան փոխարինելու նվաճ իթթիհադական կառավարության հետ հարաբերությունների նման լարվածության, ինչպես և նախապատերազմյան տարիներին արաբ-թուրքական հարաբերությունների աննախադեպ վատթարացման պայմաններում կուսակցությունը մեծացրեց ակտիվությունն արաբական վիլայեթներում՝ իր անդամների թիվը հասցնելով 10 հազարի², և աստիճանաբար ավելի հակվեց գործունեության արմատական միջոցների:

Բարեկիոխումների շարժումը արաբական վիլայեթներում

Բալկանյան պատերազմի սկիզբը և կայսրության համար դրա չափազանց անբարենպաստ ընթացքը, ինչպես նաև արաբական վիլայեթներն արտաքին ճնշումից պաշտպանելու կայսրության անկարողությունը խարխլել էին նրա հանդեպ արաբների վստահությունը: Ստեղծված պայմաններում սաստկացան արաբական վիլայեթներում բարեկիոխումների և ապակենտրոնացման պահանջները: Միաժամանակ, իրադրությանը համապատասխան, որոշակիորեն աշխուժացավ նաև օտարերկրյա միջամտության կողմնակիցների գործունեությունը³, ինչի հնարա-

¹ 1913 թ. հունվարի 23-ին էնվեր փաշայի և Թալեբաթ փաշայի գլխավորությամբ իրականացված հեղաշրջման հետևանքով իշխանությունը կրկին անցավ «Իթթիհադ վեթթաքքի» կուսակցությանը:

² E. Jung, Les coulisses de l'histoire la revolte arabe. De 1906 a la revolte de 1916, Paris, 1924-25, p. 32.

³ Օտարերկրյա հյուպատոսները գերազնահատում էին սիրիացի որոշ գործիչների ձգտումը եվրոպական տերությունների միջամտությանը Սիրիայում: Sb'u H. Kayall, Arabs and Young Turks, Եշվ. աշխ., էջ 127:

վոր հետևանքները դժվար չէր կանխատեսել: 1912 թ. դեկտեմբերի սկզբներին Բեյրութի նահանգապետ էրիեմ բեյը Կ.Պոլիս ուղարկած իր նամակում գրում էր. «Երկրում պայքարում են տարբեր ուժեր. բնակչության մեծ մասն իր հայացքն ուղղում է դեպի Ֆրանսիա և Անգլիա՝ դուրս գալու համար այն ծանր վիճակից, որի մեջ հայտնվել է: Եթե կառավարությունը բարեփոխումներ չիրականացնի, ապա մենք կկորցնենք երկիրը»¹:

Ուշագրավ է, որ նույն ժամանակ մի շարք արաբ դեկավարներ վերականգնեցին արաբական խալիֆայության գաղափարը՝ որպես արաբների վաղեմի ցանկություններն իրականացնելու միակ միջոց: Խալիֆի հավանական թեկնածու էր առաջադրվում Եգիպտոսի խեղիվը²:

Իթթիլաֆական կառավարությունը տազնապած էր արաբական վիլայեթների ներքին վիճակի վատթարացման պատճառով: Դեկտեմբերի 25-ին մեծ վեզիր Քամիլ փաշան հրահանգ տվեց էրիեմ բեյին՝ աջակցել տեղի արաբ առաջադիմական գործիչներին՝ կազմելու բարեփոխումների ծրագիրը: Դեկտեմբերի վերջին Բեյրութի նահանգապետը կառավարությանը ներկայացրած իր զեկուցագրում հայտնում էր, որ բարեփոխումների անցկացման կառավարական հրովարտակը տեղի ազգայնականների կողմից ընդունվել էր մեծ խանդավառությամբ: Էրիեմ բեյը տեղեկացնում էր նաև, որ եթե դեռևս մեկ ամիս առաջ հասարակական կարծիքի մեջ գերակայում էր երկու կողմնորոշում՝ մի կողմից՝ հակումը դեպի օտար տերությունները, և մյուս կողմից՝ դեպի օսմանիզմը, ապա շնորհիվ արաբական վիլայեթներում բարեփոխություններ անցկացնելու կառավարության հոժարակամության՝ իրադրությունը հիմնովին փոխվեց, և այժմ արդեն այդ երկու ուղղությունների հետևորդներին միավորել է լոյալությունը կայսրության նկատմամբ³:

Կենտրոնական իշխանությունը թույլատրեց նաև տեղի արաբ ազգայնականների մասնակցությունը բարեփոխումների ծրագրերի մշակմանը: Դրանից անմիջապես օգտվեցին Բեյրու-

¹ انكتور شوقي برو، بۇل. աշխ., էջ 444:

² H. Kayali, Arabs and Young Turks, بۇل. աշխ., էջ 128:

³ Նույն տեղում:

թի ապակենտրոնացման կողմնակիցները՝ հիմնադրելով Բեյրութի քարեփոխումների կոմիտեն, որի անդամներն ունեին տարբեր քաղաքական կողմնորոշումներ¹:

1913 թ. հունվարի 1-ին ներքին գործերի նախարարի հանձնարարությամբ Սիրիայում ևս աշխատանքներ սկսվեցին տեղի Բարեփոխումների կոմիտեների հիմնադրման ուղղությամբ²: Սակայն իրթիհադամետ վերնախավի և իրթիաֆական գործիչների միջև առկա հակասությունների ու անհամաձայնության պատճառով, ինչը միանգամայն բացառում էր փոխզիջման հնարավորությունը, որոշվեց հիմնադրել երկու Բարեփոխումների կոմիտե՝ իրենց առանձին ծրագրերով³:

Բարեփոխումների կոմիտեներ ստեղծվեցին նաև Հալեպում (1913 թ. հունվարի 20-ին) և Բասրայում (1913 թ. փետրվարի 28-ին)⁴:

Բարեփոխումների կոմիտեների գործունեությունը հիմնականում ծավալվեց արդեն 1913 թ. հունվարի 23-ի հեղաշրջումից հետո: Նույնիսկ Բեյրութի կոմիտեն, որն ստեղծվել էր ամենաառաջինը, իր ծրագիրը ներկայացրեց միայն հունվարի 31-ին: Ավելի ուշ իրենց ծրագրերը ներկայացրին նաև Դամասկոսի, Հալեպի և Բասրայի կոմիտեները: Այս կոմիտեների ծրագրերը հիմնականում չէին տարբերվում միմյանցից և մեծ մասամբ կրկնօրինակում էին Բեյրութի կոմիտեի ծրագրի հիմնադրույթները, քանի որ այն առավել լիակատար ու համապարփակ ներկայացնում էր ապակենտրոնացման արաբ կողմնակիցների հիմնական պահանջները: Ծրագրում ընդգրկված էին հետևյալ կետերը.

1. Արաբերենը ճանաչել որպես նահանգի պաշտոնական

¹ Կոմիտեի անդամների թվի մասին առկա են տարբեր տվյալներ: Ըստ Լ. Կուշլուլիի՝ այն 25 էր, տե՛ս Լ. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 280, իսկ ըստ Զ. Մառոնիուսի՝ մինչև 86, Զ. Antonius, նշվ. աշխ., էջ 112:

² H. Kayali, Arabs and Young Turks, նշվ. աշխ., էջ 129:

³ النكتور توفيق برو, նշվ. աշխ., էջ 458:

⁴ Լ. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 281-282:

լեզու քոլոր գրասենյակներում և դատարաններում՝ թուրքերենը թողնելով որպես պաշտոնական լեզու Կ.Պոլսի հետ գրագրության համար:

Բեյրութի նահանգային խորհրդի ներկայացրած ծրագրի նախագծում պահանջվում էր, որ արաբերենն ընդունվի նաև խորհրդարանում և սենատում:

2. Որպես հաջորդ քայլ՝ Սիրիայում պետք է նշանակվեն միայն արաբերենին տիրապետող պաշտոնյաներ:

3. Քաղաքացիական և դատական պաշտոնյաներին, ինչպես նաև ժանդարմերիայի սպաներին նշանակելիս պետք է հաշվի առնվի տեղական իշխանությունների կարծիքը:

4. Երուսաղեմում, Դամասկոսում, Բեյրութում, Հալեպում և այլ նահանգներում արձակված դատավճիռները քննելու համար պետք է ստեղծվի վճռաքեկ գերագույն ատյան: Ներկայումս վճռի քեկանման հետ կապված քոլոր հարցերը քննվում են Կոստանդնուպոլսում:

5. Խաղաղ ժամանակ զինվորական ծառայությունը պետք է լինի տարածքային:

6. Նահանգային եկամուտները պետք է բաժանվեն երկու կարգի.

- Մաքսատների և փոստ-հեռագրական եկամուտներն ու զինվորական տուրքերը պետք է դրվեն կենտրոնական կառավարության տրամադրության տակ:

- Մնացած քոլոր հասույթները պետք է դրվեն տեղական կառավարության տրամադրության տակ՝ հոգալու համար նահանգի կարիքները:

7. Պետք է ստեղծվեն միլայեթների խորհուրդներ: Դրանք պետք է ունենան վարչական և որոշ չափով նաև օրենսդրական լայն իրավունքներ: Բացի կենտրոնական կառավարության իրավասության տակ թողնվող ընդհանուր քաղաքականության ու ազգային պաշտպանության հարցերից, քոլոր հարցերը կդրվեն նրանց իրավասության տակ:

8. Ժանդարմերիան, ոստիկանությունը, արդարադատությունը և ֆինանսները վերակազմելու համար կնշանակվեն օտարերկրացի խորհրդականներ: Նրանք պետք է նշանակվեն

15 տարով և ընտրվեն տեղական սովորությունները և արաբներն կամ թուրքերին իմացող եվրոպացի մասնագետներից¹:

Հարկ է նշել, որ հիմնական խնդիրներին նույնանման մոտեցմամբ հանդերձ՝ որոշ հարցերի նկատմամբ կոմիտեների դիրքորոշումը միանգամայն տարբեր էր, ինչը պայմանավորված էր մի շարք գործոններով:

Դամասկոսի կոմիտեն, օրինակ, դատելով նրա գործունեությունից, առանձնապես հակված չէր կատարյալ ինքնուրույնության և կենտրոնական իշխանության հետ կապերը թուլացնելուն: Մինչդեռ Բեյրութի կոմիտեն հստակ սահմանազատում էր դնում նահանգային և կենտրոնական իշխանությունների արտոնությունների միջև և փորձում էր հարաբերությունները կարգավորել այնպես, որ խորհուրդներն ունենային ավելի մեծ լիազորություններ²:

Ինչ վերաբերում է Բասրայի կոմիտեի բարեփոխումների ծրագրին, ապա այնտեղ վառ կերպով արտահայտված էր օտար պետությունների հանդեպ քաջասական վերաբերմունքը: Մասնավորապես ծրագիրը քաջատում էր օտարերկրացիներին կոնցեսիաների տրամադրումը և նրանց ներկայությունը նահանգային կառավարման մարմիններում: Այն միաժամանակ առաջնություն էր տալիս շարիաթի դատարաններին, որոնց ընդունած բոլոր վճիռները պետք է հնարավորինս համապատասխանեին շարիաթի օրենքներին³:

Բարեփոխումների կոմիտեները իթթիլաֆական կառավարության կողմից դիտվում էին որպես կենտրոնական իշխանության խորհրդատվական մարմին, որի հիմնական նպատակը

¹ Մեջբերումը ըստ՝ Հ. Սարգսյան, Հ. Թովալյան, Ադարական մի շարք վաստաթղթեր արաբ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI, Երևան, 1974, էջ 220:

² H. Kayali, Arabs and Young Turks, նշվ. աշխ., էջ 130:

³ Մանրամասն տե՛ս بروتيفيق بيو، الكتور توفيق بيو، նշվ. աշխ., էջ 501-502, M. Haddad, Iraq, Before World War I. A Case of Anti-European Arab Ottomanism / The Origins of Arab Nationalism, New York, 1991, p. 137-138. МИД Императорское Россійское консульство в Баасоре, 16-го августа 1913 года.. Տե՛ս Ավադեմիկոս Ա. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. V, համար 432 («ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ»):

կողմնակիցների հույսերը վերջնականապես խորտակվեցին, երբ 1913 թ. մարտի 26-ին իշխանությունները հրապարակեցին «Վիլայեթների մասին» օրենքը: Նոր օրենքն իրականում վերացրեց տեղական ընտրովի մարմինների անհրաժեշտությունը: Բացի այն պաշտոնյաներից, ովքեր նշված էին Բեյրութի կոմիտեի ծրագրում, կենտրոնական իշխանությանն իրավունք էր վերապահվում նաև նշանակել մուֆասարիֆներին (սանջակի կառավարիչ), քայմաքամներին (գավառապետ), պետական դպրոցների տնօրեններին, ուսուցիչներին, բժիշկներին, ինժեներներին և մի շարք այլ պաշտոնյաների ու մասնագետներին: Վային իրավունք էր ստանում, ըստ իր ցանկության, ցրել գլխավոր խորհուրդը: «Վիլայեթների մասին» օրենքը նվազեցրեց նաև արաբերենի կիրառման պահանջները: Համաձայն օրենքի՝ սանջակների կենտրոններում գործող պետական իբթիդաիե¹, ուլւղիե² և իդաղիե³ դպրոցները հինգ տարվա ընթացքում պետք է անցնեին արաբերենով ուսուցման, սակայն միաժամանակ պահպանվում էր թուրքերենի պարտադիր ուսուցումը: Աշխարհայացքային գլխավոր առարկաները պետք է դասավանդվեին թուրքերենով: Ինչ վերաբերում է սանավիե (միջնակարգ) դպրոցներին, ապա այստեղ բոլոր առարկաների ուսուցումն իրականացվելու էր միայն թուրքերենով: Շարավոր էր համարվում նաև արաբերենի օգտագործումը պետական հաստատություններում, սակայն լեզվին վերաբերող թերևս ամենահիմնական պահանջը՝ արաբական վիլայեթներում արաբերենը պետական լեզու ճանաչելու հարցը, չրջանցվեց⁴:

«Վիլայեթների մասին» օրենքը հանդիպեց արաբ ազգային գործիչների գերակշիռ մեծամասնության ընդդիմությանը, ինչն ավելի սրեց առկա հակասությունները: Իթթիհադական կառավարությունը, որն արդեն ամրապնդել էր իր իշխանությունը, դի-

¹ Նախակրթական:

² Մուսուլմանների կամ ոչ մուսուլմանների առանձին ուսուցման դպրոց:

³ Ուլւղիեի շրջանավարտներ մուսուլմանների և ոչ մուսուլմանների երեխաների համատեղ ուսուցման դպրոց:

⁴ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 289-290:

մեջ վճռական քայլերի՝ կասեցնելու բարեփոխումներին ուղղված շարժումը:

Դամասկոսում իթթիհադականներին հաջողվեց հմտորեն օգտագործելով օտարերկրյա խորհրդականների հրավիրման խնդրի շուրջ տեղի ազգային ուժերի տարածայնությունները՝ մեղադրել նրանց անգլամետ և ֆրանսամետ կողմնորոշման մեջ, պատակտել վերջիններիս և կասեցնել միասնական գործողությունների հնարավորությունը:

Ի տարբերություն Դամասկոսի՝ Բեյրութում կառավարությունը հանդիպեց քավական ուժեղ ընդդիմության: Այստեղ իրադրությունը պայթյունավտանգ դարձավ, երբ Աբու Բեքր Հազիմ բեյը ապրիլի 8-ին հրապարակեց որոշում, որտեղ մասնավորապես ասվում էր, որ Բարեփոխումների կոմիտեի ստեղծումը հակասում է կազմակերպությունների մասին օրենքին, և որ «Վիլայեթների մասին» օրենքի ընդունումից հետո դրանց գործունեությունը կորցնում է իմաստը և դառնում անօրինական¹: Այս հայտարարությանը հաջորդեցին բազմահազարանոց բողոքի ցույցեր և գործադուլներ: Ապրիլի 12-ին հրապարակած կոչի մեջ կոմիտեն անհամաձայնություն էր հայտնում իր փակման մասին նահանգապետի որոշմանը: Ի պաշտպանություն Բարենորոգումների կոմիտեի՝ կառավարության գործողությունների դեմ հանդես եկավ նաև «Ապակենտրոնացման կուսակցությունը», որը պահանջում էր պաշտոնանկ անել նահանգապետին և չեղյալ համարել նրա որոշումը²:

Վախենալով իրադրության հետագա վատթարացումից՝ իշխանությունները ձերբակալեցին կոմիտեի մի շարք ակտիվ անդամների և գործադուլավորներին: Բացի դրանից, Բեյրութի իրադարձություններին միջամտած մեծ վեզիր Մահմուդ Շևքեթ փաշան, պաշտպանելով նահանգապետի գործողությունները, սպառնաց, որ անհնազանդների նկատմամբ անհապաղ կկիրառվեն պատերազմական դրության օրենքները³:

¹ الدكتور توفيق بروتو، *لغز*، աշխ., էջ 479:

² *Նույն տեղում*, էջ 473:

³ H. Kayali, *Greater Syria under Ottoman Constitutional Rule: Ottomanism, Arabism, Regionalism* / Th. Philipp, *The Syrian Land in the 18 th and 19 th*

Նման ճնշման ներքո Բեյրութի ազգային ուժերն ստիպված եղան նահանջել և դադարեցնել ցույցերը:

Իթթիհադական կառավարության նոր քաղաքականությունը և հատկապես «Վիլայեթների մասին» օրենքը շատ ավելի մեծ դժկամությամբ ընդունվեց Իրաքի վիլայեթում: Տալիբ փաշա ալ-Նաքիբը Կ.Պոլիս ուղարկած հեռագրում իր վրդովմունքն էր հայտնում նոր օրենքի և կոմիտեների ցրման կապակցությամբ¹: Ողջ Բասրայում մի քանի ամիս շարունակ տեղի էին ունենում քողոքի քազմամարդ ցույցեր և հանրահավաքներ²:

Բասրայում դրությունն այնքան էր սրվել, որ կառավարությունը, սպառելով Տալիբ փաշայի վրա ազդելու բոլոր միջոցները, տեղի կայազորի հրամանատարին կարգադրեց ձերբակալել և հաշվեհարդար տեսնել Բասրայի քողոքարարների առաջնորդի հետ: Սակայն տեղեկանալով իր վրա մահափորձի կազմակերպման մասին՝ Տալիբ փաշայի կողմնակիցներն առաջինը ձեռնարկեցին գործնական քայլեր՝ սպանելով Բասրա վերադարձող թուրքական կայազորի հրամանատար Ֆարիդ բեյին³:

Այսպիսով, երիտթուրքերի իշխանության վերահաստատումից հետո կառավարությունն իր բոլոր միջոցները ներդրեց Բարեփոխումների կոմիտեները ցրելու համար: «Վիլայեթների մասին» օրենքի ընդունումից հետո փաստորեն կոմիտեները դադարեցրին իրենց օրինական գործունեությունը:

Բարեփոխումների կոմիտեներին այդպես էլ չհաջողվեց իրականացնել իրենց ծրագրային պահանջները, սակայն դրանց գործունեությունը մեծապես ազդեց արաբական ազգային շարժման վրա: Կոմիտեների առաջ քաշած գաղափարները նախադրյալ հանդիսացան հայրենասիրական ուժերի միավորման համար և դարձան ապակենտրոնացման կողմնակիցների հետագա գործունեության հիմքը:

Century. The Common and the Specific in the Historical Experiens, Shtutgard, 1991, p. 31.

¹ S. Longrigg, Iraq, 1900 to 1950. A Political, Social and Economic History. Oxford, 1953, p. 46.

² A. Macfie, The end of the Ottoman Empire 1908-1923. London, 1998, p. 96.

³ Նույն տեղում:

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1913 թ. հունիսի 18-23-ը Փարիզում կայացավ Առաջին արաբական կոնգրեսը, որը ոչ միայն կարևոր իրադարձություն էր Օսմանյան կայսրությունում և նրա սահմաններից դուրս գործող արաբական քաղաքական ուժերի համախմբման գործում, այլև, իրավամբ, արաբական ազգային շարժման որակապես նոր փուլ:

Կոնգրեսի հրավիրման անհրաժեշտությունն անմիջակա-նորեն պայմանավորված էր իթթիհադական կառավարության՝ Օսմանյան կայսրությունում թուրքական տարրի գերակայության ապահովման և կայսրության մյուս ազգությունների թուրքացման հետևողական և անթաքույց քաղաքականության սաստկացմամբ, ինչն էլ ավելի բորբոքեց արաբների ազգային զգացումները և մղեց նրանց ազգային նպատակների իրականացման համար պայքարի չնայած խաղաղ, սակայն առավել վճռական և արդյունավետ ձևերի: Հատկանշական է, որ հենց այս շրջանում ակնհայտ դարձավ արաբական շարժման մասնակից տարբեր ուժերի միավորման և համատեղ գործելու ձգտումը, ինչպես և հավասարապես արաբական հարցի հրապարակայնացումն ու նրա լուծման գործում Արևմուտքի աջակցությանն ապավինելու անհրաժեշտությունը:

1911-1912 թթ. թուրք-խտալաական և 1912-1913 թթ. Բալկանյան առաջին պատերազմներից հետո կայսրությունում ստեղծված ներքաղաքական իրադրության պայմաններում արաբ ազգային գործիչները հույս ունեին իթթիհադական ղեկավարներին ավելի ոյությունամբ ճանաչել տալու և նրանց կողմից ընդունելի դարձնելու արաբական վիլայեթների վարչական ապակենտրոնացման պահանջը: Այդ նպատակով նրանք առանց հապաղելու ձեռնամուխ եղան արաբական ազգային համաժողովի կազմակերպման աշխատանքներին, որի հրավիրման գաղափարն անմիջապես ներշնչված էր «Երիտասարդ

Արաբիա» կազմակերպության անդամների կողմից¹: Արդեն 1913 թ. մարտին ստեղծվեց հատուկ նախապատրաստական կոմիտե, որի նախագահ ընտրվեց երիտարաբ Աբդ ալ-Ղանի ալ-Ուբեյսին²: Հարկ է նշել, սակայն, որ չնայած որոշակի նկատառումներով կոմիտեի կողմից կոնգրեսի հրավիրման համակարգող առաջադրվեց արաբ ազգային առավել փորձված և հեղինակավոր քաղաքական կազմակերպությունը՝ «Վարչական ապակենտրոնացման օսմանյան կոաակցությունը»³, սակայն գործնականում կազմակերպչական, այնուհետև նաև կոնգրեսի աշխատանքների ընթացքում երիտարաբների ակտիվությունը որևէ չափով չնվազեց:

Կոնգրեսի հրավիրման գաղափարը ըննարկվեց Փարիզի սիրիական համայնքում: Արդեն ապրիլի 16-ին ոստիկանությունը Քե դ'Օրսեյի դեպարտամենտ⁴ ուղարկեց Փարիզի «Գլոբ» սրճարանում (Ստրասբուրգի բուվար, 12) կազմակերպված հավաքի մասին կարևոր տեղեկատվություն պարունակող հաղորդագրություն. «Փարիզում բնակվող մի խումբ սիրիացի արաբներ՝ ծագումով օսմանցի, հավաքվել են երեկոյթի սույն ամսի 16-ին «Գլոբ» սրճարանում:

Այս հավաքը նպատակ ունի նախապատրաստել մի կոնգրես, որը տեղի է ունենալու Փարիզում, և որի ընթացքում ըննարկվելու է սիրիական հարցը, մասնավորապես դրան վերաբերող երկու սկզբունքային կետ.

1. Թուրքիայից Սիրիայի համար վարչական ինքնավարության պահանջ:

2. Մերժվելու դեպքում Ֆրանսիայի պրոտեկտորատի խնդրանք»⁵:

¹ G. Haddad, նշվ. աշխ., էջ 43:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 296:

³ Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 487:

⁴ Le Quai d'Orsay - Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության ոչ պաշտոնական անվանումը:

⁵ Archives Affaires Etrangeres. Turquie. Dossier general. Syrie/Liban., vol., XVII, (1913), p. 236. / J. Haffar, նշվ. աշխ., էջ 960-961:

Ապրիլի կեսերին կոնգրեսի կազմակերպիչները կոչ հղեցին աշխարհի բոլոր արաբներին, որտեղ հիմնավորում էին համաարաբական կոնգրեսի հրավիրման անհրաժեշտությունը և ներկայացնում էին նրա նպատակները, այն է՝ ցույց տալ արաբների սոցիալական և քաղաքական համերաշխությունն ու նրանց շարժման հզորությունը, հաստատել ապակենտրոնացման հիմքի վրա արաբների ազգային իրավունքների ու պետական բոլոր գործերին նրանց մասնակցությունն ապահովելու պահանջի արդարացիությունը և միաժամանակ վստահեցնել Թուրքիային, որ միայն այդ պահանջների իրականացումը թույլ կտա արաբներին միավորվել կայսրության մյուս ազգությունների հետ: Կոչի հեղինակներն ակնարկում էին, որ կոնգրեսը մեծապես կնպաստի համաաշխարհային հասարակությանը կայսրության արաբ մեծամասնության ազգային պահանջներին հասու դարձնելուն, Եվրոպայի աջակցության ձեռքբերմանը և արաբական հարցի լուծմանն ընդհանրապես¹:

Վերը հիշված նպատակներից ելնելով՝ կոնգրեսի քննարկմանն էին ներկայացվում հետևյալ առաջնահերթ և հրատապ խնդիրները.

1. Ազգային հարց. օկուպացիան² կասեցնելու միջոցները:

2. Արաբների իրավունքներն Օսմանյան կայսրությունում:

3. Ապակենտրոնացման հիմքի վրա բարեփոխումների անհրաժեշտությունը:

4. Սիրիական արտագաղթը³:

Ավելորդ չէ նշել, որ հենց այս հարցերն էլ դարձան կոնգրեսի աշխատանքային ծրագրի հիմնական կետերը:

Կոնգրեսի կազմակերպիչների համար առանձնակի կարևորություն էր ներկայացնում նաև կոնգրեսի հրավիրման վայրի ընտրությունը: Մերժելով արաբական տարբեր կազմակերպությունների առաջարկները՝ նրանք կարողացան պնդել կոնգ-

¹ D. Thomas, *The First Arab Congress and the Committee of Union and Progress 1913-1914* / D. Little, *Essays on Islamic Civilization*, Leiden, 1976, p. 319.

² Խոսքը վերաբերում է եվրոպական տերությունների կողմից կայսրության արաբական վիլայեթներն օկուպացնելու հավանականությանը:

³ D. Thomas, նշվ. աշխ., էջ 318:

րեսը Փարիզում անցկացնելու իրենց որոշման վրա, ինչը միանգամայն համապատասխանում էր նրանց քաղաքական կողմնորոշումներին և կոնգրեսը Ֆրանսիայի հովանու ներքո անցկացնելու ձգտմանը: Փարիզի սիրիական ընդարձակ համայնքի շահագրգիռ և գործունյա անդամների, «Երիտասարդ Արաբիայի» և մասնավորապես «Լիբանանյան վերածնունդ» ընկերության փարիզյան մասնաճյուղի նախագահ Շուքրի Ղանեմի տևական ու համառ ջանքերի շնորհիվ ի վերջո հաջողվեց ձեռք բերել այդ հարցում Ֆրանսիայի իշխանությունների համաձայնությունը և համապատասխան մարմինների թույլտվությունը¹:

Արաբական կոնգրեսը հրավիրելու գաղափարը լայն արձագանք գտավ Օսմանյան կայսրությունում և նրա սահմաններից դուրս գործող արաբ ազգային շրջաններում: Արաբական ազգային կազմակերպությունների գերակշիռ մասը և առանձին գործիչներ պատրաստակամություն հայտնեցին քոլոր միջոցներով նպաստել կոնգրեսի կազմակերպմանն ու նրա աշխատանքներին:

Պետք է նշել, սակայն, որ կային նաև այնպիսի արաբ գործիչներ, որոնք դեմ էին կոնգրեսի հրավիրմանը՝ պատճառաբանելով, որ այն կարող է առիթ դառնալ օսմանյան կառավարության կողմից պատժամիջոցների կիրառման:

1913 թ. մայիսի 31-ին կոնգրեսի պատգամավորներն սկսեցին ժամանել Փարիզ: Պաշտոնապես հավատարմագրված պատգամավորները 24-ն էին, սակայն անհամեմատ մեծ էր նրանց թիվը (որոշ տվյալներով՝ մոտ 200)², ովքեր պատրաստվում էին իրենց ոչ պաշտոնական, սակայն ակտիվ մասնակցությունը բերել կոնգրեսի նիստերին:

Համատեղ ընդունած որոշմամբ կոնգրեսի նախագահ ընտրվեց արաբական շարժման ճանաչված գործիչ Աբդ ալ-Համիդ ալ-Ջահրավին, իսկ փոխնախագահ՝ Շուքրի Ղանեմը:

Կոնգրեսն իր աշխատանքն սկսեց հունիսի 18-ին: Բացման խոսքով հանդես եկավ ալ-Ջահրավին: Համաձայն նախնական

¹ Ա. Գասպարյան, Առաջին արաբական կոնգրեսը, «Կանթեղ», 2 (27), Երևան, 2006, էջ 143:

² G. Haddad, նշվ. աշխ., էջ 44:

պայմանավորվածության՝ նա բարեփոխումների և հատկապես ապակենտրոնացման պահանջը ներկայացրեց որպես զուտ կայսրության հզորացմանն ու բարգավաճմանը նպատակաուղղված նախաձեռնություն, որի իրականացումը միայն օսմանցիներին լավագույն հնարավորություն կտար օգտվելու «ժամանակակից քաղաքակրթության պտուղներից»¹: Նա հայտնում էր արաբների լիակատար հավատարմությունն Օսմանյան կայսրությանը և միասնական կայսրության սահմաններում համատեղ, իրավահավասար և ներդաշնակ ապրելու արաբների ցանկությունը: Ալ-Ջահրավիին միաժամանակ դիմում էր եվրոպացիներին՝ ապավինելով այդ հարցում նրանց օգնությանն ու աջակցությանը²:

Ալ-Ջահրավիի ելույթը, այսպիսով, ակնհայտորեն ուղղված էր մեղմելու արաբների պահանջների նկատմամբ թուրքերի վերաբերմունքը, նրանց շահագրգռելու և հնարավորինս ընդունելի դարձնելու իրենց առաջարկը: Այն, հավասարապես, նպատակ էր հետապնդում նաև շահելու եվրոպական երկրների համակրանքն ու բարյացակամությունը և նրանց միջամտությամբ դյուրացնելու հարցի լուծումը:

Կոնգրեսի երկրորդ նիստում հատկապես ուշագրավ էր Աբդ ալ-Ղանի ալ-Ուրեյսիի ելույթը, որը տոգորված էր արաբիզմի ոգով և ամբողջովին նվիրված էր արաբների՝ ինքնուրույն ազգ լինելու հանգամանքի ու դրանով իսկ նրանց ազգային իրավունքների և պահանջների օրինականության հաստատմանը: Հանգամանորեն վերլուծելով գերմանացի, իտալացի և ֆրանսիացի գիտնականների ու քաղաքագետների ներկայացրած՝ ազգի քնորոշման միմյանցից տարբերվող, բայց և ընդունված չափանիշները, որոնք իրենց ամբողջության մեջ հանգում էին ուսսայական և լեզվական միասնականությանը, պատմության, ավանդույթների ու սովորույթների, ինչպես նաև քաղաքական ձգտումների ընդհանրությանը, ալ-Ուրեյսին եզրակացնում էր, որ արաբներն ունեն ազգի բոլոր՝ վերը նշված հատկանիշները, և

¹ D. Thomas, նշվ. աշխ., էջ 319:

² Նույն տեղում:

նրանց ազգ ճանաչվելու և իրենց ազգային նպատակներին հետամուտ լինելու իրավունքն անվիճելի է¹:

Այդ նույն հարցին էր առնչվում նաև քրիստոնյա արաբ Նադրա Մուտրանի ելույթը: Նա փորձում էր կտրականապես բացասել քրիստոնյա և մուսուլման արաբների դավանանքային տարբերությունը որպես արաբների միջև լուրջ հակասություններ ծնող, նրանց միմյանցից բաժանող և նրանց միասնականությունը խախտող գործոն ծառայեցնելու որևէ հավանականություն, և զարգացնում էր այն միտքը, որ արաբների համար էականը ոչ թե կրոնական պատկանելիությունն է, այլ նրանց ծագումնաբանական ընդհանրության վրա հիմնված ազգային արժանապատվության զգացումը²:

Այսուհանդերձ, մուսուլման և քրիստոնյա արաբների միջև առկա տարածայնությունների դրսևորումից հնարավոր չեղավ խոսափել: Նրանց տեսակետների ծայրահեղ հակադրությունն իր վառ արտահայտությունը գտավ մասնավորապես արաբական շրջաններ օտարերկրյա ներխուժման հավանականության հարցի քննարկման ժամանակ, ինչը և առիթ տվեց բուռն բանավեճերի ծավալման: Եթե մուսուլման պատգամավորները և հատկապես ալ-Ուրեյսին պնդում էին, որ արաբների պահանջների նպատակը ոչ այնքան իրենց ազգային ձգտումների իրականացումն է, որքան իրականում երկու մեծ ազգերի՝ թուրքերի և արաբների միավորումը՝ օտարերկրյա հնարավոր ներխուժմանը դիմակայելու համար, ապա քրիստոնյա արաբները և մանավանդ իր ֆրանսամետ կողմնորոշմամբ հայտնի Նադրա Մուտրանն իրենց ելույթներում աշխատում էին հավաստիացնել, որ Անգլիան կամ Ֆրանսիան որևէ նվաճողական միտում չունեն՝ հասկանալիորեն չժխտելով նաև արաբական շարժման հանդեպ նրանց համակրանքի մասին տարածված տեսակետը:

Հունիսի 21-ի նիստում հանդես եկավ «ալ-Իթթիհադ ալ-օսմանի» («Օսմանյան միություն») ամսագրի խմբագիր շեյխ Ահ-

¹ Э. Тума, *ibid.*, աշխ., էջ 117:

² E. Dawn, *From Ottomanism to Arabism*, Illinois, 1979, pp. 396-397.

մադ Թաքարան, որի ելույթը վերաբերում էր Սիրիայից արտագաղթի հույժ կարևոր խնդրին: Մտահոգություն հայտնելով օրեցօր ահազնացող արտագաղթի տազնապահարույց փաստի կապակցությամբ՝ նա կոնգրեսի ուշադրությունը հրավիրում էր այդ երևույթի պատճառների և դրա հետևանքները կասեցնելու հնարավորությունների վրա. «Եթե Սիրիան այսօր գրեթե ամայի է,- ասաց նա,- պատճառն այն է, որ օսմանյան կառավարությունը Սիրիայում բավարար չափով չի կատարում այդ հարցերի կարգավորման պարտավորությունները»: Սիրիացիներին Սիրիա վերադարձնելու և այդ նահանգի «նախկին շքեղությունը» վերականգնելու համար Թաքարան անհրաժեշտ էր համարում «Օսմանյան միության» կողմից առաջարկվող լուրջ և խորը բարեփոխումների իրականացումը՝ չմոռանալով այդ պահանջը ներկայացնել որպես արաբների՝ կայսրության բարօրությամբ շահագրգռված լինելու լավագույն ապացույց¹:

Նույն նիստում ելույթ ունեցավ նաև «Վարչական ապակետորոնացման օսմանյան կոաակցության» հայտնի գործիչներից մեկը՝ Իսկանդար բեյ Ամմոնը: Նա կայսրության հետամնացությունն ու ընդհանրապես նրա քոլոր դժբախտությունները բացատրեց կայսրության կառավարման համակարգով և, առաջին հերթին, իրականացվող կենտրոնացման քաղաքականությամբ՝ կայսրությունում ուսսայական, կրոնական, լեզվական և ավանդույթների միասնականության կատարյալ բացակայության պարագայում այն համարելով ուղղակի կործանարար: Զարգացնելով այդ միտքը՝ նա իրավացիորեն եզրակացնում էր, որ բռնի ուժի գործադրմամբ երկրի ներսում ստեղծելով կենտրոնացվածության պատրանջ միայն, իսկ իրականում արտոնություններ տալով մեկ տարրի՝ թուրքերին, կայսրության ղեկավարությունը դրանով իսկ առաջ բերեց մյուս ազգերի, այդ թվում նաև արաբների անհամաձայնությունն ու ընդվզումը: Այդպիսի քաղաքականությունը ոչ միայն պայքարի մղեց կայսրության ազգություններին իրենց իրավունքների ձեռքբերման համար, այլև,

¹ Archives Affaires Etrangeres. Turquie. Dossier general. Syrie/Liban., vol. XIX, (1913), p. 115. / J. Hajjar, նշվ. աշխ., էջ 989:

² Նույն տեղում:

միաժամանակ, սեփական շահերին հետամուտ արևմտյան տերություններին առիթ տվեց օգտվելու ստեղծված իրադրությունից և մխրճվելու կայսրություն: Նա համոզմունք էր հայտնում, որ երկրում իսկական կենտրոնացում ապահովելու, երկիրը հզորացնելու և հետագա բարդություններից խտաափելու միակ երաշխիքն այն է, որ կառավարությունն ի վերջո հրաժարվի իր որդեգրած քաղաքականությունից և ընդառաջ գնա ազգությունների, մասնավորապես կայսրության արաբ մեծամասնության արդարացի պահանջներին¹:

Կոնգրեսի նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել, որ գրեթե քոլոր ելույթներում, ինչպես նաև քննարկումների ու քանակների ընթացքում, որպես կանոն, անընդհատ և համատրոբն շեշտվում են արաբների՝ օսմանցի փնելու հանգամանքը, կայսրությանը նրանց նվիրվածությունը և հատկապես այն, որ արաբական վիլայեթների ապակենտրոնացման և դրա հիման վրա բարեփոխումների պահանջը ոչ միայն միանգամայն համապատասխանում է կայսրության շահերին, այլև դրոված է հենց այդ շահերով:

Հունիսի 21-ին կոնգրեսն ընդունեց որոշում, որտեղ իրենց արտացոլումն էին գտել արաբ ազգայնականների հիմնական նպատակները: Ստորև ներկայացվում է որոշման տեքստն ամբողջությամբ.

1. Օսմանյան կայսրությունում անհրաժեշտ են արմատական և անհետաձգելի բարեփոխումներ:

2. Անհրաժեշտ է ապահովել օսմանցի արաբների քաղաքական իրավունքների իրականացումը՝ արդյունավետ դարձնելով նրանց մասնակցությունը կայսրության կենտրոնական կառավարմանը:

3. Անհրաժեշտ է սիրիական և արաբական յուրաքանչյուր վիլայեթում հիմնել ապակենտրոնացնող վարչություն, որը զբաղվելու է նրանց կարիքներով ու խնդիրներով:

4. Բեյրութի նահանգը 1913 թ. հունվարի 31-ին ներկայացրել էր միաժամանակ ընդունված իր պահանջները՝ հատուկ ծրագրով, որը հիմնվում էր երկու հիմնական սկզբունքի վրա՝ գլխա-

¹ J. Haïjar, նշվ. աշխ., էջ 989-990:

վոր խորհրդի իշխանության ընդարձակում և օսմանյան պետության կողմից օտարերկրյա երկու խորհրդականների՝ որպես այդ պետության պաշտոնյաների նշանակում:

Կոնգրեսը պահանջում է իրականացնել այս երկու պահանջները:

5. Արաբերենը պետք է ճանաչվի օսմանյան խորհրդարանում և ընդունվի որպես պաշտոնական լեզու սիրիական և արաբական երկրներում:

6. Ձինվորական ծառայությունը պետք է անցկացվի տեղում՝ սիրիական և արաբական վիլայեթներում, իսկ դրանցից դուրս՝ միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում:

7. Կոնգրեսը ցանկություն է հայտնում, որ օսմանյան կայսերական կառավարությունը միջոցներ ապահովի Լիբանանի ֆինանսական վիճակը բարելավելու համար:

8. Կոնգրեսն իր համակրանքն է հայտնում օսմանյան հայերի բարեփոխումների պահանջների նկատմամբ:

9. Այս որոշումները կփոխանցվեն Օսմանյան կայսերական կառավարությանը:

10. Այս որոշումների մասին հավասարապես կտեղեկացվեն նաև Օսմանյան կայսրության բարեկամ տերությունները:

11. Կոնգրեսն իր ջերմ շնորհակալությունն է հայտնում հանրապետության կառավարությանը՝ սրտաբաց հյուրընկալության համար:

Որոշման հավելված

1. Մինչև կոնգրեսի ընդունած որոշումների կենսագործումը սիրիացի արաբների Բարեփոխումների կոմիտեների անդամները կիրառարվեն ընդունել որևէ պաշտոն Օսմանյան կայսրությունում՝ բացառությամբ իրենց կոմիտեների հատուկ և հստակ թույլտվության:

2. Այս որոշումները պետք է դառնան օսմանյան սիրիացիների և արաբների քաղաքական ծրագիրը: Խորհրդարանական ընտրություններում պատգամավորության ոչ մի թեկ-

նածու աջակցություն չի գտնի, եթե նախապես չպարտավորվի պաշտպանել այս ծրագիրը և նպաստել դրա իրականացմանը:

3. Կոնգրեսը շնորհակալություն է հայտնում արաբ վտարանդիներին հայրենասիրության և կոնգրեսին ցուցաբերած աջակցության համար ու իր ողջույնն է հղում նրանց՝ իրենց ներկայացուցիչների միջոցով:

Առաջին Արաբական կոնգրեսը մեծ չափով նպաստեց իրենց ուժերի նկատմամբ արաբների վստահության ամրապնդմանը, հաստատեց սեփական իրավունքների ձեռքբերման համար համախմբվելու և համատեղ քաղաքական գործողությունների նրանց պատրաստ և ընդունակ լինելն ու անժխտելիորեն կարևոր դեր խաղաց արաբական ազգային-ազատագրական շարժման ձևավորման և հետագա զարգացման գործում:

Իթթիհադական ղեկավար շրջաններն ակտիվ գործունեություն ծավալեցին՝ բոլոր միջոցներով կասեցնելու կոնգրեսի հրավիրումը: Դեռևս հունիսի 4-ին Քե դ'Օրսեյի դեպարտամենտն ստացավ մի գրություն, որով տեղեկացվում էր, որ նախապատրաստվող կոնգրեսը մտադիր է քննարկել ապակայունացնող ծրագրեր, և որ արձարժվելու է նաև Սիրիայում ֆրանսիական պրոտեկտորատ հաստատելու հարցը: Հայտնվում էր նաև, որ միաժամանակ հրահրվելու են բոլոր անկարգություններ՝ օտարերկրյա ներխուժման արդարացնելու համար:

Սակայն Սիրիական գործերի հանձնաժողովը, ուսումնասիրելով իրադրությունը, գտնում էր, որ ընդունելով հանդերձ այն բոլոր դժվարությունների հավանականությունը, որ կարող է հարուցել սիրիական արաբների կոնգրեսի գումարումը Փարիզում, այնուամենայնիվ, այն չի արգելվի: Սակայն միաժամանակ հանձնաժողովի նախագահ Բերտրանն անհրաժեշտ էր համարում, որ տեղի մամուլին ցուցումներ տրվեին սահմանափակելու կոնգրեսի աշխատանքների և որոշումների վերաբերյալ հրապարակումները:

Արևելեո իթթիհադական մամուլը և հատկապես «Թանին» պաշտոնաթերթը հեղեղված էր կոնգրեսը վարկաբեկող

1 132. وثائق المؤتمر العربي الاول 1913. بيروت، 1980، ص. 132

հրապարակումներով: Հասկանալի է, որ այսպիսի նախաձեռնությունն ուղղակի նպատակ էր հետապնդում ավելի խորացնելու արաբ ազգային կազմակերպությունների և առանձին գործիչների միջև առկա տարաձայնությունները և պառակտելու ու թուլացնելու շարժումը: Պատահական չէ, որ կոնգրեսն ամեն կերպ ջանում էին վարկաբեկել նաև իթթիհադականներին հավատարիմ արաբ գործիչները:

Երբ իթթիհադական ղեկավարներին այդպես էլ չհաջողվեց խոչընդոտել արաբական կոնգրեսի հրավիրումն ու աշխատանքները, նրանք որոշեցին անցնել ավելի ճկուն քաղաքականության և փորձել բանակցությունների մեջ մտնել կոնգրեսի կազմակերպիչների հետ: Կոնգրեսի աշխատանքների ավարտից ընդամենը երկու օր անց՝ հունիսի 25-ին, Փարիզ ժամանեց կոնգրեսի հավատարմագրված պատգամավոր, «Գրական ակումբ» ընկերության երիտասարդ և ակտիվ անդամ Աբդ ալ-Քարիմ ալ-Հալիլը՝ (ամենայն հավանականությամբ՝ նա հենց այն պատգամավորն էր, որն այդպես էլ չմասնակցեց կոնգրեսի աշխատանքներին) և կոնգրեսի կազմակերպիչներին ներկայացրեց արաբների մեծամասնության անունից՝ իր, իսկ իթթիհադականների անունից՝ Թալեաթ բեյի միջև կնքված ոչ պաշտոնական մի համաձայնագիր, որտեղ կոնգրեսի որոշման բոլոր պահանջները փաստորեն ընդունվում էին:

Դրան հաջորդեց «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության քարտուղար Միդհատ Շյուբրի բեյի այցը Փարիզ: Նա չզլացավ մեծախոստում հայտարարություններ անել արաբական վիլայեթներում արմատական բարեփոխումներ իրականացնելու, արաբներին կառավարական գործերի մեջ ներգրավելու և ընդհանրապես արաբների հետ փոխըմբռնման հասնելու կառավարության ձգտման մասին: Այսպիսով, իթթիհադական ղեկավարները ջանք չէին խնայում ցուցադրելու կոնգրեսի պահանջներին ընդառաջ գնալու իրենց պատրաստակամությունը:

Կ.Պոլսում Ֆրանսիայի գործերի հավատարմատար Բուպլը արտգործնախարար Պիշոնին հղած իր հեռագրում հայտ-

¹ Archives Affaires Etrangeres. Turquie. Dossier general. Syrie/Liban., vol., XX, (1913), p. 13. / J. Haljar, նշվ աշխ., էջ 995:

նում էր. «...Կառավարությունը (իթթիհադական - Ա.Գ.) որոշել է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել արաբական հարցին վերջ դնելու համար: Շնորհիվ Կոստանդնուպոլսում քնակվող մի քանի երիտասարդ սիրիացիների՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն կարողացել է քանակցություններ սկսել Փարիզում Արաբական կոնգրեսի ղեկավարների հետ, ինչն արժանացել է «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության քարտուղար Մահմուդ Շևքեթ փաշայի հավանությանը:

Սիրիացիները պահանջում էին միայն, որ Թալեաթ քեյը գար Փարիզ և իրենց երաշխիք տար, որ խոստումները կիրականացվեն: Թալեաթ քեյը, որ նախարար էր դարձել, նրանց մոտ ուղարկեց նախկին պատգամավոր Միդիատ Շյուքրիին:

Այժմ փոխըմբռնումը կատարյալ է: Բեյրութում, Դամասկոսում և այլ վայրերում մեր գործակալների հաղորդագրություններն արդեն հաստատում են կառավարության քայայացական վերաբերմունքի թողած լավ տպավորությունը:

Կարծում եմ, որ պետք է Թալեաթին շնորհավորել այդ հաջողության համար¹:

Օգոստոսի 2-ին Փարիզում քանակցություններ ընթացան Շյուքրի քեյի և ալ-Ջահրավիի միջև, ինչի արդյունքը եղավ արաբ-թուրքական համաձայնագրի կնքումը, որը փաստորեն ընդգրկում էր կոնգրեսի որոշման մեջ արտացոլված հիմնական պահանջները, և որն այնուհետև պետք է հիմք հանդիսանար ստամբուլյան քանակցությունների համար:

Ստորև բերվում է համաձայնագրի տեքստը.

1. Արաբական բոլոր երկրներում տարրական և միջնակարգ ուսուցումը պետք է իրականացվի արաբերենով: Բարձրագույն ուսուցումը նույնպես պետք է իրականացվի մեծամասնության լեզվով: Սակայն միջնակարգ դպրոցներում օսմաներեւնի դասավանդումը պարտադիր է:

2. Կողմերը պայմանավորվում են, որ ղեկավար պաշտոնյաներն ընդհանրապես տիրապետեն արաբերենին: Մյուս բոլոր պաշտոնյաները պետք է նշանակվեն նահանգի խորհրդի

¹ Archives Affaires Etrangeres. Turquie. Dossier general. Syrie/Liban., vol., XX, (1913), p. 13. /J. Hajjar, նշվ. աշխ., էջ 995:

կողմից, իսկ դատավորները և արդարադատության պաշտոնյաները, որոնք գործում են բարձրագույն հրամանով, պետք է նշանակվեն կենտրոնից: Բացառություն է կազմում միայն նահանգապետի պաշտոնը:

3. Վաքֆային կալվածքները և հաստատությունները, որոնք միջոցները հատկացվում են տեղական բարեգործական կազմակերպություններին, պետք է թողնվեն տեղական համայնքների խորհրդին՝ դրանք ղեկավարելու համար սահմանված պայմաններով:

4. Հասարակական աշխատանքները պետք է թողնվեն տեղական վարչությանը:

5. Խաղաղ ժամանակ արաք զինվորներն իրենց ծառայությունը պետք է իրականացնեն արաքական երկրների այն շրջաններում, որտեղ նրանք գրանցված են: Իսկ այն զինվորները, որոնք այժմ անհրաժեշտ է ուղարկել Հիջազ, Ասիր և Եմեն, պետք է ուղարկվեն Օսմանյան կայսրության քոլոր նահանգներից՝ որոշակի տոկոսային հարաբերակցությամբ:

6. Այն որոշումները, որոնք ընդունում են նահանգային գլխավոր խորհուրդներն իրենց օրինական լիազորությունների սահմաններում, պետք է համարվեն ուժի մեջ մտած:

7. Որպես հիմնական սկզբունք պետք է ընդունել, որ նախարարների կազմում ընդգրկված լինի առնվազն երեք արաք, ինչպես նաև նույն թվով արաքներ լինեն կենտրոնական կառավարությունում՝ որպես խորհրդատուներ և օգնականներ: Հիմնականում հաստատված պետք է համարել, որ պաշտոնական հանձնաժողովներում, պետական խորհրդում, շեյխերի իսլամական խորհրդում և կենտրոնական այլ վարչությունների խորհուրդներում ներգրավված լինեն երկու կամ երեք արաք, ինչպես նաև յուրաքանչյուր նախարարությունում չորս կամ հինգ տարբեր աստիճանի արաք պաշտոնյաներ:

8. Նշանակել հինգ արաք նահանգապետ և տաս մութասարիֆ: Վերացնել քաղաքացիական, դատական և գիտական վարչություններում արաք պաշտոնյաների նկատմամբ կիրառվող անարդարությունները, որոնք չեն գործադրվում այլ պաշտոնյաների նկատմամբ: Այսուհետև պաշտոնյաների նշանա-

կումը, նրանց պաշտոնների բարձրացումը և կարգապահական տույժի ենթարկումը պետք է կատարվի հատուկ օրենքի համաձայն:

9. Յուրաքանչյուր արաբական նահանգից երկու արաբ պետք է նշանակվի սենատում:

10. Յուրաքանչյուր նահանգում, ըստ անհրաժեշտության, պետք է նշանակվեն օտարերկրացի մասնագետ-տեսուցներ: Այս տեսուցների լիազորությունները պետք է սահմանվեն հատուկ կանոնադրությամբ, որը կապահովի նրանցից պահանջվող և ակնկալվող օգտակար բարենորոգումների իրականացումը:

11. Նահանգների տնօրինությանը թողնված գերատեսչությունների բյուջեներում գոյություն ունեցող պակասորդը պետք է փակվի նահանգի բյուջեի եկամուտների բավարար հավելվամբ: Բարեգործական հաստատություններին պատկանող շինություններից ստացվող եկամուտների կեսը հատկացվելու է տեղական վարչություններին՝ կրթական նպատակների համար¹:

Արաբ ազգայնականները, թեև պատրաստ էին քանակցությունների, պետք է որ թերահավատորեն և անվստահությամբ ընդունեին երիտթուրքերի հավաստիացումները, սակայն դատելով նրանց կեցվածքից՝ այդ պահին նրանք, այնուամենայնիվ, իրենց բավարարված էին զգում՝ թուրքերի նման արձագանքն արդեն իսկ դիտելով որպես որոշակի հաղթանակ:

Մինչդեռ երիտթուրքական ղեկավարության ոգևորությունը միանգամայն հասկանալի է. արաբ ազգայնականների հետ համաձայնագրի կնքումը չափազանց հարմար միջոց էր արաբական հարցը կրկին զուտ տեղական հարցի վերածելու, քաղաքական խորամանկությունների ու խոսավարումների միջոցով այն անընդհատ ձգձգելու և, ի վերջո, նրա լուծումը կասեցնելու համար, ինչն ակնհայտ դարձավ կարճ ժամանակ անց: Համաձայնագրի կնքտերն արդեն իսկ սկսեցին «ճշգրտվել» այն հաստատելու համար Թալեաթ քեյի և Արդուլ Բարիմ ալ-Հալիլիի միջև Կ.Պոլսում քանակցությունների ժամանակ: «Ճշգրտումների» մեծ մասն, իհարկե, ոչ հօգուտ արաբների էր. զիջումներն արաբներին ոչ միայն կրճատվեցին, այլև նրանց պարտադրվեց

¹ انكتور توفيق برو، نշق.، ص 435-437:

համաձայնագիրը գաղտնի պահել, ինչը ծայրահեղ բացասաբար անդրադարձավ արաբական շարժման հետագա զարգացման վրա: Հարկադրված լինելով ընդունել այս պայմանները՝ արաբները փաստորեն շարունակում էին կայսրության մյուս ոչ թուրք ազգությունների ազատագրական շարժումից մեկուսանալու գիծը՝ դրանով իսկ էականորեն թուլացնելով սեփական դիրքերը:

Իթթիհադական կառավարության իրական նպատակների ուղղակի արտահայտությունը եղավ 1913 թ. օգոստոսի 16-ին հրապարակված սուլթանի հրահանգը (մարսում), ինչը, փաստորեն, ի չիք էր դարձնում արաբներին խոստացված գիշումները: Այս հանգամանքը չխանգարեց, սակայն, որ արաբները դարձյալ, մի կողմից՝ վախենալով ավելի սրել հարաբերությունները իթթիհադական ղեկավարության հետ, մյուս կողմից՝ նաև ենթարկվելով թուրքերի շողջորթության ազդեցությանը, մարսումը ներկայացնում էին որպես արաբների մեծ ձեռքբերում: Նրանք հավված էին իթթիհադական կառավարության հետ գործարքների՝ հուսալով հարցը լուծել խաղաղ ճանապարհով¹:

Արաբ ազգայնականների այդ թեկուզ ձևական, սակայն ոչ մի կերպ չարդարացված լավատեսության վառ արտահայտությունը, թերևս, մարսումի հրապարակման հաջորդ իսկ օրը «Գրական ակումբում» Աբդ ալ-Քերիմ ալ-Հալիլի՝ կառավարությանը և սուլթանին գովաբանող ոգեշունչ ելույթն էր, այնուհետև նաև իթթիհադական ղեկավարների պատվին կազմակերպված ճոխ ընդունելությունը, որին ներկա էին էնվեր բեյը, Թալեաթ բեյը, Ջեմալ բեյը, Հալիլ բեյը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք կրկին ու կրկին հավաստիացնում էին, որ կատարելու են արաբների րոլոր պահանջները, իսկ արաբ ազգայնականները հանդես էին գալիս ճառերով, որտեղ արտահայտում էին իրենց երախտագիտությունը և «ընդհանուր հայրենիքի առաջադիմության համար» ամեն ինչի պատրաստ լինելը²:

¹ Ա. Գասպարյան, Արաբթուրքական հարաբերությունները Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, Արևելագիտության հարցեր, հ. VI, Երևան, 2006, էջ 252:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 308:

Սակայն արաբ ազգայնականների տագնապը զնայով խորանում էր: 1913 թ. հոկտեմբերին ալ-Ջահրավին ժամանեց Կ.Պոլիս և բանակցություններ վարեց իթթիհադական քարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ քարենտրոգումների իրականացումն արագացնելու նպատակով¹: Մինչդեռ հարցի լուծումը շարունակում էր ձգձգվել: Փոխարենը 1914 թ. հունվարի 4-ին սուլթանի հրամանագրով ալ-Ջահրավին և վեց այլ արաբ գործիչներ նշանակվեցին սենատի անդամ: Այդ գործիչներից երեքը իթթիհադական էին: Շուքրի ալ-Ասային նշանակվեց արդարադատության նախարար, իսկ Աբդ ալ-Վահաբ ալ-Ինզլիզին՝ Սիրիայում տեսուչ²:

Չնայած ալ-Ջահրավին իր նշանակումը չքննարկեց «Ապակենտրոնացման կուսակցությունում», այնուամենայնիվ, կուսակցությունը հաստատեց նրան այդ պաշտոնում, քանի որ վստահում էր և համոզված էր, որ նա անկեղծորեն կծառայի արաբ ազգին: Կուսակցության այդպիսի դիրքորոշումը մեծ չափով պայմանավորված էր նաև նրանով, որ վերջինս նպատակահարմար չէր գտնում իթթիհադական կոմիտեի հետ կապերի վերջնական խզումը:

Այսուհանդերձ հարկ է նշել, որ ալ-Ջահրավիի համաձայնությունն այդ նշանակմանը արաբ ազգային գործիչների մեծամասնության կողմից համարվեց դավաճանություն: Որպես այդ գնահատականի հիմնավորում նրանք բերում էին այն փաստը, որ կառավարությունը, համաձայնվելով քավարարել արաբների պահանջները, անհամեմատ կրճատեց Փարիզի համաձայնագրի կետերը, և պնդում էին, որ նույնիսկ այդ սահմանափակ զիջումները խաբրոսիկ էին, և որ այդ ամենը իթթիհադական կոմիտեի կողմից կազմակերպված և լավ ծրագրված «ներկայացում»

¹ A. Tarabein, Abd al-Hamid al-Zahravi: The Career and Thought of an Arab Nationalism / The Origins of Arab Nationalism, New York, 1991, p. 105.

² Միաժամանակ Քեյրուլում և Դամասկոսում հիմնադրվեցին արաբական միջնակարգ դպրոցներ, իսկ հետագայում ուղղում մտցվեց «Վիլայեթների մասին» օրենքում, որի համաձայն՝ արաբական վիլայեթներում պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ պայման էր արաբերենի իմացությունը: Նույն տեղում, էջ 106:

էր՝ արաք բարեփոխիչներու մեջ տարածայնություններ և երկպա-
ռակություններ սերմանելու համար:

Ի պաշտպանություն ալ-Ջահրավիի հանդես եկավ ալ-Խա-
լիլը, որը նույնպես ենթարկվել էր քննադատության: Նա ալ-Ջահ-
րավիի համածայնությունը պատճառաբանում էր արաքական
երկրներում որոշակի նպատակներ հետապնդող արևմտյան տե-
րությունների կողմից արաքների և թուրքերի միջև հակասու-
թյուններն օգտագործելու հնարավորության կասեցման ճշգր-
տամբ և վստահություն էր հայտնում, որ, գտնվելով սենատում,
ալ-Ջահրավին կկարողանա համոզել կառավարությանը, որ վեր-
ջինս, իր իսկ շահերից ելնելով, ընդունի և աստիճանաբար իրա-
կանացնի արաքների պահանջները:

Իր շուրջն ստեղծված մթնոլորտի հետևանքով հռահա-
տության մատնված՝ ալ-Ջահրավին գաղտնի նամակ հղեց
«Ապակենտրոնացման կուսակցության» իր գործընկեր Ռաշիդ
Ռիդային, որտեղ հանգամանորեն բացատրում էր իր համածայ-
նության շարժառիթները և փորձում արդարացնել այն: Անդրա-
դառնալով Օսմանյան գործերին միջամտելու եվրոպայի դիտա-
վորությանը՝ նա, իր իսկ խոսքերով, անհրաժեշտ էր համարում
դրա իրականացմանը դիմակայելու համար աջակցել իթթիհա-
դականներին: Դատելով նամակի րովանդակությունից՝ ալ-Ջահ-
րավին շարունակում էր հույսեր կապել իթթիհադական կառա-
վարության հետ և դեռևս վստահում էր նրան: Նա գրում էր, որ
իթթիհադական ղեկավարներն ամուր կամք և անխախտ մտադ-
րություն ունեն բարենորոգել կայսրությունը հնարավոր բոլոր մի-
ջոցներով, և, ավելին, «նրանք խոստովանում են իրենց նախկին
սխալներն ու մտադիր չեն վերադառնալ դրանց»: Չնայած նա
կասկածում էր իրենց մտադրություններն իրականացնելու իթթի-
հադականների ունակությանը, այնուամենայնիվ գրում էր. «...ես
գիտեմ, որ նրանց չքելն ավելի լավ է, քան լքելը. դա կօգնի, որ
նրանք ամրապնդվեն»¹: Այսինքն՝ ալ-Ջահրավին արաքական
հարցի լուծման հնարավորությունը շարունակում էր կապել
կայսրության ամրապնդման ու հզորացման հետ, և այս պա-
րագայում նրա դիրքորոշումը, թերևս, հասկանալի էր դառնում:

¹ A. Tarabain, նշվ. աշխ., էջ 107:

Իր «Արդ ալ-Համիդ ալ-Չահրավի» ուսումնասիրության մեջ Ա. Թարաբեինը, անդրադառնալով ալ-Չահրավիի կողմից սենատին անդամակցելու վերը նշված առաջարկն ընդունելու հարցին, այն տեսակետն է հայտնում, որ վերջինս հավանաբար գնաց այդ քայլին, քանի որ չէր ակնկալում կառավարական պաշտոն, և որ «դա ավելի շուտ հսկողություն էր կառավարության վրա, և ոչ ծառայություն»¹: Ա. Թարաբեինի կարծիքով ալ-Չահրավիի վստահությունը կառավարության նկատմամբ ամրապնդվեց այն բանից հետո, երբ իթթիհադական կոմիտեի կողմից սենատի անդամ առաջադրվեց հենց ինքը՝ իթթիհադականների ամենասկզբունքային ընդդիմադիրներից մեկը, ինչը, ըստ նրա, մեկ անգամ ևս վկայում էր արաբների և նրանց պահանջների նկատմամբ իթթիհադականների անկեղծ բարյացակամության և նրանց վստահելու համար հիմքեր ունենալու մասին²:

Ա. Թարաբեինը այն կարծիքն էր հայտնում նաև, որ ալ-Չահրավիի համաձայնությունն արդարացված էր հատկապես արաբ քաղաքական գործիչների միջև ապակենտրոնացման հարցի շուրջ ծագած տարաձայնությունների խորացման պարագայում (մի կողմից՝ դոալիստական թուրք-արաբական պետություն ստեղծելու պահանջ, մյուս կողմից՝ Օսմանյան կայսրության հանդեպ հատկապես մուսուլման արաբների կրոնական լոյալության դրսևորում - Ա.Գ.), ինչն ինքնին դանդաղեցնում էր բարեփոխումների իրականացման ընթացքը և մեծացնում արաբների և թուրքերի միջև համերաշխության փլուզման վտանգը³:

Այսուհանդերձ, ալ-Չահրավիի ընդդիմախոսների տագնապն անհիմն չէր: Պատահական չէ, որ այդ նշանակումներն ուղեկցվեցին արաբ ազգային գործիչների հետապնդումների սաստկացմամբ: Արդեն փետրվարի սկզբներին իթթիհադականները ձերբակալեցին արաբ հայտնի գործիչ, թուրքական բանակի մայրոր Ազիզ Ալի ալ-Միսրիին:

¹ A. Tarabain, նշվ. աշխ., էջ 110:

² Նույն տեղում, էջ 107:

³ Նույն տեղում:

**«ԱԼ-ԱՇԴ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ:
ԻՐԱԴԻՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱԿԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԻՆ**

Փարիզի կոնգրեսից հետո թուրք-արաբական համաձայնագրի կնքումը, ալ-Ջահրավիի մուսքն օսմանյան սենատ և մի քանի արաբ ազգայնականների նշանակումը կառավարական պաշտոնների զայրույթով ընդունվեց արաբ ազգայնականների մեծամասնության կողմից: Սակայն որոշ արաբական կազմակերպություններ, ինչպես, օրինակ՝ «Գրական ակումբը» և «Ապակենտրոնացման կուսակցությունը», չցանկանալով սրել առանց այն էլ լարված հարաբերություններն իթթիհադականների հետ, իրենց դրական վերաբերմունքն արտահայտեցին համաձայնագրի ստորագրմանը և ալ-Ջահրավիի նշանակմանը:

Արաբական քաղաքական ընդդիմությունը չկարողացավ ստիպել իթթիհադական կառավարությանն ընդունել կոնգրեսի որոշումները և փաստորեն իշխանությունների ճնշման տակ նահանջեց իր դիրքերից:

Կենտրոնական իշխանությունների անհանդուրժողականության և ազգային հարցում որևէ զիջման չգնալու ցանկության այս հերթական դրսևորումը հստակորեն ցույց էր տալիս, որ արաբ ազգայնականների պայքարի սահմանադրական մեթոդները վերջնականապես սպառել են իրենց, և նախկին գործելակերպի շարունակումն այլևս միանգամայն անհեռանկար է: Արաբների առջև կրկին, այս անգամ առավել լրջորեն ծառանում էր պայքարի նոր միջոցների որոնման խնդիրը, և հետզհետե ակնհայտ էր դառնում պայքարի ուժային ձևերին անցնելու անհրաժեշտությունը, առավել ևս, երբ արդեն իսկ առկա էր Բասրայի օրինակը, որտեղ Տայիբ փաշայի գործունեությունը տալիս էր իր դրական արդյունքները:

Այս պայմաններում աննախադեպ չափով մեծացավ արաբական արմատական կազմակերպությունների դերը և փաստորեն շեշտն առավելապես դրվեց ընդհատակյա քաղաքական գործունեության վրա: «Ապակենտրոնացման կուսակցության»

այդ ժամանակ հիմնադրված մասնաճյուղերն արդեն վերածվում էին գաղտնի ընկերությունների:

Արաբական ազատագրական շարժման մեջ առաջ եկած նոր միտումների առավել համոզիչ վկայությունն էր արաբ սպաների դերի մեծացումը¹: Անհրաժեշտ է նշել, որ ի սկզբանե արաբ սպաներ Ազիզ Ալի ալ-Միսրին, Սեյիմ ալ-Ջազաիրին, Նուրի Սալիդը, Ջաֆար ալ-Ասքարին, եղբայրներ Յասին և Տահա ալ-Հաշիմիները, Արդ ալ-Գաֆուր ալ-Բադրին, Ջամիլ ալ-Միդֆային, Մահմուդ Հիլմի ալ-Տարաբլուաին և այլք² առանձնահատուկ ազդեցություն են ունեցել արաբական շարժման վրա: Վերջիններին միավորում էին «արաբների կորսված իրավունքները» վերականգնելու ձգտումը և իթթիհադական ղեկավարների հանդեպ անվստահությունը: Նրանց մեծ մասը չէր հավատում քաղաքական ճանապարհով իրենց նպատակներին հասնելու հնարավորությանը և ավելի արմատական մեթոդների կողմնակից էր: Արաբ սպաներն ակտիվորեն մասնակցում էին արաբական կազմակերպությունների՝ հատկապես «ալ-Կահուտանիա»-ի, «Գրական ակումբի», «Երիտասարդ Արաբիայի», «ալ-Ահդ»-ի գործունեությանը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ, հիասթափվելով երիտթուրքերից, արաբ սպաների մեծամասնությունն ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը հավատարիմ էր մնում սուլթանին և Օսմանյան կայսրու-

¹ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին օսմանյան քանակում ծառայում էր մոտ 20 հազար սպա, որոնցից հարյուրավորներն ու նույնիսկ հազարավորներն արաբ էին: Արաբ ազգային շարժման մեջ հիմնականում ընդգրկված էին Սիրիայի և Իրաքի արաբ սպաները: Եռնեսուր Դաունը նշում է 126 արաբ գործիչների անունները, ովքեր ակտիվ մասնակցություն են ունեցել ազգային շարժմանը մինչև 1914 թ.: Համաձայն նրա տվյալների՝ 113 գործիչներից, որոնց ազգությունը հնարավոր է եղել պարզել, 18-ը իրաքցի էին, 51-ը՝ սիրիացի, 22-ը՝ պաղեստինցի, 21-ը՝ փրանսանցի և մնկը՝ եգիպտացի: Ի դեպ, 51 սիրիացիներից միայն տասն էին սպա, մինչդեռ իրաքցիներից՝ թույր 18-ը: E. Beerl, *Army Officers in Arab Politics and Society*, Jerusalem, 1969, p. 328.

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 317:

թյանը¹: Ազատագրական շարժմանը վերջիններիս մասնակցությունը կարևոր նշանակություն ունեցավ նաև այն առումով, որ նրանց շնորհիվ հնարավոր եղավ ազգային գաղափարները տարածել թուրքական բանակի արաբ զինվորականների մեջ, որոնք դարձան արաբական շարժման ակտիվ տարրերից մեկը:

Արաբական ազատագրական շարժման ամենակարկառուն և հեղինակավոր ներկայացուցիչներից էր թուրքական բանակի սպա Ազիզ Ալի ալ-Միսրին (ալ-Կահիրի): Նա ոչ միայն վայելում էր արաբ զինվորականության և ազգային կազմակերպությունների, խմբավորումների ու մտավորականության մեծամասնության լիակատար վստահությունը, այլ նաև նրանց կողմից դիտվում էր որպես արաբական ազատագրական շարժման հնարավոր ղեկավար:

Ալ-Միսրին (Ազիզ Ջաքարիա Շահիլիե) ծնվել է Եգիպտոսում՝ չերքեզական Շահիլիե ընտանիքում: Կ.Պոլիս տեղափոխվելուց հետո նա ընդունեց ալ-Միսրի անունը²: Ավարտելով Կ.Պոլսի ռազմական ակադեմիան, այնուհետև նաև ռազմական շտաբի քոլեջը՝ ալ-Միսրին 1904 թ. գործուղվեց Մակեդոնիայում տեղակայված 3-րդ բանակ, որտեղ միացավ «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությանը և ակտիվ մասնակցություն ունեցավ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջմանը, ինչպես նաև 1909 թ. խռովության տապալմանը: 1910 թ. ալ-Միսրին ուղարկվեց Եմեն, որտեղ նրան հաջողվեց հարթել իմամ Յահյայի և կենտրոնական իշխանությունների միջև ծագած փարաձայնությունները³: Ալ-Միսրին այն սպաներից էր, որոնք 1912 թ. կամավոր մեկնեցին Լիբիա՝ պայքարելու իտալական օկուպացիայի դեմ: Թուրք-իտալական պատերազմի ընթացքում դրսևորելով իրեն որպես հմուտ ղեկավար և վայելելով արաբ զինվորականության հարգանքը՝ նա կարողացավ իր շուրջը համախմբել այնտեղ ծառայող արաբ սպաներին, որոնք և հետագայում կազմեցին «ալ-

¹ Ա. Գասպարյան, Արաբ սպաների դերը ազգային-ազատագրական շարժման մեջ. Ազիզ Ալի ալ-Միսրի, Մերձավոր Արևելք, պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Երևան, 2005, էջ 73:

² M. Khadduri, նշվ. աշխ., էջ 145:

³ G. Antonius, նշվ. աշխ., էջ 119:

Ահդ» ընկերության կորիզը:

1913 թ. Կիրենսիկայից Կ. Պոլիս վերադառնալով՝ Ազիզ ալ-Միսրին ծեռնամուխ եղավ դեռևս Լիբիայում մտահղացած հակաիթթիհադական՝ արաբական գինվորական կազմակերպության ստեղծման գաղափարի իրականացմանը²:

1913 թ. հոկտեմբերի 28-ին ալ-Միսրին և իր համախոհներն ստեղծեցին «ալ-Ահդ» («Պատգամ») գաղտնի ընկերությունը: Նրա կազմի մեջ մտավ մոտ 50 մարդ, որոնց գերակշիռ մասը թուրքական բանակի արաբ սպաներ էին՝ Սիրիայից, Իրաքից և Լիբիայից: Ինչպես վերը նշվել է, չնայած ընկերության մեջ գերիշխում էր գինվորական տարրը, այնուամենայնիվ, այն զուտ գինվորական կազմակերպություն չէր: Հենց ստեղծման պահից նրան անդամակցեցին երկու քաղաքացիական գործիչներ, որոնցից մեկը էմիր Աբդել Արսլանն էր³: Հետագայում «ալ-Ահդ»-ի շարքերն ընդգրկվեցին նաև Կ. Պոլսի ուսանողության մի զգալի հատված և մի քանի արաբ պատգամավորներ⁴:

«Ալ-Ահդ»-ի, ինչպես նաև արաբական ազգայնական կազմակերպությունների մեծ մասի ծրագրերում առաջնային տեղ էին գրավում արաբական վիլայեթների վարչական ապակենտրոնացման դրույթները:

«Ալ-Ահդ» կազմակերպության գաղափարախոսության ուսումնասիրությունը թույլ է տալիս նրա մեջ տեսնել իսլամիզմի և արաբիզմի յուրօրինակ համադրություն: Իսլամիզմը նպատակաուղղված էր կայսրության և սուլթանի իշխանության պահպանմանն ու հզորացմանը, ինչը կենսական նշանակություն ուներ արաբական վիլայեթների համար:

² Սկզբնական շրջանում նա մտադրված էր հիմնադրել հակաիթթիհադական կազմակերպություն, որի մեջ ներգրավված կլինեին ոչ միայն արաբ գինվորականները:

³ J. Jankowski, *Egypt and Arab Nationalism 1908-1922 / The Origins of Arab Nationalism*, New York, 1991, p. 247.

⁴ انكتور توفيق برو, *նշվ. աշխ.*, էջ 452:

⁵ G. Antonius, *նշվ. աշխ.*, էջ 119:

⁶ Л. Котлов, *Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг.*, էջ 319:

Իսլամիզմի և կայսրության անբաժանելիության գաղափարի հետ մեկտեղ «ալ-Սիդ»-ի անդամներն առաջ էին քաշում արաբիզմը՝ որպես արաբների ինքնության պահպանման հիմնական միջոց, որը ենթադրում էր արաբական երկրներին վարչական և քաղաքական ինքնավարության իրավունքի տրամադրում արաբ-թուրքական դաշնային պետության մեջ:

Կազմակերպության հիմնական դրույթներն արտահայտված են նրա՝ ստորև ներկայացվող ծրագրում.

1. «Սիդ»-ը ստեղծվել է Կ.Պոլսում՝ որպես գաղտնի ընկերություն: Նրա նպատակը արաբական երկրներում ներքին ինքնավարության հաստատումն է Օսմանյան կայսրության սահմաններում: Արաբ-թուրքական հարաբերությունները պետք է կառուցվեն Ավստրո-Հունգարիայի դուալիստական պետության օրինակով:

2. «Սիդ»-ը անհրաժեշտ է համարում իսլամական խալիֆայության (Օսմանյան կայսրություն - Ա.Գ.) պահպանումը, որի ղեկավարումը պետք է մնա օսմանների ձեռքում:

3. Խմբավորումը Կ.Պոլսը համարում է Արևելքի գլուխ, և որ Արևելքը չի ապրի, եթե օտարերկրյա տերություններն այն կտրեն: Կ.Պոլսի պաշտպանությունը կայսրության անխախտելիության գրավականն է:

4. Օսմանյան խալիֆը դիտվում է որպես Արևելքի ժողովուրդներին կապող օղակ և նրանց ինքնավարության պահպանման գրավական: Թուրքերը Արևելքի հիմնական ուժն են, որոնք դիմակայում են Արևմուտքի նկրտումներին: «Սիդ»-ը արաբներին դիտում է որպես օգնական ուժ այդ պայքարում:

5. «Սիդ»-ն իր անդամներին պարտավորեցնում է գործել միայն Բարձր դռան ու օսմանյան պետության շահերից ելնելով, և ոչ մի ջանք չպետք է խնայվի կայսրության հզորացման համար¹:

Այսպիսով, «ալ-Սիդ»-ը, փաստորեն, իր առջև արաբական վիլայեթների լիակատար անկախացման խնդիր չէր դնում (համենայն դեպս, գործունեության սկզբնական շրջանում), այլ, ընդհակառակը, անհրաժեշտ էր համարում Օսմանյան կայսրության

¹ انكسار، توفيق، ج 1، ص 453:

ամրապնդումը՝ դիտելով այն որպես եվրոպական գերտերությունների գաղութային քաղաքականությանը դիմակայելու միակ երաշխիք: Իրենց առջև դրված նպատակներն իրականացնելու համար «ալ-Ահդ» ընկերության անդամները հակված էին արմատական միջոցների կիրառման՝ չքացառելով նույնիսկ ուժային սպառնալիքներ: Հենց այն հանգամանքը, որ կազմակերպության անդամների գերակշիռ մասը գինվորականության ներկայացուցիչներ էին, արար ազգայնականներին վստահություն էր ներշնչում, որ իրենք կկարողանան արդյունավետորեն ազդել երիտթուրքական կառավարության վրա:

Կազմակերպությունը բավական ակտիվ գործունեություն ծավալեց ոչ միայն Կ. Պոլսում, այլև արաբական վիլայեթներում: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին նրա անդամների թիվը հասնում էր մի քանի հազարի: «Ալ-Ահդ»-ը հիմնադրեց իր մասնաճյուղերը Դամասկոսում, Հալեպում, Բաղդադում, Մոսուլում, Բասրայում¹: Առավել արդյունավետ էին գործում Բաղդադի և Մոսուլի մասնաճյուղերը, քանի որ «ալ-Ահդ»-ի մեջ մեծ թիվ էին կազմում իրաքցի սպաները²: Բացի այդ, Իրաքում «ալ-Ահդ»-ը սերտ կապեր էր հաստատել դեռևս 1912 թ. այստեղ ստեղծված «Հայրենասիրական ընկերության» հետ, որի կազմում ևս գերակշռում էին արաբ սպաները³:

Արաբական կոնգրեսից հետո արաբ-թուրքական համաձայնագրի կնքումը էլ ավելի ամրապնդեց «ալ-Ահդ»-ի հակա-իթթիհադական տրամադրությունները: Ազիզ ալ-Մուսրիհն, ինչպես նաև մյուս արաբ սպաները սուր քննադատության ենթարկեցին այդ համաձայնագիրը և ալ-Ջահրավիի նշանակումը սենատի անդամ՝ համարելով այն անթույլատրելի սխալ և արաբական շարժման մեջ մեծ հետընթաց: Սակայն իթթիհադական ղեկավարների հետ երբեմն նույնիսկ թշնամանքի հասնող հարաբերությունները որևէ չափով չէին ազդում «ալ-Ահդ»-ի անդամների՝ Օսմանյան կայսրության նկատմամբ հավատարմու-

¹ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 319:

² G. Antonius, նշվ. աշխ., էջ 119:

³ P. Ireland, նշվ. աշխ., էջ 234-235:

թյան վրա: Ազիզ ալ-Միսրիի հավատը կայսրության անբաժանելիության հանդեպ նկատվում էր նույնիսկ 1916 թ. Շերիֆ Հուսեյնի բարձրացրած արաբական ապստամբության ժամանակ¹: «Ալ-Ահդ»-ի ակտիվ գործիչ Նուրի Սայիդի խոսքերով ընկերության նպատակը «սահմանափակվում էր կայսրության փոխակերպմամբ դաշնային միության»: «Մեզանից ոչ ոք,- գրում էր Նուրի Սայիդը,- չէր մտածում Օսմանյան կայսրությունից անջատվելու մասին: Մեր մտքերն ուղղված էին տեղական վարչական մարմինների փոխանցմանը արաբներին, արաբերենի ճանաչմանը որպես պաշտոնական լեզու և արաբ-թուրքական միության սկզբունքի կիրառմանը պետության ընդհանուր քաղաքականության մեջ»²:

Արաբական շարժման մեջ Ազիզ ալ-Միսրիի գլխավորությամբ արաբ զինվորականության մասնակցության ակտիվացումը և արաբական հարցի լուծման նրանց արմատական դիրքորոշումը լրջորեն անհանգստացրին իթթիհադական կառավարությանը, որի ձեռնարկած պատասխան քայլերն իրենց սպասել չտվեցին:

Իթթիհադականները պատրաստվում էին գաղտնի միջոցառումներ ձեռնարկել՝ արաբական շարժումը խեղդելու համար: «Արաբական մեծ ապստամբության» պատմագիր Ա. Սայիդը, օգտվելով նաև այլ պատմաբանների բերած նյութերից, կազմել է այն որոշումների ցանկը, որոնք ընդունվել էին իթթիհադական ղեկավարների՝ 1914 թ. հունվարի 24-ին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի նախագահությամբ Կ.Պոլսում կայացած ժողովի ժամանակ: Այդ որոշումներն էին.

1. Կոստանդնուպոլսում տեղակայված արաբ սպաներին հեռացնել թուրքական նահանգներ (Անատոլիա և Թրակիա): Նրանց թիվը հասել է 490-ի, որից 315-ը «ալ-Ահդ» գաղտնի միության անդամներ են: Այսպիսով, վերջիններիս զրկել գործելու հնարավորությունից՝ խորացնելու համար արաբների և թուրքերի միջև առկա անդունդը:

¹ M. Khadduri, *ibid.*, էջ 151:

² H. Saab, *The Arab Federalist of the Ottoman Empire*, Djambatan, Amsterdam, 1958, p. 79-80. / Մ. Տաաբ, *ibid.*, էջ 46:

2. Արաբական նահանգներում հրամանատարությունը հանձնել թուրք սպաներին՝ ամբողջովին հեռացնելով արաբ սպաներին, և թույլ չտալ նրանց ծառայության իրականացումը իրենց իսկ երկրներում:

3. Արագացնել կայսրությունում զինվորական ստորաբաժանումների թուրքացման քաղաքականությունը:

4. Հանձնարարել Ջեմալ փաշային մշակել այդ զինվորական ստորաբաժանումների թուրքացման ծրագիրը:

5. Պայքարել բարենորոգչական շարժման դեմ Փարիզի և Բեյրութի նրանց կենտրոններում:

6. Լուծարել արաբական բոլոր կոաակցությունները և ներքին գործերի նախարարությունում ստեղծել քաղաքական հատուկ բաժին, որը կզբաղվի արաբական հարցերով և կմշակի անհրաժեշտ միջոցներ՝ պայքարելու անջատողականության քարոզիչների դեմ՝ հետևելով նրանց գործողություններին:

7. Հեռացնել Կոստանդնուպոլսից թուրքական քաղաքականության դեմ գործող արաբներին՝ աշխատելով նրանց փոխարինել իրենց համախոհներով¹:

8. Ուժեղացնել «Միություն ու առաջադիմություն» կոմիտեի ազդեցությունն արաբական երկրներում և ավելացնել ակումբներում նրանց հետևորդների թիվը:

Իրականացնելով իրենց ծրագիրը՝ իթթիհադականները Կ.Պոլսից հեռացրին ավելի քան 300 արաբ սպաների, և մոտ 1100-ն² ազատվեցին ծառայությունից:

Օսմանյան բանակում իրականացված զտումների և արաբ սպայական կազմի նկատմամբ կիրառվող շրվիտիստական քաղաքականությանը բոտն կերպով ընդդիմացավ Ազիզ Ալի ալ-Միսրին և ի նշան բողոքի՝ 1914 թ. հունվարի 20-ին³ հրաժարական տվեց: Ռազմական նախարար էնվեր փաշան փորձեց համոզել ալ-Միսրիին հետ վերցնել իր հրաժարականը, սա-

¹ Մեջբերումն ըստ՝ J. Hajjar, նշվ. աշխ., էջ 1220:

² А. Сялик, Экспансия германского империализма на Ближнем Востоке накануне первой мировой войны (1908-1914), Москва, 1976, с. 238.

³ Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 321:

կայն վերջինս չգիջեց. այդ քայլն էլ ավելի վատթարացրեց նրա հարաբերությունները իթթիհադական կոմիտեի և հատկապես էնվեր փաշայի հետ, ինչի հետևանքով 1914 թ. փետրվարի 9-ին թուրքական բանակի մայրը Ազիզ Ալի ալ-Միսրին ձերբակալվեց¹: Նրան մեղադրեցին պետական գույքի հափշտակման, Կիրենահիկայում Թուրքիայի պարտության և Հյուսիսային Աֆրիկայում արաբական թագավորություն ստեղծելու փորձի մեջ:

«Ալ-Ահդ»-ի ղեկավարի ձերբակալությունը ոչ միայն պայմանավորված էր կառավարության կողմից վարվող շովինիստական քաղաքականությամբ, այլ նաև անձնական հակակրանքով, որ ալ-Միսրիի նկատմամբ տածում էր էնվեր փաշան: Երկու սպաների միջև թշնամանքն սկսվել էր դեռևս թուրք-խալական պատերազմի տարիներին՝ նրանց գաղափարների և քաղաքական համոզմունքների ծայրահեղ հակադրության պատճառով: Հետագայում թուրքական կենտրոնամետ քաղաքականությունն ու շովինիստական գաղափարներն էնվեր փաշային հասցրին նախարարական բարձր պաշտոնի, իսկ ազգային գաղափարներն ու ինքնավարության ձգտումը ալ-Միսրիին դարձրին արաբական ազատագրական շարժման ղեկավարներից մեկը: Երկու զինվորականների միջև ակնհայտ հակամարտությունը վերածվեց քաղաքական առճակատման:

Ալ-Միսրիի ձերբակալությունը վրդովեց ողջ արաբական հասարակությանը: Կահիրեում և Կ.Պոլսում անցկացվեցին բողոքի երթեր և հանրահավաքներ: Բողոքի բազմաթիվ նամակներ ուղարկվեցին Լոնդոն և Կոստանդնուպոլիս: Տեղի թերթերը, որոնք հեղեղված էին դատավարության ընթացքի մասին տեղեկություններով, իրենց հրապարակումներում զայրույթով էին արտահայտվում Բոսֆորում տիրող ապօրինությունների ու կամայականությունների մասին²: Կահիրեի «ալ-Ազհար» համալսարանի ռեկտորի գլխավորությամբ կազմված պատվիրակությունն

¹ M. Khadduri, նշվ. աշխ., էջ 144:

² J. Hajjar, նշվ. աշխ., էջ 1227-1228:

³ Капр, депеша С. Д. Сааюнову, 5 апреля 1914 г.. Տե՛ս ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. V, համար 447 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):

այցելեց եգիպտոսում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ լորդ Քիթչեներին և դիմեց նրան միջամտության խնդրանքով¹:

Նույն ժամանակ Արդ ալ-Համիդ ալ-Չահրավին և մի խումբ արաբ գործիչներ Կ.Պոլսի արաբական համայնքի պահանջով հանդիպեցին իթթիհադականների ղեկավարներին՝ պարզելու ալ-Միսրիի ձերբակալության պատճառը և պահանջելու նրա ազատ արձակումը²:

Արաբ ազգայնականների բոլոր փորձերը, սակայն, որևէ արդյունքի չհանգեցրին: Մարտի 25-ին սկսված դատավարության ժամանակ, որը շարունակվեց մինչև ապրիլի 15-ը, Ազիզ Ալի ալ-Միսրին մեղավոր ճանաչվեց վերոհիշյալ հանցանքների մեջ և դատապարտվեց մահապատժի³: Դատավարության նման ավարտն առիթ տվեց ներքին ճգնաժամի ավելի խորացման: Համաձայն ֆրանսիական դիվանագիտական փաստաթղթերի, որոնք կազմվել էին Կ.Պոլսում Ֆրանսիայի հավատարմատար Բուպպի կողմից, ազգային միասնության մեջ համախմբված արաբ սպաների ղեկավար Ազիզ ալ-Միսրիի նկատմամբ հարուցված դատավճիռը, ռազմական նախարար էնվեր փաշայի կարծիքով, նշանակում էր Միջին և Արևելյան անկախությունը նախապատրաստող արաբական դավադրության դատապարտում⁴:

Ըստ իթթիհադական ղեկավարների տարածած պաշտոնական վարկածի՝ ապստամբությունը կազմակերպել էին «ալ-Ահդ»-ի և նրա ղեկավար ալ-Միսրիի կողմից առաջնորդվող արաբ սպաները, որի մեջ հետագայում ներգաղթելու էին նաև այլ սիրիացիներ, հատկապես «Ապակենտրոնացման կուսակցության» անդամներ շեյխ Ռաշիդ Ռիդան և Ռաֆիկ բեյ ալ-Ազմը, և որի իրականացման դեպքում կայսրության մասնատումը անխուսափելի կլիներ⁵:

Ալ-Միսրիի դատավարությունը, որը ձեռք էր բերել համաա-

¹ G. Antonius, նշվ. աշխ., էջ 120:

² M. Khadduri, նշվ. աշխ., էջ 144:

³ Նույն տեղում, էջ 144-145:

⁴ Archives Affaires Etrangeres, Turquie. Dossier general. Relations avec les puissances, vol., XXII, p. 185-232 / J. Hajjar, նշվ. աշխ., էջ 1229:

⁵ Նույն տեղում:

րաքական հնչեղություն, գտնվում էր նաև եվրոպական տերությունների ուշադրության կենտրոնում: Վերջիններս, հետապնդելով սեփական շահերը, ընդառաջեցին դատավարությանը միջամտելու արաբ ազգայնականների խնդրանքին, ինչը տվեց իր արդյունքը: Անգլիայի և Ֆրանսիայի դիվանագիտական ճնշման շնորհիվ իթթիհադական ղեկավարներն ստիպված եղան նահանջել: Ալ-Միսրիի մահապատիժը փոխարինվեց 15 տարվա ազատագրկմամբ, իսկ այնուհետև՝ ապրիլի 21-ին, նա ազատ արձակվեց և հաջորդ իսկ օրը մեկնեց եգիպտոս, որտեղ, ինչպես և պետք էր սպասել, արժանացավ ամենաջերմ ընդունելության: Հետապնդումներից խուսափելու համար նրա հետ միասին Կ.Պոլսից հեռացան նաև իր մի քանի մերձավոր համախոհները:

Ալ-Միսրիի դատավարությունը մեծ ազդեցություն ունեցավ արաբ-թուրքական հարաբերությունների և արաբական հասարակական կարծիքի ձևավորման վրա: «Իթթիհադ վե թերաքքի»-ի ազգայնամոլական քաղաքականության այս հերթական դրսևորումն էլ ավելի խորացրեց նրանց միջև առկա տարածայնությունները. արաբ քաղաքական ակտիվ շրջանները հիմնականում գրավեցին հակաիթթիհադական դիրքորոշում և ընդհանրապես գրեթե ողջ արաբական առաջադիմական հասարակությունը խորապես հիասթափվեց «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությունից:

Զգալի փոփոխություններ տեղի ունեցան արաբական ազգային կազմակերպությունների գործունեության մեջ: Մասնավորաբար, Ազիզ ալ-Միսրիի դատավարությունը և արաբ սպաների հեռանալը Կ.Պոլսից թուլացրին արաբ ազգայնականների ակտիվությունը մայրաքաղաքում, որը կորցրեց իր նշանակությունը որպես արաբական ազգայնական շարժման կենտրոն: Այստեղ գործող կազմակերպություններն իրենց ղեկավար մարմինները տեղափոխեցին արաբական վիլայեթներ: Միաժամանակ ակտիվացավ նաև «Երիտասարդ Արաբիայի» գործունեու-

¹ M. Khadduri, նշվ. աշխ., էջ 145:

թյունը¹: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նրա անդամների թիվն անհամեմատ մեծացավ:

Հարկ է նշել, որ ալ-Միսրիի՝ եգիպտոս մեկնելուց հետո «ալ-Աիդ» կազմակերպությունն, այնուամենայնիվ, չթուլացավ: Նրա ղեկավարներից մեկը՝ Նուրի Սայիդը, որն ապաստան էր գտել Բասրայում՝ Տալիբ փաշայի մոտ, մի շարք հանդիպումներ ունեցավ «ալ-Աիդ»-ի մասնաճյուղերի ներկայացուցիչների հետ՝ կազմակերպության գործունեությունը համակարգող կենտրոն ստեղծելու և այդպիսով նրա ակտիվությունը պահպանելու նպատակով: 1914 թ. կեսերին Նասիրիայում անցկացվեց «Աիդ»-ի անդամների գաղտնի համագումարը²:

Արաբ ազգայնական գործիչներն սկսեցին միջոցներ ձեռնարկել Արաբական թերակղզու ղեկավարներին համաարաբական շարժման մեջ ներգրավելու ուղղությամբ: Նրանց հետ կապեր հաստատելու համար «Ապակենտրոնացման կուսակցություն» իր ներկայացուցիչներին ուղարկեց Մասկատ և Մոհամմեր: Նուրի Սայիդը հանդիպումներ ունեցավ Նեջդի կառավարիչ Աբդ ալ-Ազիզ Իբն Սաուդի և Մասկատի սուլթան Թեյմուր բեն Ֆեյսալի, իսկ Իզետ ալ-Ջունդին և Ֆուադ ալ-Իսաուդիքը («Գրական ակումբ») իրենց հերթին՝ Ասիլի իշխան Մուհամմեդ ալ-Իդրիսիի հետ՝ փորձելով եմենում գտնվող Իտալիայի ներկայացուցիչների միջոցով քցակցել ալ-Իդրիսիի ապստամբությանը և դրդել վերջինիս շարժվել դեպի Մեքքա³:

Արաբական շարժմանը նոր շունչ և ուղղվածություն հաղորդելու համար փորձեր արվեցին նաև ավելի ամրապնդելու արաբական ազգային կազմակերպությունների միջև կապերը և մշակելու գործողությունների ընդհանուր ծրագիր: Այսպես, Կահիրեում գտնվող Ալ-Միսրին կապեր հաստատեց «Ապակենտրո-

¹ 1913 թ. «երիտասարդ Արաբիայի» կենտրոնը Փարիզից տեղափոխվեց Բյրոլֆ, իսկ 1914 թ.՝ Դամասկոս:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 327:

³ М. Лазарев, նշվ. աշխ., էջ 52, Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 328:

նացման կուսակցության» հետ¹: Միաժամանակ սկսեցին համագործակցել «ալ-Ահդ»-ի և «Երիտասարդ Արաբիայի» անդամները: Եթե մինչ այդ «ալ-Ահդ»-ը նույնիսկ տեղյակ չէր երիտարաբների գոյության մասին, ապա այժմ նրանք կարողացան յուրաքանչյուրն իր ասպարեզում լրացնել միմյանց², ինչն, անկասկած, նպաստեց շարժման հետագա զարգացմանն ու ամրապնդմանը:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին արաբական ազգային կազմակերպությունները լուրջ քայլ կատարեցին իրենց առջև դրված նպատակների իրագործման ուղղությամբ: Տեղափոխելով իրենց գործունեությունն արաբական վիլայեթներ՝ նրանք ոչ միայն ակտիվորեն ներգրավվեցին տեղի հասարակական կյանքի մեջ, այլև, միաժամանակ, հնարավորություն տալով տեղի ազգայնական խմբավորումներին մոտիկից ծանոթանալ իրենց ծրագրային հիմնադրույթներին, նպատակներին ու գործելակերպին՝ անմիջական ազդեցություն ունենալ նրանց աշխատանքների վրա:

Արաբ ազգայնականներին հաջողվեց նաև արդյունավետ համագործակցություն հաստատել արաբ իշխանավորների հետ, ինչն իր հերթին կարևոր նշանակություն ունեցավ արաբական շարժման համար:

Այսուհանդերձ, այն հանգամանքը, որ այս կազմակերպությունները գործում էին ընդհատակում, մեծ չափով սահմանափակում էր նրանց հնարավորությունները:

Միանգամայն այլ քաղաքական իրադրություն էր տիրում Բասրայում, որտեղ իր հակաիթթիհադական գործունեությունն էր շարունակում Սայիդ Տալիբ փաշան: Նա իրեն զգում էր Բասրայի լիիրավ տիրակալ, և իրականում դա այդպես էր, քանի որ Բասրայի նահանգապետ Իզզետ փաշան ստեղծված պայմաններում չէր կարող վերահսկել իրավիճակը³: Տալիբ փաշայի

¹ M. Khadduri, նշվ. աշխ., էջ 150-151:

² G. Antonius, նշվ. աշխ., էջ 120:

³ МИД Императорское Российское консульство в Бассоре в первый департамент Министерства иностранных дел. 22-го ноября 1913 года. Sb'u slyu-

մոտ ապաստան էին գտել իթթիհադականների կողմից հետապնդվող Նուրի Սայիդը, դոկտոր Աբդալլահ ալ-Դամլուջին («ալ-Աիդ»-ի անդամ), Մուզահիմ Ամին ալ-Բաչաչին (Բաղդադում գործող «Հայրենասիրական գիտական ակումբի» նախագահ)¹, Իբրահիմ Հիլմի ալ-Օմարը (Բաղդադում լույս տեսնող «ալ-Նահդա» թերթի խմբագիր) և այլք²:

Տալիբ փաշան ծրագրել էր 1914 թ. հունվարին կազմակերպել արաբական համագումար, որին պետք է մասնակցեին Մեքքայի շերիֆը, Արդ ալ-Ազիզ իբն Սաուդը, մունթաֆիկ ցեղերի առաջնորդ Աջամի փաշան, և որի նպատակն էր լինելու իթթիհադական կառավարության հանդեպ միասնական դիրքորոշման մշակումը: Սակայն երիտթուրքերին հաջողվեց կասեցնել այդ նախաձեռնության իրականացումը³: 1914 թ. ընթացքում իթթիհադականների և Սայիդ Տալիբ փաշայի հարաբերություններն այնքան էին սրվել, որ վերջինս հունիսի 3-ին հրաժարվեց իր պատգամավորական մանդատից և իր կողմակիցների՝ Բասրայի պատգամավորների հետ հեռացավ Կ.Պոլսից⁴:

Արաբ ազգայնական գործիչների ու կազմակերպությունների հույսերը չարդարացրեց նաև 1914 թ. մայիսի 14-ին իր աշխատանքներն սկսած նոր խորհրդարանը⁵:

Խորհրդարան ընտրված 245 պատգամավորներից 142-ը թուրք էին, 15-ը՝ հայ, 16-ը՝ հույն և 3-ը՝ հրեա: Արաբական վիլայեթներից ընտրվել էր 69 պատգամավոր, որոնցից 8-ը ծագումով թուրք էին⁶: Սիրիական վիլայեթներից արաբ ազգայնականները

ղեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. V, համար 436, («ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ»:

¹ Российское Императорское генеральное консульство в Багдаде, секретно, 30 марта 1914 г., Տե՛ս ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. V, համար 445, («ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ»:

² Л. Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., էջ 329:

³ S. Longrigg, նշվ. աշխ., էջ 47:

⁴ انكسار توفيق برو, նշվ. աշխ., էջ 598:

⁵ Ընտրություններն սկսվել էին 1913 թ. դեկտեմբերի վերջին:

⁶ Ըստ Ա. Դադերի «Արաբական ապստամբություն» գրքում բերված տվյալների՝ արաբական վիլայեթներից ընտրվել էր 70 ներկայացուցիչ, որոնցից

խորհրդարան կարողացան անցկացնել միայն իրենց մի քանի կողմնակիցների, այդ թվում՝ Սեյիմ էֆենդի Սալամին և Ֆարիս ալ-Խուրիին¹:

Արաբ ազգայնականները որոշակի հաջողության հասան Իրաքում, մասնավորաբար, Բասրայում, Ամարնայում՝ Տալիֆ փաշայի ազդեցության կենտրոններում, որտեղից ընտրվեցին առաջադրված գրեթե քուրդ թեկնածուները, այդ թվում նաև ինքը՝ Տալիֆ փաշան: Մինչդեռ Բաղդադի վիլայեթից ընտրված քուրդ 12 պատգամավորներն իթթիհադականներ էին²:

Չնայած արաբական վիլայեթներից ընտրված արաբ պատգամավորները մեծ թիվ էին կազմում, սակայն վերջիններս չկարողացան ստեղծել միասնական դաշինք և, համապատասխանաբար, գործունեության միասնական ծրագիր: Հիմնական պատճառն այն էր, որ «Ապակենտրոնացման կուսակցության» ղեկավարները քոյկոտել էին ընտրությունները³: Արաբները, փաստորեն, խորհրդարանում չունեին որևէ հեղինակավոր ղեկավար, որ հանդես գար արաբների անունից, չնայած առանձին պատգամավորներ այդ դերի հավանական թեկնածու էին համարում Սեյիմ քեյ Սալամիին կամ արդեն որոշակի հասարակական դիրքի հասած Ֆարես ալ-Խուրիին, Սադալլահ քեյ Մունլանիին, Ջամիլ ալ-Ջահավիին, Սուլեյման Ֆեյդիին:

Այս պատգամավորներն արդեն մասնակցել էին խորհրդարանական քննարկներին, ինչպես, օրինակ, ամենասուր խնդրի՝ արաբերենի կարգավիճակի քննարկմանը՝ պահանջելով դատավարություններն արաբական վիլայեթներում անցկացնել արաբերենով, հիմնադրել արաբերենով ուսուցմամբ բարձրագույն ուսումնական հաստատություններ և այլն⁴: Այսուհանդերձ, արա-

20-ը թուրք էին, այսինքն՝ արաբների թիվը կազմում էր 50, իսկ թուրքերինը՝ 162, انكتور توفيق برو، نշد. աշխ., էջ 486:

¹ J. Haljar, նշվ. աշխ., էջ 1226:

² Российское Императорское генеральное консульство в Багдаде, секретно, 30 марта 1914 г.. Տե՛ս ակադեմիկոս Մ. Նորսիսյանի արխիվային նյութեր, հ. V, համար 445 («ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ»):

³ J. Haljar, նշվ. աշխ., էջ 1227:

⁴ انكتور توفيق برو، نշد. աշխ., էջ 487-488:

բական վիլայեթների նկատմամբ կառավարության վարած ընդհանուր քաղաքականության վրա այս պատգամավորներն այդպես էլ չկարողացան ազդել: Վերջիններիս չհաջողվեց նույնիսկ ստիպել իթթիհադականներին իրականացնել արաբական վիլայեթներում բարեփոխություններ անցկացնելու արաբ-թուրքական համաձայնագրի նվազագույն պահանջները:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին արդեն արաբ ազգայնական գործիչների ու կազմակերպությունների գերակշիռ մասը, վերջնականապես համոզվելով իրենց պահանջներն օրինական միջոցներով իրականացնելու անհնարինության մեջ, ակնհայտորեն հակվում էին պայքարի ուժային մեթոդների:

Առաջին աշխարհամարտի տարիներին արաբների նկատմամբ իթթիհադականների վարած քաղաքականությունն էլ ավելի թուլացրեց առանց այդ էլ տնտեսապես քայքայված Օսմանյան կայսրությունը: Արդեն իսկ արաբական վիլայեթներում ստեղծված անմխիթար վիճակը, տնտեսության քուլուր, հատկապես գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտների քայքայումը, իշխանությունների կողմից սննդամթերքի բռնազավթումը պատերազմի տարիներին արաբական վիլայեթների բնակիչներին հասցրին ծայրահեղ չքավորության. Սիրիայում, Լիբանանում և Իրաքում սովից ու տարբեր հիվանդություններից մահացան հարյուր հազարավոր մարդիկ:

Իթթիհադական կառավարության կամայականությունները հատկապես մեծ չափերի հասան Ջեմալ փաշայի՝ Սիրիայում տեղակայված 4-րդ բանակի հրամանատարի պաշտոնը զբաղեցնելուց հետո: Վերջինս իր ձեռքում կենտրոնացրեց Սիրիական վիլայեթի ողջ իշխանությունը՝ փաստորեն դառնալով միահեծան կառավարիչ:

Ջեմալ փաշայի վարած շովինիստական քաղաքականությունը, որի մասին առկա են բազմաթիվ վկայություններ, առաջ բերեց ոչ միայն արաբ ազգայնականների, այլև, ընդհանրապես, արաբ բնակչության դժգոհության նոր ալիք:

Անհրաժեշտ է նշել, որ պատերազմի սկզբին Ջեմալ փաշան կապերը սերտացրեց արաբ ազգային շարժման ղեկավարների հետ՝ փորձելով վերջիններիս միջոցով ապահովել արաբների լոյալությունը իշխանությունների նկատմամբ և հատկապես ակնկալելով նրանց օգնությունը սուլթանի կողմից հռչակված սրբազան պատերազմին՝ ցիհադիին միանալու նոր կամավորների հավաքագրման գործում: Այս ժամանակահատվածում արաբ ազգայնականների մի մասը դեռևս շարունակում էր պահպանել հավատարմությունը իթթիհադական կառավարությանը՝ հավատալով պատերազմի հաղթական ավարտի դեպքում արաբական վիլայեթներին լայն ինքնավարություն շնորհելու նրա խոստումներին:

Անհրաժեշտ է նշել, որ արաբների լոյալ կեցվածքը պայմանավորված էր ոչ միայն վերոհիշյալ հանգամանքով: Արաբ ազգայնական գործիչները շարունակում էին հարաբերություններ պահպանել երիտթուրքերի հետ՝ սպասելով արաբական վիլայեթների վերաբերյալ եվրոպական տերությունների դիրքորոշման և ծրագրերի հստակեցմանը: Հայտնի է, որ արաբ ազգայնականների մեծամասնությունը մտահոգված էր եվրոպական գաղութային քաղաքականության հավանական տարածմամբ, սակայն Առաջին աշխարհամարտը փոխեց իրադրությունը և փաստորեն նոր հնարավորություն ընձեռեց արաբներին՝ իրենց ազգային նպատակների իրականացման համար: Այժմ արդեն արաբները պատրաստ էին ապստամբելու կայսրության դեմ միայն տերությունների կողմից արաբական երկրներին անկախության ապահովման հավաստիացումներ տրամադրելու պարագայում: Այդ են վկայում արաբ ազգայնականների բանակցությունները Մեքքայի շերիֆ Հուսեյնի հետ:

1915 թ. սկզբին «Երիտասարդ Արաբիան» և «ալ-Ահդ»-ը դիմեցին շերիֆ Հուսեյնին՝ զլխավորելու համաարաբական ապստամբությունը, որը ծրագրվում էր սկսել Սիրիայում և Իրաքում: Հուսեյնը հանձնարարեց իր որդի Ֆեյսալին հանդիպել Դամասկոսի արաբ ազգայնականների հետ՝ քննարկելու այն և, որ առավել կարևոր էր, փոխանցել նրանց լորդ Քիթչենների

առաջարկն¹ ու պարզել դրա նկատմամբ վերջիններին վերաբերմունքը: 1915 թ. մարտ-ապրիլ ամիսներին «Երիտասարդ Արաբիայի» և «Ալ-Ահդ»-ի հետ Ֆեյսալի գաղտնի բանակցություններն ավարտվեցին մի համաձայնագրի կնքմամբ, որը պատմագրության մեջ հայտնի է որպես «Դամասկոսյան արձանագրություն»: Փատաթղթում արաբ ազգայնականները ներկայացնում էին այն պայմանները, որոնց հիման վրա կհամաձայնվեին համագործակցել Անգլիայի հետ: Արձանագրության հիմնական կետերը արաբական երկրներին անկախության երաշխիք տալն էր, որի ընդունման դեպքում Սիրիայում և Իրաքում գտնվող արաբական գործերն անմիջապես կապտամբին թուրքական իշխանությունների դեմ:

Սակայն շատ շուտով, երբ Սուեզի ջրանցի ռազմական գործողության ծախսողումից հետո թուրքերի ազգայնամոլական քաղաքականությունն առավել ակնհայտ դարձավ, արաբների վստահությունն «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության նկատմամբ վերջնականապես սպառվեց: Ի հետևանք՝ արաբները մեկընդմիջտ հրաժարվեցին օսմանյան միասնական ազգի գաղափարից՝ ընդունելով բացահայտ հակաթուրքական, հակաօսմանյան դիրքորոշում: Միաժամանակ նոր թափ ստացավ կենտրոնական իշխանությունների շովինիստական քաղաքականությունը: Իթթիհադականներն այս անգամ արդեն բացահայտորեն սկսեցին հետապնդել, ահաբեկել և ճնշումների ենթարկել արաբ ազգայնական գործիչներին, ինչը ծայրահեղ չափերի հասավ Սիրիայում. մասնավորաբար, ազգայնական գործիչների շրջանում սկսվեցին համատարած ձերբակալություններ, ինչպես նաև արգելվեցին բոլոր ընդդիմադիր և ազգային թերթերը:

1915 թ. սկզբին Ջեմալ փաշայի հրամանով ձերբակալված արաբական ազգային շարժման մի շարք առավել հեղինակավոր

¹ Թուրքիայի դեմ Հիջազի ապստամբությանը մեծապես շահագրգռված Անգլիայի ռազմական նախարար լորդ Բիթչենբերը խոստանում էր ապստամբություն բարձրացնելու դեպքում ապահովել շերիֆ Հուսեյնի տիրոջի պահպանումը, չմիջամտել Հիջազի ներքին գործերին, պաշտպանել նրան ցանկացած ագրեսիայից՝ միաժամանակ ակնարկելով, որ եթե Հուսեյն իրեն խալիֆ հռչակի, Անգլիան այն պաշտոնապես կճանաչի:

գործիչներ զինվորական դատարանի կողմից մեղադրվեցին դավաճանության մեջ և դատապարտվեցին մահապատժի: 1915 թ. օգոստոսին այդ դատարանի որոշմամբ Բեյրութում կախաղան բարձրացվեցին 11 ազգայնականներ, այդ թվում նաև Արդ ալ-Քերիմ Հալիլը և Մոհամմեդ ալ-Մահմասսանին: 1916 թ. ազգայնականների դատավարությունները շարունակվեցին: Այնչյ քաղաքի դատարանի որոշմամբ մայիս ամսին մահապատժի ենթարկվեցին արաբական ազգային շարժման ղեկավարները. նրանցից 14-ը կախաղան բարձրացվեցին Բեյրութում և 7-ը՝ Դամասկոսում: Մահապատժի ենթարկվածներից էին Արդ ալ-Համիդ ալ-Ջահրավին, Շաֆիկ բեյ ալ-Մուայսադը, Շուքրի բեյ ալ-Ասալին, Արդ ալ-Ղանի ալ-Ուրեյսին, Սեյֆադդին ալ-Խատիրը, Արդ ալ-Վահաբ ալ-Ինզիզին և ուրիշներ:

Իթթիհադական իշխանությունները շարունակեցին հետապնդումները արաբ ազգայնականների նկատմամբ: Սիրիայում և Իրաքում ոչնչացվեցին ազգային բոլոր կազմակերպությունները:

Իթթիհադականների իրականացրած սպանությունները, ոճրագործություններն ու ահաբեկությունները չնայած ծանր հարված հասցրին արաբական ազգային-ազատագրական շարժմանը, սակայն, այնուամենայնիվ, սպասված արդյունքի չհանգեցրին. 1916 թ. հունիսին սկսվեց շերիֆ Հուսեյնի գլխավորած արաբական ապստամբությունը, որին միացան նաև Սիրիայի և Իրաքի արաբները՝ դրանով իսկ ղյուրացնելով ու արագացնելով Թուրքիայի պարտությունն Առաջին համաշխարհային պատերազմում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Երիտթուրքերի օրոք Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում ծավալված ազգային շարժման քնույթը, հետապնդած նպատակներն ու զարգացման ողջ ընթացքը պայմանավորված էին մի ամբողջ շարք ներքին և արտաքին հանգամանքներով և առաջին հերթին երիտթուրքերի՝ կայսրության ոչ թուրք ազգաբնակչության նկատմամբ իրականացվող ազգային քաղաքականությամբ:

Իշխանության սկզբնական շրջանում երիտթուրքական կառավարության՝ կայսրության ողջ ազգաբնակչությանը, անկախ ազգային և դավանանքային պատկանելությունից, հավասար իրավունքներ տրամադրելու խոստումը մեծ չափով ոգևորեց նաև արաբներին: Երիտթուրքերի հանդեպ նրանց վստահության արտահայտությունը եղավ արդեն 1908 թ. «Արաբաօսմանյան եղբայրություն» կազմակերպության ստեղծումը, որը լավագույն ձևով ցույց էր տալիս կայսրության արաբների հավատարմությունը երիտթուրքերին և սահմանադրության դրույթներն իրականացնելու գործում նրանց աջակցելու պատրաստակամությունը:

Սակայն շատ շուտով կայսրության կենտրոնացման մոլուցքով տարված իթթիհադական ղեկավարները, որոնք այդ նպատակի իրականացման հնարավորությունը տեսնում էին կայսրությունում թուրքական տարրի գերակայության հաստատման մեջ, այլևս չէին թաքցնում իրենց իսկական դիտավորությունները: Իթթիհադականների կառավարության քաղաքականության այսպիսի կտրուկ փոփոխությունը ոչ միայն հիասթափեցրեց արաբներին, այլև քորթրոքեց նրանց ազգային զգացումները և դրոյեց իրենց ազգային ծգտումների իրականացման համար այլ ուղիներ որոնելու: Կայսրության արաբական վիլայեթներում, ինչպես նաև արտերկրում արաբ ազգայնականների նախաձեռնությամբ ստեղծվեցին իթթիհադականներին ընդդիմադիր կուսակցություններ, կազմակերպություններ և խմբավորումներ:

Կայսրությունում ընդդիմադիր ուժերի համախմբումը խչընդոտելու և դրա հնարավոր հետևանքները կասեցնելու հա-

մար կառավարությունը չհապաղեց արդեն 1909 թ. ընդունել «Արհիությունների մասին» օրենքը, որն, ըստ էության, արգելում էր ազգային նպատակներ հետապնդող կազմակերպությունների, այդ թվում նաև արաբական կազմակերպությունների գործունեությունը:

Արաբական ազգային կազմակերպությունների գերակշիռ մասն իր հիմնական խնդիրն էր համարում արաբական վիլայեթների վարչական ապակենտրոնացման ձեռքբերումը: Այդ առաջնահերթ նպատակի իրականացման համար արաբ ազգայնականները տարբեր ժամանակներում (1910-1912 թթ.) համագործակցության մեջ մտան համասոմանյան ընդդիմադիր ուժերի՝ ինչպես «Ժողովրդի կուսակցության», «Չափավոր լիբերալների», «Հյուրիյեթ վե իթթիլաֆ» կուսակցությունների հետ: Հատկանշական է, որ Լույնիսկ առավել արմատական «ալ-Ահդ» կազմակերպությունը, որ հիմնվել էր արաբ-թուրքական հարաբերությունների ծայրահեղ սրման պահին՝ 1913 թ. վերջին, դարձյալ առաջ չէր քաշում արաբական վիլայեթների կատարյալ անկախության հարցը:

Արաբական շարժման այս առանձնահատկությունը պայմանավորված էր կայսրությունում արաբների՝ մեծամասնություն կազմելու հանգամանքով և թուրքերի հետ նրանց գերակշիռ մասի դավանանքային ընդհանրությամբ, ինչը վերջիններիս թույլ էր տվել զգալ իրենց օսմանցի և արաբական վիլայեթները դիտել որպես կայսրության անբաժան մաս, մանավանդ այն պարագայում, երբ կայսրության արաբական վիլայեթների նկատմամբ արևմտյան տերությունների անթաքույց դիտավորություններն սպառնում էին Եգիպտոսի օրինակով այդ վիլայեթների գաղութացմանը և Օսմանյան կայսրության անբաժանելիության խախտմանը: Դրանցով է պայմանավորված արաբների լոյալությունը կայսրությանը և կայսրության միասնականությունն ու հզորությունը պահպանելու նրանց ձգտումը, ինչը և երկար ժամանակ արաբական շարժումը սահմանափակում էր ապակենտրոնացման պահանջով միայն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արաբների այսպիսի կողմնորոշումն առավել ակնհայտ էր դառնում հատկապես

կայսրության համար ծանր և ճգնաժամային պահերին: Օրինակ, 1911-1912 թթ. թուրք-իտալական պատերազմի ժամանակ իր համերաշխությունը հայտնելով Լիբիայի արաբներին և պատերազմում թուրքական կողմի պարտությունից հետո Լիբիան կորցնելու համար կառավարությանը մեղադրելով հանդերձ՝ վերջիններս միևնույն ժամանակ չէին թաքցնում կայսրությանն իրենց հավատարմությունը և նրա կազմի մեջ մնալու ցանկությունը: Ինչ վերաբերում է արաբների դիրքորոշմանը Բալկանյան առաջին պատերազմին, ապա նրանց մեծ մասն սկզբից մինչև վերջ իր անվերապահ աջակցությունն էր հայտնում կառավարությանն ու նրա գործողություններին, և պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունը, այնուամենայնիվ, նրա նկատմամբ արաբների վերաբերմունքն առանձնապես չփոխեց:

Մինչդեռ օսմանյան արաբների մյուս՝ հատկապես քրիստոնյա մասն արաբների ազգային խնդիրների լուծման հարցում ապավինում էր արևմտյան տերությունների աջակցությանը՝ փորձելով հասկանալի պատճառներով հիմնականում օգտագործել արաբական (հատկապես սիրիական) վիլայեթների նկատմամբ նրանց շահագրգռությունը և Օսմանյան կայսրության վրա ազդելու հնարավորությունները:

Դիրքորոշումների այս և մյուս տարբերությունները հատկապես վառ կերպով դրսևորվեցին 1913 թ. հունիսի 18-23-ը Փարիզում Առաջին արաբական կոնգրեսի աշխատանքների ընթացքում: Եթե արաբ գործիչների մի մասն իր ելույթներում և քննարկումների ժամանակ համառորեն ջանում էր հավաստել արաբների նվիրվածությունը կայսրությանը և արաբների պահանջներին վերագրել նախ և առաջ կայսրության ամբողջականության ու կայունության պահպանման նպատակ, ապա գործիչների մյուս խումբը չէր թաքցնում այդ նպատակների իրականացման գործում Արևմուտքի հովանավորությունը ձեռք բերելու միտումը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արաբական խնդրի լուծման գործում օտար տերությունների միջամտության կողմնակիցների և հակառակորդների միջև անհամաձայնությունը, համենայն դեպս այս ժամանակաշրջանում, առավելապես պետք է դիտել որպես նույն նպատակին հասնելու տարբեր

միջոցների նախընտրություն: Դրա հաստատումն է արդեն իսկ այն իրողությունը, որ այդ հակադիր տեսակետների կողմնակիցները համախմբված էին նույն կուսակցությունների և կազմակերպությունների մեջ, ինչը հնարավոր է միայն մեկ՝ ամենակարևոր և հիմնական նպատակի առկայության դեպքում:

Սակայն, ինչպիսին էլ որ լինի իրադրության մեկնաբանությունը, արդեն իսկ վերոհիշյալ խնդրի նկատմամբ մոտեցումների այս ակնհայտ հակադրությունը և, ընդհանրապես, արարական շարժման մեջ հակասությունների առկայությունն, այնուամենայնիվ, ինքնին դառնում էր արաբ ազգայնական ուժերի համախմբման հնարավորությունը նվազեցնող և շարժումը թուլացնող գործոն: Մանավանդ որ այդ հանգամանքը լայնորեն օգտագործվում էր իթթիհադականների կողմից՝ միմյանց դեմ հանելու շարժման մեջ ներգրավված մուսուլման և քրիստոնյա արաբներին:

Արաբ ազգային գործիչները միաժամանակ նույնքան կարևորում էին արաբների առանձին, ինքնուրույն ազգ լինելու հանգամանքը, որի ճանաչումը պետք է ապահովեր նրանց ազգային իրավունքների և պահանջների օրինականության ընդունումը: Պատահական չէ, որ արաբական ազգային առավել հեղինակավոր կազմակերպությունները, առանց բացառության, իրենց ծրագրերում մեծ տեղ էին հատկացնում ազգային ընդհանրությունը հաստատող ամենազյխավոր չափանիշի՝ լեզվի պահպանման և արաբական վիլայեթներում նրա կիրառման ոլորտն ընդարձակելու պահանջին և նույնիսկ առաջարկում էին թուրքերենի հետ միասին արաբերենը ևս դարձնել օսմանյան խորհրդարանի աշխատանքային լեզու:

Լեզվի նկատմամբ այս առանձնահատուկ վերաբերմունքը բացատրվում էր նաև նրանով, որ արաբ ազգայնականները լեզվի պահպանումը դիտում էին որպես իթթիհադականների վարած ծուլման քաղաքականությանը դիմակայելու և դրանից խուսափելու միակ վստահելի միջոց:

Այս իրողության գիտակցումն էր նաև, որ հարկադրում էր իթթիհադական ղեկավարներին ամենախիստ միջոցներով սահմանափակել արաբերենի կիրառումը և արաբական վիլայեթ-

ների ուսումնական հաստատություններից, դատական և այլ ատյաններից արաքերենը դուրս մղելով՝ բռնի ուժով պարտադրել թուրքերենը, ինչն ավելի էր սաստկացնում արաքների հակազդեցությունը:

Վստահորեն կարելի է հավաստել, որ կայսրությունում թուրքական տարրի գերակայության ապահովման առաջնահերթ ձգտմամբ էին թելադրված նաև երիտթուրքերի հակաարաքական բոլոր միջոցառումները: Այդ են վկայում, մասնավորաբար, խորհրդարանական երեք՝ 1908, 1912 և 1913 թթ. ընտրությունների ժամանակ իթթիհադականների իրականացրած տարատեսակ ճնշումները, որոնք բացահայտորեն ուղղված էին պատգամավորության թեկնածուների մեջ մեծամասնություն կազմող արաքների դեմ՝ կասեցնելու համար նրանց մուտքը խորհրդարան: Հետապնդումների էին ենթարկվում նաև 1912 թ. վերջերին արաքական վիլայեթներում ստեղծված Բարեփոխումների կոմիտեները: Հայտնի է, որ նրանց գործունեությունը տարբեր միջոցներով անընդհատ խոչընդոտվում էր, իսկ 1913 թ. «Վիլայեթների մասին» օրենքի ընդունումից հետո այդ կոմիտեները կառավարության կողմից հայտարարվեցին ոչ օրինական և ընդհանրապես փակվեցին:

Անհրաժեշտ է նշել, որ կայսրության արաքների մեջ քիչ չէին նաև իթթիհադամետ տարրերը, որոնք անընդհատ փորձում էին վարկաբեկել արաք ազգային գործիչներին և կազմակերպություններին, խեղաթյուրել և նենգափոխել նրանց գործունեության իսկական նպատակները՝ մեծապես վնասելով արաքական շարժմանը: Ավելորդ չէ նշել, որ իթթիհադական կառավարությունն արաքների այդ մասի դիրքորոշումները ևս լայնորեն օգտագործում էր իր հակաարաքական գործողություններն իրականացնելիս:

Կառավարությունը հատկապես մեծ ջանքեր գործադրեց՝ խոչընդոտելու Առաջին արաքական կոնգրեսի աշխատանքները, սակայն ապարդյուն: Ավելորդ չէ նշել, որ արաքների համախմբումը, արաքական ազգային շարժման ամրապնդումը և հետագա ընդարձակումը վերջնականապես անհնարին դարձնելու միտումով իթթիհադական ղեկավարներն արտաքուստ իրենց

պատրաստակամությունը հայտնեցին ընդառաջ գնալու արաբներին: 1913 թ. Փարիզում ստորագրվեց արաբ-թուրքական համաձայնագիր, որով թուրքերը փաստորեն պարտավորվում էին իրականացնել արաբական կոնգրեսի որոշման մեջ ներկայացված պահանջները, որոնցից, սակայն, ինչպես և պետք էր սպասել, շատ շուտով հրաժարվեցին: Արաբական ազգային ուժերին պատակտելու ուղղակի նպատակ էր հետապնդում նաև արաբ առանձին հեղինակավոր գործիչների, ինչպես ալ-Ջահրավիի նշանակումը սենատի անդամ և նրանցից մի քանիսին պաշտոնների տրամադրումը:

Արաբական ազգային շարժման այս փուլի էվոյուցիան ի վերջո հանգեցրեց շարժման հետագա արմատականացման և այնպիսի կազմակերպությունների հիմնման (ինչպես, օրինակ՝ «ալ-Ահդ»-ը), որոնք ստեղծված իրադրության պայմաններում իրենց ազգային նպատակներին հասնելու համար չէին քաջառում նաև ուժային մեթոդների կիրառումը:

Երիտթուրքերի օրոք արաբական ազգային շարժումն անժխտելիորեն կարևոր նշանակություն ունեցավ արաբների ազգային նպատակների հստակեցման, այդ նպատակների շուրջ արաբների համախմբման և նրանց գործողություններին ճիշտ ուղղվածություն տալու համար: Այդ շարժումը ոչ միայն ամրապնդեց արաբների վստահությունն իրենց ուժերի նկատմամբ, այլև մեծապես նպաստեց արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ձևավորմանն ու հետագա զարգացմանը:

THE ARAB NATIONALISTS AND THE YOUNG TURKS: FROM COOPERATION TO CONFRONTATION (1908-1914)

SUMMARY

The comprehensive study and analysis of the relations between the Arabs and the Young Turks, their nature, goals, development process and changes taken place in them and their causes in the Ottoman Empire in 1908-1914 have undeniable significance not only for the Arab national movement and separate issues related to it in that period of time but also for an accurate perception of future events and their evaluation.

The extremely hard internal and external situation of the Ottoman Empire in the years of Abdul Hamid's tyranny even more worsened already the heavy condition of the Empire's non-Turkish population, including the Arabs.

As a consequence of various pressures, harassment and restrictions exercised by the regime not only the national values, language, culture, traditions and customs of the Arabs were endangered, but also their national identity.

At this juncture the political program pledges of the Ittihad Party to overthrow Abdul Hamid, to restore the Constitution and especially to grant equal rights to all citizens of the Empire, despite certain contradictions existing between the Arab nationalists and the Young Turks, served as a real basis for their rapprochement and cooperation.

The success of the 1908 Coup d'Etat of the Young Turks provided with the active assistance of various nationalities of the Empire, including the Arabs, created a completely new situation in the Ottoman Empire and changed the further course of its development. The very first steps of the Young Turks, especially the restoration of the Constitution was extremely encouraging, as it created real opportunities for the solution of national problems. It was directly conditioned with the obvious confidence and trust of the Arab nationalists towards the Young Turks at the initial stage. The creation of the "Arabic-Ottoman Brotherhood" organization

already in 1908 was its expression which in its best way manifested the Arabs' loyalty of the Empire towards the Young Turks and their readiness to support the implementation of the Constitution provisions.

However, after a short while this seemingly promising cooperation for both sides faced with serious obstacles: under different circumstances the previous contradictions not only sharpened between them, but there emerged new ones mostly conditioned with the Turks' open pursuit of maintaining a dominant position in the Empire, which, in itself, already testified about their refusal of the loud promises and assurances to carry them out.

The monograph discusses in detail the circumstances and bilateral interests of the rapprochement between the Young Turks and the Arabs, as well as represents the gradual change of the nature and goals of the Arab national movement within the context of domestic and foreign political developments of the Ottoman Empire, respectively the Arabs' attitude towards the central government: from the support provided to the Young Turks up to confrontation, the transition from the ideology of Ottomanism to the ideology of decentralization and generally the obvious radicalization of the struggle.

Despite the radical views of the Arab nationalist figures, the latter, however, maintaining loyalty to the Ottoman Empire as a general idea of common homeland at this stage of the movement, also fearing the real danger of colonization of the Arab countries by Western states, which is no less important as well, did not strive for independence for the Arab provinces and were satisfied with the request of broad decentralization.

Among others, one of the main goals of the work is the comprehensive discussion and elucidation of the national and not religious unity based-on ideas of the new-generation Arab organizations and groups, as well as separate Arab nationalist figures, the aims and activities pursued by them. A circumstance which served as an important basis for the modernization of the idea of national statehood and its implementation among the Arabs

already during the years of the First World War.

In the monograph particular importance is given to the activities of the Arab national organizations especially established after the Rebellion of 1909.

The obvious change in the national policy led by the Ittihadis disappointed most of the active Arab political forces. A number of organizations were established by their efforts which saw their main mission in the unification of the Arab national forces on a common ideological base and sovereignty achievement. These organizations were the first to consider the Arab people not as a part of "the Ottoman nation", but as a separate national element with its general issues, having the primary task of maintaining its identity. The activities of the most prominent organizations playing an important role in the Arab movement, such as "al-Kahtania", "Literary Club," "Young Arabia" having played an important role in the Arab movement is particularly discussed in the monograph, thus enabling us to perceive the main goals of the movement in this period of time.

The new ideas pushed forward by these organizations greatly influenced on the Arabic-Turkish future relations and their members became active participants in the liberation struggle.

The internal and external events taken place in the Ottoman Empire in the years of 1911-1913 and the relevant certain political situation gave birth to the urgent need for the consolidation of the Arab political and social forces and the conduct of their actions directed to the joint goal. Under the conditions of the intensification of the decentralization movement and then the apparent radicalization, new organizations formed to pursue national ideas. "The Ottoman Party of Administrative Decentralization" was established in Cairo in this new phase of the Arab national movement, which with its clear program, ideology and activity was sufficiently different from the parties founded before and had a major significance for the consolidation of the Arab national forces.

In the consequence of the nationalistic policy led by the Ittihad in the conditions of the obvious tension of the Arabic-Turkish relations, the unification of the Arab national forces of the Empire

and abroad and the issue of drafting joint operations was becoming urgent. For the realization of this goal in 1913 the First Arab Congress was invited in Paris, which had a crucial importance not only for the formation and further development of the Arab liberation movement, but also for the history of the Arab people in general. The First Arab Congress was the event which results and consequences had an essential impact on the relationship between the Ittihad and the Arabs. In particular, the majority of the Arab national forces were finally disappointed with the Ittihad government and ceased to rely on it for the solution of the Arab national problems.

In this new phase of the evolution of the Arab national movement "al-Ahd" secret radical party was formed by the Arab militants, which did not exclude the use of force for the implementation of administrative decentralization in the Arab provinces.

On the eve of the First World War the complex and contradictory situation in the Ottoman Empire as well as the national policy pursued by the Young Turks with its nature made it completely obvious for the leaders of the Arab national movement on the futility of relying on constitutional means of resolving their national issues and urged them to undertake other, more effective ways for struggle.

The study of the Arab national movement within the context of the Arabic-Turkish relations in 1908-1914 in the Ottoman Empire allows to follow the evolution of that movement and to represent the gradual changes in it starting from the Ottomanism up to the Arabism.

The Arab national movement during the reign of the Young Turks had an undeniably important role in clarifying the national goals of the Arabs, in the consolidation of the Arabs around those goals and giving the right direction for their operations. This movement not only strengthened the confidence in the Arabs about their forces, but also greatly contributed to the formation of the national liberation struggle of the Arab people and its further development.

ԱՐԱՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԿՈՄԻՏԵԻ
 ՀՈՉԱԿԱԳԻՐ
 «ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԱՐԱՐՆԵՐԻՆ»

(МИД Российское императорское Консульство в Дезде.
 Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. III, համար
 311 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):

Միրելի՛ հայրենակիցներ...

Մեզանից յուրաքանչյուրն ամեն պահ կարող է համոզվել, թե արաք քաղաքացու հպարտ և փառավոր կոչումը որքան արատավոր ու արգահատելի է դարձել բոլոր օտարերկրացիների և հատկապես թուրքերի մոտ: Ամեն ոք տեսնում է, թե ինչ աստիճանի թշվառության և տգիտության եք հասել ասիական կենտրոններից եկած այս բարբարոսների բռնակալության ներքո: Մեր երկիրը, որն աշխարհում ամենահարուստն է և ամենագեղեցիկը, ամայի է ու անմշակ: Երբ մենք դեռ ազատ էինք, հարյուր տարուց էլ պակաս ժամանակամիջոցում նվաճեցինք Արևելքն ու Արևմուտքը, ամենուրեք տարածեցինք գիտություն, գրականություն ու արվեստ և երկար դարերի ընթացքում ուղղորդում էինք աշխարհի քաղաքականությունը: Բայց այն ժամանակներից, երբ Օրթոդոքսի հետևորդները բռնազավթեցին իսլամական խալիֆայությունը, ավելի լավ շահագործելու համար նրանք մեզ այն աստիճան բթացրին, որ դարձանք աշխարհի ամենաթշվառ ժողովուրդը: Մեզ պառակտելու համար թուրքերը խառնակչություններ են հրահրում Բելյուսի քրիստոնյա և մուսուլման ավազակների միջև. նրանք անկարգությունները վերագրում են կրոնին, որը ժխտում է դրանք, որպեսզի հեռու պահեն մեզ մերձեցումից և հավատացնեն Եվրոպային, թե մեր դժբախտ հայրենիքում անհնար են բարենորոգումներն ու լավ կառավարությունը:

Քաղաքակիրթ պետությունների աչքում դա միայն մենք ենք, որ կազմում ենք թուրքերի ուժը. մենք սուլթանի կայսրու-

թյան ամենամեծաթիվ և ամենաուժեղ էթնիկ զանգվածն ենք, այդ մեր միջոցով է, որ Արդույ Համիդն այքանացիներին պահում է իր իշխանության տակ, և այդ այքանացիների միջոցով է, որ նա ջախջախում է մակեդոնացիներին. նմանապես այդ մեր միջոցով է, որ նա ճնշում է քրդերին, և այդ քրդերի միջոցով է, որ նա կոտորում է հայերին: Այդ սիրիացի մեր զինվորներն էին, որ կանգնեցրին ռուսներին Կարսում և Պլենայում այն ժամանակ, երբ թուրք զեներալները ծախվեցին ցարի գործակալներին: 40000 սիրիացիներ Իբրահիմ փաշայի ղեկավարությամբ ջախջախեցին 120000 թուրքերի Մծրինում այն ժամանակ, երբ թուրք ծովակալը դավաճանում էր Ալեքսանդրիայում իր փաղիշափին և եգիպտացիներին էր հանձնում ողջ նավատորմը, որի հրամանատարն ինքն էր:

Շնագանդությունը մեզ մղեց ի շահ թուրքերի մինչև իսկ Հաուրանի մեր դուռը և եմենի մեր արաբ եղբայրներին կոտորելու, փոխանակ միանայինք նրանց՝ փշոելու ստրկության մեր շղթաները:

Այդքան ծառայություններից և նվիրվածությունից հետո այս ավազակները մեզ ինչպիսի փոխհատուցում տվեցին: Նրանք մեզ արհամարհանքով անվանում են կեղտոտ արաբներ, մեզ հետևողականորեն հեռու են պահում բոլոր բարձր պաշտոններից և անխնա շահագործում:

Արաբական նահանգները թուրք և չերքեզ կառավարողների համար երկրային դրախտ են. մեզ մոտ գալու համար նրանք ճանապարհաձախսը պարտք են անում և շուտով վերադառնում միլիոններով, որ մեզանից խլել են անխղճորեն: Երբեք որևէ թուրք կառավարող չի կարողացել անպատիժ կերպով թուրքերից, քրդերից և այքանացիներից ինչ-որ գումար խլել:

Դա դեռևս մենք ենք, որ մատակարարում ենք կայսրության բյուջեի երկու երրորդը և փաղիշափի բյուջեի չորս հինգերորդը: Համեմատեցե՛ք, թե տասնորդներն ինչ չափով են վերցնում արաբական երկրներում ու այլ նահանգներում՝ Ալքանիայում, Քրդաստանում և այլուր, և դուք կտեսնեք, թե թուրքերը մեզ ինչքան են արհամարհում և ուրիշներին հարգում:

Դա նմանապես մեր հայրենիքում է, որ Արդույ Համիդը

հօգուտ իր անձի բռնագրավել է ամենաշատ հողատարածությունները: Հորդանանի ողջ հովիտը, Եփրատի հովտի երեք քառորդը, Տյուրոսի ողջ դաշտավայրը, Դամասկոսի դաշտավայրի մի մասը և այլն, և այլն, մի խոսքով, նրան է պատկանել, ինչ որ նա ասել է. «դրանք իմն են»: Նա նախկին տերերին ոչնչով չի փոխհատուցել:

Ի՞նչն է մեր քաժինն այս ընդարձակ կայսրության մեջ, որին մենք սատար ենք կանգնել. թշվառությունը, տգիտությունը և ճնշումը:

Այդ ինչպե՞ս է, որ թուրքերի իշխանության գլուխ անցնելուց ի վեր ոչ մի արաբ արժանի չի համարվել լինել շեյխ ալ-խսլամ, մեծ վեզիր, նախարար, մարշալ, գեներալ, գեղապետ կամ նահանգի կառավարիչ:

Ինչո՞ւ ենք մենք հետևողականորեն հեռացված քիչ թե՛ շատ կարևորություն ներկայացնող պաշտոններից:

Թող ձեզ չգարմացնի այն բարեհաճությունը, որից այս պահին օգտվում են Աբդուլ Հուդան, Իզզետ ալ-Աբիդը և Սեյիմ Մալիամեն: Սրանք միայն սովորական և գոեհիկ լուծեսներ են, որոնք իրենց հերթին լուծեցվում են թաթարների և չերքեզների կողմից, որոնցով իրեն շրջապատել է Աբդուլ Համիդը: Այս դժբախտների երազած երջանկությունը մի սարսափելի տանջանք է: Բռնակալը վախենում է, որ այս արաբները կվերադառնան իրենց երկրները և կդառնան ազգային շարժման նախաձեռնողներ:

Քաջալերված մեր ստրկամտությունից՝ թուրքերն այսօր հավակնում են ստրկացնել արաբ ազգի անկախ մնացած բոլոր ցեղերին: Հատուանը, Եմենը, Իրաքը և Նեջդը իրենց ենթարկելու մտադրությամբ է, որ նրանք ուզում են կառուցել Բաղդադի և Հիջազի երկաթուղին: Առավել ստորացուցիչն այն է, որ օգնելով նրանց մեր փողով և գործունեությամբ՝ մենք ինքներս ենք պահում մեր սեփական ստրկության շղթաները: Երբ այս երկաթուղին ավարտված կլինի, թուրքերը մեզ կծառայեցնեն ճնշելու համար Իրաքն ու Եմենը և այս երկու երկրներին էլ կծառայեցնեն մեզ իրենց լծի տակ պահելու համար:

Համոզված, որ շուտով իրենց եվրոպայից կվճռեն, և որ

Հայաստանն իրենց ձեռքից կզնա, նրանք մեր հաշվին ուզում են ստեղծել մի ուրիշ կայսրություն, որը նրանց ազաի ձեռքերում չի հապաղի դառնալ օտարերկրացիների զոհը:

Այդ մեր սիրելի հայրենիքը բոլոր չարիքներից փրկելու և նրա ազատությունն ու վաղեմի փառքը նրան վերադարձնելու համար է, որ մենք հիմնել ենք «Արարական հայրենիք» լիգան, որն ընդամենը մի քանի ամսում մեծ առաջադիմության է հասել: Մենք արդեն կոմիտեներ ունենք Պաղեստինի, Սիրիայի և Միջագետքի բոլոր մեծ քաղաքներում, ինչպես նաև Եգիպտոսում և Եվրոպայում: Բոլոր լուսավորյալ մեծ տերությունները միաձայն հավանություն են տալիս մեր շարժմանը. մենք կարող ենք վստահ լինել նրանց համակրանքին:

Ահա մեր ծրագիրը.

Մենք ուզում ենք ամբողջովին ազատվել Թուրքիայից և հիմնել արաբական կայսրություն, որը կընդգրկի բոլոր ասիական արաբական երկրները՝ տարածելով իր քնական սահմանները Տիգրիսի և Եփրատի հովտից մինչև Սուեզի պարանոց և Միջերկրականից մինչև Օմանի ծով:

Կառավարման ձևը կլինի լիբերալ-սահմանադրական և առաջադիմական միապետություն: Մեր առաջնորդը կլինի արաբ և մուսուլման:

Մենք Հիջազի վիլայեթից, Մեդինայից և նրա շրջակայքից մինչև Աքաբայի ծովը կկազմենք մեր կայսրությունից անկախ մի ուրիշ կայսրություն, որի առաջնորդը, լինելով արաբ, միաժամանակ կլինի իսլամի համընդհանուր խայիֆը:

Մենք կհարգենք Լիբանանի ինքնավարությունը, Պաղեստինի քրիստոնեական տաճարների և Եմենի, Նեջդի ու Իրաքի անկախ իշխանություններին: Մենք արաբ պաշտոնյաներին կթողնենք իրենց պաշտոններում, նրանց համար կսահմանենք քավարար աշխատավարձ և կապահովենք պատվավոր թոշակով: Զինվորական ծառայությունը կլինի երկու տարով: Վաքֆերի եկամուտները կծախսվեն վաքֆերի համար:

Սուլթան Համիդի անձնական սեփականությունը կքաժանվի նրանց միջև, ովքեր կնպաստեն արաբական հայրենիքի փրկությանը: Անմշակ հողերը կկցվեն մերձակա գյուղերին:

Մենք համընդհանուր ներում կշնորհենք բոլոր քաղաքական բանտարկյալներին առանց խտրականության, ինչպիսին էլ որ լինի նրանց պատիժը:

Այս հոյակապ նախագիծն իրագործելու համար պետք չէ ոչ մի կաթիլ արյուն: Անկախ դառնալու համար բավական է, որ մենք այն ցանկանանք:

Ինչքան թուրք կա արաբական երկրներում: Նրանք ամենաշատը 500-600 են, իսկ մենք՝ 12 000 000:

Մենք ամեն ինչ մտածել ենք, ամեն ինչ պատրաստ է ազատագրական շարժման համար: Մեր սիրելի համաքաղաքացիներին, անկախ կրոնական համոզմունքից, մենք խնդրում ենք միայն պահպանել հանդարտություն և չդիմել ոչ մի գործողության, որը կարող է պատճառ դառնալ բողոքի կամ օտար տերությունների ներխուժման, և վստահորեն ապավինել արաբ կառավարիչներին, որոնք կփոխարինեն թուրք վալիներին և մութասարիֆներին: Մենք նույնը կպատվիրենք մեր քաջ և խելճ գինվորներին. թող նրանք հարգեն իրենց արաբ սպաներին, որոնք նշանակված օրը կփոխարինեն չերքեզ գնդապետներին ու գեներալներին:

Մենք նաև մեր բոլոր հայրենակիցներին խորհուրդ ենք տալիս այլևս իրենց հողատարածքները չվաճառել օտարերկրացիներին չնչին գնով, քանի որ երբ ազատ դառնանք, հողային սեփականությունների արժեքը կբարձրանա 400%-ով:

Ինչ վերաբերում է մեր մեջ ապրող թուրքերին, ապա մենք նրանց հետ կվարվենք եղբայրաբար, եթե նրանք միանան մեզ, և թշնամաբար, եթե նրանք գործեն Յըլդըզի հրոսակախսմբի օգտին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ («ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ) ՀՈՉԱԿՎԱԾ 1908 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

(И.И. Голобородько, Старая и новая Турция, Москва, 1908,
с. 280-282)

1. 1293 թ. սահմանադրությունը՝ ամրագրված 1326 թ. ունեցա՞րի 4-ի Հաթթը հումայունով, պետք է պահպանվի բոլոր հողվածներում, բացառությամբ այն փոփոխությունների, որոնք կարվեն Ազգային ժողովի կողմից:

2. Ըստ 62-րդ հողվածի՝ չկա որևէ արգելք, որպեսզի սենատորների թիվը գերազանցի պատգամավորների թվի մեկ երրորդին: Սենատորների մեկ երրորդը պետք է նշանակվի միապետի կողմից, մնացած երկու երրորդը պետք է ընտրվի: Սենատորի լիազորությունները երկու դեպքում էլ պետք է լինեն ժամանակավոր:

Ժողովրդական կամքը՝ արտահայտված ընտրական իրավունքի միջոցով, պետք է ծառայի որպես սահմանադրության հիմք: Ուստի նախարարների խորհուրդը պատասխանատու է պատգամավորական պալատի առջև և պետք է հրաժարական տա, երբ կորցնի նրա վստահությունը:

3. Կայսրության արական սեռի 21 տարին լրացած բոլոր քաղաքացիները, անկախ ունեցվածքային ցնեզից, դառնում են առաջին աստիճանի ընտրողներ, եթե միայն նրանց իրավունքները դատարանով սահմանափակված չեն:

4. Սահմանադրությունը պետք է լրացվի քաղաքական հավաքների ազատության մասին օրենքով՝ 1293 թ. սահմանադրության առաջին կետի հետ համաձայնեցվելու դեպքում:

5. Պետք է մշակվի օրինագիծ տեղերում իշխանության մարմինների իրավասությունների ընդարձակման մասին:

6. Բոլոր վարչական որոշումները և շրջաբերականները

ենթակա են փոփոխման՝ պատգամավորների պալատի ցուցումների համաձայն:

7. Կայսրության պետական լեզուն պետք է ճանաչվի թուրքերենը:

8. Յուրաքանչյուր օրենսդրական առաջարկ՝ ներկայացված տասը պատգամավորների կողմից, ենթակա է պալատի քննարկմանը:

9. Քաղաքացիների պարտականություններն ու իրավունքները նույնն են կայսրության բոլոր ցեղերի և ազգությունների համար: Բոլոր կառավարական պաշտոնները բաց են բոլոր քաղաքացիների համար, ովքեր ունակություն կցուցաբերեն: Զինապարտությունը տարածվում է նաև ոչ մուսուլմանական դավանանքի անձանց վրա:

10. Կրոնական համայնքների արտոնությունները պահպանվում են:

11. Կայսրության ցամաքային և ծովային ուժերը պետք է վերակազմավորվեն ու խոշորացվեն նրանց քաղաքական և աշխարհագրական դիրքին համապատասխան:

12. Սահմանադրության 113-րդ հոդվածը, որը հակասում է անձի ազատությանը, պետք է չեղյալ հայտարարվի:

13. Հերթի դնել բանվորների և աշխատատուների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների մշակումը:

14. Հողագործ-գյուղացիների համար հեշտացված պայմաններով վարկեր ստանալու հնարավորություն ապահովել:

15. Փոխարինել տասնորդական հարկը ամենուրեք, որտեղ հնարավոր է, վերջին հինգ տարվա միջին բերքատվությունից տոկոսային հարկով: Ավելի ուշ պետք է աստիճանաբար անցնել կադաստրային համակարգի:

16. Մտցնել կրթության ազատություն:

17. Բոլոր դպրոցները ենթարկել պետության հսկողությանը, բաց անել կառավարական խառը դպրոցներ ազգաբնակչության բոլոր տարրերի համար, որպեսզի միօրինակություն մտցվի քաղաքացիների դաստիարակության մեջ: Տարրական դպրոցներում պարտադիր դարձնել թուրքերենի ուսուցումը: Կառավարական դպրոցներում տարրական ուսուցումը պետք է լինի

անվճար: Կառավարական տարրական դպրոցները, որոնց մասին վերն ասվել է, պետք է պատրաստեն միջին և բարձրագույն կրթության թուրքերենով: Ծրագրերը պետք է կազմվեն այնպես, որ պատրաստեն ուսուցիչներ և ուսուցչուհիներ: Առևտրական, գյուղատնտեսական և արհեստագործական դպրոցները պետք է հանրամատչելի լինեն:

Այս կանոնից բացառություն է արվում միմիայն կրոնական ուսուցման ծրագրով դպրոցների համար:

18. Պետք է միջոցներ մշակվեն երկրի տնտեսական առաջադիմության բարձրացման և գյուղատնտեսության զարգացման համար:

19. Պետք է ապահովվի ընտրական քարոզչության լիակատար ազատություն:

20. Յուրաքանչյուր լիիրավ քաղաքացի կարող է պատգամավոր ընտրվել երկրի ցանկացած շրջանից:

21. Այս ծրագրի որոշ մասեր կարող են փոփոխությունների ենթարկվել՝ ելնելով հանգամանքներից և կոմիտեի հրապարակային նիստերում ընդունված որոշումներից:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ (1908 Թ. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ)

(И.И. Голобородько, Старая и новая Турция,
Москва, 1908, с. 282.)

Պատգամավորների ընտրությունը թուրքական խորհրդարան իրականացվում է ողջ Օսմանյան կայսրության արական սեռի բնակչությունից՝ անկախ կրոնական պատկանելությունից և ռասայից:

Ընտրությունները կատարվում են համընդհանուր, հավասար և գաղտնի քվեարկությամբ:

Ընտրությունները երկաստիճան են:

500 ընտրողներ ընտրում են մեկ ընտրողի: Ընտրական շրջանները համընկնում են սանջակների հետ: 50 հազար ընտրողներ պետք է խորհրդարան ուղարկեն մեկ պատգամավորի:

50-75 հազար արական սեռի բնակչություն ունեցող սանջակներից ուղարկվում է մեկ պատգամավոր, 75-125 հազար՝ երկու, 175-200 հազար՝ չորս: Ակտիվ ընտրական իրավունքից օգտվում է 25 տարին լրացած և որևէ հարկ վճարող յուրաքանչյուր թուրք (օսմանցի): Ընտրական իրավունքից օգտվում են նաև զինծառայողները:

Պասիվ ընտրական իրավունքից կարող են օգտվել միայն 30 տարին լրացած անձինք:

Վարչական պաշտոնյաները ընտրություններին չեն մասնակցում:

Ընտրությունների ղեկավարությունը պետք է գտնվի հատուկ ընտրական հանձնաժողովների ձեռքում, որոնցում պաշտոնյաներ չեն կարող ներգրավվել:



Ռուշի ալ-Շամա, մահապատժի է ենթարկվել
1916թ. մայիսի 6-ին:



Արդ ալ-Համիդ ալ-Չահրավի, մահապատժի է ենթարկվել
1916թ. մայիսի 6-ին:



Ռաֆիք Սայիմ. մահապատժի է ենթարկվել
1916 թ. մայիսի 6-ին:



Եղբրի ալ-Անայի. մահապատժի է ենթարկվել
1916 թ. մայիսի 6-ին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՂՆԵՐԻ
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

1. Делеша дипломатического тайного советника Зиновьева из Константинополя. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. III, համար 286 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):
2. МИД Российское Императорское консульство в Джеде. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. III, համար 311 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):
3. Копия с донесения консула в Дамаске ком. сов. князя Шаховского на имя господина императорского посла в Константинополе от 27-го марта 1909 г. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. III, համար 291 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):
4. МИД Императорское Российское консульство в Бассоре 16-го августа 1913 года. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. V, համար 432 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):
5. Каир, депеша С.Д. Сазонову, 5 апреля 1914 г. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. V, համար 447 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):
6. МИД Императорское Российское консульство в Бассоре в первый департамент Министерства иностранных дел. 22-го ноября 1913 года. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. V, համար 436 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):
7. Российское Императорское генеральное консульство в Багдаде, секретно, 30 марта 1914 г. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. V, համար 445 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):

8. МИД Российское Императорское генеральное консульство в Дамаске, 25-го мая 1913 г. Реформы в Сирии и Арабско-Сирийский конгресс в Париже. Ալադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. V համար 436 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):
9. Российское Императорское генеральное консульство в Константинополе, 2-го октября 1913 г., секретно. Его превосходительству А.А. Нератову. Ալադեմիկոս Մ. Ներսիսյանի արխիվային նյութեր, հ. V, համար 417 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):
10. Archives affaires etrangeres. Documents reparties du consulat general de Beyrouth, vol. 255, Carton 6, dossier 4. / J. Hajjar, L'Europe les destinees du Proche-Orient. Le nationalisme arabe, syrien entre la Jeune Turquie et les puissances (1908-1914), Damas, 1996.
11. Archives affaires etrangeres. Turquie. Dossier general. Syrie/Liban, vol. XVII, (1913), p. 236. / J. Hajjar, L'Europe les destinees du Proche-Orient. Le nationalisme arabe, syrien entre la Jeune Turquie et les puissances (1908-1914), Damas, 1996.
12. Archives affaires etrangeres. Turquie. Dossier general. Syrie/Liban, vol. XIX, (1913), p. 115. / J. Hajjar, L'Europe les destinees du Proche-Orient. Le nationalisme arabe, syrien entre la Jeune Turquie et les puissances (1908-1914), Damas 1996.
13. Archives affaires etrangeres. Turquie. Dossier general. Syrie/Liban, vol. XX, (1913), p. 13. / J. Hajjar, L'Europe les destinees du Proche-Orient. Le nationalisme arabe, syrien entre la Jeune Turquie et les puissances (1908-1914), Damas, 1996.
14. Archives affaires etrangeres. Turquie. Dossier general. Relations avec les puissances, vol. XXII, pp. 185-232 / J. Hajjar, L'Europe les destinees du Proche-Orient. Le nationalisme arabe, syrien entre la Jeune Turquie et les puissances (1908-1914), Damas 1996.

Գրքեր և հոդվածներ

15. Բոյաջյան Մ., Ազատություն և Համաձայնություն / Հայկական Հարց, Հանրագիտարան, Երևան, 1996:
16. Գասպարյան Ա., Առաջին արաբական կոնգրեսը, «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու 2 (27), Երևան, 2006:
17. Գասպարյան Ա., Արաբ սպաների դերը ազգային-ազատագրական շարժման մեջ. Ազիզ Ալի ալ-Միսրի, Մերձավոր Արևելք, հ. II, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Երևան, 2005:
18. Գասպարյան Ա., Օսմանյան կայսրության սիրիական վիլայեթներում արաբներն լեզվի վիճակը երիտթուրքերի կառավարման օրոք, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Երևան, 2004:
19. Գասպարյան Ա., Խորհրդարանական ընտրություններն Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, Երևան, 2005:
20. Գասպարյան Ա., Արաբաթուրքական հարաբերությունները Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, Արևելագիտության հարցեր, հ. VI, Երևան, 2006:
21. Գասպարյան Ա., «ալ-Կահտանիա» կազմակերպության գաղափարախոսությունն ու նպատակները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVI, Երևան, 2007:
22. Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագրության քննական լույսի ներքո, Երևան, 1991:
23. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. II, Երևան, 2004:
24. Մանդելշտամ Ա., Երիտասարդ թուրքերի պատմությունը, Էջմիածին, 1916:
25. Նաջարյան Ե., Արաբական ազգային մշակութային զարթոնքը, Երևան, 1988:

26. Մինոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Երևան, 1986:
27. Մինոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
28. Սաֆրաստյան Ռ., Օսմանիզմի դոկտրինան երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերում (1908-1916 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XV, Երևան, 1989:
29. Սարգսյան Հ., Թոփալյան Հ., Արաբական մի շարք փաստաթղթեր արաբ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI, Երևան, 1974:
30. Նանսեն Ֆ., Հայաստանը և Մերձավոր Արևելքը, Երևան, 1993:
31. Алимов А., Революция 1908 года в Турции, Пробуждение Азии, 1905 год и революции на Востоке (сборник статей), Ленинград, 1935.
32. Алиев Г., Турция в период правления младотурок (1908-1918г.), Москва, 1972.
33. Габидулин Х., Младотурецкая революция, Москва, 1936.
34. Гасанова Ю., Идеология буржуазного национализма в Турции в период младотурок. (1908-1914 гг.), Баку, 1966.
35. Голобородько И., Старая и новая Турция, Москва, 1908.
36. Даниелян Р., Просвещение в Турции 1923-1960 гг., Ереван, 1971.
37. Долинина А., Очерки истории арабской литературы нового времени. Египет и Сирия. Просветительский роман 1870-1914 гг., Москва, 1973.
38. Желтков А., Петросян Ю. История просвещения в Турции (конец XXVIII-начало XX века), Москва, 1965.
39. Инджикян О., Буржуазия Османской империи, Ереван, 1977.
40. Киракосян Дж., Младотурки перед судом истории, Ереван, 1986.

41. Котлов Л., Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., Москва, 1986.
42. Котлов Л., Становление национально-освободительного движения на Арабском востоке, Москва, 1975.
43. Лазарев М., Крушение турецкого господства на Арабском востоке, Москва, 1960.
44. Левин И., Арабские страны. Зарождение идеологии национально-освободительного движения (XIX-начало XX в.), сборник статей, Москва, 1973.
45. Левин И., Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, Москва, 1972.
46. Луцкий В., Национально-освободительная война в Сирии (1925-1927), Москва, 1964.
47. Луцкий В., Новая история арабских стран, Москва, 1965.
48. Миллер А., Краткая история Турции, Москва, 1948.
49. Павлович М., Гурко-Кряжин В., Турция в борьбе за независимость, Москва, 1925.
50. Петросян Ю., Младотурецкое движение (вторая половина XIX- начало XX в.), Москва, 1971.
51. Петросян Ю., Османская империя: могущество и гибель. Исторический очерк, Москва, 1990.
52. Прошин Н., История Ливии, конец XIX в.-1969, Москва, 1975.
53. Саркисян Е., Экспансионистская политика Османской империи в Закавказье, Ереван, 1962.
54. Силин А., Экспансия германского империализма на Ближнем Востоке накануне Первой мировой войны (1908-1914), Москва, 1976.
55. Тума Э., Национально-освободительное движение и проблемы арабского единства, Москва, 1977.
56. Тыркова А., Старая Турция и младотурки. Год в Константинополе, Петроград, 1916.
57. Шпилькова И., Младотурецкая революция 1908-1909 гг., Москва, 1977.

58. Abdeljelil T., *Politique des Jeunes Turcs en Bilad es-Sham et revolte arabe en 1916: Nouvel essai d'interpretation / Tamini, Revue d'histoire Magrebine, numeros 65-66, aout, Tunisie, 1992.*
59. Anderson L., *The Development of Nationalist Sentiment in Libya, 1908-1922 / Khalidi R., Anderson L., Muslih M., Simon R., The Origins of Arab Nationalism, New York, 1991.*
60. Al Tibawi, *A Modern History of Syria. Including Lebanon and Palestine, London, 1969.*
61. Antonius G., *The Arab Awakening. The Story of the Arab National Movement, New York, 1947.*
62. Aykut H., *The Revolution in Turkey, Leiden, 1997.*
63. Bassam T., *Arab Nationalism a Critical Enquiry, London, 1981.*
64. Bernard L., *The Emergence of Modern Turkey, London, 1961.*
65. Chevallier D., *Les Arabes et l'histoire creatia, Paris, 1995.*
66. Choueiri Y., *Arab Nationalism. A History Nation and State in the Arab World, Oxford, 2000.*
67. Commins D., *Islamic Politics and Social Change in Late Ottoman Syria, New York, 1990.*
68. Dawn E., *From Ottomanism to Arabism. Essays on the Origins of Arab Nationalism, Illinois, 1973.*
69. Dawn E., *The Rise of Arabism in Syria, The Midle East Journal, vol 16 / Beer E., Army Officers in Arab Politics and Society, Jerusalem, 1969.*
70. Eliezer B., *Army Officers in Arab Politics and Society, Jerusalem, 1969.*
71. Eliezer T., *Four Syrian Manifestos After the Young Turk Revolution / Peeters, Turcica, revue d'etudes Turques, tome XIX, Leuven, 1987.*
72. Eugen J., *Les coulisses de l'histoire, la revolte arabe. De 1906 a la revolte de 1916, Paris, 1924-25.*
73. Feroz. A., *The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics, 1908-1914, Oxford, 1969.*

74. Fisher S. and Ochsenswald W., *The Middle East. A History*, New York, 1990.
75. Fromkin D., *A Peace to End All Peace. The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East*, New York, 1989.
76. Haddad. G., *Fifty Years of Modern Syria and Lebanon*, Beirut, 1950.
77. Haddad M., *Iraq, Before World War I: A Case of Anti-European Arab Ottomanism* / Khalidi R., Anderson L., Muslih M., Simon R., *The Origins of Arab Nationalism*, New York, 1991.
78. Hajjar J., *L'Europe les destinées du Proche-Orient. Le nationalisme arabe, syrien entre la Jeune Turquie et les puissances (1908-1914)*, Damas, 1996.
79. Hanioglu M., *The Young Turks on the Verge of the 1908 Revolution* / *Varia Turcica*, XIII, *Premiere rencontre internationale sur l'Empire Ottoman et la Turquie moderne*, Istanbul-Paris, 1991.
80. Hanioglu M., *The Young Turks and the Arabs Before the Revolution of 1908* / Khalidi R., Anderson L., Muslih M., Simon R., *The Origins of Arab Nationalism*, New York, 1991.
81. Hasan K., *Arabs and Young Turks. Ottomanism, Arabism and Islamism in the Ottoman Empire, 1908-1918*, Berkeley, 1997.
82. Haurani A., *Arabic Thought in the Liberal Age 1798-1939*, London, 1970.
83. Irace T., *With the Italians in Tripoli. The Authentic History of the Turco-Italian War*, London, 1912.
84. Ireland P., *Iraq a Study in Political Development*, London, 1937.
85. Issawi C., *The Fertile Crescent 1800-1914. A Documentary Economic History*, New York, 1988.
86. Jankowski J., *Egypt and Arab Nationalism 1908-1922* / Khalidi R., Anderson L., Muslih M., Simon R., *The Origins of Arab Nationalism*, New York, 1991.

87. Kayali H., *Greater Syria under Ottoman Constitutional Rule: Ottomanism, Arabism, Regionalism* / Philipp T., *The Syrian Land in the 18 th and 19 th Century. The Common and the Specific in the Historical Experiences*, Shtuttgart, 1991.
88. Khalidi R., *Ottomanism and Arabism in Syria before 1914: A Reassessment* / Khalidi R., Anderson L., Muslih M., Simon R., *The Origins of Arab Nationalism*, New York, 1991.
89. Khalidi R., *Society and Ideology in Late Ottoman Syria: Class, Education, Profession and Confession* / Spagnolo J., *Problems of the Modern Middle East in Historical Perspective*, Beirut, 1992.
90. Longrigg S., *Iraq, 1900 to 1950. A Political, Social and Economic History*. Oxford, 1953.
91. Lugol J., *Le panarabisme. Passé, present, avenir*, Le Caire, 1946.
92. Macfie A., *The End of the Ottoman Empire 1908-1923.*, London, 1998.
93. Majid K., *Aziz Ali Misri and the Arab Nationalist Movement*, *Middle Eastern Affairs: Number Four*: ed. Albert Hourani, Oxford, 1965.
94. Mantran R., *Histoire de l'Empire Ottoman*, Lille, 1989.
95. Nicola A., *Syria and Lebanon*, New York, 1957.
96. Nilde E., *L'Irak. Origines historiques et situation internationale*, Paris, 1934.
97. Nuseinbeh Z., *The Ideas of Arab Nationalism*, New York, 1956.
98. Pipes D., *Greater Syria the History and Ambition*, New York, 1990.
99. Salome H., *The Fall and Resurrection of Turkey* / Hanioglu M., *The Young Turks and the Arabs Before the Revolution of 1908* / Khalidi R., Anderson L., Muslih M., Simon R., *The Origins of Arab Nationalism*, New York, 1991.
100. Shaw S. and Shaw E., *History of Ottoman Empire and Modern Turkey, Reform, Revolution and Republic: The Rise of Modern Turkey 1808-1975*, Cambridge, 1977.

101. Tarabein A., Abd al-Hamid al-Zahrawi: The Career and Thought of an Arab Nationalist / Khalidi R., Anderson L., Muslih M., Simon R., The Origins of Arab Nationalism, New York, 1991.
102. Thomas D., The First Arab Congress and the Committee of Union and Progress 1913-1914 / D. Little. Essays on Islamic Civilization, Brill, 1976.
103. Zein Z., Arab-Turkish Relation and the Emergence of Arab Nationalism, Beirut, 1958.
104. حسن قايلبي، الحركة العربية بعيون عثمانية (١٩٠٨-١٩١٨)، دمشق، ٢٠٠٣، ص. ٣٧٠
105. الدكتور توفيق برو، العرب و التترك في العهد الدستوري العثماني ١٩٠٨-١٩١٤، دمشق، ١٩٩١، ص. ١٢٥
106. ايضاحات عن المسائل السياسية التي جرت تكليفها بديوان الحرب في المتشكل بطوية. لثر هذه الايضاحات من قبل قائد العلم للجيش الرابع، ١٣٣٣، ص. ١٤١
107. وثائق المؤتمر العربي الاول ١٩١٣، بيروت، ١٩٨٠، ص. ٢٢١
108. امين سعيد، اسرار الثورة العربية الكبرى، بيروت-بنهاية عصر الخيام، ص. ٣٩٩
109. عبدالعزيز محمد عوض، الإدارة العثمانية في الية سورية ١٩١٤-١٨٦٣، القاهرة ١٩٦٩، ص. ٣٨٤

ԱՐԱՄ ԱՇՈՏԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐԱՐ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ.
ՀԱՆԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ
(1908-1914)

Հրատ. Խմբագիր՝ Ա. Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Հրատ. պատվեր № 683
Ստորագրված է տպագրության՝ 04.04.2016թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16, 12.25 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0418018

101723

*Բոլոր արարներին ընդհանրապես
Մենք ձեզ ենք դիմում հանուն Աստուծո՛ւ:*

Ո՛վ թագավորների հետնորդներ, ժողովրդի պահապաններ և ժողովրդի առաջնորդներ: Կա՛նգ առեք և լսե՛ք շիրիմներից ձեզ դիմող ձեր նախնիների ձայնը, որը ձեզ կոչ է անում վերականգնել այն փառքը, որ դուք կորցրիք, այն պատիվը, որ դուք արհամարհեցիք և այն գիտելիքները, որոնցից դուք հրաժարվեցիք: Եղե՛ք ճշմարիտ արարներ, ինչպես ձեր նախնիները:

Հանուն արարների իրավունքի և պատվի՝ ոտքի՛ ելեք, ո՛վ արարներ, մի՛ եղեք դավաճաններ:

Կյանքն արհամարհանքի մեջ մահ է: Եվ պատվի մեջ մահը՝ կյանք:

«Այ-Կահրանիա»-ի կոչից